





2004







1875

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

REPORT ON THE PROGRESS OF WORK

FOR THE YEAR 1875

BY

JOHN WILLIAMS

ASSISTANT PROFESSOR

OF PHYSICS

CHICAGO, ILL.





206.4 207 26  
924-4244

1730  
WS

ՀՈԳԵՇԸ

# ՄՏԸՆՈՒԹԻՒՒՆԻ

Լստուածային բանից:


Թարգմանեալ 'ի լեզու աշխարհարառ  
'ի դիւրութի և յօգուտ բարեսէր հա-  
ւատացելոց ,

Ի Հ. Ռափայելէ Ուղուներան 'ի Մխի-  
թարեան Միաբանուէ :

9252-57

Հրատանա Տ՞ Տ՞ Գեղարդարի- Ե՛մ-  
բոյ Երբեղէ Բաբելոնաց և Ե՛բթայէ:

1825



Ի ՍԵՆՆԵ

Ի Տպարանի հարց Մխիթարեանց :

241

## Յառաջարանու թիւն :

**Մ**ինչև հիմայ Տեր ազգին Տէրն ալ իրաւե  
ղեակեա հոգեւոր գրբեր շատ արդէնցան, ու  
օրէ օր ալ իրարմէն իր յօգոսար Բարե-  
պաշտ հասարակեւորներուն՝ որոնք իրենց  
հոգեւայն փրկուելիւ իւսիրեն : Ան արդէւծ  
հոգեւոր գրբերուն Տէրն իրգրմելի Աղբար  
բարի ըսված գիրքն ալ, որ թիւնն ըստ  
Պեարոս զգալիւ լարգհանած, ու 1722 ին,  
արդէւծ է : Ինչոյ առ լարգհանուել անկա-  
րար Բան էր, այնինչն՝ ասորինն անորին ճող-  
ված, եւ այնպիսի շարատրուելն ունէր, որ  
հայերէն լեզուին Տէրն իրել ըստւով, իւր-  
ծենք ոչ ու յետք իտանէր իւրորտոր :

Սենք արանելով ասիւայ որտէր-  
նաս Տէրն շատ իրտանելնք, որ ազգին

Եղև ասանկ հագեշահ գիրք իւ ըլլայ, ու  
 օգոստոս իւ շնանեանայ. անոր համար ուղե-  
 ցինք նորէն լարագմանել աշխարհաբառ լեւ  
 զհասա ու արդել, որոնք անին իարդու-  
 ցողները հասկնան. ինչպէս որ իւրաքանչեւ  
 իւր բարեյեշարակ Ս'իլիւսը Լ.Բ.Բայհայրը  
 ու ու պարճառառ գիրքը սրբագրած է:  
 Լ.Բ.Բ. աս գիրքը որեւէ բան չէ՛ բայց ելեկ  
 պէսպէս հագեոր բաներու զբայ իրաժող-  
 ներ: Ասորովհետեւ հագեոր բաներու ու  
 գոստոս չէրեանը զիր, ինչն որ հարդ չէ-  
 իրաժե չէննեկ, եւ երեւելն ըլլայ նեկ, անոր  
 համար ասալ ինչօն լեկ որչա՞ ի՞ժ իարա-  
 ընելն է, որ Լ.Բ. հարդոսս իւրը ու իր  
 արեւած է, ու որչա՞ հարդոսն ալ օգոստ-  
 իար, ելեկ աս իւրը իւ գործին բանեցը-  
 նելու ըլլայ, որովհետեւ հագոսն զրոն-  
 լեկ ասինց իրնայ գրանել:

Գրին հեղինակը է Արարու Գրե-  
 գոր շնորհակցան (Յ)նեան իրօնաորը.  
 Ինչը իստիտաոր աշխարհակններու համար

Ըրած է առ Գիբրալ, որոնք որ Տեժ Գրեթ  
 Կարգաւորա Ժամանակ շահին : Ուստի հա-  
 մարտի իօսրէրով , աւրիչ Բանով իւրա-  
 նայ շարք Բան հասկըրենէ : Ա՛յն Տեժ  
 Գրեթան Երեւել Տեժի նոր աւարտանալի  
 պարտաւիճիկի իւրեւել ըսած իօսրէրան  
 համայնայն , որչի կարգացողներուն սերտը  
 աւելի շարժի ստով : Ինչքան Բան իրաւել-  
 ընէ իւրաւան շինած է . Բայց 1725 ին ,  
 Իւրիներէն լարգամանած , աւհոս Ա իննայ  
 արդարը արդոված , աւ Ա իրաւիճիկան Արգայ-  
 բանի ընծայած է : Ա՛յնք իրաւելիներ յետ-  
 քերնիս շահեանալով Իւրիներէն լարգ-  
 մանեցինք . որոսի էլի Տեժի աւրի հայե-  
 ընէ լարգամանածին հեթ Բարգարելու ըս-  
 յայ Տեժ արգելիւրով իւրիայն :

Գրաւորա շահեցինք լարգամանել ,  
 որ տեժն Ժողովուրդը ինչիսար հասկընալ .  
 Բայց աշխարհաբանան ալ շարինք այնպէս ,  
 որ արմիկներէն Բանելը Տեժի իրիւր . հա-  
 պա որ որ աշխարհաբանին Բանը իւրաւ-

սեբ' գրաբարս արինք, առ արածիւրեկից  
ժամագծի մեջ, ոպպէ կարգացողը կարող  
ըլլայ հասկնալ :

ՍԷ գրոց, սէց հարց շխոյս-լինիւրը  
ինչպէս մէկ ժամի բանաստեղծներուն խօսն  
ալ' գրաբարս ուղեցինք դնել. մեյ՛ն որ  
հեղինակը շատ արեղ էր խօսարժե տառը  
կըլի' որ աշխարհաբարս Լարգամնած է,  
առ է որը շխոյս-լինիւր կըբերէ : Ս'էյ՛նալ  
որ համարօր ըլլալուն համար' գրաբարս  
աւելի բան կ'իմացնէ, ժամ Լի աշխարհա-  
բարս, մանաւանդ զանացինք գրաբարս  
մեջ պարզ ո՛ճ բանել որ յիշը հասկըցողն  
ալ գիւրաւ կ'ընայ իմանալ :

Այլոստանք, որ զորը աշխարհանմէն առ  
գրին Լարգամնո-լինիւր' պարտալ շէլար,  
ե օգոստը' որ նորին Լարգամնելը՛ կ'ու-  
ղինք ընել, կըգորնին Ետանդնոք կարգա-  
ցողները. որոնց կընը-իբնէն առ մեր գործ-  
ըլ' ի գոտս Այ, ե ի պարի՛ւ օրհնաբանելալ

Արասին :





W. B. G. 1811.

J. G. 1811.

Խորհիմն՝ զհանդերձեալսն:

---

# ՄԸՄՆ ԱՌԱՋԻՆ :

---

## ԳՂՈՒԽ Ը.

Թիւ «ըլաի ԲԺ Է Ս՝ ԳԻԹԻՆ՝ Է ՎՕՐԻՆ՝ ԷՆԷՐ.

Ակիզըն ամ բարեաց միտք որ խոկայ ॥.

ՍԷ Օգոստինոս :

**Ս**եր միտքը՝ մեր սէրը՝ մեր կամքը՝ մեր  
գործքը՝ ու մեր ձեռքը շարժողը՝ մտա-  
ծութիւն է : Ուստի սր Օգոստինոս կըսէ .  
\* Ըմէն բարեաց սկիզբը՝ մտածող միտքն  
է ॥ : Որ ուլճեալու մտածութեն գործքը ծա-  
ղիկներու կընմանի, որ պտղոց նախա-

շաւիղ (խլաւուղ) կրսովին: Ան գործ-  
քերը՝ որ ազատական կամ մեքենական  
արհեստով կրլան, կամ որոնք որ ըզ-  
մարդս խրատելու և ուղղելու համար կը-  
գործըվին, մտածուէն առաջ եկած են:  
Ստածուէն գտնըված են պատերազմի  
ղէնքեր, ու քաղաքացւոց մէկդմէկու մէջ  
խաղաղ կենալը, մտածութիւն գտնըված  
են պէսպէս գաղտնի գիտութիւններ, պէս-  
պէս երկրագործութե՛ գործիքներ, ու  
շատ օգտակար հնարքներ մարդուս ապ-  
րուստին ու հագուստին համար: Ասոր  
համար իմաստունին մէկը ըսաւ. Ա՛ծ  
բնութե՛ հարկաւոր եղածները անասուն-  
ներուն առատ տալով, խորհրդով՝ մար-  
դուս չխորւաւ. միայն մտածելու լայն  
միտք տրւաւ, ու անով՝ մարդուս երջան-  
կութիւնը պահելու համար՝ ամէն հարկա-  
ւոր եղածները:

Ասկից կրնայ իմացվիլ, թէ՛ որչափ  
բանականուէ՛ դէմ կըխօսին ան տրտըն-

շողները, որ մարդուս խելքին մտածելը  
 անարդ ու փուճ բանի տեղ սեպելով  
 պէտքէս անուններ կրդնեն անօր վրայ,  
 մտածելը ուրիշ բան չէ կրտեն, բայց եթէ  
 խենթ ու խելառ խօսք, ծիրանի դօտի՛ որ  
 սուտ գուներով աղունօր կերևայ, ոչնչի  
 նման շողիներ, քնոյ մէջ երազներ, որ եր-  
 բեմն կուրախայնեն, երբեմն կըտրամե-  
 ցնեն, փշող հովմը, որ երբեմն յոյս՝  
 երբեմն վախ կուտայ: Բայց ուրիշ  
 անուններ գրին նր Հարբ մտածելուն  
 վրայ: Ար՛Վրիգօր փափը մտածելը կընը-  
 մանցնէ պզտիկ հունտէ բուսած մեծ ծա-  
 ուի մը, որ այնպիսի հունտէ բուսնելով  
 այնչափ կըմեծնայ, մինչև նիզակներու  
 կոթեր, նաւերու տախտակներ, տներու  
 դերաններ, ժամերու հեծաններ (մեր-  
 թեկներ), ու ասոնց նման բաներ կըշի-  
 նեն: \* Դ՛ ծոց փոքրիկ սերման թաղու-  
 ցեալ պահի ծառոյն մեծութի՛ որ բու-

սանելոցն է 1) : Այսպէս քիչմը մտա-  
 ծելը թէ սրտին մէջ տեղ կընէ՝ զարմա-  
 նալի գործքեր ընել կուտայ. քի՛ մեծա-  
 մեծ առաքինութիւններ գործել, ամէ,  
 դժուարութիւր յաղթել, մեծ վտանգնե-  
 թու մէջ ինքըզինք ձգել, մեր փրկութե՛ն  
 թշնամիները յաղթել, ու աս պատե-  
 րազմներու մէջ անվնաս անմեղ մնալ,  
 ինչպէս կըսէ նոյն սրբ. \* Ատ մեզ զմիտս  
 զորս իբրև վահան ՚ի գործ առեալ ՚ի  
 պատերազմունս որ լի թշնամիս՝ զերծ-  
 ցուք անվնաս ։ Իրաւցնէ մեծ խելք  
 պէտք է մտածութի մը միտք խօթելու  
 համար. որովհետև ինչպէս Արիստոտել  
 կըսէ. \* Միտքն իմանալով լինի ան՝ ։  
 Եթէ գէշ կըմտածէ գէշ կըլլայ, եթէ  
 աղէկ բան՝ աղէկ : Անոր համար սր Նեո-  
 նարգոս ան խօսքին վրայ. Ի՞նչու զէ-  
 սեան հոլովէալ խորհուրդ նք. 2) մար-

1) Ճառ եղ. Աւետ :

2) Սեր. Լգ. 75 :

դուս միտքը ջաղացի կընձանցնէ . ջաղացը  
 շարունակ դառնալով կաղայ ինչ որ  
 դնես, թէ ցորեն ըլլայ, թէ որովն, և  
 թէ ուրիշ բան . միտքն ալ անդադար  
 ու շարունակ կըմտածէ աղէկ ու գէշ  
 բաներ, ինչ որ երևակայութիւնը առջևը  
 կըբերէ : \* Այլ երկանն արագ հոլովի, և  
 զոր միանգամ արկանեն 'ի նա՛ առանց  
 'ի դուրս վարելոյ աղայ, սոյնպէս և միտք  
 մեր յար 'ի շարժման կայ, և որ ինչ լը  
 առաջ նմա ելանէ՝ զայն խորհի || 1) :  
 Աւտի կըխրատէ նոյն սիւր, որ գրքեր  
 կարդալէն, մէկզմէկու հետ խօսելէն,  
 տեսած պատկերներէն, ու ասոնց նման  
 բաներէն բարի խորհուրդ առնելնք,  
 եթէ կուզենք բարի մտածութի ունե-  
 նալ, ու սը վարք ստանալ :

Ըս մտածելուն օրինակը կըտեսնանք  
 ան քարին վրայ, որ լեռնէն գլորեցաւ,

1) Ի դէրս Խոհ. զԼ. Թ.

ու Վարուքոդոնոսորին կուսքը փշրեց,  
 ու նոյն քարը մեծ լեամբ եղաւ. Սէն  
 որ էհար զպարկէն՝ էղև լեամն Տէժ 1) :  
 Այսպէս ալ մարութ ու բարի մտածուիլը՝  
 որ ԱՅ Հնորքով մարգուս սրտին մէջ  
 կրտնկոճի, կըկործանէ աշխրբիս ու սա-  
 տանային որոգայթները, որ մեր փրկուե-  
 ու առաքինութենէ դէմ կըկենան : Մա-  
 նաւանդ անկից շատ անգամ առաքինութի  
 կըսորվինք, ու արքայութիւն կըստանանք :  
 \* Սէն այն է նր խոկումն, որ զմուլիս  
 խլէ, և զառաքինութիւն տնկէ ॥ 2) :

Արտեօնաւք որ լը կարգի բնութեն  
 ալ աշխրբիս փառքը մտածելը՝ մեծ մեծ  
 գործքեր ընելու ձևոք զարնել կուտայ :  
 Թեմիստոկղէս մտածելով Սեղտիադէս  
 զորապետին գործքերը՝ որով երևելի ե-  
 ղաւ պատերազմի ու խաղաղութեն ատե-  
 նը, սրտին մէջ ետանդ մը կըզգար անոր

1) Դան . Բ . 85 :

2) Սէնիլեն Ի Բ . 44 . Դան .

ըրածներուն հետեւելու : Քնացած ա-  
տեննալ ան զորապետին ըրած քաջութի-  
ները միաբը կուգային . ինքնալ կըբաղ-  
ձար այնպիսի քաջութի ընել : \* Յար-  
թութիք Մեղդիատեայ զժեմիատոկէս  
'ի քնոյ զարթուցանէին || 1) : Արկորդ  
Ե իպիոնը պղտիկութե ատենը լսելով  
առաջին Ե իպիոնին քաջութիները՝ սկսա-  
լինքնալ անոր հետեւիլ . ու ըսել շատ  
անգամ քաջայազմ՝ Նետնին [սոռքը . 2)

\* Այամ՝ ըզպայքար պատերազմաց .

Այամ՝ ըզհանգէս քաջ գերապանծ .

Միրա իմ՝ ազգէ ինձ ի վաղուց .

Եւ ոչ ներէ հանգչել մրտաց || :

Ուրեմն եթէ աշխրբիս փուճ փառքը  
մտածելը՝ այսչափ զմարդս բնութի կը-  
բորբոքէ . որչափ ևս առաւել անային  
չնորբով կըբորբոքէ յախտեննին փառքը  
մտածելը : Միայն ճառագայթմը երկ-

1) Պլուտ . յաղ . երե . ար :

2) Աերգ . Թ . Ենեակ . Տող . 186 :

նային լուսոյն՝ որ Հոգին նք մեր վրայ  
 կըծագէ, բոլոր մեր մտքին խաւարը կը-  
 մերժէ: Միայն անոյն կրակին կայծակը  
 եթէ վառելու ըլլայ սրտերնուս մէջ՝ մեծ  
 գործքեր Այ սիրոյն համար ընել կու-  
 տայ: Մէկ հատ հունար եթէ ան երկ-  
 նաւոր սերմանացանը (էքինճի) որ էլ  
 սէրմանէլ զէրմանէս է-ր. 1) երիտա-  
 սարդաց սրտին մէջ ցանելու ըլլայ, մին-  
 չև 'ի մահ նք գործքերու առատ պտուղ  
 կըբուսցունէ: Արչափ մարդիկներ բարձ-  
 մտածութի գարձան, որ շատ տեսա-  
 մեղքի մէջ անառակ վարուք ինկած էին:  
 Արչափ երևելի առաքինութիւններ ըրին  
 անոնք՝ որոնք որ ամէն շարութե մէջ  
 իյնալով միայն մէկ մտածութի խալը-  
 սեցան անկից: Աւստի շատ աղէկ ըսաւ  
 նք: Յովհան ոսկերերան. \*Այ կն թըռչ-  
 նոց թէք զերծանիլ 'ի ծուղակաց, սոն-

1) Ղուկ. Ը. 50

դունակ և մարդոյ են միտք առ 'ի մեղաց  
 փախչելոյ ॥ 1) : Արչափ մարտիրոսներ  
 Վրնի չարչարանքը մտածելով յաղթե-  
 ցին, իրենց տանջանքներնուն մէջ անով  
 զօրութի առին, վնդի նբ Պետրոս առա-  
 քելոյն խօսքը մտքերնին կըպահէին, որ  
 կըսէ. Վրնի չարչարելն հարնոզ ին Տէր,  
 ե պոսք 'ի նոյն Տէրո շատեցարոսք 2) :

### Պատմութիւնք :

Շատ պատմութիւններ ըսածներուս  
 ճշմարտութիւր կըհաստատեն : Բայց ա-  
 լելի յիշատակաց արժանի է սիւ Աղե-  
 մես Մնկերիոյ Անթոն պատմութիւր : Սո-  
 փիա նբ Աղեմեսին մայրը՝ որ բարեպաշտ  
 կնիկմի էր, տեսնալով Պիոկէտիանոս-  
 սին, ու Սաքսիմիանոսին անողորմ հա-  
 լածանքը՝ իր զաւկին սիրտը ուղեց նբ

1) Ճառ Տէ. առ Պատք :

2) Ե Պետ. 7. 1 :

խորհուրդ մը անկել , օնդի թշնամի մը  
իրեն շիկրնայ յաղթել : Ուստի սկսա-  
իր որդւոյն շատ անգամ ըսել սա խօսքս .

\* Արդեակ , յաւիտենական կեանք է ,  
որուն համար կաշխատինք կօր ॥ : Սօքը  
սա կարճ խօսքովը յաղթեց ան սոսկալի  
տանջանքները , որ քսանը ութը տարի  
քաշեց : Արեք կայսերաց՝ ք Ղիփոկէ-  
տիանոսին , Սարսիմիանոսին , Սաքսիմի-  
նոսին , ութը դատաւորներուն , ու անթիւ  
դահիճներուն ձեռքի հնարքը (Ֆէնտը)  
հատան նը կղեմէսին տանջանք տալէն :  
Արովհետեւ ասոնց ամէնուն դէմ կե-  
նալու համար՝ մտքին մէջ կըմտածէր ,  
որ մայրը իբրեւ թէ իրեն կըսէ կօր .

\* Արդեակ , յաւիտենական կեանք է ,  
որուն համար մենք կաշխատինք կօր ॥ :

Եւ շատ երկայն կըլլար , թէ որ սքին  
ամէն քաշած տանջանքները մէկիկ մէ-  
կիկ պատմելու ըլլայինք , քն՝ անիճները ,  
վառած փուռերը , տակցուցած տապակ-

ները (Թալանները), փշէ անկողինը,  
 երկու բերնով թրերը, և ասոնց նման  
 ուրիշ տանջանաց գործիքները: Հերիք  
 է՝ Ախկեփորոսին ըսածը բերել. թէ այն  
 ամ մարդկանց տանջանքները՝ որոնք որ  
 Վսի հաւատքի համար մարտիրոս եղան  
 ջրի մէջ խղզուէնլով, կի՞ գաղաններու  
 յ՝ յակուր ըլլալով, կի՞ կրակի մէջ երե-  
 լով, չեն հասնիր սբ Աղեմէօին շարչա-  
 րանքներուն: Մհա այսչափ յաւիտենա-  
 կան կեանքը մտածելը՝ աշխրբիս ամէն  
 վախը ու փնասակար հոգը սրտէն կը վեր-  
 ցնէ: Իրեն ուրիշ բան պէտքը չէր ը-  
 լար մէկ շարչարանքը քաշելէն վերջը՝  
 միւսը առանց վախի քաշելու, բայց եթէ  
 իր սբ մօրը ըսածը միտքը բերել. \*Յա-  
 լիտենական կեանք է, որուն համար  
 կաշխատինքկոր ը: Մտով ամէն նեղուե  
 կը համբերէր, ամէն վտանգներէն կա-  
 զատվէր, ու ամէն սոսկալի շարչարանք-  
 ները կը յաղթէր:

## ԳՎ. Բ.

Թե՛ հարի Տե՛ջ ելա՞ծ Բարե՛ խորհո՛ւրդը  
 Կարարե՛լք՝ յա՛խրե՛նախան զբի՛ւ-լե՛ք սի՛նք  
 Ի՛րապէ՛ս :

\* Անմահութի՛ւն խոկման իմաստուն՝ .

Իմաստ . Է . 17 :

Գուցէ՛ անսովոր ու անհաւատալի բան  
 երևնայ , թէ՛ հողւոյն յախտենական  
 փրկութի՛ր մէկ մտածութե՛ք կրնայ կախ-  
 վել : Այնպիսի մեծ բանը՝ որ Նախա-  
 սահմանութի՛ւն կըսվի , ի՛նչպէս այսպիսի  
 պղտիկ ու անհաստատ բանէ կրնայ կա-  
 խում ունենալ : Ա՛յ՛ որ ամէն մարդիկը  
 կուզէ որ փրկին , ի՛նչպէս իր անոյին  
 արեամբ գնո՛ւած հողւոյն փրկութի՛ր կի՛մ  
 դատասպարտութի՛ր այնպիսի վտանգի մէջ  
 կրնայ ձգել , ու փուճ բանի մը կապել :  
 Այ՛ մեզի եր , որովհետեւ ահով դողով  
 պէտք էինք կեանքերնիս անցնել , չը-

լայ՝ որ մէկ մտածութի կ՛մբ բարի խոր-  
 հուրդ մը փուճ տեղ երթայ . վնդի օր-  
 չափ մեր միտքը ամէն վայրկեան անդա-  
 դար խորհուրդներ կուգան : Աթէ գիտ-  
 նալու ըլլայինք , թէ որ մտածութենէ  
 մեր փրկութիւնը կը կախովի՝ գիւրին էր  
 շուտ մը անիկայ ընել : Բայց որովհե-  
 տե չենք գիտեր՝ անոր համար պէտք էր  
 ամէնուն վրայ տարակուսիլ , ու նայիլ՝  
 որ չըլլայ թէ առանց կատարելու ան-  
 ցնի :

Իրացնէ մեծ դժուարութի է ասի-  
 կայ : Բայց աս ալ ստոյգ է , որ մեր հոգ-  
 ւոյ փրկութիւնն ալ քիչ զգուշութի չի-  
 պահանջեր . և թէ ինչ բարի ազդումն  
 կամ խորհուրդ մտքերնիս կուգայ՝ պէտք  
 է որ յօժարութիւն ընդունինք , ու անոր  
 դէմ խափանարար բան չիղնենք : Անոր  
 համար Պետրոս առաքեալը աղէկ խրատ  
 կուտայ . Ա՛ղջար , կըսէ , առաւել  
 վախճանի՛ , պէ՛ Բարեացն գործով՝ հասար-

որուն գլխիւ իսլամնն եւ զբնորո՞ւնն պահել  
 ցէ՛ք 1) : Ս'իտ զնննք աախօսքին . \* Մ.  
 աաւել զն-Լասօնք ॥ որով կրխրատէ , թէ  
 շատ յօժարութիւ պէտք է ձեռք զարնել  
 գործքի մը՝ որուն որ զմեզ Մ.ճ կըյոր-  
 դորէ : Ու պէտքը չէ ընել միայն հա-  
 սարակ բարի գործքերը , այլև մասնաւոր  
 աս ու ան գործքը . որովհետև չնք գի-  
 տեր թէ ինչ բանի մէջ Մ.ճ իր շնոր-  
 քը կուզէ տալ մեզի . կամ՝ որ գործքով  
 փրկել : Անզի Մ.ճ զմեզ փրկել ուզած  
 ատենը՝ որոշեց ալ՝ որ փրկութիւն հաս-  
 նինք չէթէ մեր հասարակօրէն բրած ա-  
 ուարինութիւն գործքերով , այլ նաև աս  
 կամ ան տեսակ առաքինութիւններով ,  
 որնոր յառաջուց տեսաւ , թէ պիտի  
 ընննք : Եւ եթէ ասանք չնք ընել՝ մեր  
 փրկութիւնը տարակուսի մէջ կըձգենք :

Ուստի սրն Ֆրանչիսկոս քանի ան

1) Ը Պէտ . Ժն . 101

գամ մտքին մէջ բարի խորհուրդ մը  
 կուգար՝ բերանը կրգոցէր՝ կրմտածէր .  
 և երոր ուրիշները կը հարցնէին, թէ ին-  
 չու անանկ խորունկ կրմտածես . Մտիկ  
 կընեմ, կըսէր, թէ ինչ կըսէ կոր Ա՛ճ,  
 ուղղի ըսածը ընեմ : Անգի աղէկ գիտէր  
 սըր, թէ Ա՛ճ երոր զմարդ ուղեց ստեղ-  
 ծել, ուղեց բարի խորհուրդներու սերմն  
 ալ ցանել անոր սրտին մէջ . Եթէ անիկայ  
 յերկէր Բարէ կէլնայ՝ մենքալ անոնցմէ կըլ-  
 լանք՝ որովք որ Վ՛նի ըսածին պէս, Բար-  
 ւոր և զաւարեալին սրտի- լուխալ զհոնն՝  
 ընդունին, և ասն ոգոսալ 1), ք՝ Ա՛ճ  
 ձայնին առանց ուշացնելու լսելով, որով  
 երանելի կըլլան : Ա՛ն ատենը թէ ընա-  
 ընտց կարգին (կի՛ արքայու թի՛ գացողնե-  
 րուն) մէջ ըլլանք նէ՛ բունենք (ինչպէս  
 կըսեն) առջի օղբ ան շղթային որ կըսի  
 Վախասահմանուի, վնդի անոր և տեւն

1) Պատկ. Ը. 15.

օղերու պէս կարգաւ կուգան պէսպէս  
 միջոցներ, մինչև արքայութի հասնինք:  
 Աւստի ամէն բարի խորհուրդները, ու  
 նաեւ ազգեցութիւնները որով Մ<sup>ճ</sup> մեր սիրտը  
 կըշարժէ, երբոր քարոզ կըլսենք, կի՞  
 հոգևոր գիրք կըկարդանք, կի՞ նա մար-  
 գու մը հետ կըխօսինք, կի՞ երբոր կը-  
 տեսնանք մեռել մը՝ որ թաղելու կըտա-  
 նին, կամ յանկարծ սոսկալի ցաւ մը  
 վրանիս կուգայ, այս ամ իրաւցնէ պէտք  
 է մեծ սեպել: Աւստի նա ( ) գոստինու  
 կըսէ. \*Կոչէ Մ<sup>ճ</sup> յամենուստ յուղղուի  
 կոչէ յապաշխարութի. կոչէ բարերա-  
 րութիք. կոչէ ընթերցանութի. կոչէ  
 ներքին խորհրդով. կոչէ գանիւ յան-  
 դիմանութի. կոչէ ողորմութի միսթա-  
 րութի || 1): Մտնց ամենը Մ<sup>Յ</sup> մէյակ  
 խօսք սեպէ, ու բարի խորհուրդներ  
 որովհետև ասոնց ամեննալ կրնան ը-  
 լալ Սիւղէն ճանապարհի Բարոյ 2), որ

1) Ի զմ ճբ. Սողմ: 2) Առակ. Ժ. 5:

արքայութիւն երթալու առջի սաստի-  
ճան է:

Իայց պէտք է գիտնալ, որ բարի  
խորհուրդները երկու տեսակ են: Ոմանք  
այնչափ զօրութի կամ ազդեցութի չեն  
տար, ու շուտ մը կանցնին: Ոմանք մեծ  
ազդեցութի կուտան, որ մասնաւոր ԱՅ  
բարերարութիւնը ու նախախնամութիւնը  
կըտարուի: Առջի տեսակը պզտիկ մար-  
գրիտներու կընմանի, որ ամէնը մէկտեղ  
կըծախսվին. Իսկ եկզը կընմանի խոշոր ու  
կոր և ճերմակ մարգրիտներու, որ հա-  
տիկ հատիկ ու համրաւքով կըծախսվին:  
Այսպիսի խորհուրդները պէտք է մեծ  
սեպել. որուն օրինակը՝ կըսէ քր ( ) գոս-  
տինոս, ունինք մանանեխին (հարտալին)  
մլայ, որ Պաղեստին գաւառը կըբուանի:  
Ասիկայ՝ ինչպէս Վ.Ս կըսէ, զորը է բուն  
զմա՝ սերմանիս, և ընի ծառ՝ Քինչու գաւը  
Լուչնոց Երմիեց և հանգչել յսպար նի 1):

1) Մատթ. Ժ. 32:

Այսպէս ալ բարի ու զօրաւոր խոր-  
 հուրդ մը՝ եթէ մտքին մէջ տեղ ընէ՝  
 փոքր սկզբամբ մեծամեծ առաքինութի-  
 ներ գործել հուտայ, որ զհրեշտակներ-  
 նալ կըզարմացնէ: Վարձեալ, կըսէ նբ  
 ( ) գոստինոս, \* Այդ հատն մանանխոյ  
 փոքր է ին երևութին, ոչ զհամն իւր,  
 և ոչ զքաղցրութին ցուցանէ: Այլ ի  
 ծառքիլ անդ՝ յայնժամ բուրեղիւր հոտ,  
 և զկծուութիւն իւր ներգործէ ॥ 1) :  
 Այսպէս ալ բարի խորհուրդ մը առջի  
 բերանը օգտակար բանմը չերևար, բայց՝  
 եթէ սրտին մէջ լաւ մը տեղ ընելու  
 ըլլայ՝ իր զօրութիւր կըցուցանէ. որով-  
 հետե գեշ խորհուրդները մտքէ կըհա-  
 նէ, սրտին զղջում կըբերէ, ու կամբ-  
 նալ սիրով կըբորբոքէ: Աս մտածութի  
 Հոայմունդոս Վուլուս աշխարհիս ունայ-  
 նութիւր ճանչցաւ, դառն երեցան իրեն

1) Բան Բ. յաղ. սրբն Լաւրեմա :

ան զբօսանքները՝ որոնց ինքըզինք բոլորովին տուճած էր. անուշ եկան նեղութիւնները՝ որոնցմէ կը փախչէր. աչքերը երկու աղբիւր ըրաւ. ու սիրտը՝ որ մարդկային գեղեցկութիւնը կը սիրէր, Այ սիրով բորբոքեցաւ. և այսպէս արքայուէ Այ որդի եղաւ, որ դժոխքի արժանի էր:

Իւր գովիկոս Պոնտեան երևելի վարդապետը՝ նր մտածութիւնը կը նմանցնէ ճախարակի (մախարայի) որով ծանր բաներ վեր կը բաշտի, զորօրինակ, հաստ գերաններ, մեծ արձաններ՝ որ ուրիշ բանով տեղերնէն չէին շարժիր: Այսպէս է մտածութեւն ալ զօրութիւնը, որ հոգիները դժոխքին մէջէն մինչև արքայութի կը վերցնէ, որոնք աշխրբին զբօսանքներու մէջ ընկղմելով՝ Վաւիթ մարդարէին խօսքը կը սէին. Այն է՝ ի խորս. եւ անօրէնս-լի-նէ, է՛, ուր բեռն ծանր ծանրացան՝ ի շէ է՛ 1): Սեղբի մէջ

1) Սաղմ. 46. 3. ԸՔ. 5.

անդեղը կրկենային, խրատական յանդի-  
մանութիւն մտիկ չէին ընել. այնպէս  
գեշութիւն կապրէին, որ շտկոճելու յոյս  
մը չէր երևար: Բայց Հոգին Եր ընդ  
ձգելը իրենց սիրտը աղէկ խորհուրդ մը՝  
բոլորովին դարձան: Ահսան վարքերնին  
փոխել. մեղքերնուն վրայ զղջալ, ու  
մեծամեծ առաքինութիւններ գործել: Օտար-  
մանալի օրինակը ունինք: Օտարութիւն վրայ,  
որ անոճանի մաքսապետ էր (կիւմիլիւկ-  
ճիւ), ասիկայ բոլոր շահի ետեւէ ինկած  
էր. ուրիշներէն անիրաւութիւն ժողոված  
ըստակները իրեն հանգստութի չէին տար:  
Երբ որ սկսաւ նոր տեսնալ ուղել, Խրեմու-  
րէր Գեորգիէն լինել էր (1), իս-  
կոյն իր անիրաւ շահը թողուց, գնաց  
Վսի առջևը, իր տունը տարաւ, ու  
վերջը բոլոր հարստութիւն թող տալով  
Վսի ետեւէն գնաց: Եւ այնպէս ալ ան

1) Ղուկ. ԺԹ. 3:

Արնորիտս մեծատունը, որ յը հաւատքի  
 թշնամի էր, ու իր աղանդին վրայ յա-  
 մտած կրկենար՝ ինչ որ յը վիպները  
 ու իր բարեկամները խրատ տային: Բայց  
 եբոր Աճ քնոյ մէջ իր միտքը յախա-  
 նական կենաց յիշատակը դրաւ՝ ալ չե-  
 կրցաւ դէմ կենալ: Եւստի ձեռքէն  
 եկածին չափ մտքէն հանելու կը ջանար,  
 բայց չէր կրնար, մանաւանդ աւելի կը  
 բռնադատուէր անոյին խորհուրդներու  
 ու յը հաւատքին ճշմարտութեն հաւտալ:  
 Քնացած ատեննալ՝ կրսէ յը Հերոնի-  
 մոս, կրբռնադատուէր հաւտալու, և այս-  
 պէս հալածողը՝ ճշմարտութեն քարոզիչ  
 եղաւ, ու Սողոսը՝ Պօղոս:

Վուցէ դժուար՝ կերկնայ բղջախո-  
 հութեն մէջ ինկած հոգիները աղատել,  
 ու ան աղմին մէջէն հանել: Բայց ի՞նչ  
 դժուարութի կայ՝ որ մտածութիւնը զօ-  
 բութի չունենայ յաղթելու: Ի՞նչպէս  
 անպարկեշտ կնիկ էր Սաղաղենացին,

որ ինչպէս սուրբ Գուկաս կրսէ, Լւս 1<sup>2</sup>  
 1) : Բայց երբ Լուսաւորեցաւ՝ մեծ  
 քաղաք, մանաւանդ սղջախոհուն մէջ :  
 Ինչպէս գարշելի բղջախոհուն մեղ-  
 քին ինքրդինք առնած էր Պեղագիտ, որ  
 Լնախոք քաղքին ժանտախտը կրսուէր :  
 Լօրիկայ սր՝ Եոննոսէն՝ որ քաղքին ե-  
 պիսկոսայուն էր՝ լսելով ԼՅ սոսկալի դա-  
 տաստանը, այնչափ մտքին մէջ մտածեց,  
 մինչև ունեցածը բոլոր թող տուաւ, ու  
 անտպատ դնաց. ուղղի պահօք ու ող-  
 բովք կարող ըլլայ ԼՅ սոսկալի դատաս-  
 տանին օրը երևնալ, և այսպէս սրբութիւն  
 մեռաւ : Լյսչափ մեծ է սր մտածութիւն  
 զօրութիւնը, որ սրտէն գէշ ցանկութիւն  
 կը հանէ, ու ամէն գործքը կը շակէ :  
 Անդի ինչպէս սր ( ) գոսախնոս կրսէ :  
 \* Լնամբթ է ումէք գործել չարիս, որ  
 1) ԳԼ. Կ. 37 :

ունիցի 'ի սրաի զխորհուրդս բարիս ։  
 Լորանի թէ մենք ալ մեր սրաին դուռը  
 զարնուածին պէս բանայինք, և մտքեր-  
 նիս դնէինք, թէ բարի խորհուրդը ար-  
 շաղոյս է՝ որուն ետեւն երջանիկ ու յա-  
 ւիտենականն օր կուգայ, սերմ է՝ որ  
 առատ պտուղ կուտայ, ու առաջին դիրն  
 է ան մեծ գրքին՝ որ յաւիտենական Նա-  
 խասահամեսութի կըսուի ։

### Պատմութիւն ։

Լորկու շարմանալի պատմութի՝ որ  
 պիտի պատմենք՝ սս մեր ըսածը կըհաս-  
 ոտանն ։ Սը Լօվրեմ ասորին իւր մտա-  
 ծութե մէջը Մ.Յ ծառայելու բորբոքած  
 ըլլալով՝ գնաց Լօղեսիա, ուղղի անա-  
 պաշտ մարդ մը հոն գտնայ, ու անկէ  
 Մ.Յ ծառայելը սորվի ։ Ղ'ամբան գացած  
 տաննը՝ Մ.Յ շարունակ սակաղաչէր կոր,  
 որ քաղքին դոնէն ներս մտած ատենը՝

Հօգւոյն Համար ուղած մարդը իրեն  
 խրկէ: Բայց Մ.Ճ. որ միշտ գեշէն աղէկ  
 բան կը հանէ, այնպէս բերաւ, որ քա-  
 ղաք մտածին պէս՝ դիմացը գէշ կնիկ մը  
 ելաւ: Սիւ Լփրեմ տեսնալով՝ որ ու-  
 ղածը շեղաւ, մտքին մէջէն սկսաւ ըսել.  
 Մ.Ճ. աղօթքս չըլսեց, անոր Համար տըրա-  
 մութէն գետինը կը նայէր: Իսկ գէշ  
 կնիկը կեցաւ հանտեղս, ու անոր երեսը  
 կը նայէր: Սիւ Լփրեմ սկսաւ զարմանալ  
 կնկան այնպիսի աներեսութե վրայ, ու  
 ամէնալ. ուստի կնկան ըսաւ. ի՞նչ այն-  
 չափ երկայն երկայն կեցած ինձի կը-  
 նայիս կոր, նիսն տուաւ կնիկը կարծես  
 թէ Մ.Յ. բերնէն: Մ.Ղէկ կը նեմ, ըսաւ,  
 որ քեզի կը նայիմ կոր իբրև իմ պատ-  
 ճառիս, որովհետև կնիկ ըլլալովս երիկ  
 մարդու կողէն ստեղծայ: Դուն ալ ա-  
 ղէկ կը նես կոր, որ գետինը կը նայիս,  
 վնդի հողէն ստեղծար: Ես խօսքը երոր  
 լսեց նը Լփրեմ՝ իմացաւ որ աղօթքը

պարսպ տեղ չէ գացած . որովհետեւ  
 ասկից ան իմաստուն առակը միաքը  
 բերաւ , որ կըսուի . Ծանկը զէւզ . ք՝  
 մտածէ , ուսկից ստեղծած ես . չըլլայ որ  
 հզարտանաս . և այսպէս ինքը ղինք վար  
 ղարնելով աւետարանական կատարելուն  
 ճամբուն մէջ կըմտնաս , ինչպէս նք ( ) .  
 գաստինոս կըսէ . \* Խորհիս ղշինուած  
 բարձրագոյն 'ի վեր յարուցանել' ղխո-  
 բութն նր խորհեաց նախ ղհիմն || 1) : Եւ  
 կնկան ըսածը նք Ափրեմայ մտքէն չե-  
 լաւ , ասով հոգեորի մէջ կըղարգանար ,  
 ու ինչպէս ինքն ալ կըսէ , Եւ ճամբու  
 մէջ շիտակ արքայունի երթալու առաջ  
 նորդ եղաւ :

Ինչպէս գէշ կնիկմը նք մարդուն  
 մտածելու աղէկ խորհուրդ տուաւ . այս-  
 պէս ինքնալ չար ճամբէն դարձուց գէշ  
 կնիկ մը : Եւ ատ ժամանակ նք Ափրեմ

1) Բան Գ . յաղ . տեք . բան :

մէկ փրփրկած խցի մէջ կը բնակէր: () ր  
 մը իր աղքատիկ կերակուրը պատրաստած  
 ատենը՝ գէշ կնկան մէկը սատանայէն  
 դրդած իր պատուհանին առջևը եկաւ,  
 ու կը հարցնէր, որ արդեօք բանմը պէտք  
 է, կամ ինչ կուզես: Ասաւ նրբ, կու  
 զեմ իրեք քար, ու քիչ մը շաղախ  
 (չամուռ) պատուհանը գոցելու համար  
 ուսկից որ կը նայիս: Աս խօսքէս չամբռ  
 նալով գարշելին՝ իր սրտին մէջի եղածը  
 սկսաւ յայտնի ըսել, ու նրբ յորդո  
 ըել: Ան տտենը նքն ալ առանց վախի  
 ըսաւ՝ շատ աղէկ, ուզածդ կը նեմ, բայց  
 իմ ուզած տեղս: Անիկը առ լսելով  
 սկսաւ խնտալ, ու հարցնել, թէ ո՞ր  
 կուզես: Ան ալ նկնն տուաւ, քաղքին  
 մէջ տեղը, ու հրապարակը: Ամչցաւ  
 կնիկը ասկից, որ ամէն ամօթը մէկդի  
 դրած էր, ու սրգողելով սքին ըսաւ,  
 ստ գէշ բանը քաղքի մէջ ինչպէս կըր  
 նանք ընել, շնորհիտեր, թէ ինչ մեծ

ամօթ է, ու խայտառակուի: Այլ Լիփ-  
րեմ ան ատենը արևն տուաւ. մարդ-  
կանց տեսնելէն կրվախնաս, ու չես վախ-  
նար, որ Մժ կրտեսնէ: Ես խօսքը կըն-  
կան սիրար՝ որ մեղքի կը յորդորէր կոր  
ծակեց: Ատիկները կապվեցաւ, ու սըր-  
տին մէջ փուշ եղաւ: Աւստի սրտանց  
ցաւելով ըրած մեղքերուն վրայ լա-  
ցաւ. վանքմը գնաց մտաւ, ու հոնտեղս  
խիստ ապաշխարելով մեծ սք եղաւ,  
միշտ յիշելով, թէ Մժ իր ամէն գործ-  
քը կրտեսնէ: Ես յապի օգուտ եղաւ  
իրեն ան խօսքը: Աւստի սք Էրոնիմոս  
կըսէ. \* Ի՞նչ արդարեւ ՚ի մեղանչել մե-  
րում զմտաւ ամէսք, եթէ Մժ տեսա-  
նէ, և անդ է, ոչ երբէք զայն որ չէ  
հաճոյ նմա՝ առնէսք առաջի նր ॥ 1):

Յովն. Բաւլանդ. Ապր. ԲԷ, Գլ. Գ, 1:

1) Ի ԳԼ. Ը. Ե ԳԼ. Գ.

## ԳՎ : Գ .

Բարէ Խորհուրդը Տրժեւը՝ յաւիտեանս  
 դաստապարտութիւնն առեւ իւրաց :

\* Ապականեցին զխորհուրդս իւրեանց,  
 վնկ հեղեց 'ի վն նց զսրամառթի իմ ॥  
 Սո՛ւն . Գ . 7 :

**Ք**ս Տին մեր բարի խորհուրդները շատ  
 անգամ նմանցուց սերման որ աշխատա-  
 ւոր մշակը իր արտերուն կրցանէ . ինչ-  
 պէս վերը ըսինք : Ասոնցմէ ոմանք ճամ-  
 բու վրայ կիյնան , ու անցնող դարձու-  
 ղէն կը կոխվին . ոմանք քարի վրայ կիյ-  
 նան , ու խոնաւութիւն չունենալէն կը շոր-  
 նան . ոմանք փշերու մէջ կիյնան , ու  
 մեծցած ատեննին փուշերը կը խողեն , և  
 կը շորցնեն . ոմանք ալ աղէկ տեղ կը յի-  
 նան , ու շատ պտուղ կուտան : Բայց  
 աս պտուղ տուփերը քիչ կը գանուին ,  
 իսկ անպտուղները՝ շատ . որովհետեւ

(ինչպէս Վ.Ս կը մեկնէ) բարի ազգեցու-  
 թիւններուն՝ որովք Վ.Տ մեր սիրտը կազ-  
 դէ՝ զումանս չար սատանան կուգայ ու  
 մեր սրտէն կը հանէ: Օգոմանս անզեղջ  
 մեղաւորները կը նդունին, ու փորձութի  
 եկածին պէս թող կուտան: Ամանք ալ  
 աշխրբիս հոգերուն՝ հարստութիւններուն՝  
 ու զբօսանքներուն մէջ կը կորսուին, և  
 պտուղ չեն տար: Ասոր համար Վ.Ե  
 տո՛ւած բարի խորհուրդները՝ ծաղիկ ու  
 օրհնութիւն պտուղ տալու տեղը, կամաց  
 կամաց կը պակսին, ու օգուտ մի ալ չեն  
 ունենար, մանաւանդ անէճք ու պատիժ  
 օխընդունին. ինչպէս որ թզենիին հան-  
 դիպեցաւ: Ասիկայ շատ ժամանակ աղէկ  
 արեւ ու անձրեւ տեսնալով, երբոր տերեւէն  
 ՚ի զատ ուրիշ բան չիրերաւ՝ Վ.Ս Տիւն մեր  
 իրեն անէճք տո՛ւաւ, այսպէս ըսելով.  
 Ա՛յ՛ այսուհետեւ պարտաւ ի՛նչեցի՛ն ՚ի ՚ի՛ն յա-  
 տիպէտն, և ուստի՛ն չարացաւ լեզուսն 1):

1) Մատթ. Թա. 19:

Արչափ մարդիկներ իրենց միտքը եկած  
 օգուտն սյն խորհուրդները կըմերժեն :  
 Ե՛՛ծ հայրական սիրով զասոնք ապաշխա-  
 րելու կըկանչէ, բայց մտիկ չեն ըներ :  
 Իրենց փրկութիւնը առջնին կըդնէ, բայց  
 աւագի վրայ ցանած սերմին պէս արմատ  
 չիբուներ : Մե՛ծ մե՛ծ երախտիք կընէ ա-  
 սոնց, բայց տուճողին և ոչ երեսը կը-  
 նային ապերախտ ըլլալով : Կսկ եթէ  
 Ե՛՛ծ սկսի քիչմը ուրիշ կերպ երթալ,  
 քի՛ եթէ յանդիմանելու ըլլայ՝ խլի պէս  
 չեն լսեր, եթէ սպառնալու ըլլայ՝ կուրի  
 պէս չեն տեսնար, եթէ վշտաց ու նե-  
 ղութի մէջ ձգէ՝ անզոյի պէս չեն ար-  
 թննար, վերջապէս եթէ մահո՛ւն սոս-  
 կալի սահաճը, դժօխքին զարհուրելի  
 տանջանքները, ու արքայութիւն ուրա-  
 խութիւնները իրենց միտքը բերելու ը-  
 լայ՝ օգուտ մը չեն ըներ, ոչ դժօխքէն  
 վախ մը կուգայ իրենց, ոչ արքայունէն  
 ուրախութիւն : Աւափ արժանի չէմի, ու

Աճ իր շնորքը ետ քաշէ անու. բարի  
 խորհուրդներ չիտայ, որոնց մտիկ չեն  
 ըներ, ոչ ալ կուզեն: Իրացնէ հասա-  
 ռակ օգնութիւնը կրնէ, բայց մասնաւոր  
 չըներ: Արդրկէ ու չիտար ան մասնաւոր  
 օգնութիւները, որոնք որ թէ նախախ-  
 նամութն, ու թէ փրկութն օրինացը  
 նայելով պարտական չէ տալու, ինչպէս  
 Աճարանները կըսեն: Աստի այնչտի  
 միայն տալով որչափ որ կարողութի կու-  
 նենան փրկելու, ու չեն կամենար, թող  
 կուտայ Աճ որ իրենց գէշ խորհուրդ-  
 ներուն, ու խարերայ բաներուն հետե-  
 կելով կորսուին թշուառականները:

Աս ըսածիս ճշմարտութիւնը աղէկ հաս-  
 կնալու համար՝ պէտք է զիանալ, որ  
 Աճ իր կողմանէ կուզէ ու կըբաղձայ  
 ամէն մարդուն փրկութն հասնիլը: Այս-  
 պէս կըսեն ամէն երևելի վարդապետներ.  
 Եւ ստոնցմէ առաջ Պօղոս առաքեալնալ  
 յայտնի ըսաւ, թէ Աճ զմէ՛ս արդէ՛ն իմ-

Տ, քէ կեցցեան 1) : Աս վախճանաւ պէս-  
 պէս միջոյններ կուտայ, որով ամէն մար-  
 դիկ կարող ըլլան փորձութիւններու յաղ-  
 թել, շնորհքնին շիկորսնցնել, ու ար-  
 քայութե՛ն հասնիլ : Իսկ ան մասնաւոր  
 շնորհքները, մասնաւոր սրտի լուսաւո-  
 թութիւնները ու նք խորհուրդները ամե-  
 նեին պարտական չէ տալու, միայն որ  
 ժամանակ, ուր տեղ, և նրբ որ իրեն  
 աղէկ կերեւնայ՝ կը պարգևէ. թէպէտ և  
 գիտէ թէ առանց ասոնց՝ մարդս իր շա-  
 րութիւր թող չհտար, փորձութե՛ն չի-  
 կրնար յաղթել, ու շնորհքնալ կը կոր-  
 սընցնէ : Իայց սակայն աս մասնաւոր  
 շնորհքները շատ անգամ մէկ մտածուե՛ն  
 հետ կը կապէ, որով զհոգին առ բարին  
 կը շարժէ. և այս այնպէս է, որ եթէ  
 իմանալով մեր կամօքը ետ կը ձգենք, ան  
 ալ իր ձեռքը մեզմէ ետ կը քաշէ. չի-

1) in Տիմոթ. Է. 4.

տար անկից վերջը մէյմնալ ան շնորհքնե-  
 ըը՝ որոնք կուզէր տալ, եթէ դէմ կե-  
 նալու չըլլայինք: Այս այսպէս երբոր մեր  
 հոգւոյն բարի մտածութիւն չենք նայիր,  
 կի՞ մտացածնիս մեկդի կըթողունք՝ պէս-  
 պէս դժբաղդութիւններ գլուխնիս կըհան-  
 դիպին, փորձութեց մեջ կէյնանք, ծոյլ՝  
 մանաւանդ անհոգ կըլլա՞ք, և վերջը  
 ծանր ծանր մեղքեր կըգործենք, որ դմեղ  
 կորսուելու վտանգի մեջ կըծգեն: Այս-  
 կից կերեայ, որ մեկ խորհուրդին չկու-  
 ը՝ թէպէտ անմիջապէս և ուղղակի չու-  
 լար, բայց կամաց կամաց և անուղղակի  
 պատճառ կըլլայ յաւիտեանս յաւիտե-  
 նից կորսուելու: Արովհետեւ Ա՛ճ չիտա-  
 լով ան շնորհքները՝ որ լն աստուծոյն  
 կամաց էլ-բայ պատրաստ էր տալու, մե-  
 ծամեծ դժուարութիւններ կըսպատահին մեղ-  
 քերէն ետ կենալու, ու անոնց՝ որոնք  
 չէին կարծեր կորսուելու ճամբայ դի-  
 րաւ կըբացուէի:

Ինչպէս Սաւուղին գլուխը եկաւ  
միայն ասոր համար, որ ոչ խրատին,  
ոչ Սամուէլ մարգարէին ձեռքով ԱՅ  
տո՛ւած պատուիրանքին հնազանդեցաւ :  
Ասով կրսեն երևելի վիճակները, թէպէտ  
մահացու մեղքով չհմեղանչեց, բայց  
սկիզբ եղաւ. քի՛ն կրսէ՛ Աստուանդացին,  
\* Ակիզբն չարի յանհոգութենէ բար-  
ւոյն ॥ 1) : Աս անհնազանդութէն եղաւ,  
որ Աճ թագաւորին ան աչքով չինայի՝  
որ աչքով կրնայեր առաջուց. թող տայ  
չար խորհուրդները ընելու. և ասոնցմով  
նախ պզտիկ մեղքեր սկսաւ ընել, վերջը  
մահացու մեղքեր. և այնպէս թէ՛ թա-  
գաւորութիւն ձեռքէն կորսնցուց, ու թէ՛  
երկնից արքայութէն զրկուեցաւ : Տես,  
ինչ կրսէ Ասկերբերան. \* Յորժամ մար-  
գարէին ձայնի ոչ լուաւ՝ սակաւ առ սա-  
կաւ սողոսկեալ գլորեցաւ, մինչև՛ ՚ի վիճ

1) Ի ճառն Յուլիան :

կորստեան արար զանձն իւր գահա-  
 վեժ 1) : Ա՛հ, որչափ մեծ սեպել  
 պէտք է երբեմն մտածութիւնները, որ  
 Ա՛ճ փրկութե՛ն համար սրտերնիս կազդէ :  
 Արբեմն մարդու մը միտքը կը ձգէ, որ  
 աս կամ ան տօնի որ խոստովանանք ը-  
 լայ, եթէ եկած խորհուրդը չիկատարեր՝  
 Ա՛ճ ուրիշ անգամ իրեն այնպիսի խոր-  
 հուրդ չազդեր. թող կուտայ չար ըն-  
 կերներուն հետեւել, չար կամքը ընել,  
 տեսակ տեսակ մոլութիւններու մէջ խնալ,  
 ու այնպէս վերջը զժողովին տակը կեր-  
 թայ : Ամանապէս եթէ մտքերնիս եկած  
 բարի խորհուրդները կատարելու քիչ  
 հոգ կունենանք, քի՛չ երոք մտքերնիս կու-  
 գայ գէշ յօժարութիւն մէկդի ընել, ու-  
 րիշին աչքը մոռնելու փուճ բաղձանքը  
 վերցնել, չար ընկերներու հետ չիտես-  
 նուիլ, այսպիսի անհոգութե՛ն մեծ մեծ

1) Ճառ 25. Մատթ :

մեղքեր կը հետևին: Կնչպէս որ մէկ պղտիկ կայծէ շատ անգամ կրակ կելլայ, ու կտաւիմը կտորէ՝ երբոր անհոգութիւնը զդուշանար, աստին անդին ժանտափատ կը տարածվի:

Կարելի է որ մէկը յոյս մը սրտին մէջ ունենալով ըսէ, եթէ աս բարի խորհուրդը կատարելու չըլլամ՝ միւս խորհուրդը կը կատարեմ, որովհետեւ ԱՅ շնորհքը միշտ սիրտը կը դրդէ, միշտ ապաշխարութեան ու առաքինութեան կը յորդորէ: Ահա՛ ասիկա՛ կըսէ Վ. Բ. 1) Իմ ետեւ դուրս է բախիւմ, ելի՛ն որ լուսնի յայնի իմում՝ եւ բանտայի՛ն զըրբանսն ճորից աս նա: Ուստի մէկ խորհուրդը կրնամ մէկդի ընել, միայն թէ միւս եկածը կատարելու պատրաստ ըլլամ, և որն որ աս իրիկուն չեմ ուղեր՝ վաղը առտու ուղեմ: Ա՛հ, ինչպիսի սղբալի կուրութի՛ն

1) Յոյս, 7, 20:

է ասիկայ, քանի քանի մարդիկներ ասով  
 կորսուեցան: Ասէ ինձի, եթէ բարի  
 խորհրդոյ մը չեմ հաւնիր նէ՛ չի՞հան-  
 դիպիր շատ անգամ՝ որ շատերուն չի-  
 հաւնիմ, մանաւանդ երբեմն ամէնուն  
 ալ: \* Աւստի՞ զիտես, կրտէ նր Ռեո-  
 նարդոս 1), թէ այժմ կամք են ԱՅօգ-  
 նել քեզ, զոր առ ժամն հերքես՝ ի բաց ॥ :  
 Միթէ Աճ իր հոգևոր դանձին բանա-  
 լիները քու ձեռքդ տուաւ բանալու հա-  
 մար, ու անկից ուղածիդ պէս առնելու  
 եբօր կուղես նէ, չէթէ եբօր Աճ կու-  
 ղէ: Ա՛յլ քեզի խօսք կրնայ տալ, թէ  
 Աճ՝ որ շարութիւն քովէդ հեռացուցիր,  
 վերջէն պիտի գայ քու քովդ, ու զքեզ  
 ապերախտութեանդ համար պիտի չի  
 պատժէ՞:

Աւետարանի մէջ կը կարդանք, որ  
 տանուտէրը մէկ անգամ միայն հիւրերը

1) Բան ԱԸ՝

( միսաֆիրները ) սեղանի հրաւիրեց ,  
 վերջը երբոր անոնք գալ չուզեցին նէ՛  
 մարդ չիկերկեց դարձեալ աղաչելու :  
 Աւտի իրաւցնէ վախնալու բան է որ սբ  
 վրայները կըսեն : Սուրբ Օգոստինոս .  
 \* Օհեզգասիրտս սուր է ՄԾ թողու  
 'ի ձեռաց || 1) . և սբ Գրիգոր . \* Ար  
 ապախտ առնէ յօլովակի զչնորհս ՄԾ՝  
 ծանր պատժոյ է արժանի || 2) : ՄՇ  
 ինչզըտար մարդիկներ այսօրվան օրս  
 դժոխքին տակը կուլան կօր , որ մեղքեր  
 նին ապաշխարելու համար եկած բարի  
 խորհուրդը՝ ոտքի տակ առին : Արչախ  
 հոգիք ահռանին կրճտեն ու մաշին պի  
 տօր , տեսնալով , թէ քիչ բաներով  
 արքայութիւն կօրսնցուցին : Մն առնը  
 պիտի իմանան , թէ ՄԾ իրենց սրտին  
 մէջ որչափ սբ խորհուրդներ ազդէ պի

1) Ի ճԺԸ . Սաղմ :

2) Ծառ ԼԳ . Աւետար :

տոր եղեր, եթէ մէկ խորհուրդը կատարելու ըլլային: Արովհետեւ ամէն պատուը՝ որ առաքինութիւններով պիտի տային, աս պզտիկ սերմին մէջ պահուած էր, բայց իրենք չուզեցին: Ընտանեւորիչ ճար իրենց պիտի չիմնայ, բայց եթէ յուսահատիլ, ու Սաուղայ պէս լալով ըսել. \* Արպիսի մեծ ինչ կորուսի, այլ ինձ թուէր, եթէ զոչինչ ՚ի բաց մերժեցի || 1). կըսէ սբ Գրիգոր:

### Պատմութիւն.

Աղբալի պատմութիւններ շատ կան այնպիսի մարդիկներու՝ որ Հոգւոյն սրբազան խորհուրդները բանի տեղ չիդրին: Մենք ատ շատերուն մէկը կուզենք պատմել, որն որ սբ Ընտանինս կըզրէ: Ընուական մարդու մը զաւակ՝

3) Անդ:

որ խելացի տղայ մի էր, Մ.ճ պաշտու.թն  
 ինքզինք տուճ էր, յիշելով իր մահը,  
 որ Մ.ճ մտացած ատենը միտքը ձգած էր:  
 Աւստի վախնալով, որ չըլլայ թէ յան-  
 կարծակի մեռնի՝ աղաչեց Մ.Յ, որ մեռ-  
 նելէն առաջ իրեն յայանէ, թէ ո՞ր օր  
 պիտօր մեռնի, ուղղի վերջին հարկաւոր  
 եղածները կարող ըլլայ հոգալ: Մ.ճ ա-  
 ղաչանքը լսելով՝ իր պահապան հրեշ-  
 տակին ձեռքովը իրեն յայանեց, որ մեռ-  
 նելէն իրեք օր առաջ խապար կուտամ,  
 ուղղի կարող ըլլաս ամէն բանը տեղն ՚ի  
 տեղը կատարել: Մ.ս ուրախալի խապար-  
 ըին այնչափ չափէ դուրս հաւտաց, մին-  
 չև միտքը դրաւ, թէ հրաշքով, ու եր-  
 կնքէն ուրիշ հրեշտակ մը գալով իրեն  
 խապար պիտի տայ մեռնիլը այսպիսի  
 խօսքով. «Նաներդ պատրաստէ, վնջի  
 իրեք օրէն վերջը մեռնիս պիտօր»: Աւս-  
 տի աս յուսով ու թեթեամամտութիւն (որ  
 երիտասարդաց վրայ սովորաբար կը-

դանու՛ի) իր ջերմեռանդութիւները սկսաւ  
 թող տալ, ու մահուան յիշատակն ալ  
 մտքէն հանել: Սկսաւ խաղերու՝ զբօ-  
 սանքներու ինքը ղինքը տալ, ու կամաց  
 կամաց մեծամեծ մեղքերու մէջ ինկաւ:  
 Ա՛ճ աս տղան գէշ ճամբէն դարձնելու  
 համար բան չըթողուց որ չըրաւ. խրկեց  
 հաւատարիմ բարեկամներ ու սր վզնի-  
 ներ, որ բռնած ճամբան թող տալու  
 կը յորդորէին ղինքը. խակ ան թշուառա-  
 կանը իրեն եղած խոստման վրայ յու-  
 սալով շարունակ աս կըսէր. Մեռնե-  
 լէս առաջ կըդառնամ: ( )ր մը մէկ ան-  
 տառի մէջէն՝ ուր տեղ աւազակներ կայ-  
 ին, գացած ատենը՝ աւազակները սրով  
 ասոր վրայ եկան. ան տեղը ասիկայ վի-  
 բաւորելէն վերջը կըսպաննէին ալ, եթէ  
 ձիու վրայ նստած փախչելու չէր ըլլար:  
 Ա՛ս Ա՛յ առջին խաղարը քիչմը մահուան  
 յիշատակը միտքը բերաւ, բայց օգուտ

մը չըրաւ, վնգի դարձեալ իր չար գործ-  
քերուն դարձաւ :

Հազի՛ թէ վերքերը ըրնտցած  
էին՝ նաւով ճամբայ ելաւ, ծովուն մէջ  
սոսկալի ալէկոծութիւն եղաւ, որ ստուգի՛  
ընկղմելու վրայ էին : Նաւուն մէջ ե-  
ղողները ամէնը Մ.Յ կաղաչէին կօր զի-  
րենք աղատելու : Միայն աս երիտա-  
սարդը մահը աչքին առջևը տեսնալով՝  
հոգը չէր ըլլար կօր, յուսալով հրեշտա-  
կին խօսքին որ ծուռ հասկըցած էր, թէ  
մեռնելէն իրեք օր առաջ իրեն խապար  
պիտի տայ : Մտիկայ մեռնելուն երկրորդ  
խապարը եղաւ, ու Մ.Յ օգնութիւնը աղա-  
տեցաւ, բայց աս խապարն ալ չհկրցաւ  
անօր խելքը վրան ժողվել տալ : Մինչև  
յանկարծ երրորդ խապարն ալ հասաւ .  
քի գէշ տենդ մը (սըթմայ), որ քիչ  
ժամանակիւն մէջ զինքը մահուան դու-  
ռը հասցուց : Մն ատենը իրեք օր մեռ-  
նելէն առաջ՝ քովը կային բժիշկները,

ազգականները, խոստովանահայրը, ու  
կըտորդորէին կոր, որ հոգւոյդ ճարը  
հոգայ, տես որչափ քիչ ժամանակ ու-  
նիս, վերջին վայրկենէն կախված է քու  
յաւիտենական փրկութիդ, ու դատա-  
պարտութիդ: Իսկ երիտասարդը սա խօս-  
քին վրայ յամառած կեցած էր, թէ ես  
մինչև հիմայ ան վտանգին չեմ հասած,  
մանաւանդ աղէկ դիտեմ, կըսէր, որ ինձի  
երկինքէն հրեշտակ պիտի դայ, ու իրեք  
օր առաջ՝ մեռնիլս խապար պիտի տայ:

Ըստ ըսած ատենը մէյմընալ հրեշ-  
տակը եկաւ, ու հիմայ մեռնիս պիտոր  
ըսաւ: Հիշանդը օրտը խշխշալէն սկսաւ  
հրեշտակը յանդիմանել, թէ խօսքիդ  
վրայ չիկեցար, ու իրեք օր առաջ խա-  
պար չիրերիր: Հրեշտակը պատասխան  
տուաւ, որ խօսքս հաւատարմութի պահե-  
ցի: Ըւազակներէն կրած վտանգդ, ծո-  
փուն մէջ քաշած ալեկոծութիդ, ու հի-  
մակվան հիշանդութիդ՝ ըսաւ, իրեք խա-

պար տուող յիշատակութիւներ եղան :  
 Ասկից 'ի զատ՝ ըսաւ հրեշտակը, իրեք  
 օր առաջ բժիշկներուն բերնով մահդ  
 ծանուցի քեզի : Զօրդ մօրդ բերնով յոր-  
 դորեցի զքեզ հոգւոյդ ճարը հոգալու .  
 խոստովանահօրդ բերնով ըսի որ խոս-  
 տովանիս, սրբութի ու վերջին օժումն  
 առնես : Ասոնցմէ ուրիշ՝ Ա՛ճ ալ իր  
 շնորքովը քու սիրտդ դրդեց, ու ես ալ  
 իմ կողմանէս պարտքս կատարեցի : Աւ-  
 բեմն ինչպէս կրնաս ըսել, թէ խօսքիդ  
 վրայ չիկեցար, յանցանքը քուկդ է, որ  
 խրատները՝ յորդորանքները՝ ու աղա-  
 չանքները մտիկ չըրիր : Աս խօսքերը  
 ըսելով հիւանդը, ու չիկրնալով պա-  
 տասխան մը տալ՝ հոգին աւանդեց, իր  
 քովի եղողները ահա դողու մէջ թո-  
 ղուց, որովհետեւ հոգւոյ փրկուն նշան  
 մը չեցրցուց : Ահա այսպէս երբօր մէկը  
 բարի խօրհուրդները չըներ նէ՛ այնչափ  
 դէշի կերթայ, մինչև ամենուն ալ դէմ

կըկենայ : Ասզի \* շնորհք Հոգւոյն սրյ՝  
 ոչ թմերումս այլ թմ իւրումն կարգի,  
 մատակարարի ||, կըսէ սբ Ախպրիանոս 1) :  
 ՍԷ Անդունինոս Է. 1. Բ. 1. 1. Է :

## ԳՄ. Գ.

Իսորի Սորոմոն-Է՛ն՝ որ քարոզ լէլէն իս-  
 նինանք :

\* Արանի՝ այնոցիկ է, որ լսեն զբանն Ա՛յ,  
 և առնիցեն ||. Գ՛. 1. Ժ. 28 :

Քարոզ լսելը շատ մեծ սեպել պէտք է.  
 որովհետև անկից, իբրև մեծ դանձարանէ  
 բարի մտածութիւնք կեղան : Ա՛ճ գրե-  
 թէ իր շնորհքը անոնց կուտայ՝ որոնք որ  
 քարոզ կըլսեն : Ստոյի է, ուրիշ ճամ-  
 բաներ շատ կան, որով Ա՛ճ մեղաւոր-  
 ները կը դարձնէ, իմ երբեմն հոգին լու-

1) Յազ. արտոն. էկեղ.

սաւորելով . երբեմն բարեկամաց ձեռ-  
քով խրատելով , երբեմն մէկ գժբաղդ  
դիպուճածով : Բայց յաճախ, ու սովո-  
բարար Ա՛ճ հոգիները իրենց փրկութե՛ն  
ճամբան կը դարձնէ , երբոր քարոզ լը-  
սելու կերթան . ուստի Սարգարէին բեր-  
նով կը յորդորէ . Լուսարուս , եւ Կեցցե՛ն  
անյին , յէր 1) : Սի՛ Բեռնարդոս կըսէ .  
Ա՛ճ այսպէս կմ՛ ասոր համար կընէ , ուղ-  
ղի կեանքը ան դո՛նէն մտնէ , որ դո՛նէն  
մահը մտաւ : Սահը ականջէն մտաւ ,  
որ խաբեբայ օձին խօսքը մտիկ ըրաւ .  
կեանքն ալ ականջէն մտնայ , ճշմարտուն  
քարոզը մտիկ ընելով : \* Ա՛կանջք որք  
առաջին դուրք եղեն մահու՝ լիցին և  
կենաց ॥ : Կամ ասոր համար , որովհետեւ  
ինչպէս հաւատքը մեր փրկուն սկիզբն  
է , Լուսարուս ՚ի լսելոյ էն , եւ լուս՛ է  
Բանէն Վ՛սի 2) , այսպէս ալ Ա՛Յ բանը

1) Լուսայ . ին՛ . 22 :

2) հոգիմ . Ժ . 17 :

լսելէն պէտք է ուրիշ առաքինութիւն-  
 քը ծնանիլ, որոնք որ փրկութիւն հար-  
 կաւոր են, ինչպէս է զգաստութիւն՝ ո-  
 րով ըրած մեղքին վր մէկը կը զղջայ, ա-  
 րիութիւն՝ որով փորձութեց դէմ կը կե-  
 նայ, ու սէրը՝ որով զՎճ՝ ու զընկերը  
 կը սիրէ :

Եւ այց թէ աս կամ թէ ան ըլլայ՝  
 աս բանս յայտնի է, թէ Վճ՝ որ աղէկ  
 գիտէ ինչ ճամբով մեր հոգւոյ փրկութիւն  
 Մտածութիւն մեր սիրտը կուզէ տնկել՝  
 սր գրքին մէջ զմեզ յաճախ կը յորդորէ,  
 որ քարոզ լսելու երթանք, ու քարո-  
 շիչներուն ըսածը աղէկ միտք առնունք .  
 ինչպէս . Եւստից իմաստնոց յարո՛ւ զն-նիւն  
 թո 1) : Առնարհեցո՛ւ զն-նիւն թո, եւ ընկալ  
 զհոնս համճարոյ 2) : Ինչ որ որդեկով հա-  
 նազալ իրարոս 3) : Ոչնարհ ի՛նչպիսի իմո-  
 լիւն, Վճ իր բերնովը ըսաւ 4) : Եւ

- 1) Աւակ. իբ. 17 : 2) Սիր. բ. 2 :  
 3) Աւակ. ԺԹ. 27 : 4) Յովհ. Ժ. 279

զարմանալու չէ, որ Աճ քարոզ լսելը  
կըզուլէ, որովհետեւ ինչպէս նր Նեոնար-  
դոս կըսէ, Աճ անով \* խրատէ, ուսու-  
ցանէ, շարժէ, խրատէ զյիշողութիւն,  
ուսուցանէ զմիտս, շարժէ զկամս ॥ : Այն-  
չողութեն կազդէ վախճանը յիշել, որուն  
համար ստեղծած ենք : Մտքին միջոցները  
կըցուցանէ, որոնք գործածելով արքայ-  
ութիւնը կըստանանք, կաւքը կըշարժէ  
դժուար բաներու ձեռք զարնելու, ուղի  
դրած պատուիրանները կատարենք :

Ասիկայ չէթէ յորդորանքներով  
միայն, այլեւ երևելի օրինակներով ցը-  
ցուց, թէ անային խօսքը լսելը որչափ  
զօրութի ունի եթէ մեծամեծ մեղաւոր-  
ները դարձրնելու, և եթէ արդարները  
իրենց սրբութեն մեջ աւելի առաջ տանե-  
լու : Մեղաւորներուն վրայ օրինակ ու-  
նինք նախ զնրն ( ) գոսաինոս : Ասիկայ  
ոչ իր խելացիութիւնը, ոչ տեսակ տեսակ  
զրքեր կարգալը, ոչ իր ջանքը՝ որով

Ճշմարիտ երջանկութի դանաւ կուղէր,  
կըրցան դարձընել: Պէտք եղաւ սր Մի-  
րոսիոսին քարոզը լսել, ու անով միտքը  
խորհուրդ եկաւ վարքը փոխելու, ու ին-  
քը զինքը շտկելու: Նարեկաս անառակ  
դերասանը (Տէյաղըլճի), որ ամէն գէ-  
շութն ինքը զինքը տո՛ւած էր, ու ուրիշ-  
ներուն ալ քար գայթաղուէ էր, մաս-  
խարկութն համար ըսաւ աս խօսքը.  
Եւոյշուրեցիք, զէ մերջեալ է արայո-  
ւելիս 1): Ինդ ասիկայ ըսելը՝ այնպէս  
ուրիշ կերպ զինքը զգաց, մինչև ամէն  
բանը թող տո՛ւաւ, անապատ դնաց,  
ու վարքը փոխեց: Մովսէս աւազակը  
մինչև հիմայ կը պատմուի, որ մէկ բարի  
մտածութիւն իր աւազակութիւնը թողուց,  
ու ճգնաւոր եղաւ. վնդի օրմը ըստ պա-  
տահման ժամ մտաւ, տեսաւ որ քարո-  
զիչը դժօխքի վրայ քարոզ կուտար ու

1) Մատթ. ք. 2:

Վրսի խօսքը կըսէր կոր, Երբեայք յինչն  
 անխճեալը 'ի հոսքն յախտնական 1) :  
 Բայց ամենէն զարմանալի է նր Պօղոս  
 պարզամիտին եղած տեսիլքը : Ասիկայ  
 խոնարհութիւն համար ժամու դռնապան  
 եղած էր : ()րմը տեսաւ որ մարդուն  
 մէկը մեծ ու ծանր մեղքերով լցված հոգ-  
 ւոյն կողմանէ, իսկ մարմնոյն կողմանէ  
 երեսին գոյնը փոխուած, սոսկալի տղեղ,  
 երկու սատանաներ շղթայով կապած  
 աստին անդին կը քաշէին, ու այնպէս  
 ժամուն դռնէն ներս կը մտնար կոր, իսկ  
 պահապան հրեշտակն ալ արտմած հե-  
 ոուէն կուգար կոր : Ասիկայ տեսնալով  
 նրը սկսաւ լալ ողբալ, բայց վերջը  
 սկսաւ ուրախանալ : Արուհեաւ մարդը  
 ժամէն ելած ատենը՝ տեսաւ որ շղթայ-  
 էն արծրկած է, սատանաները քովը չեն,  
 ինքնալ գեղեցկացած, ու հրեշտակն ալ

1) Մատթ. իՆ. 41 :

քովէն ուրախ դուռարթ կերթար կոր :  
 Վնաց քրք անմիջապէս մարդուն քովը ,  
 ու սկսաւ աղաչել , որ ըսէ մտքին մէջ  
 ինչ կըմտածէր : Ըն ալ ըսաւ . երբօր  
 քարոզիչին բերնէն լսեցի մարգարէին  
 խօսքը , որ կըսէ . Ալէէ եղէն Տեղ յեր  
 իբրն զլանյախարիւն՝ իբրն զիւն սղիտաւ  
 տարից 1) , այնչափ մտքիս մէջ մեղքե-  
 բուս թողութե՛ն ու ապաշխարութե՛ն վրայ  
 յոյս մը ունեցայ , որ անսահաթը միտքս  
 դրի՝ որ ապաշխարեմ , ու վարքս փո-  
 խեմ :

Իսկ որոնք որ անձային քարոզութի  
 լսելով աւելի առաքինի ըլլալու առա-  
 ջագրութի դրին , ու երևելի գործքեր  
 ըրին , անոնց վրայ օրինակներ շատ ու-  
 նինք : Աիկողայոս Տօլենտացին թէպէտ  
 պղտիկուց ՚ի վեր առաքինութիւր կըսի-  
 բէր , բայց դեռ աշխրբէս ետ շեր կենար :

1) Եսայ . Զ . 18 :

Օրմը քարոզ լսելու գնաց, որ նր  
 Յովհաննէս առաքելային աս խօսքին վրայ  
 էր. Մէ՛ն ի՛րէ՛ր զաշխարհ, եւ թէ որինչ յաշ-  
 խարհի է, 1) : Եւ խօսքէն այնպէս սրը-  
 տին մէջ կատարելութե՛ն բորբոք ունե-  
 ցաւ, որ շուտ մը քարոզիչին գնաց, ու  
 վերջը նր ( ) գոստինոսին կրօնը մտաւ,  
 ուսկից որ քարոզիչն էր : Սք Նաքերիոս  
 բովանդակ աշխարհական գիտութե՛ն ինքը  
 զինքը տո՛ւած էր. երբոր քարոզի մէջ  
 լսեց առաքելոյն խօսքը. Իմաստութե՛ն  
 աշխարհէս այսորիկ յիմարութե՛ն է աստօ՛ղ  
 (Ն 2), բողորովին առ Ե՛ծ դարձաւ :  
 Սննտոս երևելի վիճակ Նոնոնիայի՝ որ  
 աշխարհային գիտութե՛ն ետևէն եղած էր,  
 ամենևին Հուգինալոսին առաքելական  
 քարոզչին քարոզը լսել չէր ուզէր  
 Նայց նբ Ստեփաննոսի տօնին օրը աշա-  
 կերտներուն աղաչանացը համար գնաց

1) Ին Յովհ. ք. 15 :

2) Ին կորնթ. ք. 19 :

քարոզի: Հոնտեղս քարոզիչը նա Ստեփաննոսին խօսքը բերելով. Ահա դեռս նեւ գէրիկնս Բայեւու 1), այսպէս ըսաւ, որչափ հոգիներ մեռած ատեննին աս խօսքը չեն կրնար ըսել. վնդի այնչափ հեռու է անոնց երկինքը բացված տեսնելը, մինչև աւելի դժոխքը բացված կըտեսնան: Այս քիչ խօսքը այնպէս Սոնեատոսին սիրաբ թափանցեց, որ առանց տուն դառնալու դնաց նա Գոմինիկոսին կրօնը մտաւ:

Ասոր համար նա վգայները շատ ազէկ կըզըուցեն, թէ Այ խօսքը կրակի ու մուրձի (չէքիճի) կընմանի: Ինչ իբրեւ գնոր էն, տսէ ՏԻ, եւ իբրեւ գնորձ որ հողատնէ գլխի 2): Արակ է, վնդի արգարոց սիրաբ սիրով կըբորբոքէ. և մուրձ է, վնդի խստացեալ մեղաւորաց սիրաբ կըփշըէ: Գուցէ մէկը ըսէ.

1) Գործ. Է. 55.

2) Երեմ. ԻԴ. 29.

այսպիսի դիպուճածներ քիչ կը գտնուին։  
 Նայց չէթէ աս Այ բանէն է, հասարակ  
 լսողներէն, որոնք լսելու համար հոն  
 կերթան, իսկ աչքերնին շարունակ աս-  
 տին անդին են, փխկ քարող լսելու՝  
 քաղքին մէջ լսված նորալուրը (հաւա-  
 տիսը) մէկզմէկու մէջ կը խօսին, կի՞ կեր-  
 թան ակամայ, կի՞ առանց մտածուի, կի՞  
 լսելքերնին մտքերնին տան մէջ ունեցած  
 հոգերնուն վրայ են : \* Չականջս (կը-  
 սէր փիլիսոփային մէկը) բերեն միայն  
 անդ, այլ ոչ զմիտս ։ Նսած բաներնուս  
 շատ յարմար կուգայ սր Ղրիգորին տը-  
 ւած մեկնուիլը Վ.նի խօսքին վրայ, Որ  
 «անիցի տիանջս լեւոյ լեւեցէ 1) : Իրաւի  
 կըսէ, \* Այն որք անդն կային՝ զականջս  
 ունէին զմարմնաւորս, բայց զայս ասե-  
 լով, որ «անիցի տիանջս լեւոյ լեւեցէ՝  
 ապաքէն զսրտին խնդրէ զականջս 2) :

1) Մատթ. Ժ. 8 :

2) Ի ճառ Ժ. Աւետար :

որ թէ չունինք՝ ձայնը միայն կըլսենք,  
բայց ձայնին զօրութիւնը չենք հասկընար:

Եւ պա թէ չէ, ինչպէս որ առաքեալը  
կըսէ. «Ինչպէս է Բանն (Յ 1)»:  
Ակնդանի է. վնդի ամէն ատեն կը գործէ.  
ազգող է, վնդի իր զօրութիւնը գործքով  
կըցուցանէ: Իսկ աս կենդանութիւնը ու  
ազգողութիւնը այնպիսի օգնութիւններու,  
ու լուսաւորութիւններու մէջ կերևայ. որոնք  
որ Հօգին սր գիպուկ տեղ կուտայ:

Անոր համար քանի անգամ որ քարոզ  
կըլսենք՝ մտքերնիս դնենք, թէ քարոզիչ-  
ները երկու լեզու ունին, մէյժը արտա-  
քին՝ որ ականջը կըլսէ, միւսը ներքին՝  
որ սիրտը կըլսէ: Աւստի առաքեալը կը-  
սէ, թէ քարոզի գացողը սկտք է մտիկ  
ընել քարոզը ոչ իբրև զԲանն յարդիւն,  
այլ ուր ճշմարտիւ՝ զԲանն (Յ 2): Սանա-  
ւանդ տես, որ սր ( ) գոստինոս ինչ կըսէ.

1) Եբրայ. Գ. 12 :

2) Ին Թես. Գ. 3 :

\* Արչափ զգոյշ լինիմք, զի մի՛ ինչ 'ի մարմնոյն Վրսի անկցի յերկիր, այնչափ պարտ է մեզ զգոյշ լինել, զի մի՛ բանն նոյ կորիցէ 'ի սրտից մերոց ॥ 1) : պատճառն ալ կուտայ. \* Օ՛ր ո՛չինչ ըհատ մեղանչէ նա՛ որ զբանն նոյ արհամարհանօք լսէ, քան զնա՛ որ անզգոյշ կամօք թողու զմարմինն Վրսի անկանիլ յերկիր ॥ :

### Պատճառ-Ը՛ :

Թէպէտ բարի խորհուրդներուն զօրութիւնը, որ քարոզի մեջ կուեննանք, ցուցանելու համար մէկ քանի պատմութիւններ վերը բերինք. բայց պատմութիւնը ալ կուզեմ հոս տեղը դնել, որ շատ սքանչելի ու զարմանալի է : Պրոանչիսկոս, ու Հակոբ անուամբ երկու եղբարք կային, որ Պլակենդա ըսուած

1) 'ի զ. Ճառն :

քաղաքը աշնուական ու հարուստ մար-  
 դու զաւակներ էին: Ասոնք պղտիկուց  
 'ի վեր զինուորական արհեստը սորված  
 ըլլալով Պիանտրա դացին, ու հինգե-  
 րորդ Աարուս կայսեր հարիւրապետը  
 եղան: Պրանչիակոս քանի մը տարի զի-  
 նուորութե մէջ կենալէն վերջը՝ Պլա-  
 կենդա դարձաւ, ու մէկ մեծատան աղջ-  
 կան հետ կարգուէցաւ: Աարգուէլէն  
 վերջը սկսաւ ինքըզինք խաղի զրօսանքի  
 տալ: 'Ար նոր զգեստներ հագնելու,  
 ամէն օր պէսպէս խրախճաններ ընելու,  
 մարմինը փափուկ պահելու այնչափ հոգ  
 կրտանէր, որ ամենեին իր հոգին, ու  
 Ա՛ճ չէր մտածէր: Ա՛յ կամօքը եղաւ,  
 որ ան ժամանակները ըր Պետրոս Աւ-  
 քանտարացին ան քաղաքը եկաւ, ու իր  
 ըր քարոզութիւնը շատ մեծամեծ մարդիկ-  
 ներ դարձուց: Պրանչիակոս ասոնց վրայ  
 կրճիծաղէր, որ այնպէս պարզամիտ ըլ-  
 լալով տխմար կրօնաւորի խօսքովը կը-

խարուէին: Բայց որ մը առտուանց  
կանուխ ընկերներուն հետ դացած ատե-  
նը՝ աղաչեցին իրեն, որ ինքն ալ մար-  
դախարութե՛ն համար իրենց հետ մէկտեղ  
ժամ մտնայ: Մտան ժամ, տեսան որ  
մը Պետրոս վերջի դատաստանի վրայ  
քարոզ կուտար կոր, քարոզի մէջ կը-  
պատմէր ան վախը ու դողումը՝ երբ  
Ա՛ճ պիտի գայ. հիմայ՝ կըսէր, Ա՛ճ ողոր-  
մած է, ան ատենը Ա՛ճ վրէժխնդիր պի-  
տոր ըլլայ, ուրի մեղաւորները յաւի-  
տենական պատիժներով պատուհասէ.  
ինչ ամօթ պիտի ըլլայ՝ երբոր ծածու-  
մեղքերը ամենուն առջև պիտոր բաց  
ո՛ւնին. ու ինչպիսի տանջանք, երբոր սա-  
տանաները իրենց կատաղութի՛նին պիտի  
ունենան, ու իրենց ուղածնին պիտի ընեն:

Աս ահարկու խօսքերը Գրանչիս-  
կոս լսելով՝ դողալ սկսաւ, ու երեսին  
գոյնը նետել. մտածեց թէ ինքն ալ ի-  
րեն չարութե՛ն համար այսպիսի պատիժներ

պիտի առնու. ուստի՝ սիրտը լեցվելով  
 սկսաւ լալ, և երոք քարոզը լմնցաւ՝ գնաց  
 նրին ոտքը ինկաւ. ու իր հողւոյն ճարը  
 խնդրեց: Այլ Աւետրոս շատ սիրով ըն-  
 դունելով, անուշ խօսքերով զինքը քա-  
 ջալերեց. որով այնչափ բորբոքեցաւ,  
 մինչև անտեղը իր վրայէն փառաւոր հա-  
 դուստը մեկդի հանեց: Տուն եկաւ նե-  
 տեսնելով կնիկը ասոր երեսը տրամած,  
 աչքերը արցունքով լեցունած, սկսաւ  
 հարցնել, թէ ինչ եղած ես. անալ արհն  
 տուաւ. իմ տրամուծիս ուրիշ բանէն  
 չէ, բայց եթէ պատիժները ճաննալէս,  
 որոնց՝ մեղքերուս համար արժանի եմ,  
 ինչպէս նա Աւետրոսէն խմացայ: Ասոր  
 համար առաջադրեցի, որ մեղքերուս վրայ  
 ապաշխարելու համար՝ մարմինս չարչա-  
 րեմ: Իրաւցնէ ինչպէս որ ըսաւ նե՛-  
 ըրաւ. ձգեց իր մեծուծն զգեստը, հա-  
 դաւ կարկտած զգեստ մը, և ա կեցաւ  
 չար ընկերներէն, թող տուաւ պէսպէս

տեսակ կերակուրները: Շատ նեղացաւ  
 աս բանիս վրայ կնկան սիրտը, որ աշ-  
 խրքիս փառաց, ու փուճ զարդարանք-  
 ներու ինքը զինքը տո՛ւած էր, ու զնց  
 որ նր Պետրոսին երթայ, ու թէ գան-  
 դատելով թէ աղաչելով հասկցնէ ա-  
 նոր, որ իր երկանը սիրտը շինէ, ու զի իր  
 կեանքը՝ և հագուստը շտկէ ինչպէս որ  
 ազնուականի մը կը վայլէ չէ թէ ճգնաւո-  
 թի կմ՝ կրօնաւորի մը պէս ապրի: Ասոնք  
 ու ասոնց նման խօսքեր կնիկը բարկութի  
 ըսած ատենը՝ նրը մտիկ կընէր առանց  
 բերանը բանալու. բայց վերջը սկսաւ  
 մէկ քանի բաներ նոյն օրվան տուած քա-  
 ղողէն կնկան ալ ըսել. Ի՞նչ աշխրքիս խա-  
 բէութե՛ն վրայ, կենաց կարճութե՛նը, մա-  
 հուան անըստուգութե՛նը, որ ժամէ ՚ի  
 ժամ ( սահժէ սահամ ) կը մտախնայ:  
 Աս խօսքերը նրը անուշութի ըսած ատե-  
 նը Ա՞ճ ալ կնկան սիրտը շարժելով սկսաւ  
 կնիկը անսխալ պէս գլխուն զարդը, ու

վզին մանեակը (կերտանլըխը) հանել .  
 ու սրտին ցաւէն ձեռքերը կուրծքին զար-  
 նել : Արոր տուն դարձաւ , չէ թէ միայն  
 երկանը ըրածին հաւնեցաւ , այլև ինքն  
 Այ սիրով բորբոքելով անոր բռնած  
 ճամբան բռնեց :

Աս ժամանակներս եկաւ Պիանտրայ-  
 էն Յակովբոս պզտիկ եղբայրը , տուն  
 մտաւ , ու բովանդակ փոխված տեսնե-  
 լով զարմացաւ , և որովհետև մեծութի  
 ու փառք կըսիրէր , աս բանս իր աղզին  
 նախատինք սեպեց : Ակաւ զասոնք նա-  
 խատել ու անարգել , որ իրենց ցեղը  
 ասով վար կըղարնէին : Ար զինուորական  
 իշխանուիքը տակն ու վրայ կընէր տունը ,  
 ուղղի զանոնք բռնած ճամբայէն դարձ-  
 նէ : Այնչափ բան ըրաւ , որ Պրանչիս-  
 կոս Այ օգնուի սկսաւ յորդորել իր եղ-  
 բայրը , որ մէկ անգամ նը Պետրոս Աւ-  
 քանտարացւոյն քարոզը լսելու երթայ :  
 Արկուքն ալ ժամ գացին , ու տեսան որ

նբ Պետրոս քարոզ կուտար կոր աշխրբիս  
 թշուճառութն, արքայութն ու գժոխ-  
 քին վրայ: Այս քարոզէն շատ մեծ օգուտ  
 տեսաւ Յակովբոս. վնդի սիրտը կակղցաւ,  
 ու վարքը շտկելու սէրմը եկաւ իրեն:  
 Գարձաւ եղբօրը, ու ըսաւ. ով կրնայ  
 գէմ կենալ այսպիսի զօրութի: Աս ալ  
 ձեզի կըհետեւիմ: Արթանք աշխատինք  
 ասկից վերջը միայն արքայութն համար,  
 ինչպէս աշխրբիս համար աշխատեցանք:  
 Աւ այսպէս իրեքն ալ գացին, ու նբ  
 Պրանչիսկոսին Արրօրդ Կարգ ըստճած  
 կրօնը մտան, ու սրբութի մեռան:

( ) յ՛ն. Ռեանարդեան 'է վարս Աւ  
 քանգար. Գէր. Թ. ԳԼ. ԷԷ:

## ԳԼՈՒԵ

Իսաիի Ստամբուլի որ հոգեւոր գիրք իսր-  
 րաւէն իննեանս :

\* Միտ գիր ընթերցուածոց . . . մի ան-  
 փոյթ առներ զչնորհացդ . . . որ տուաւ  
 քեզ || . 3 Տէ՛. 7 . 14 :

Ոգևոր գիրք կարդալն ալ իրացնէ  
 շատ օգուտ կրնէ, ու բարի Ստամբու-  
 թիներուն ուրիշ տեսակ գանձն է : (Իւ-  
 պէտ ան հոգին չունի, որն որ ձայնը ու-  
 լեզուն՝ խօսքերուն կուտայ, որով և  
 միտքը աղէկ կըտպաւորուի, բայց ունի  
 ուրիշ աղէկութի. որովհետև հոգևոր  
 գիրքը Գեմեարիոսին ըսածին պէս՝ Կ-  
 արաբի՛ն իորհրդալիսն է, որ առանց շո-  
 ղորթթեւու և ծածկեւու մուլութիները  
 առջևը կըդնէ, սխալանքը կըյանդիմա-  
 նէ, իրը ինչպէս է նէ՝ կըզուցէ, որն որ  
 քարոզիչը շատ անգամ չիհամարձակիր,

զրուցել, կի՞Ք ժողովուրդը յանդիմանել :  
 Ասկից 'ի զատ ամէն անգամ քարոզ  
 չենք կրնար լսել, կամ օգուտ մը տես-  
 նալ. իսկ գիրք կարդալը միշտ մեր ձեռքն  
 է, ու ամէն ատեն կրնանք կարդալ, ու  
 օգուտը տեսնալ : 'Կարձեալ՝ քարոզ-  
 չին՝ ըսածները չիմնար, այլ կանցնի կեր-  
 թայ, և մոռնալէն վերջը՝ մտքերնիս չի-  
 դար. իսկ գրքէ կարդացուածը չի-  
 մոռցուի, և եթէ մոռցուելու ալ ըլ-  
 լայ՝ մէկ կարդալով մոքերնիս կուգայ :  
 'Կարձեալ՝ աչքով տեսուածը աւելի  
 սիրտ կըշարժէ, քան թէ ականջով լս-  
 ւածը, ինչպէս կըսէ Ալրատիոս. 1)

\* Աչ տըպանան քաջ 'ի սըրտի

Ականջալուր բանք բերանի,

Արչափ նոքա զորս արկանէ

Անխար աչաց լոյս 'ի հոգի ॥

Ասոր համար պարտապ տեղ չեն ըսեր,  
 մանաւանդ կը յորդորեն ալ սր վզնները,

1) Յաղ. Արհ. բանաստ. Տող 180 :

թէ բարի մտածութիւններ ուզողը պէտք  
 է որ հոգևոր գիրք կարդայ: Այլ Գրի-  
 գոր փափը իր բարոյական գրքին մէջ շատ  
 աղէկ կըսէ. \* Այլ գիրք ուր հայելի դնին  
 առաջի աչաց մերոց, ուղղի զներքին գէմս  
 մեր նկատեսցուք ՚ի նմա, զի անդ ըզ-  
 գեղեցիկս և զտգեղս տեսանեմք 1) ||:  
 Եւսինքն՝ մեղքերուն տգեղութիւնը, ուղղի  
 վախճանք ու չընենք, առաքինութիւն-  
 քուն գեղեցկութիւնը, ուղղի զանոնք սի-  
 բնք ու ընենք: Եւսոր մէջ երբեմն սուր-  
 բերուն քաջութիւնները ու գործքերը կը-  
 կարդանք, ուղղի ջանանք նմանիլ, երբեմն  
 սխալանքը ու պակասութիւնները, ուղղի ա-  
 նոնցմէ հեռու կենանք: Ամանապէս կը-  
 գոյլէ սր Բեռնարդոս ալ հոգևոր գիրք  
 կարդալը, իրբև աղբիւր մը հոգևոր Մտա-  
 ծութիւններու: \* Արի կարևոր է, կըսէ, մեզ  
 ընթերցանութիւն մտային գրոց, զի այնուիկ  
 ուսանիմք թէ զի՞նչ ունիմք առնել, յորմէ

1) Գրք Է. ԳԼ. 103

խորշիլ՝ և յո՞ դիմել: (Ն՛նթերցանուք զգայուիք և միաք զարգանան 1) || , քի՛ միտքը բարի մտածութիւներով, կամքը նր սիրով կը զօրանան: Այսպէս կը սէ՛՛րիգոր անծարանն ալ իր վրայ. \*Յորժամ՝ ՚ի ձեռս առնում զՆարսդի զյաղագոս բարոյից ճառան՝ սրբիժ հոգւով և մարմնով և անձային իմն փոփոխութիւն այլ յայլմէ լինիմ 2) || :

Աս կարգալէն՝ որ մտքին միշտ բարի մտածութիւններ կը բերէ՝ շատ զարմանալի օգուտ երեցաւ: Աւսկից նր ( ) գոստինոս եկեղեցւոյ մէջ լուսաւոր արեղակ մը եղաւ, բայց եթէ կարգալէն որովհետեւ թէպէտ նր Ամբոստինոսին քարոզը լսելով՝ միտքը դրած էր վարքը շտկելու հաւատքը փոխել, բայց աւելի ուղեց դուխ հանել, երբ երկնքէն ձայն դալով իբէն, թէ սա և կարդան, նր Պօղոս առաքեալին թղթերը առաւ կարգալու: Աւս-

- 1) Բան Ծ. յղ. տարագ. բար. կեղց:  
2) ՚ի ճառն որ ՚ի գով. Բարս:

աի ինքն ալ վերջէն ամ հոգւով աշ-  
 խատեցաւ հոգւոր գրքեր գրել, ցուցա-  
 նելու համար, թէ Մ.Ճ զինքը մէկ կար-  
 դալով ուրիշ կերպ փոխեց: Այսպէս  
 մէկ կարդալէն դարձաւ նա Իգնատիոս,  
 որ Յնեան կրօնը հաստատեց: Այդի նր  
 Իգնատիոս՝ երօր ոչ մերձաւոր մահուան  
 վախէն, ոչ նր Պետրոսին իրեն պառկած  
 ատենը երևնալէն, ոչ հրաշքով հիւան-  
 դուէն առողջանալէն իրեն վարքը կըշա-  
 կէր, նրց վարքը ըստ պատահման ուրի-  
 շին ուղած ատենը կարդալով՝ Այ սիրով  
 բորբոքեցաւ: \*Մտ դիպաց ընթերցա-  
 նութի գրոց նրց՝ բորբոքեցաւ սիրտ նր  
 սքանչելայ՝ զհետ երթալ շաւղաց՝ Քնի,  
 և նրց նր 1) ||: Քայց աս ուղղի չըսուի՝  
 թէ երիկ մարդկանց հանդիպած է, կնիկ  
 մարդկանց ալ օրինակները ունի:ք: Արը-  
 բուհին թերեզեա նր մարտիրոսներուն

1) Ի Ժամագր. մասն 4:

վարքը կարդալէն այնչափ սիրաւ ըոր-  
 բոքեցաւ, մինչև իր տունը թող տո՛ւաւ,  
 ու Ափրիկէ գնաց, ուղղի Վնի փառացը,  
 ու հոգւոց փրկուե՛հ համար կարող ըլլայ  
 աշխատիլ: Այսպէս ալ միւս սրբուհի  
 Թերեզիան, որ Յովհաննա առաջուց կը-  
 սո՛ւէր, ու մեծ մարդու աղջիկ էր: Ափ-  
 կայ օրմը իր զբօսանքները մէկդի գնելով  
 ժամանակ անցնելու համար ուզեց՝ որ  
 իրեն անպարկեշտ գիրք մը բերեն կար-  
 դալու: Վայց ոչ ոք բերաւ այնպիսի գիրք,  
 ու ամէկը սր Թերեզիային վարքը բե-  
 րաւ ասոր ձեռքը տո՛ւաւ: Ափկայ ծուռ  
 աչքովմը առաջ գրքին ճակատը նայեցաւ,  
 վերջը թղթերը դարձնելով կարդալու  
 բանմը գտաւ: Արդալէն ետև սիրաւ  
 շատ սիրեց, ուստի սկսաւ սրբուհւոյն ու-  
 ըիշ բաներն ալ կարդալ, ու սրտին մէջ  
 անոր նմանելու բորբոքիլ: Ակսաւ անմի-  
 ջապէս խաղերը զբօսանքները մէկդի թող-  
 տալ, ու կրօնի մէջ մտնալ կըբաղձայ:

Ըսոր համար կաղաչէր ԱՅ, ու իր երկանը՝ որ զինքը թողտայ: Ա երջապէս երիկը մահաբեր հիւանդուէ բռնուցելով՝ իրեն հրաման տուաւ. և եբոր հիւանդուէ առողջացաւ՝ քահանայական կարգի մէջ մտաւ: Թերեղիս հրամանը առաջին պէս՝ շուտմը գնաց Կարմեղեան բսո՛ւած Կուսանաց կարգը մտաւ. ու սրբուք ապրեցաւ և մեռաւ հոնտեղս: Աօրհնէր միշտ ան սահաթը, որ զիրքը կարդաց ու անով աշխարքս թողուց:

Իայց կարդալէն օգուտ մը չիտեսնուիր, երբոր վեր՛ի վերոյ, կամ շուտ շուտ, կամ մէկ տունէն մէկալ տուն ցաթկելով կրկարդացիլի: Պէտք է հանդարտ ու քաշ կարդալ, մտքերնիս բերելով ըբ Ամբրոսիոսին խօսքը՝ որ կրսէ. \* Ընդ Վսի խօսիմք, յորժամ յաղթս կամք. զնորա ձայն լսեմք, յորժամ զանձային զիրս ընթեռնուեմք 1) 1: Եթէ

1) Գիւրջ Թ. Պաշտ:

Ըյ Հետ խօսած ատեննիս՝ չիվայլեր  
 աչքերնիս ու խելքերնիս աստին անդին  
 ձգել, որչափ աւելի անկարգ բան է մտիկ  
 չընել՝ ինքը մեղի Հետ խօսած ատենը :  
 Երանի ոյ՝ շննէն գլխայտ-Ըն նք, կըսէ  
 Սարգարէն 1) : Արովհետեւ ինչպէս մէկը  
 ոսկւոյ հանք գտնելու համար՝ բաւական  
 չըլլար վրայէն հերկելը, պէտք է որ խօ-  
 բունկ փորէ՝ այսպէս ալ վեր՛ի վերոյ հո-  
 գևոր գիրք կարդալով օգուտ չիտեսնուիր,  
 հապա՛ պէտք է որ նախ խելքը հասկը-  
 նայ ըսուած խօսքին միտքը, չիմանայ  
 ինչ որ սք գիրքը կըսեն, և սորվի սրբե-  
 բուն շրած առաքինութիւնները : Հատ  
 մարդիկ (կըսէր իմաստունին մէկը) հո-  
 գևոր գիրք կարդալէն օգուտ չեն տեսներ  
 վսղի կարգացած ատեննին՝ արտորացող  
 նաւապետի կընմանին, որ իր նաւին  
 առագաստները բացած շուտ շուտ կուզէ

1) Սաղմ. ճԺԸ. 2 :

առաջ երթալ, ամենեին չինայելով թէ  
 ծովին տակը ինչ բան կայ: Պէտք է  
 մարգրիտ փնտրողին ըրածը ընել, որ  
 սէտէֆ բռնել ուղելով կամաց կամաց  
 կերթայ, ու շարունակ կընայի, որ սէ-  
 տէֆները տեսնէ:

Եսկից 'ի զատ շատ աղէկ է կար-  
 դացողներուն երբեմն կենալ, ու մտածել  
 այն բաներու վրայ՝ որ իրենց կըդպչին,  
 կի՞ յաւիտենական ճշմարտութիւները  
 ճանչնալու՝ միտքը կըլուսաւորեն, ու  
 կամքն ալ նք սիրով կըբորբոքեն: Եւս-  
 պէս կըյորդորէ նք Նեոնարդոս, \* Յամ  
 աւուր յընթերցանուէ անտի'ի միտ առ-  
 ցուք ինչ ինչ, զորս ուշի ուշով կընե-  
 ցուք, զմիտս 'ի նա յառեսցուք, որով ո՛չ  
 լիցի մեզ խոկալ զայլինչ 1) ||: Ինչպէս  
 որ մարդ մի ալ պարտէզմը մտնալու  
 ըլլայ՝ միայն ծաղիկները տեսնել՝ ու ա-

1) Ի Թուղթն որ առ Եղբ:

նոնց հօտովը զմայլել հերիք չխնայեր  
 իրեն, այլ դուրս ելած ատենը քանի մը  
 ծաղիկ հետը կըբրցունէ կառնէ, ուղղի եր-  
 բեմն երբեմն հօտովըտայ, ու մտմտուքի  
 մէջ սիրտը բացվի: Այս խօսքս Գառիթ  
 մարդարէն շատ աղէկ կըհաստատէ ըսե-  
 լով. Սնուցումը խոսքերուց քայլէն յեզ  
 քայլէն է (2):

Ար. ՄԱՌԱՌԱՅԱՆՈ  
 ԱՅՅԱԳՐԵՆԻՔԻ  
 ՊԵՏԱՄԱՅՈՒՄ  
 ԲՃԱՊԱՊՐԵՄԻՆԻՄԻՆՈՒՄ  
 ՍԵՆՏ. 1866

ԲՃԱՊԱՊՐԵՄԻՆԻՄԻՆՈՒՄ շատ մեծ բա-  
 րեր պրուծի էր, որ հոգևոր գիրք կար-  
 դալէն շահեցաւ Գառտոն: Ասիկայ ո-  
 բովհեաւ մեծ մարդու զաւակ էր, ինչ-  
 պէս որ ազգաւ մեծատուն էր, այսպէս  
 գիտութիւն ալ մեծատուն ըլլալ կըջանար:  
 Անն տեսակ իմաստութեն գրքերը կը-  
 կարդար, ու ինքըզինքը բոլոր անոր տուն

էր, ինչպէս որ բովանդակ Վրանսայի դասատուները կը վկայեն: Վնաց փարէզ, ու իր խելքին մեծութիւնը հոն ալ ցըցուց: Իր բանը գործքը, ու զբօսանքը՝ իմաստուն մարդիկներու հետ խօսիլն էր: Աւստի երբոր տունը կարդալէն քիչ մը կուզէր հանգչիլ՝ կերթար երևելի գրքածախի մը խանութ, ուր որ ամէն նոր գիտութիւն սորվողները կուգային, ու անցած գացած մեծամեծ բաներու վրայ, ուսման ու գիտութիւններու վր կըխօսէին: Մէկ իրիկուն գնաց հոն Վաստան, տեսաւ որ դեռ մարդ չէր եկած, ժամանակ անցնելու համար գրքածախէն աղէկ գիրք մը ուղեց: Վրքածախը՝ որ ուրիշին հոգւոյն փրկուիլը կըսիրէր, տունաւ Թովմաս գեմբացւոյն սքանչելի գիւքը, որ կըսուի, «*Յողաֆս նմանող լինելոյ Վ.նի*»: Վրքին ճակատը նայեցաւ, ու շուտով գրքածախին ձեռքը տուաւ, ու ծիծաղելով ըսաւ, «*կըխարենս կոր զիս, առ գիրքը տար տուր*»

ան մարդուն՝ որ վանքի մէջ բանտարկեալ  
կեցած է, չէթէ աղնոճական մարդու,  
որ ուսում կուզէ սորվիլ“ : Վրբածախը  
պիսն տոճաւ . „գէշ գիրք չէ ատ գիրքը .  
կարդա՛ մէկ անգամ , եթէ չես հաւնիր՝  
զիս անխելք մարդ , ու ապրանքս չի-  
ճանչցող մը սեպէ : Չեմ հաւնիր ,  
(ըսաւ Վաստոն , ) ասիկայ իմ ուղածս  
չէ“ : Եւ խօսքիս վըայ ուրիշները եկան ,  
ու խօսքը կտրրոճեցաւ :

Մէկ քանի որ վերջը դարձեալ  
Վաստոն նոյն խանութը եկաւ , քանի  
մը գրքեր գնելու համար , բայց ուզեց որ  
գրքերը իր առջևը գնէ , ու ինքը անոնց  
մէջէն ուզածը ընտրէ : Եւ բարեպաշտ  
գրբածախը՝ (ով գիտէ , որ Եճալ ներսէն  
զինքը կըդրդէր) Վաստոն գեմբացւոյն  
գիրքը դարձեալ ձեռքը տոճաւ . տեսա-  
ծին պէս ասիկայ Վաստոն՝ պոռալ սկսաւ .  
„Ես ինչ բան է , ըսաւ , այսչափ մեծ  
խանութի մէջ ասկից ուրիշ ծախվելու

գիրք չիկայ : Հրամանէք, (ըսաւ զբքա-  
 ծախը) ուրիշ գրքեր շատ կան . բայց  
 ասիկայ ամէն ունեցած գրքերէս աղէկ  
 կըսեպեմ : Աաղաչեմ , մի՛ սրդողիր ,  
 բանմը կըխնդրեմ , որ ստակ տալու տե-  
 ղը աս գիրքը կարդաս : ‘Վաստոն այս-  
 չափ աղաչանքին չիկրնալով ալ դէմ  
 կենալ՝ խօսք տունաւ կարդալու . տուն  
 տարաւ ուրիշ գրքերու հետ մէկտեղ ,  
 ու ամէնէն աւելի կարդալ սկսաւ , չէթէ  
 բարեպաշտութեան կամ հետաքրքրութեան  
 համար , հապա խոստումը կատարէ :  
 Բայց որովհետեւ V, 7 բաները աշխրբիս  
 բաներէն տարբեր անուշութի ունին , ու  
 թէեւ չուղեւով ալ կատարուի նե՛՛ի  
 վերայ այսր ամի քիչմը անուշութիը  
 կուտան ու աշխրբիս սէրը մարդուս մտքէ  
 կըհանեն , անոր համար Վաստոն կար-  
 դալով ան գիրքը՝ ուրիշ կերպմը ինքը  
 զինքը զգալ սկսաւ , մինչեւ իրեք շորս  
 հեղ վրայէ վրայ կարդաց մէկ ուրա-

խութիւն սրտի : Ասկից վերջը սրտին մէջ  
 քը մտածութիւններ եկան , ու բաղձանք մը  
 աշխրբիս ունայնութիւնը ու գիտութիւն  
 թող տալու , ու այն առաքինութիւնները  
 գործելու , որոնք որ առած գրքին մէջ  
 կըկարդար : Ուստի ո՛չ իր ազնուականու-  
 թեան , ո՛չ իր հարստութենը նայեցաւ ,  
 ոչ հօրը մօրը՝ որ իրեն զատվելուն վրայ  
 պիտի տրամէին , այլ դնաց մտաւ խիստ  
 կրօնի մը մէջ : Բայց հոն երկայն չիկե-  
 ցաւ Ա.Յ կամօքը որ չուղեց անոր գաղ-  
 տուկ մնալը , հապա աշխրբիս մէջ ուղեց  
 կենալ , ուղի կենդանի ու կատարեալ  
 օրինակ ըլլայ ամենուն , մանաւանդ ազ-  
 նուականներուն : Այլ իրաւի այնպէս  
 սրբութիւն ապրեցաւ , մինչև հրաշք ալ  
 գործեց մեռնելէն վերջը :

Վ. ՍՆՆՆՆ ՍՆՆՆՆՆՆ ՆՆ ՎՆՆՆ  
 ՆՆ. ԳԼ. Բ :

## ԳԼ Թ:

Իսաիէ Սփարձուլի վերջին վախճանի վրայ:

\* Յոյց ինձ Տէր զկատարած իմ ॥.

Սուրբ. ԼԵ. 5:

**Թ.** Էպէտ գիտեմ, որ ուրիշ գրքի մէջ  
ես աս վախճանի վրայ գրած եմ, բայց  
ինչ որ ըսուի՝ միշտ աւելի ըսելու նոր բան  
կըմնայ: Անգի ինչ վախճանի համար որ  
կըգործենք՝ պէտք է որ անիկայ մեր գործ-  
քին սկիզբը ըլլայ, մեզի ուղիղ ճամբայ  
ցըցունէ, ու ամէն ըրածներնուս կանոն  
ըլլայ: Ուստի ամէն մարդ պէտք է որ  
մտածէ, թէ ինչ վախճանի համար մարդս  
Վստուծմէ ստեղծած է, ոնղի անոր հա-  
մեմատ ճամբայ բունէ: Վրդեօք մարդս  
հարստութի ժողվելու համար ստեղծած  
է, որ մեռած ատենը ուրիշներուն թող  
պիտոր տայ: Վրդեօք զինուորութե կամ  
գիտութե մէջ քաջ ըլլալով՝ պատիճ

ստանալու համար: Արդեօք խաղերու  
զբօսանքներու ետևէն ըլլալու համար:  
Արդեօք փառաց մէջ վայելելու, կամ  
միշտ առողջ ապրելու համար: Ա՛չ եր-  
բէք: Ա՛ճ անմահ հոգւոյն չէր կրնար  
վախճան դնել աշխրբիս անցաւոր բարիք-  
ները, որ մարդուս կրմնասնն, կրննդնն,  
կրչարչարնն, ու սիրտը չնն կշտացննր.  
վնդի ինչ զըտար աւելի ժողովէ՝ անզըտար  
աւելի կուզէ: Այժէ Ա՛ճ ուզած ըլլար  
մարդուս վախճան դնել աս բարիքները  
որ աշխատանքով կը ժողովին, ահով դո-  
ղով կը պահպանին, ու ցաւովք կը կորսուին,  
շատ թշուճառու թն՝ մէջ մարդս ստեղծած  
կըլլար: Ինչպէս որ Սողոմոն՝ որ ամէն  
թագաւորներէն աւելի հարուստ եղաւ,  
Լըվիայէ: Օ՜հ զոր ինչ ինչքեցին ուչ  
ի՛, ոչ զբիւցի՛ ի նոցանէն, և ոչ արգիւնի  
զնիքս ի՛ յիմ՝ ուրախուլի՛ 1): Ըայց այս

1) Մտղով. Բ. 10:

ամենայն ուղածք ինչպէս որ պէտք է ընել-  
լէն վերջը՝ տես, ինչ ըսաւ. Տէ՛նի յա-  
Տէնի-սին զլնդո-նայնո-ւնի եւ զանյի-ո-ւնի  
«գաոյ 1) :

Անանկ է նէ եթէ այսպիսի խարերայ  
ու անցաւ որ բարիքներ մարդուս վախճան  
չեն կրնար ըլլալ, պէտք է ըսել՝ թէ  
ուրիշ բարի վիճակ, ուրիշ ճշմարիտ ու  
յաւիտենական բարիքներ իրեն վախճան  
դրված է. ու աս՝ Ա. յ. քովը միայն կրնայ  
գանուիլ, ք՞ եթէ հոս իրեն ծառայելու  
ըլլանք՝ անդիի աշխարքը զինքը կըժա-  
ռանգենք. Աստի Ա՛ճ մեր երջանկութիւնը  
ու զելով՝ յաւիտենից մեզի համար վարձք  
սահմանեց՝ որ խելքէ մտքէ անցած չէ :  
Ասիկայ միայն զմեզ կուրախացնէ, ու  
կըկշտացնէ. որովհետեւ ամեն տեսակ  
բարիքները ունենալով ուրիշ բարիքնե-  
րէն շատ գերազանց է, եթէ մեծութն,

1) Ժողով. Ի. 11.

եթէ շատութեն, ու եթէ արեկութեն  
 նայելու ըլլանք : Ա՛ս վախճանս ստա-  
 նալու համար կըծնանինք, կապրինք,  
 ու կըմեռնինք : Ա՛ս վախճանիս համա-  
 ձայն մեր բովանդակ կեանքը պէտք է  
 կարգաւորել, ու համբերել ձախօրդու-  
 թիներու, ու թշուառութիւններու, որ  
 Ա՛յ ծառայութեն մէջ մեզի կըհանդիպին,  
 թէև քաշածնիս հալածանք ըլլար, կամ  
 բանտի մէջ մնալ, կամ մարտիրոսներու  
 նման չարչարանք կրել : Անգի յաւիտե-  
 նական երջանկութիւն ու վերջին վախ-  
 ճաննիս ստանալու համար՝ ասոնցմէ աւելի  
 բան պէտք էինք քաշել : Թէպէտ շատ  
 անգամ աս աշխրբիս մէջն ալ Ա՛ծ իր  
 հաւատարիմ ծառաներուն մտիթարու-  
 թիներ կուտայ, իբրև յաւիտենական եր-  
 ջանկութեն համ մը. որ շատերը ասով  
 այնչափ կըզմայլէին, մինչև ասոր մէկ  
 կաթիլը աշխրբիս բովանդակ խնդութենը  
 չէին փոխէր :

Իայց դնենք, թէ Մ<sup>Ծ</sup> զմեզ անոր  
 համար ստեղծած ըլլար, որ իրեն միայն  
 ծառայէինք, ու վարձ առնելու յոյս մը  
 չունենայինք, այսու ամենայնի՛ւ իրեն  
 ծառայել կը պարտաւորէինք, եթէ մտա-  
 ծելու ըլլանք թէ ո՛վ է Մ<sup>Ծ</sup>, կ'ի՛նչ պիտի  
 բան է նկատմամբ իրեն, ու ինչպիսի՛  
 նկատմամբ մեզի: Նկատմամբ իրեն, կամ  
 ըստ ինքեան Մ<sup>Ծ</sup> ծայրագոյն ու անսահ-  
 ման բարի է, բնութի՛ր անսահման կա-  
 տարելութի՛, ու անոր համար յաւիտեա-  
 նըս յաւիտենից իրեն ծառայել արժան  
 է: Այժմէ թագուհին Սաբա Սողոմոնին  
 փառքը ու իմաստութի՛ր տեսնելով ա-  
 նոր ծառաներուն երանի տուն, որչափ  
 աւելի երանելի ենք մենք, որ Մ<sup>Յ</sup> կը ծա-  
 ռայենք, որուն հետ չէ թէ միայն Սողո-  
 մոնին, այլ բոլոր աշխրբիս ալ բարիք-  
 ները բաղդատելու ըլլանք նէ՛ ոչինչ են:  
 Ո՞ր ոչինչ ատաղէ քո: Իսկ նկատմամբ  
 մեզի, կամ մեր վրայ նայելով Տէր է

ու թագաւոր, որ մեր վրայ ամէն տեսակ  
 իշխանութիւն ունի, եթէ ան իշխանու-  
 թիւ՝ որ կըսուի իրաւասուն, իբրև իր  
 հպատակներուն վրայ, և եթէ ան իշխա-  
 նութիւն՝ որ կըսուի սեպհականութիւն,  
 իբրև իր ստեղծածներուն վրայ: Ստա-  
 ծենք մէյմը, թէ որչափ մեծ բարիք էր,  
 որ Մ<sup>Ժ</sup> մեղի ըրաւ, երբոր մեր հոգիքը  
 ոչնչէն ստեղծելով՝ այնպիսի կատարեալ  
 վիճակ տուաւ, ու զմեզ աւելի ընտրեց  
 ուրիշներուն մէջէն, թէև անոնք աւելի  
 իրեն ծառայելու ըլլային: Ստածենք ան  
 Մ<sup>Ե</sup> փոյթը ու ջանքը, որով ամէն  
 վայրկեան մեր կեանքը կըպահէ: Մենք  
 աւելի Մ<sup>Ե</sup> ամենակարող ձեռքէն կը-  
 կախուինք, քան թէ շողը արևէն, կամ  
 վտակը աղբիւրէն: Ստածենք, թէ որ-  
 չափ իր բարիքները առատութիւն կուտայ,  
 ինչպէս որ հարուստները իրենց ապրուս-  
 տին մէջ, ազնուականները իրենց ազ-  
 նուականութիւն մէջ, ու գիտունները ի-

բենց զխտութեն մէջ փորձով կըտեսնեն :  
 Ասկից 'ի զատ՝ մեր սիրոյն համար աղքա-  
 տութեն մէջ ու ամբարշտաց ատենը ծնաւ .  
 ու զմեզ փրկելու համար՝ անարգ խաչի  
 վրայ մեռաւ : Ահա սյսչափ պատճառ-  
 ներով և մանաւանդ ինչպէս որ պէտք է,  
 հաւատարմութիւն ալ իրեն ծառայելու կը-  
 պարտաւորինք , նախ՝ որ զմեզ ստեղծեց ,  
 երկրորդ՝ որ փրկեց , և երրորդ՝ որ զմեզ  
 արդարութեամբ ճամբան դրաւ : Անձ ա-  
 պերախտ կըլլայիր , եթէ միայն Այ ծա-  
 ռայելու համար ստեղծած ըլլալով իրեն  
 չէիր ծառայէր , թէ և Այ փառաց հա-  
 մար խնկի պէս կրակի մէջ այրելու սահ-  
 մանած ըլլայիր , կամ երկար ատեն իրեն  
 ծառայելէն վերջը՝ ոչինչ գառնայիր :

Աստի եթէ Այ պարտական էինք  
 ծառայելու զմեզ ոչնչէ ստեղծելուն , ու  
 սյսչափ բարիքներ ընելուն համար մի-  
 այն , հապա որչափ աւելի պարտական  
 ենք ծառայել իրեն , որ մեզի յաւիտե-

Նահան կեանք խոստացաւ : Չեմ ուզեր  
 հոստեղս մէկիկ մէկիկ պատմել արքայ-  
 ութն անսահման բարիքները , որ Մ.Ծ մեղի  
 տալ խոստացաւ :

Պօղոս առաքեալը կրսէ , թէ չեմ  
 կրնար հասկընալ . մենք ինչպէս կրնանք  
 գիտնալ կամ իմանալ պաշտօնական ա-  
 տուիւն-ընդէմէ փոստայ 1) , որ յաւիտե-  
 նահան երանութն անունն է : Այդի 'ն  
 «Իրոյ Երբոյ» «չ անիտ- զոր պատրաստեաց  
 Մ.Ծ «Իրեւելաց Ի-րոյ 2) : Հերիք է ըսել  
 միայն , թէ Մ.Ծ ամէն մարդու իրեն  
 արդեանցը համեմատ վարձք պատրաս-  
 տած է : Մն վարձքը կըսեմ՝ որն որ  
 Արոյբէները Վերոյբէները ունին , որն  
 որ Աք Մ.Ծ ածինը փառաւորեալ թաղու-  
 հին հրեշտակաց ունի , մանաւանդ որն  
 որ ինքն ալ ունի՝ որով Մ.մենամբ ու

1) Ը Կորնթ. 7. 17 :

2) Կորնթ. Ը. 9 :

Արանեալ Ա՛ճ է . ինչպէս սր Հովհաննէս  
 կըսէ : ‘Այսն նա լինելոց է՛ք , զէ քե-  
 ստնելոց է՛ք , զնա ուր եւ էն 1) : Ասոր հա-  
 մար թէև մեր ծառայութե՛ն տեղը յաւի-  
 տենական վարձք չէինք առներ՝ ՚ի վի-  
 այսր ամի Ա՛յ ծառայելու կըպարտաւո-  
 րէինք : Ուրեմն ի՛նչ զըտար աւելի փու-  
 թով (խայրեթով) ծառայենք պիտոր  
 հիմայ , երբոր մեր ծառայութե՛ն յաւիտե-  
 նական վարձք խոստացաւ : Ասկից կըր-  
 նանք հասկընալ , թէ որչափ պարտա-  
 ւոր ենք Ա՛յ մեզի համար ըրած բարիքը  
 ճանչնալ . մանաւանդ ասոր համար՝ որ  
 զմեզ աշխրբիս մէջ երկու յաւիտենա-  
 կանութեան մէջը դրաւ , որոնց միջինը  
 չիկայ . վնդի կամ արքայութի՛ւն և կամ  
 դժոխք պիտոր երթանք :

( ատ երևելի ու իմաստուն մար-  
 դիքներ աս վերջին վախճանը մտածելով

1) Ին Հովհ. Կ. 2 :

իրենք զիրենք փոխեցին: Ասորդինալ  
 Սփորտիա Պաղղամիկեցին շք Իգնատի-  
 ոսին Արժուժեց գրքին մէջ առջի օրվան  
 մտածականը կարգալով քսան տարի  
 շարունակ ասիկայ կրմտածէր. Մարդս  
 զՎ.Ճ պաշտելու ու փառաբանելու համար  
 ստեղծաւ, ուղղի անոր ծառայելով փրկու-  
 թէ հասնի: Ըսկից սրբութիւն ապրելու  
 ճամբայ գտաւ և ուրիշներուն ալ ճամ-  
 բայ ցըցուց իւր գեղեցիկ գրած գրքովը:  
 որ կըսուի՝ Հաղա՜ոս արո-ւեսպի շրէստ-  
 նէսիան խորարելու-թէ: Փիլիբերտոս մեծ  
 Ամսը Սիմիանու, և Փիանեցցայի Ըս-  
 պետը՝ այնչափ այս վախճանին մտա-  
 ծութէն սիրտը շարժեցաւ, մինչև սոս-  
 կալով անոր մեծութէն՝ աշխրբէս ետ  
 քաշուեցաւ, ու Վ.Ճի աղքատութե  
 հետևեցաւ: Թէ ինչ խորհուրդներ իրեն  
 միտքը կուգային աս վախճանը մտացած  
 ատենը՝ կուզեմ հոստեղս համառօտիւ  
 գրել, և այս է. ո՛րնչ բանի ծնած եմ

,,ես, և ուր կերթամ կոր: Ա՛ւր իմ խոր-  
 ,,հուրդս, իմ բաղձանքս զիս կըտանին:  
 ,,Ստեղծած եմ աս երջանիկ վախճանի  
 ,,համար, ուզզի աս աշխարքիս մէջը քիչ  
 ,,մը Ա՛յ ծառայելէս վերջը՝ զինքը ժա-  
 ,,ռանգեմ: Ա՛րեմն ինչպէս իմ խորհուրդ-  
 ,,ներս, իմ ջանքս, ու իմ գործքս աս  
 ,,վախճանին կըկարգեմ կոր: Ա՛հ, ինչ-  
 ,,պէս չափէ դուրս հարստանալ, փառա-  
 ,,ւորիլ, ու մեծնալ կըջանամ: Ա՛րչափ  
 ,,մեծ խելագարութի է բրածս, որ ունե-  
 ,,ցածս չունեցածս աս կեանքիս մէջ կըմըս-  
 ,,խեմ, կարծես թէ անցաւ որ չէ. ու քիչ՝  
 ,,կամ հիչ անդիի աշխարք չեմ ուզեր  
 ,,բանմը ունենալ, կարծես թէ այնպիսի  
 ,,բան չիկայ: Ա՛ւ սակայն ինչպէս շուտով  
 ,,բռնադատիմ պիտոր աս աշխարքը թող-  
 ,,տալ, ու անդիի աշխարք երթալ: Ա՛նչ  
 ,,պիտի ան բաներէն հետս տանիմ, որոնք  
 ,,որ այնչափ ծախքով այնչափ աշխա-  
 ,,տանքով ժողվեցի: Ա՛իչ մէկ բանմը,

„Եթէ ոչ բարի գործքերուս արդիւնքը,  
 „Թէ որ յաւիտենականութեան համար՝  
 „որ իմ վախճանս է, ըրի նէ : Աւրեմն աս  
 „ըրածիս վրայ կենամ, ու աշխարքիս օրի-  
 „նացը հետեի՞մ, ուր որ քիչ ատեն պիտոր  
 „մնամ, չէ նէ արքայուն համար աշխա-  
 „տիմ, ուր որ յաւիտեան պիտոր մնամ :  
 „Առզեմ ասկից վերջը, որ իմ ջանքս իմ  
 „ըրածանքս միայն արքայուն վրայ ըլլայ՝  
 „Այս է իմ առաջագրութիս. այս է իմ  
 „կտմքս. ասկից ետ չեմ դառնար, թէև  
 „ուրիշներէն անարգվիմ, թէև սոսկալի  
 „ցաւեր քաշեմ, թէև պէսպէս ձախոր-  
 „դութն մէջ իյնամ“ : Աս խօսքերս որ  
 ըսաւ գործքով բովանդակ կատարեց :

Այց ստոյգ կըսեմ, որ քիչ մարդիկ  
 աս մտածութէն օգուտ մը կըտեսնեն .  
 իսկ շատերը և ոչ կըմտածեն, թէ Այ  
 ծառայելու ու փառաւորելու համար  
 ծնած են, որ անդիլի աշխարքը ասոնց տե-

զը ինքը արքայութի պատոր տայ : Ապր-  
 ծեն թէ իրենց դիւրութի ու հանգս-  
 տութի գտնելու համար ծնած են : Աւտի  
 ոչ գործքերնին և ոչ դիտաւորութիւնին  
 Այ կընծայեն , հապա միայն հարստա-  
 նալու ու զբօսանք ընելու կըհոգան ու  
 կապրին , ինչպէս որ անասուններ կան ,  
 որ կուրծքերնուն վրայ մկ աչք ունենա-  
 լով միայն գետինը կընային կերակուր  
 գտնելու համար , առանց վեր նայելու ,  
 ուսկից որ իրենց կերակուր կըպատրաս-  
 տուի : Իսկ եթէ ոմանք ճանչնալու ըլլան  
 թէ մարդուս վախճանը հոգւոյն խաղա-  
 ղութիւր ու հանգստութիւն է՝ ուրիշ մոլո-  
 րութե մէջ կիյնան : Արովհետե շարա-  
 շար կըգործածեն ան միջոցները , որոնց-  
 մով աս վախճանս կըստացուի : Մտքեր-  
 նին կըդնեն , որ աւելի հանգիստ ու եր-  
 ջանիկ անիկայ կըլայ՝ որ աս ողորմելի  
 աշխարհս մէջ շատ հարստութիւններ ունի :

Երանի ասացին Չորսվարեան, որոյ այս  
այսպէս է 1) : Այր ու անխելք ըլլալով  
որոշել չեն կրնար, թէ ան բարիքները՝  
որ Աճ աս աշխրբիս մէջ մարդկանց կու-  
տայ՝ չէ վախճան, հապա միջոց մընէ յա-  
ւիտենական բարիքները ստանալու : Ա՛հ  
ինչպէս ծուռ դատաստան է ասիկայ,  
ուսկից որ քրիստոնեան չիկրնար անմե-  
ղադրելի մնալ : Անդի երկու ըյս ունի  
մէյմը բնական խելքի, մէյմընալ հաւատ-  
քի, և սակայն չիմտածեր բնութի կարգը,  
ու բարիքներուն մեծութիւնը ու պզտի-  
կութիւնը կրխանդարէ, միջոցը վախճանի  
տեղ կըղնէ, արքայութե՛հ համար աշ-  
խատիլ չուզէր, միայն պանդխտութե՛հ  
ճամբու մէջ հանգիստ մնալու կընայի :

Ասկից մեր անցած անկարգութիւ-  
ները, ու սխալամքները դիւրաւ կրնանք  
իմանալ : Ա՛մէն գործք, ամէն աշխատանք՝

1) Սաղմ. ԾխԳ. 15 :

ամէն ջանք երբոր վերջին վախճանի համար չեն ըլլար՝ բոլոր պարաստեղ են, ու փոշիի պէս կըցրուին կերթան: Աթէ մենք ալ մինչև հիմայ մարդկային վախճանի համար աշխատեցանք՝ իրաւի անոնց նման եղանք՝ որոնք որ աշխրբիս մէջ անպիտանացան 1): ու կրնայ ըսուիլ աս խօսքս իրենց վրայ. 'է նանկը էս զանյի էր 2): Առածենք տեսնենք, թէ աշխրբիս բարիքները, ու Ա՛յ իրեն ծառայելու համար տուած պարգևները ինչպէս կըգործածենք կոր: Արդեօք հարուստները իրենց հարստութիւնն ուտելու խմելու ու հպարտութե՛ համար չեն ծախեր կոր: Արդեօք ազնուականութիւն ու մեծութիւն Ա՛յ գէմ չեն ըներ կոր, երբոր չափէն աւելի զիրենք կըմեծցնեն, երբոր չարերը կըպաշտպանեն, ու աղքատները կըզրկեն: Արդեօք հողւոյն

1) Մաղժ. ԺԳ. 3 :

2) Մաղժ. ԻԳ. 4 :

և մարմնոյն ունեցած կարողութիւններով  
 զՄ.Ճ. չե՞ն բարկացներ կոր, կամ չե՞ն  
 ըլլար կոր ապերախտ: Աթէ այսպիսի  
 գործքերով Մ.Յ. դէմ մեղանչեցին նե՛  
 դառնան հիմա բոլորով սրտիւ. ինչպէս  
 մարդարէն կըսէ. «Վառլյաւո՛ւք յողորէալդ  
 սրտիւք 1)»: Մ.սկից վերջը մեր մնացած  
 կեանքը Մ.Յ. ընծայենք, Մ.Յ. ծառայենք,  
 որ մեր վախճանը ու փառքն է: Մ.մէն ա-  
 բարածները ասիկայ մեղի կը յորդորեն. ա-  
 սիկայ բոլոր աշխարքս կը քարոզէ, ինչպէս  
 Հուկոն Ա իկտորեան կը գրէ. \* Տես ո՛վ  
 մարդ, ասէ աշխարհ, զի ա՛րդ սիրեաց  
 զքեզ Մ.Ճ, որ արար զիս վն քո: Մ-  
 ապեմ քեզ, զի վն քո արարայ, զի և  
 դու ծառայեսցես այնմ, որ արարն զիս և  
 զքեզ, զիս վն քո. զքեզ վն իւր ॥:

1) Եսայ. խ. 12 :

## Պատմութիւն :

Խալուրդներուն համար (որ է եւր սրլանը) կըսուի, թէ հողի տակ շարունակ կենալով աչքերնին միշտ գոց է, ու մինչև որ մեռնելու մօտիկնան՝ չեն բանար: Ասոնց նման իրաւի շատ մարդիկնե՛ր կան, որ աշխարհիս բարիքներուն մէջ ընկղմելով մութի մէջ կապրին. ու ճշմարիտ լոյսը չեն տեսնար, մինչև որ մահուան դուռը չի հասնին, որ շատ ուշ խելքը վրայ եկած կըսուի: Անգի երօր մահը իրենց աչքը գոցելու կուգայ ասոնք բանալ կուղեն, ու վախճաննին տեսնել, թէ ինչու համար ծնած էին: Այսպէս հանդիպեցաւ երկու հոգւոյ, որ թագաւորի ու իշխանի քով ծառայ էին: Անկը երկար ժամանակաւ Պրանչիսկոս Պրանսայու առջի թագաւորին գրադիրն էր, որ թագաւորութեն պէտք եղած նամակները կըգրէր: Աս պաշտօնին այն-

չափ ինքը զինք տուած էր, որ և ոչ մէկ  
 անգամ միտքը կը բերէր, թէ անդիի  
 աշխարք կայ մի չիկայ մի: Արթնս թէ  
 միայն իր թագաւորին ծառայելու համար  
 ծնած էր, չէ թէ Այ ու արարչին ծա-  
 ռայելու, (ինչպէս կըսէ Առաքեալը),  
 որ սրբութիւն ծառայողներուն՝ անդիի աշ-  
 խարքս հաւատարմութիւն իրենց վարձքը  
 կուտայ: Աբոր մահուան դուռը մօտիկ-  
 ցաւնէ՝ խելքը վրան եկաւ, ու ան ատենը  
 տեսաւ, թէ ինչը տար շիտակ ճամբէ  
 դուրս ելած է: Աւտի սկսաւ լալով  
 այսպէս ըսել. «Այն ինձի, որչափ  
 «թղթեր լեցուցի, ունի թագաւորին ու-  
 չ, զածը գրեմ, ու կէս թերթ ըրած մեղ-  
 «քերս, ու բարեպաշտութիւն ապրելու ե-  
 «ղանակը չի գրեցի, ունի մեղքերէ զգոյշ  
 «կենամ, ու բարի վարուք ապրիմ, և  
 «արքայութիւն ժառանգեմ: Ամէն աշ-  
 «խատանքս, ու քրտինքս պարսպ տեղ  
 «գացին. վնդի յաւիտենական փրկութեո

«Համար չըրի: Ա՛խ, եթէ Ա՛յ օրէնքը  
 «պահելու համար այնչափ աշխատած ըւ-  
 «լայի, որչափ որ թագաւորիս պատուէրք-  
 «նները պահելու աշխատեցայ, ինչպէս  
 «հիմա աս սոսկալի սահալթիս մէջ մեծ  
 «միտիթարութի կունենայի. ինչպէս ար-  
 «քայունի երթալու յոյս կունենայի: Իսկ  
 «հիմա ահա դողու մէջ չեմ գիտեր,  
 «ո՞ւր պիտոր երթամ, և ո՞ւր յաւիտեանս  
 «պիտի մնամ»: Ա՛ճ պահէ, որ մենք  
 ալ մեռած ատեննիս այսպիսի ցաւ չու-  
 նենանք. չըլլայ որ մենք ալ փուճ ու  
 անօգուտ բանի ձեռք զարնելով վերջը  
 ցաւինք ու լալով ըսենք, ախո՞ս, որ  
 ամէնէն աւելի հարկաւոր բաներու ե-  
 տեւէն չեղանք, ու չիմտածեցինք: Փուճ  
 բաներ սիրեցինք, ու յաւիտենականուն  
 վն հոգ չունեցանք:

Արկրորդը Վաւրիէլմաս անունով  
 մէկն էր, որ Վաւրգունախոյ իշխանի քով  
 պաշտօնի մէջ էր: Ասոր աչքը աշխար-

Հային պատիւները այնչափ կուրցուցած էին, որ առաքինուէ, ու երանելի փառաց ճշմարիտ բարիքը չիկրցաւ տեսնալ: Արուհե տեւ շատ դժուարին է աշխարքիս փառքին, ու զբօսանքին մէջ ըլլալ, ու անոնք չիտիրել: Աւրախուհներ՝ ու տել խմելներ միշտ տեսնել, ու երջանիկ չիտեպել ան մարդը՝ որ իր ուղածները առաջ կըտանի, և որն որ հարստուք լեցուած, իշխանի բարեկամ, ու ուրիշներու վրայ տէր ըլլալով մեծցած կըլլայ: Ասով մարդս կամ կըմոռնայ, կամ միտքը չիբերէր վերջին վախճանը, ու ճշմարիտ երանութիւր: Իայց երբոր մահուան ժամանակը անցաւ որ բարիքները թողտալ կըհարկաւորինք՝ ան ատենը վերջին վախճանը ու երանութիւր միտքը կուգայ: Ինչպէս աս Վուլիէլմոն ալ որ Ա.Յ ծառայելը մոռցած ըլլալով իր տիրոջը աչքը օրէ օր կըջանար մտնալ, երբ մահուան դուռը հասաւ նէ՛ սկսաւ ցաւիլ, ու կսկծալ,

որ իր տիրոջը քով ծառայած ատենը՝ ոչ  
 երբեք իր դործքերովը այն վախճանը  
 ստանալու միտ դրաւ՝ որուն համար որ  
 Մ. ճ զինքը ստեղծած էր : Աւ ուղղի ըրած  
 սխալանքը ամէն մարդիկ իմանան՝ իր  
 ձեռքովը տապանագիրը գրեց, և ըն-  
 տանեացը խստիւ ապսպրուեց որ իր գե-  
 րեղմանի քարին վրայ փորել տան այսպէս.

\* Արնջէ ըզբուն խաւար մահուան  
 Գուլիէլմոս յայս 'ի տապան,  
 Որ 'ի կենցաղ աղցաւորիս  
 Տանէր պաշտօն 'ի յարքունիս,  
 Արդ եւ յատեաց, և ոչ գիտէր,  
 Առ ի նչ վախճան յաշխարհի էր || շ  
 շ : Անբիւ : Անգիւլբու : Տ. 32  
 Պողոս Սեբեկեր Տ. 33 : Քրիստո : Կրահանգ,  
 յոր : է : Անգրեւոս Կրեկերեւոս 'ի հոգ :  
 ուսանի, Տ. 34 :

Բարէ Արամօ-Բէ՛ հահաւան վրայ :

\* Յիշեալ , զի մահն ոչ անագանէ : Ասի  
քան զմահ գործեալ զարդարութիւն :

Սեբաս . ԺԳ . 12 . 17 :

**Ս**ահուան վրայ մտածելը շատ մար-  
դիկներուն այնպէս կերևայ , որպէս թէ  
մահը հասնելէն առաջ ցաւը կըսկսին  
քաշել . մանաւանդ՝ որչափ որ կը յիշեն  
թէ միանգամ մեռնին պիտոր , կարծեն՝  
թէ այնչափ կը մեռնին : Այսչափ գէշ  
կերևայ իրենց մահուան վրայ մտածելը :  
Այլ մահ , ուրիշ գտան է յիշարուի քո տան ,  
որ ունի զհարազատ-Բէ՛ յիշչս Է-ր , կըսէ  
խմաստունը 1) : Բայց մահէն աւելի իր  
վախը գէշ է . ինչպէս որ քերթողին մէկը  
ըսաւ , \* Գառն քան զմահ է նորունահ :  
Ասոր համար կը զգուշանան , չըլլայ որ

1) Սեբաս . խն . 1 :

տան մէջ մահուան յիշատակելու բան  
կամ պատկեր ունենան, որ իրենց մահը  
աչքերնին առջև բերէ: Անոնքի կամ  
գերեզմաննոց երթալ, կամ մեռածի ե-  
րես տեսնել՝ ամենեին չեն ուզեր. կար-  
ծես թէ անիկայ տեսնելով գլուխնին բան  
մը կուգայ: Ինչ ըսուած թռչնոյն (որ է  
պսոյղուչ) ձայնը լսել, կի՞ երեքշաբթի որ  
ճամբայ երթալ՝ կրվախնան, կարծեն թէ  
ասով իրենց մահը կարտօրցնեն, և այս-  
պէս մահէն վախնալով այսպիսի աւե-  
լորդապաշտուիներ կրնեն: Իրաւի պէտք  
է լալ այս յիմարական վախուն վրայ,  
որ մահուան խօսք եղած ատենը մար-  
դուն սիրտը կրծնանի: Անգի ասով յայտ-  
նի կըլայ, թէ հոգին իր ըրածը դիտնա-  
լով իրեն բարի մահ չիյուսար: Իայց  
իմաստունները՝ որ ճշմարիտ երանութե-  
հասնելու կըբաղձան՝ ուրիշ կերպ կը-  
խօսին: Ասոնք իրենց մահը ոչ ակամայ,  
ոչ բերնով միայն կը յիշատակեն. որով-

Հետև աղէկ գիտեն, թէ անկից ոչ ոք  
 կրնայ խալըսիլ : Մարդիկ այսպիսի խօս-  
 քեր կամ մտածութիւններ թէպէտ չեն  
 ուզեր լսել, բայց սրբութիւն ապրելու ու  
 մեռնելու շատ օգուտ կրբերին : Աղի  
 դեղը որ առողջութի կուտայ, ու կե-  
 նաց օգտակար է՝ աւելի աղէկ է անուշ  
 դեղէն որ թիւնով խառնուած է : Այն  
 Հովհաննէս Աղէքսանդրու հայրապետը՝  
 որ շատ ողորմութի տալուն համար, ու-  
 ղորմած կըսուէր, ուզի իր մահը միշտ  
 յիշէ՝ բոնեց քարագործմը՝ որ իր գե-  
 րեզմանը շինէ : Բայց բոլորովին չուզեց  
 որ լըմեցնէ, հասկա քանի անգամ որ  
 ինքը հայրապետական զգեստով ժամը  
 մտնելու ըլայ՝ բարձր ձայնով իրեն ըսէ,  
 «Շայր սբ մեռնիլդ կըմօտենայ կոր, գե-  
 րեզմանդ դեռ չէ լըմեցած . հրաման  
 տուր որ լըմեցնենք» : Այն կարողու արբ-  
 եւիզը կերակուր կերած ատենը մեռած  
 մարդու գանկ սեղանի վր դնել կուտար,

ու անոր նայելով աւելի հոգւով քան  
 թէ մարմնով կրկըշտանար : Նարոնիոս  
 կարդինալը իր կարդինալութեւ ատենը՝  
 մատին վրայ մատնի մը ունէր . քարին  
 վրայ մեռած մարդու գլուխ քաշոճած էր ,  
 ու տակը աս բանս գրոճած . \* Յիշեալ  
 զմահ ॥ . ասով իր կենաց օրէ օր պակ-  
 սիլը միտքը կը բերէր : Նայց չէթէ եկե-  
 ղեցականները միայն , այլև աշխարհա-  
 կանները աս կը մտածէին : Հինգերորդ  
 կարօլոս կայսրը իր դագաղը (ճաղը) շի-  
 նել տոճած էր , ու միշտ հետը կը տա-  
 նէր , ուր որ զօրացը հետ կերթար : Ար-  
 բոր իշխանները կը հարցնէին , թէ սըն-  
 տուկին մէջ ինչ բան կայ , աս պատաս-  
 խանը կուտար . „ Եւտ մեծ բան կայ ,  
 որ մեծ գործքի հարկաւոր է “ : Ա՛յ դա-  
 գաղը շատ անգամ իր օտան կը պահէր .  
 երբեմն երբեմն մէջը կը մտնար , ուղի իր  
 մահը աղէկ մտածէ , որով իր փառքը  
 վերջանար պիտոր : Անգի միայն մահը

առանց խաբելու կըղրուցէ, թէ աշխրբին մեծամեծները վերջը ինչ կըլլան. Ինչպէս կըսէ Հորնաղ.

\* Թէ մարդ որչափ սընոտի է՝

Սահ միայն զայդ քաջ ցուցանէ ։

Ըս մտածութիւն իր հպարտութիւն կը յաղթէր, տեսնելով ասոր սքանչելի զօրութիւնը, որ սրտին փառասիրութեան ու մեծութեան բորբոքը կը մարէր, ինչպէս որ ծը շերտնիմոսն ալ գրեց իր երկու բարեկամներուն, Կ' Պաւլինոսին. որուն կըսէ. \* Նշտեալ անգոսնէ զամ' որ զմերձակայ մահ իւր խոկայ ։ և Նեղիտ գորոսին. \* Նիք ինչ որ այնպէս ՚ի ժուժկալութի՛ զքեզ խրախուսեսցէ, ուր կարծօրեայ և անստոյգ կենաց խոկումն ։

Իրաւի զմարդս կը յորդորէ, ու կը հանէ մտքէն հարստութեան սէրը, Կ' յիշելը՝ թէ այնչափ արծաթը ու ոսկին, որ շատ աշխատանքով ու քրտինքով ժողովեցինք՝ մեր կարծելէն առաջ

ձեռքերնէս պիտոր երթան, ու գուցե  
 մխտոզի մը ձեռք պիտի իյնան, որ երախ-  
 տաւորին անունն ալ չիշիչէ պիտոր: Ա-  
 փկայ միայն հերիք էր մեզի հարստութիւն  
 օտքի տակ առնելու համար: Ինչպէս  
 Ղաւիթ մարգարէն ալ աս բանս մտա-  
 ծելու համար աղէկ կըսէ: Ո՛չ էլէ՛ն է  
 Տեառնիւ իւրո՛ւս ոտոցէ Տեժագո՛ւնն ընդ  
 իւր գլխի՛. Լոպո՛ղ օքարոց պէժո՛ւ-Լէ՛ն իւր-  
 ե ո՛չ էլէ՛ն իջլէն փոսո՛ւս քան իորս ընդ  
 նմո 1): Այնչափ ամբաւ ունեցածներէն  
 կտաւ մը հեար պիտի տանի, որ իր դին  
 ծածկի: Ասոր համար կը յորդորէ դար-  
 ձեալ մարգարէն, որ հարուստները չըլ-  
 լայ թէ անցաւոր բարիքներէն խաբուին,  
 և անոնց նման ըլլան, որոնց վրայ այս-  
 պէս կըսէ. «Ենթէցին գո՛ւնս իւրեանց,  
 ե ո՛չէնչ գոթն աս արք Տեժո՛ւ-Լէ՛ն է յեա-  
 իւրեանց 2): Այժմէ մեռնելէն առաջ չեն

1) Սաղմ. իբ. 18:

2) Սաղմ. հե. 6:

ուղեր արթուն կենալ, ու լոյս աչքով  
տեսնել, իբաւի կեանքերնին իբրև քը-  
նոյ մէջ կանցնեն, մահուան ատենը ա-  
մէն հարստութիւնին կըկորսնցնեն, ու  
անդիւի աշխարք բան մը չեն կրնար տա-  
նիլ, ուր տեղ որ արդիւնք ունեցողը  
միայն հարուստ կըսուի. իսկ չունեցողը՝  
աղքատ: Ըստ հարստութեան ունայնութիւնը  
Սանուէլ յունաց կայսրը աղէկ ճանչցաւ  
երբ որ մահուան դուռը մօտիկցաւ: Ան-  
գի տեսնելով, որ թագաւորական հա-  
դուստներէն, ու հանդէսներէն յան-  
կարծակի մահուամբ կըզրկուի կոր՝ շուտ  
մը մօտիկ վանքէն կրօնաւորի մի զգեստ  
բերել տուաւ, ու հագաւ, որով ուղեց  
ցուցանել, թէ մեռած ատենը աւելի  
աղքատ կրօնաւոր կուղեր մեռնիլ, քան  
թէ հարուստ թագաւոր: Օգեստը թէ-  
պէտ հագաւ, բայց շուտ ըլլալով չի-  
կրնալով իր հասակին չափովը գանձուիլ,  
այնչափ կարճ էր, որ հաղիւ մինչև ծուն-

կը կըհասնէր: Աւստի իր քովի կողով  
 իշխանները տեսնելով, որ կայսրը կէս  
 մը մերկ, ու հարստութեն աղքատցածէր,  
 կուլային կողբային: Աչքերնին առջևը  
 կրքերէին անոր քանի մի օր առաջ հա-  
 գած փառաւոր զգեստը, որ գետինը  
 կըքսուէր, իսկ հիմայ անշահ զգեստ-  
 մը հագած, ու ան ալ հաղիւ մինչև  
 ծնկոճըները կըհասնի, և օտարէ առած  
 է: Աս օրինակէն շատ իշխաններուն  
 սիրտը շարժեցաւ, որ անցաւոր հարս-  
 տութիւնները քամահրեն, որովհետև  
 աչօք կըտեսնէին, թէ աշխրբիս մէջ  
 ինչ որ ունենան, ամէնն ալ ոչինչ կը-  
 դառնան:

Ասկից 'ի զատ՝ մահուան յիշատա-  
 կը աս օգուտը կրնէ, որ ուտելու, խմե-  
 լու, ու ուրիշ զբօսամքներու՝ չափ կը-  
 դրուի: Արաւի ինչ զբտար օգուտ կը-  
 տեսնէ մարդս վեր 'ի վերջ մտածելով  
 ալ, թէ որչափ տեսակ կերակուրներ

անյագ ուտելը մարդը կը մեռցնէ, որ չէ-  
 թէ բերանը կանուշցնեն, հապա մարմ-  
 նոյն կը վնասեն: Ասոր ճշմարտութիւնը  
 կը սորվինք ան խօսքէն սը գրքին. Ա՛ն-  
 է 'ի ստեղծ 1). Ի՞նչ ան սանին (թէնճիրէին)  
 մէջ մահ կայ, որուն մէջ համադամ  
 կերակուրներ կեփվին, որովհետև ա-  
 նոնցմէ հիւանդութիւններ կը ծնանին: Ասոր  
 նման կըսէ իմաստունն ալ. 'ի շո-այսո-  
 բազմ-է-մեռան, իսկ որ ժո-ժկալն է՝ յա-  
 -ելու-սլէ-ման 2): Ասկից աւելի ինչ կըր-  
 նայ ըսվել որ կը ամուսնութե՛ր դէմ. իրաւի  
 շատ մարդիկ սովէ մեռան, բայց չեն  
 այնչափ, որչափ որ ուտելէն խմելէն  
 մեռան: Ասոր համար կընանք ըսել, թէ  
 որ կը ամուսնին կերածը խմածը իրեն թոյն  
 կըլլայ. վնդի ինչպէս Պլինիոս կըսէ.  
 \*Այնչափ առաւելան զեղխութիւնք, մին-  
 չև մեռանիլ բազմաց յուտելոյ ||: Աւստի

1) Գ. Թագ. Գ. 40°

2) Սեբ. Լէ. 34°

կեանք երկնցնելու արհեստը՝ չստիով ու-  
տելն է : Որ թո՛ւթկուլն է յաւելու զլեռ-  
նը : Ասիկայ փորձով ալ կըտեսնենք ,  
որ չի փաւոր կերողներուն աւողջութիւր  
տեղը կըլլայ , ու կեանքերնին ալ կերկն-  
նայ . իսկ անյագ կերողները շուտով  
կըմեռնին : Աթէ այսպիսիք մտածելու ըւ-  
լային , թէ իրենց մարմնոյն գիրութիւր  
միայն կրակին բոցը կաւելցնէ , որ հոգին  
ալ կայրէ , ու գերեղմանի մէջ որդերուն  
կերակուր կըպատրաստուին , ատկէ շու-  
տով ետ կըկենային :

Վմանապէս մահուան յիշատակը  
բղջախոհուէ ալ զմարդը կըպահէ : Աւ-  
աս այնչափ դիւրութիւ կրնայ ընել մէկը ,  
որչափ որ աղէկ կիմանայ , թէ մարդուս  
կեանքը որկրամոլութեն աւելի՛ բղջախո-  
հութէ կըպակսի : Ասիկայ ծածուկ դա-  
հիճմի է , որ կակուղ չունանով մարդս  
կըխողէ : Անյագ տղրուկմի է , որ մար-  
մնոյն ուղեղը կըծծէ : Անուշ թոյն է , որ

Թէպէ շուտով կուլ կըտրվի, բայց միշտ սիրտը կըտանջէ, իսկ հողւոյ՝ յաւիտեանըս յաւիտենից զղջալ. կուտայ ինչպէս Որբանոս ու թերորդ նր քահանայապետը աղէկ կըզոռցէ.

\* Կան և մընան դործածք չարեաց,  
Եւ չհեշտութիւնք թըռչին ՚ի բաց,  
Փոխանակէ յաւերժական

Վըրէ ժխընդիր ցաւ հեշտալեաց ॥ :

Եթէ միայն ժամանակաւոր մահ բերէր՝ այնչափ ողբալի չէր ըլլար. բայց ողբալին ան է, որ շատ անգամ հոգին ալ յաւիտենականարար կըմեռցնէ: Որովհետև այսպիսի մեղաւորները մահուան ատենն ալ դժուարաւ աս մեղքս կըթողուն. մէյմը՝ որ բնութիւնիս զմեզ աւելի աս մեղքի մէջ կըծդէ, քան թէ ուրիշ մեղքի: Արկորդ՝ Ե՛ճ ալ շատ անգամ աս մեղքին գարշութեն համար՝ իր մասնաւոր շնորհքը չիտար:

Վերջապէս մահը մտածելը մէկիկ

գեղ է փառասիրութիւն ալ ետ կենալու :  
 Անգի երոր մօտիկնալը կրմտածենք՝ իս-  
 կոյն կրտեսնանք, թէ ամէն փառքը ու  
 մեծանունութիւն ուրիշ բան չէ, բայց  
 եթէ երազմը, կամ փայլուն շողիքներ, ու  
 ամպեր, որ արևին երեսը քիչ մը կը-  
 դոցեն, ինչպէս սբ Արիգոր անձաբանը  
 կրտէ : Արտեսնանք երբեմն, որ ամպմը  
 արևին ճառագայթովը շատ աղուճոր կե-  
 րևայ աչքին : Բայց քիչմը ատեն անց-  
 նելէն վերջը երոր արևը մարը կրմտնէ՝  
 անմիջապէս իրեն գեղեցկութիւն կրկոր-  
 սնցնէ, ու մութ գունով կրխաւարի :  
 Եսանկ է աշխրբիս փառքը ու երջան-  
 կութիւն ալ, անցաւ որ գեղեցկութի մը  
 դրսէն կըցըցունէ, մինչև կամաց կամաց  
 կեանքը պակսելով ինքն ալ կրկորսըվի  
 կերթաց, ու օրթան գեշ դի մը կրմնայ :  
 Աւստի սբ Հակոբոս կրտէ, թէ աշխրբիս  
 փառքը Ս'բնի է, որ աստուծոյ զեկե-

Էտլ 1): «Վճանապէս նր Վճրոսիոս ալ աշխրբիս մէջ եղած հարուստները ու մեծամեծները կը բաղդատէ խաղցողներուն, որ խաղի մէջ թագաւոր կըլլան, ու երկու իրեք սահաթմական մէջ իրենց թագաւորութիւնը՝ գաւազանը՝ պալատը՝ ու ծառաները կը կորսնցնեն: Աշխարհքս ալ մարդուս խաղու տեղն է. ամէն երջանկութիւն մահուամբ կը վերջանայ, ու ամէն փառքը մարդուս կը կորսուի: Վիլիպոս երրորդ Սպանիացի ոց թագաւորը մեծ թագաւոր էր: Այլ սակայն մեռնելու ատենը թագաւորութե՛ն վըայ այսպէս ըսաւ. «Թագաւոր ըլլալը ուրիշ օգուտ մը չունի, բայց եթէ մեռնելու ատեն տանջել զմարդս որ թագաւոր եղաւ»: Աս ճշմարտութիւնն Յուստոս Վիպոսիոս երևելի գրագէտը չէ թէ բանիւք միայն հաստատեց, այլև իր տապանին վն փորել տըլաւ այսպէս.

1) Յակովբ. 7. 16 \*

\* Մարդկային կենաց գոգ իրողութիւնք  
 Նուիս են և ըստուեր և ունայնութիւնք,  
 Ուրուական տեսիլ թատերաց խաղուն,  
 Եւ միով բանիւ, համակ չըքութիւն ॥ :

Պատմութիւն :

Երեմիայ մարգարէն ուզելով մեզի  
 ցըցունել, թէ յանկարծակի, ու գողի  
 պէս շուտմը մեր վրայ կը հասնի մահը՝  
 ըսաւ. Եւ իմ ընդ պատուհանս յէր 1) :  
 Ես բանիս վրայ իմաստունին մէկը մեր  
 մահը մեզի յիշեցընելու համար կըսէ,  
 մահը պատուհանէն կը մտնայ, բայց մե-  
 ոելը տան գոնէն դուրս կը լլայ, ու գե-  
 րեզման կերթայ: Գերարդոս գեմբացին  
 թէպէտ լծովմաս գեմբացւոյն աղգականն  
 էր, բայց անկից շատ տարբեր վարք ունէր:  
 Եսիկայ Գերմանիայի մէջ հարուստ մարգ-

1) Երեմ. ք. 21 :

Ըլլալով՝ իր գեղագնացութե՛ն համար ու-  
 զեց մեծ ու փառաւոր տուն մը շինել :  
 Ամենեին ծախքին շիննայելով՝ ներսի  
 դին բոլոր գեղեցիկ զարդարել տըւաւ ,  
 իսկ դրսի դին շորս կողմը մեծ ու աղոճոր  
 պարտէզ մը շինեց : Շէնքը ուղածին  
 պէս լըմնցընելէն վերջը՝ Գերարդոս սկսաւ  
 ուրախանալ , և բարեկամներուն ալ ցը-  
 ցունելու համար աս ուրախութի՛ր՝ սեղան  
 մը (ղէյաֆէթ) ըրաւ , ու զանոնք հրա-  
 շիրեց : Աւտելէն խմելէն ետեւ երոր ել-  
 լալու վն էին նէ՛ Գերարդոս գաւաթ  
 մը տուաւ , աղէկ դինիմը մէջը լեցուց ,  
 ու խմեց . խմելէն վերջը իր փառասի-  
 բութի՛ր շիկրցաւ պահել , սկսաւ ամէնուն  
 ըսել , որ իր տանը մեծուն գեղեցկութե՛ն  
 վն ուրախակից ըլլան . նաև իր կենաց  
 առողջութե՛ն : Յետոյ աղաչեց որ թէ  
 տունը պահսութիւն մը ունի նէ իրեն  
 ըսեն : Աս խօսքին վն ամէնը սկսան գովել  
 տունը՝ տան դիրքը ու զարդարանքը , և

շողոքորթութիւնք ալ տիրոջը երկար կեանք  
խնդրել :

Ասոնց մէջը խմաստուն ու բարե-  
պաշտ մարդ մը կար, որ ուտելու խմելու  
մէջ շատ պարկեշտ կը կենար կոր : Ասի-  
կայ քաղաքաւարութիւնն մը տունաւ  
Գերարդոսին . „ Բան մը չիկայ, ըսաւ,  
„ որ աստ տունդ ինձի ալ գոյլելի չըլլայ,  
„ ու գուն ալ մէջը բնակելով չուրա-  
„ խանաս : Բայց մէկ պակսութի կայ, որ  
„ աստ տանը կատարելութիւնը շատ վար  
„ կը զարնէ : Աս պակսութիւնը՝ ինչ բնելու  
„ ըլլար ճարտարասպետը՝ չէր կրնար տես-  
„ նալ, ու չէ ալ տեսած : Այժմէ անիկայ  
„ կը վերցնես՝ ես ալ շատ կը գոյլեմ տու-  
„ նը՝ ու մէջի բնակողն ալ երջանիկ կը-  
„ սեպեմ “ : Ասածին պէս ասիկայ Գե-  
րարդոս, սկսաւ աղաչել բարեկամին, որ  
ան պակսութիւնը իրեն ցըցունէ . չեմ  
խնայեր ըսաւ՝ ծախքին, որչափ և եր-  
թայ : Պատասխան տըւաւ ան խմաստուն

մարդը • „Նոյակ մը կայ՝ ըսաւ, և աս  
 „ծակէն ամէն միտթարուիր դուրս կելլայ,  
 „որչափ որ աս ծակը չես գոցեր՝ ոչ  
 „միտթարութի, ոչ ուրախութի հոս  
 „կրկենայ: Աստի եթէ կատարեալ  
 „երջանկութի ունենալ կուղեննէ պէտք  
 „է որ ատ ծակը գոցես“: Վերարդոս  
 աս ըսածնեբը չի հասկընալով չեմ գիտեր,  
 կըսէր, ինչ ծակ է ատ ծակը: Ըն ատենը  
 բարեկամն ալ իր խօսքը յայտնեց. „Նոյակ  
 „կը առջենիս է, ըսաւ, որ ամէն բանը  
 „տակն ու վրայ կընէ. չն՞ս գիտեր, որ  
 „տան դուռն է ատ ծակը, որ թէպէտ  
 „կճեայ (մերմէր) քարերով շինուած է,  
 „բայց որ մը պիտի գայ, որ տէրը ատ  
 „դռնէն դուրս ելլայ ու գերեզման պիտի  
 „երթայ: Աստի եթէ աս ծակը չի-  
 „գոցվիր՝ ի՞նչպէս կընաս դուռն հոս տեղս  
 „առանց վախի ուրախանալ, մանաւանդ  
 „եթէ մտածելու ըլլաս, որ ատ ուրա-  
 „խութիներդ շուտով պիտի թողտաս, ու

„անոր համար այնչափ սիրտդ պիտոր  
 „կսկծայ, որչափ որ առաջ կըխնտայիր“ :

Աս բանէն՝ որ ամենեին չէին կար-  
 ծեր ըսել, հոն եղողներուն սիրտը դող  
 մտաւ. բայց որովհետեւ գինիէն գլուխնին  
 տաքցած էր՝ ամէնն ալ սկսան ծիծաղիլ,  
 ու աշխրբիս սովորական առակը ըսել.  
 ուրախութիւն մէջ չի վայլեր մահուան վր  
 խօսիլ : Այսու ամի՛ն Աւերարդոսին մտքէն  
 ան խօսքը չելաւ. սկսաւ մտածել, թէ  
 քննչպիսի հպարտութի էր որ ըրաւ չափէ  
 դուրս գինի խմելով : Ասոր վր ամենեին  
 բանմը անուշ չէր իգար սեղանի մէջ,  
 մինչև քիչ մը վերջն ալ իր բարեկամները  
 թող տո՛ւաւ, ու սենեակ մը գնաց մտաւ,  
 հոնտեղս սկսաւ ցաւելով մտածել աս  
 խօսքս. ու այնչափ սրտին մէջ տեղ ըրաւ,  
 մինչև որչափ ուրախալի բան ըլլար՝ անի-  
 կայ մտքէն չէր կրնար հանել : Արմտած էր  
 որ իր աղո՛ւոր տունը, աղո՛ւոր պարտեղը  
 պիտի վերջանան : Արջապէս տեսաւ որ

սրտի հանգստութի՛ն չէր գտնար կոր՝ գնաց  
կրօնի մը մէջ մտաւ : Ա՛հա այսչափ զօ-  
րութի՛ն ունեցաւ մահուան մտածութի՛ր ,  
որ բարեկամը քիչ խօսքով անոր մտքին  
ձգեց : Ա՛ս պատմութի՛ր պատմողը , այս-  
պէս խօսքը կրլըմնցնէ . ,, Ա՛ս իմաստուն  
,, մարդուն խօսքը այնչափ Գերարդոսին  
,, սիրտը ցաւցուց , որ աշխրբիս ունայնու-  
,, թի՛ր յիշելով ամէն բանը թող տըւաւ ,  
,, ու կրօն մտաւ “ :

Հ. Ենթէի. Ենգիւլգրաւ. Գ. Գ. Բ.  
Օգոս. յօդ. 3 :

## ԳՄ. Բ.

Բարի Արածո-Են Վերջէ Դաստաստանէ Վրայ :

\* Յառաջ քան զդատաստան պատրաս-  
տեալ քեզ զարդարուի || .

Արտ. Է. 19 :

Թ. էպէտ մահուան մտածութի՛ր մար-  
դուս սիրտը շատ կը շարժէ . բայց շատերը

կան ոչ միայն անհաւատներուն մէջէն, այլև քրիստոնեաներուն, որ ամենևին չի վախնալով բանի տեղ չեն դներ: Աւստի շատ օգուտ կրնէ, որ մահուան վր Վերջին դատաստանի ու յաւիտենիէն տանջանքներուն մտածութիւն ալ աւելցնելով անոր ահաւոր ըլլալը ցրցունենք: Ինչպէս մէկը թէ ծանր բան մը ուղենայ տեղէն վեր վերցնել մագնիսով երկաթ կանցնէ վրան, ուղի մագնիսին ջորութիւնը աւելցնէ. այսպէս ալ անիկայ որ մահուան ջորութիւնը աւելցնել, ու մեղաւորներուն սիրտը շարժել կուզէ պէտք է մեծամեծ վտանգներն ալ առջև բերել, որ մահուանէ վերջը կուգան, որոնց առջինն է վերջի դատաստանը, որուն հետ մէկտեղ՝ մահուանէն աւելի սոսկալի տառապանքներ կուգան: Բայց չէ՞ թէ ես աս ահաւոր օրվան վրայ կուզեմ խօսիլ այնպիսի եղանակաւ, որպիսի մարդարէները խօսեցան ահու դողու

մէջ ձգելու համար զմարդիկը: Արեմիայ մարգարէն կըսէ. Ա՛յ բաղաբ հրէից բերեաց Տ՛ն, եւ բերեաց Բարիո-ւ-թի սըբա-հար-ւ-թի նք ապականեցան 1): Ա՛ծ Յովէլ մարգարէին բերնով կըսպառնայ. Տաց նշանս բերիլնս 'է վեր, եւ նշանս ցերեւ 'է խոնարհ, արեւն եւ հուր եւ իրեկ ծիոյ, արեգակն գարշցի 'է խաւար, եւ լուսինն յարիւն 2): Սոփոնիայ մարգարէն վերջին դատաստանին օրը կանոնանէ օր Բարիո-ւ-թի, օր Բշտ-աւառ-ւ-թի եւ ապականու-ւ-թի. օր խաւարի եւ ձգի 3): Այլ դարձեալ քարոզչի պէս չեմ ուզեր մեկիկ մեկիկ պատմել օգոյն բորբոքիլը, որոտումներուն ձայնը, հրդեհները, կայծակները, արևուն խաւարիլը, լուսնոյ արիւն դառնալը, գիսաւոր աստղներուն երևնալը, և բոլոր աշխրբիս կործանիլը:

1) Արեմ. Գ. 26 :

2) Յովէլ. Գ. 30 :

3) Սոփոն. Կ. 15 :

Այսպէս անոր վր կուզեմ խօսիլ ,  
 ու մտածելու համար առաջ բերել , որն  
 որ սբ ու իմաստուն մարդիկներ մտացած  
 ատեննին կըստակային : Այն ( ) գոտսինոս  
 կըսէր , թէ քանի անգամ Մ.Յ արդար  
 դատաստանին առջևը ելլալս կըմտածեմ՝  
 սիրտս կըդողայ . \* Այն ինձ հիքացելոյս ,  
 զհարգ կոր'ի գլուխ և ամօթով ունիմ  
 կալ առաջի քո || 1) : Մ.Յ պէս ալ սբ  
 Յովհանն Ասկեբերանը երբոր վերջին  
 դատաստանը , ու խիստ համար տալը  
 կըմտածէր՝ կըսէր , \* Յորժամ յուշ լինին  
 ինձ այսօքիկ՝ ողբս առեալ դառնապէս  
 հառաչեմ 'ի խորոց սրտէ || 2) : Մ.Յ  
 եթէ սուրբերը Մ.Յ դատաստանէն այս-  
 չափ կըդողային , մեղաւորը ինչ պիտի  
 բնէ , մտածելով թէ ինքն ալ Մ.Յ ատենին  
 առջևը պիտի ելլայ , որ մեծամեծ մեղ-  
 քերովը զնա բարկացուցած է : Յորժամ

1) Խոկ. զԼ. Թ :

2) Ի հէ. Տառն Մատթ :

Եկեացէ որդի Գարդայ զաստօ իւրով. ք  
 փառօք բարկութեան իր ամենակարող  
 վրէժխնդրութիւնը ցըցունելու համար:

Իրաւի անհաշտելի պիտոր ըլլայ  
 բարկութիւնը արդար ըլլալուն համար,  
 ուստի ամենեկին դատապարտելոց ողոր-  
 մութի պիտի չըլլայ: Եւստ սաստիկ պի-  
 տի ըլլայ, վնդի այնչափ ժամանակ եր-  
 կայնամտութիւնը ուշացաւ, ու մեղաւորին  
 դառնալուն սպասեց, ուստի ինչպէս սրը-  
 ընթաց դետ մը երկար ատեն վաղելը  
 կտրելէդ վերջը՝ թող տունձ ատենդ  
 սոսկալի արագ կը վաղէ, այնպէս պիտի  
 ըլլայ Աճ ալ: Աք Ա ինչենցիոս փերրա-  
 րացին կը պատմէ, թէ աղնոճական մար-  
 դումը զաւակ այնչափ գէշութե՛ն զինքը  
 տըւած էր, որ պղտիկութե՛ն ատենը իր  
 մօլուխներովը մեծ մարդ կերեար: Եւստ  
 այնչափ խրատ, այնչափ աղգարարութի  
 օգուտ չէին կրնար ընել, որ ատ գէշ  
 ճամբէն դարձնեն: Վիշեր մը յանկարծ

երևցաւ իրեն Վ.ս չորս կողմը բոլոր  
 հրեշտակներով, ինքն ալ իր ահաւոր  
 փառօքը փառաւոր աթոռի վն նստած,  
 ու քովի եղողներուն աս տղուն համար  
 այսպէս ըսաւ. « Արովհետեւ ասիկայ  
 « ինչուկ հիմայ իմ ողորմութիս անարգեց,  
 « եթէ հիմայ չապաշխարեր նէ՝ բերէք  
 « իմ ատեանիս առջևը, որ արժանի պա-  
 « տիժը առնու»: Մ.ս խօսքը ըսաւ, ու  
 տեսիլքը աներևոյթ եղաւ: Մ.թնցաւ  
 տղան, տեսաւ զլիսուն մազերը բոլոր  
 ձերմկցած, որ սրտին վախէն եղած էր:  
 Մ.նկից վերջը սկսաւ բռնած գէշ ճամբան  
 թող տալ, ու գործած մեղքերուն վրայ  
 ապաշխարութի ընելով այնպէս սրբութի  
 ապրիլ. ինչպէս որ ծեր մարդու մը կը-  
 վայլէր: Մ.սկից կրնայ իմացվիլ, թէ  
 ինչպիսի վախ պիտի ունենան մեղաւոր-  
 ները, երբ զՎ.ս տեսնելու ըլլան, որ  
 իրենց անօրէնութեց վրէժը կըսահանջէ  
 կոր, որովհետեւ միայն դատաւորի պէս

Նստած ՎՍԻ կերպարանքը այնչափ տը-  
ղուն սիրտը վախ ձգեց, որ յանկարծ  
մազերը ճերմկեցան: Իրաւի այնչափ վախ-  
նան ու սոսկան պիտոր, որ աւելի դժոխ-  
քին տակը պիտի ուզեն թաղվիլ, քան  
թէ ՎՍԻ բարկացած երեսը տեսնել,  
ինչպէս սբ Լերոնիմոս կըսէ. \* Լա-  
էր դատապարտելոց զդժոխոց տանջանս  
կրել, քան թէ զցասուցեալ Տ՛ն դէմս  
տեսանել ॥:

Եւ այց այս տանջանքէն աւելի մեծ  
կըհամարի սբն Բարսեղ ամօթը՝ որով  
դատապարտեալները պիտի տանջին,  
տեսնելով որ ըրած չարութիւնները աշ-  
խարհ ամ կիմանայ կոր: \* Լ՛հաւորա-  
գոյն եղիցի քան զհուր ամօթն այն զոր  
յաւիտեանս կրեսցեն 1) ॥: Եբոր իրենց  
մեղքերուն վճիռը (սիճիլ) կըտեսնեն,  
որ ուրիշներուն առջին կըկարդացվի կոր:

1) Ի ճառն Դգ. յաղ. հանգ. դատաս:

ծածուկ մեղքերնի՞ծ կիմացվի կոր, ու  
 գիշերները ըրած չարութիւնին ամենուն  
 առջև յայտնի կըլլայ կոր: Պիտոն հսով  
 մայեցի պատրիկ եբոր ըրած չարութիւ-  
 ներուն համար ծերակուտին առջևը կանչ-  
 վեցաւ նէ՛ այնչափ ամչցաւ, որ ծերա-  
 կուտին աչքին չերևնալուն համար սրով  
 ինքը զինքը սպաննեց: «Վմանապէս Վեւ-  
 տեան ըսված Վուսին մէկն ալ, եբոր  
 խօսք տըւած ողջախոհուն գէմ մեղք  
 ըրած էր՝ ինքը զինքը մեռցուց: Իայց  
 ասոր ըրածը կրկին անգթութի եղաւ,  
 որովհետեւ թէ զինքը, ու թէ փորին  
 մէջ ունեցած զաւակը սպաննեց, չի-  
 կրնալով դիմանալ ամօթին, որ զաւակը  
 ծնած ատենը պիտի քաշէր: Եւ սակայն  
 ասոնք ամօթ միայն պիտի քաշէին, ու  
 ան ալ մէկ քանի մարդու առջև. և չէր  
 ալ այնչափ մեծ, վսղի մեղքին գէշութե՛ն  
 մեծութիւնը պիտի չիճաննային: Հապա  
 ի՞նչ պիտի ըլլայ, եբոր բոլոր աշխարքս



անարգունս յառեփեմից՝ որ ոչ հառապին 1) :  
 Ըստպէս ուրիշ տեղ ալ կըսէ . Յայտ-  
 նեցից զլեփոստի չո , ե ցոցեց ազգաց  
 զտօլե չո . ե ընկեցից 'ի շէ չո զպղծաւն ,  
 ե արարեց զլեզ խայրատուն 2) :

Այլ Ռեռնարգոս մտքէն չէր հաներ  
 ան վճիռը , որ Վն վերջին դատաստանի  
 մէջ պիտի տայ : Ըստիկայ մտածելով օրէ  
 օր զինքը Վյ ճամբու մէջ կըզնէր . ուս-  
 տի կըսէր . \* Հաստատութիւն եղի 'ի  
 մտի բնաւ ոչ ծիծաղիլ , մինչև լուայց 'ի  
 Տնէ զբանս զայստօսիկ . Եկայք օրհնեալք :  
 Եւ ոչ բնաւ դադարիլ 'ի լալոյ , մինչև  
 ապրեցայց յայնմ վճռոյ . Երթայք անխ-  
 ծեալք ॥ : Իրաւի կըվախնար ու կուլար ,  
 մտածելով թէ որչափ տարբեր խօսքեր  
 են աս երկու բառը . Եկայք . Երթայք :  
 Արովհետև աչքին առջևը կըբերէր , թէ  
 ինչպէս Վն՝ դատապարտեալները աւելի

1) Երեմ. իգ. 40 :

2) Նաւում. գ. 5. 6 :

նախանձով տանջուվելու համար, նախ  
 երեսը ընտրեալներուն դարձնելով ա-  
 նոնց հետ անուշութիւն պիտի խօսի այս-  
 պէս. Ակայք օրհնեալք, ժառանգեցէք  
 զարքայութիւնը, որ ձեր առաքինութիւ-  
 ներուն պատրաստած է: Ակայք, ահա-  
 լասիկ հրեշտակներս պատրաստ են ձեր  
 յաղթանակները բերելու, ու արքայու-  
 թե՛ մէջ ձեզի ընկեր ըլլալու: \* Նախ  
 օրհնեալք հրաւիրեցին յարքայութիւն,  
 և ապա անիծեալք երթիցեն 'ի հուրն,  
 ուղղի այսու յիշատակութիւն ևս քան զևս  
 ցաւեցին զոր կորուսին || 1): Իսկ միւս  
 կողմանէ կրմտածէր, թէ ինչպէս դա-  
 տաւորը խոժոռ աչքով դատապարտեալ-  
 ներուն դարձած երեսէն կրակ ցաթ-  
 կելով անոնց երեսը պիտի կանչէ. Ար-  
 թայք յինէն անիծեալք 'ի հուրն յա-  
 իտենական: Արթայք, և հետու կեցէք

1) Բան ը. 'ի զ. Սաղմ.:

իզմէ, որ ձեր Աճը, ձեր սկիզբը, ու ձեր վախճանն եմ. յոյսերնիդ կտրեցէք իմ երեսս տեսնալու: Վացէք հողուով և մարմնով, յաւիտեանս յաւիտենից դժոխքին տակը: Սէրէ-ցէ՛ր զանէ՛ծս, և էլ յէ-ղ 1): Վացէք դացէք. չէ աշխրբիս մէջ, ուր որ ամէն չարութիւն ըրիք. այլ դժոխքին մէջ, ուր որ կրակէ լծի մէջ թաղվիք, ուսկից մէյ մի ալ կարող չըլլաք ելլելու. տանջուիք սատանաներուն ձեռքէն, որոնց որ ծառայեցինք աշխրբիս մէջ: Ի՞նչ սոսկալի վճիռ, ի՞նչ անձային արդարութիւն: Ուստի ճշմարտապէս սք ( ) դոստինոս ըսաւ. \* Որ միանգամ յայսպիսի ահեղ որոտմանէ ոչ զարթնու, ոչ ննջէ նա, այլ մեռեալ է ॥:

Տես, որ սք Լոշիայ ճգնաւորը ինչ խորհուրդ ունէր սրտին մէջ. ասիկայ՝ որ հարիւր տարի ապրեցաւ, ու եօթանա-

տուն տալի շարունակ անասպառի մէջ  
 ճգնեցաւ՝ կըսէր, թէ վերջին դատա-  
 տանին օրվան վախը մտքիս մէջ անմոռաց  
 կը պահեմ : \* Օգրիս հանապազ խոկամ  
 ահիւ և դողուի՛ք, զհօգւոյս 'ի մարմնոյ  
 ելանելն, զանաչառ քննութիւն, և զվճիռ  
 դատաւորին ॥ 1) : Այսպէս սբ Անսելմոսն  
 ալ ահաւոր դատաստանը աչքին առջև  
 շատ անգամ կը բերէր, ու կըսէր .  
 \* Հայնժամ ընդ աջմէ կացցեն մեզք որք  
 ամբաստանեցեն, և ընդ ձախմէ սեւա-  
 դունդ երամք սատանայից . 'ի ներքուստ  
 ահաւոր անդունդ դժոխոց, և 'ի վերուստ  
 դատաւորն ցասուցեալ ॥ : Իսոյց դա-  
 լով մեր ատենը՝ նաև հայրն Աղղոսիկոս  
 Պոնտեան Հնեան կրօնաւորը՝ որ սբ ու  
 հօգւոյս մարդ մի էր, երբ վերջին դա-  
 տաստանը կը մտածէր՝ երեսին գոյնը կը-  
 նետէր, ու բոլոր մարմնովն կը դողար . ու

1) Հռուփ. Պատմ.

զարմանալին ան է, որ խուցին պատերն  
 ալ իր դողդողալէն կը շարժէին, ու ասով  
 քովի խուցերուն մէջ եղողներն ալ կը  
 վախոցնէր: Աթէ սուրբերը դատաստանը  
 մտածելով այսչափ կը դողային՝ մեղա-  
 տորները ինչ պիտի ընեն: \* Աթէ տա-  
 տանին, կըսէ Նր (Նեոնարդոս 1), մայրք  
 Վերանանու՝ զինչ որսոցն եղեգունք  
 անապատի ॥:

### Պատմութիւն.

Միայն դատաստանին օրինակը,  
 իսկ խաղը տեսնելը՝ շատ մտրդիկներ  
 դարձուց, ու իրենց վարքը փոխել տը-  
 ւաւ: Հետիմ թէաարոնի մը մէջ կը խա-  
 ղացվէր կոր Հ. Ստեփաննոսի Տուկեան  
 շինած թաղերգութիւնը, որ կըսվէր. Վր. Գ  
 դարձում-որ: Խաղի մէջ երբոր փայտէ

1) Բան ԾԵ.

շինված սատանան գործիքովմը թոցու-  
 նելով պէտք եղաւ մէկ կողմանէ միւս  
 կողմը խրկել՝ գործիքը չկաջողեցաւ, ու  
 փայտէ սատանան խաղին տեղէն դուրս  
 ելլելով, զնաց հոն տեղս հրէի մը՝ որ  
 կընայէր կոր, ձեռքին մէջ ինկաւ: Հրէ-  
 ան աս փայտէ սատանայէն այնչափ վախ-  
 ցաւ, որ անմիջապէս ուզեց դառնալ ու  
 քրիստոնեայ ըլլալ: Աս արձանը, իբրև  
 պղտիկ մասն մի դատաստանին ինչպէս  
 որ այսպիսի օգուտ ըրաւ, նմանապէս  
 կենդանի քաշվածը կմ' պատկերն ալ աս  
 օգուտը ըրաւ. վնդի ինչպէս որ սբ Վրի-  
 գոր՝ Աիւսացին կըսէ. \* Պատկեր կախեալ  
 յորմն՝ լռիկ խօսի, և յոյժ օգտէ || 1):  
 Ասոր ճշմարտութիւնը ցըցուց Ռոբոր  
 Ռուլլարներուն թագաւորը, որ շատ  
 սիրելով որսորդութիւնը՝ այնչափ կու-  
 րախանար, որչափ որ մեծ գաղաններ,

1) Ի Տառն սբն Թեոդ. 1

առիւծներ, արջեր, ու վայրենի խոզեր  
կորսար: Ասոր պալատին մէջ ըստ պա-  
տահման, կի՛ք ըսեմ աստուծով՝ բերին  
Սեթոտիոս անուամբ կրօնաւոր մը, որ  
ան ատենները երևելի պատկերահասն էր:  
Թագաւորը ուղեց որ ասիկայ աղու՛ն  
պատկեր մը իր տանը գաւթին (սուֆային)  
պատին վրայ քաշէ. բայց չեմ ուղեր  
ըսաւ, որ զուարճալի բան ըլլայ, հապա  
աւելի տրտմեցնելու ու վախցնելու բան  
մը, ինչպէս որ մտքէդ կրնաս հանել:

Սեթոտիոս մտածեց աշխրբիս մէջ  
հանդիպած տրտմալի պատմութիւնները, ու  
բանաստեղծներուն հնարած կեղծիքները՝  
որ մինչև իւր ատենները եղած էին. բայց  
տեսաւ որ հիչ մէկը այնպէս սոսկալի  
չեն, ինչպէս որ վերջին դատաստանը:  
Ուստի ամ հոգւով աշխատեցաւ, որ  
վերջին դատաստանը որչափ կարելի է՝  
կենդանի ձևով քաշէ: Տակը քաշեց  
ամէն արարածները մէկ վհի մէջ բոլո՛ւ-

բովին մեկզմէկու անցած, տարերբքները  
 շիտթած, գերեզմանները բացված ուս-  
 կից մեռածները դուրս կելլային: Արի  
 կողմանէ արևը սև ամպերով գոցված,  
 լուսնկան արունի պէս կարմրցած, աս-  
 տղները վառած զխաւորներու պէս եր-  
 կնքէն վար կիյնան կոր, չորս կողմանէ  
 կայծակներ, որոտումներ, փայլակներ,  
 ու մուխ կրակի հետ մեկտեղ դուրս  
 կըցաթկեն կոր: Չախ կողմը քաշեց  
 դատապարտեալները, տգեղ երեսով,  
 գոյներնին նետած, ահու գողու մէջ,  
 ասոնց առջև սատանաները կըկենային,  
 ձեռքերնին բռնած պէսպէս տեսակ տան-  
 ջելու գործիքներ, ուղի դատապար-  
 տեալները գծոխքի մէջ շարշարեն: Աջ  
 կողմը քաշեց սրերը զարմացածի պէս  
 կեցած, ու դատաստանին և իրենց իրա-  
 ւանց վճռոյն կըսպասեն կոր: Ասոնց  
 գլուխնին վերևը հրեշտակները կըթռչէին  
 կոր, ու սիրտ կուտային կոր: Ա՛յ տեղը

մէկ կողմը Մատուծմէ խրկըւած հրեշ-  
տակները կրկայնէին կոր, որ իրենց փողը  
զարնելով կըցուցանէին, որ Մ.Յ դատաս-  
տանին առջևը ամէն մարդիկները բերած  
են: Իսկ միւս կողմը կեցած էին շատ  
հրեշտակներ ձեռքերնին սուր բռնած  
դատապարտեալները գծօխք տանելու  
համար: Սէջ անդը կեցած էր Վ.Ս,  
Թագաւոր երկնի և երկրի, զօր-Ք Բ-  
Ժու- և Ժու-օր Բ-պլ- , չորս կողմը բոլոր  
երկնային զօրքերով լեցւած, կերպարան-  
քը չէթէ փրկչի, հապա ահաւոր դա-  
տաւորի կերպարանք, աչքերէն կրակ  
կըցաթկէ կոր, ձեռքը Թագաւորական  
գուաղան առած վախ ձգելու տեսնող-  
ներուն:

Իոքոր Թագաւորը դաւթին մէջ  
վեր վար կըպտըտէր, ուզել ինչ պիտի  
քաշէ նէ տեսնայ: Իայց պատկերահո յը  
քաշած տեղերը լաթով կըգօցէր և ու  
կըսէր, թէ լմըննալէն վերջը ու լածիդ

չափ նայէ : Պատկերը երբոր լմընցուց՝  
 յանկարծ վրայի ծածկածը մէկդի առաւ :  
 Թագաւորը ՚ի սկզբան նայած ատենը՝  
 աչքերը մ'ժնցան , սիրտը սկսաւ դողալ ,  
 կարծես թէ փայլակ մը ամպերուն մէջէն  
 յանկարծ ծաթեցաւ , կամ կայծակ զար-  
 կաւ : Քիչմը վերջը իրեն գալով հար-  
 ցուց Սեթոտիոսին , թէ առ ինչ բանի  
 պատկեր է : Ըն ատենը Սեթոտիոս սկսաւ  
 կարգաւ պատմել վերջին դատաստանի  
 պատմութիւն , թէ ամենակարող Ըժ պիտի  
 դայ , ամէն մարդու դատաստան պիտի  
 ընէ , արդարները արքայուի պիտի խրկէ  
 իսկ մեղաւորները դժոխք : Ըս դատաս-  
 տանի առջևը պիտի ելան իշխանները և  
 ռամիկները , հպատակները , և թագա-  
 ւորները : \* Թագաւորք երբեմն տիեզե-  
 րակալք մերկապարանոց սասանեսցին 1) |  
 Ըս սոսկալի պատկերը թագաւորը տես .

1) Հերոն, առ Հեղեոզ :

նելով, ու ահաւոր պատմութիւն ալ լսելով դարձաւ բողորովին ու քրիստոնեայ եղաւ. վերջը իր թագաւորութիւն ալ թող տալով ինքը զինքը նք վարուք և առաքինուիք Ա.Յ նրւիրեց: Այսչափ վախցուց դատաստանին պատկերը հզօր թագաւորմը: Հապա ինչ պիտի ըլլայ, եթէ ան դատաստանը փորձով տեսնելու ըլլանք: Աթէ հիմայ (կըսէ ոսկերեւան 1) չիտեսսած միայն մտածելով այսչափ կը վախնանք կոր, ինչ պիտի ընենք հապա, երբոր ան օրը դալու ըլլայ նէ:

Ատրտ. Բարոնիոս. ամ ՎՊՆՆ 848.  
 Դ համառօտ. Ալեքընիոսի և յայլայ:

1) 1) Ի Տառն Գ. գլ. Ը. առ Ը. Արնթ.

Բարի Մտածութիւնք զժողովոյն :

\* Աննդանուոյն իջցեն 'ի դժոխս ॥

Սաղմ. ԺԿ. 16 :

Շատ աղէկ մեկնութիւն է, որ սբ Հարք  
կուտան աւետարանին ան խօսքին վն, ուր  
տեղ որ Վ. ս դժոխքին տանջանքներուն,  
մանաւանդ անշիջանելի կրակին վրայ  
խօսելով խօսքը այսպէս կը լըմնցնէ. Մ.  
Էնչ հրմ յաղէսցի 1) : Անզի ինչպէս որ  
աղը մտին համ կուտայ, ու հոտիլ թող  
չիտար, այսպէս ալ դժոխքին կրակը ա-  
ղէկ մտածելը՝ զարմանալի զօրութի ունի,  
որ արդարներուն բարեգործութի ընել  
կը յորդորէ. իսկ մեղաւորները իրենց  
մեղքերէն կը մտքորէ : \* Ստածութի ան-  
շէջ հրոյն է սքանչելի իմն աղ, որ 'ի  
մեղաց նեխուէ պահպանէ զմարդ 2) ॥

1) Մարկ. Թ. 49 :

2) Սեկնեն 'ի Թ. 44. Մարկ :

Արջափ մարդիքներ դժոխքը մտածելով  
 իրենք զերենք շտկեցին . ու Մյ ծա-  
 ոայութենը ճամբան ուրախութիւ կատա-  
 րեցին : Այլ Հերոնիմոս՝ որ զիշեր ու-  
 ցորեկ նեղ քարայրի մը մէջ (որ է մաղա-  
 րայ) կը շարձարվէր , իր արցունքը դժոխքը  
 մտածելով կը դադրեցնէր , իր անօթի-  
 ութիւր ու ծարաւը կը մոռնար . յախտե-  
 նական տանջանքները միտքը բերելով  
 հողը իրեն անկողին կը շինէր . դժոխքին  
 գերութիւր յիշելով իր անապատին գե-  
 րութիւր իրեն անուշ կուգար , ինչպէս ինքն  
 ալ կըսէ . \* Աս յայսպիսի բանտ արկի  
 զանձն իմ վասն ահի դժոխոց 1) ॥ Թէպէտ  
 իրեն գործքերը սբ էին և վարձուց ար-  
 ժանի : Այլ Տեոնարգոս չէր կրնար ար-  
 քայութիւն թողու յոյս ունենալ , որ այն-  
 չափ առաքինութիւններ ըրաւ պղտիկուց  
 'ի վեր , այնչափ կրօնաւորներու գլուխ

1) 'ի Թուղթն առ Եւստար :

եղաւ . այնչափ զՔՄ , ու զնք Ս'այրը  
 ՎՔնի տեսաւ , ու իրենց հետ խօսեցաւ :  
 Իրաւի կրնար յուսալ . բայց 'ի վն այսր  
 անձի կը վախնամ , կը սէք , քանի որ  
 դժոխքը միտքս կուգայ : \*Մհ մեծ է ինձ  
 անկանիլ 'ի ձեռս մահու կենդանւոյ , և  
 կենաց մահացելոյ , որ ոչ երբէք մեռու  
 ցանէ , և միշտ մեռուցանէ 1) || : Աթէ  
 սրբերը , միայն մտածելով դժոխքը այսչափ  
 կը դողային մեղաւորները որչափ պիտի դո  
 ղան , որ յաւիտենականութե մտնեն , ու կե  
 նաց բարակ թելովը կասկած են : \*Վանի  
 քանի մեղաւորաց , (կըսէ սրն Աղերի  
 անոս 2) ակնկալեալ մնայ գեհեանն իւ  
 բովք տանջանօրն պատրաստեալ || : Բայց  
 մեղաւորները կամ իրենց չարութիւնը կուր  
 նալով չեն հաւտար , կամ իրենց զբօ  
 սանքներուն ետեւէն ըլլալով չեն մտա  
 ծեր : Արանի թէ ձեռքերնիս ըլլար ա

1) Գիւրգ Ե. Խսկ :

2) Ի ճառն ան :

սոնց փրկուէ համար ընել ան գործքը ,  
 որն որ սբ Պատրիտիոս եպիսկոպոսը ը-  
 բաւ : Աս սբը հրապարակի մէջ դժոխքի  
 վրայ քարոզ տըւած ատենը անթիւ ան-  
 համար ժողովրդեան՝ տեսնելով որ մե-  
 զաւորները զղջում չեն ըներ կոր՝ հրա-  
 մայեց որ հողը խորունկ բացվի : Մացվա-  
 ծին պէս սկսաւ կրակ մէջէն ցաթկել , իսկ  
 յատակը ամէն տեսակ տանջանքները կե-  
 րեային կոր , օրովք դաաապարտեալները  
 կըտանջըվին : Աս ահաւոր տեսիլքէն ա-  
 մէնն ալ վախնալով սկսան զղջման գալ ,  
 կամ պէտք է ուզել Ղրիտելմոսմը՝ որ  
 քաղքէ քաղաք պտըտի : Ասիկայ՝ կըսէ  
 Մեդա , ամէն չարութիւն ընելէն վերջը՝  
 գէշ հիւանդութե մէջ ինկաւ : Օսանք  
 պառկած ատենը՝ երբոր մեռածի պէս  
 աչքը գոցած էր , յափշտակեցաւ հոգ-  
 ւով , տեսաւ որ զինքը դժոխքին սոս-  
 կալի տանջանքները տեսնելու համար  
 կըտանէին կոր : Արտեսնէր հոնտեղս

ծծմբով (քիւքիւրտով) խառնած գե-  
 տեր, սառած լճեր, կրակ կտրած տա-  
 պակներ մարմինը խորվելու, երկթէ  
 ճանկեր, հալած կապարով լցված ա-  
 մաններ, ու գարշելի սատանաներ, որ  
 դատապարտեալները տանջելու կրպատ-  
 րաստոճէին կոր: Աերջը խելքը մի եկաւ,  
 և առողջացաւ ալ. բայց միշտ վախցածի  
 պէս ապրեցաւ. իր վախնալովը կրվախ-  
 ցներ զանոնք ալ, որոնքոր զինքը կրանս-  
 նային, ու հետը կրխօսէին: Անեցածը  
 բոլոր աղքատաց տըւաւ. չար օրինակ-  
 ները՝ որով ուրիշներու գայթագղութի  
 տըւած էր, բարի գործքերով բովանդակ  
 վերցուց: Տունը տեղը թող տըւաւ, ու  
 այնպէս ինքը զինքը կրտանջէր ու կը-  
 չարչարէր, որ տեսողները սրտերնին չի-  
 դիմանալով կըյորդորէին զինքը քիչ մը  
 գաղբեցնել. բայց մտիկ չէր ըներ, ու աս-  
 պիւր կուտար. «Ասոնցմէ աւելի սոսկալին  
 տեսայ»: Ասով ոչ միայն ժողովուրդը,

այլ և իշխանները կը վախցնէր, մանա-  
ւանդ զՎ. փրիդոս թագաւորը, որ շատ  
անգամ իրեն կը կանչէր, ու կուզէր ըսած  
խօսքը ըսել. «Վ. սոնցմէ աւելի սոսկալին  
տեսայ» :

Վ. յսպիսի խրատ տըւողմը պէտք է  
անոնց, որ ամենեին դժօխքէ չեն վախ-  
նար, և ոչ դժօխք երթալու վտանգէն :  
վնդի ոչ երբէք կը մտածեն, թէ դժօխ-  
քը տանջանաց տեղ, յուսահատելոց  
բանտ, կրակի անդունդ, ու ամէն աղ-  
տեղութիւններուն հոր է : Պէտք էր մարդ  
մը, որ մերականջէն վար շարունակ կան-  
չէր. Ո՛ր է յէնջ Բաւալան լեցի Բաւալու  
ընդ հոս որ ուրիշ 1) : Ո՞վ կրնայ ձեզմէ՝  
որ փափուկ մեծցած էք, կրակէ հնոցի  
մէջ կենալ, որուն առաստաղը (թաւանը)  
յատակը՝ պատերը՝ շղթաները՝ կապան-  
քը, ու ամէն կողմը կրակ են : Ո՞վ կըր-

1) Եսայ. ԸԲ. 14.

նայ ձեզմէ որ ամէն ուղածնիդ կրնէք  
 բերնի լեղիութիւն քաշել, ձեռքերնիդ  
 անշէջ կրակով այրել, գարշելի հոտեր  
 առնուլ, այլանդակ ձայներ լսել, ու միշտ  
 մութի մէջ կենալ: Ա՛լ կրնայ ձեզմէ  
 քաշել, որ միտքը միսիթարութի մը չու-  
 նենայ մտածելու, յիշողութիւնը ուղած բանը  
 կարող չըլլայ յիշել, իսկ կախքը իր կամե-  
 ցած բանը չունենալով՝ միշտ ուղէ ան բա-  
 նը՝ որ չիկրնար ըլլալ, ու չուղէ ան բանը՝  
 որ միշտ պիտի ըլլայ: Ա՛լ Բ...-...-... լնցի  
 Բ...-...-... ընդ հրոյն յա-...-...-...: Ա՛լ  
 կրնայ ձեզմէ՝ որ քիչ մը հիւանդութե՛,  
 քիչ մը ցաւին, քիչ մը ծանր խօսքին՝  
 որ ըսած ատենը կանցնի, չէք կրնար տա-  
 նիլ, յաւիտենական տանջանքը՝ ու ցա-  
 ւը՝ ու նախատինքը քաշել: \* Ա՛ր սիրտ  
 ոչ սասանի (կրսէ ԾԲ Բոնալննդուրա 1)  
 ամեալ զմտաւ, եթէ տանջանք դժոխոց  
 ոչ միայն անտանելիք են դառնուի, այլև

1) Բան Գ. Բ. Ար. զնի Աճայայտ:

անվաստճանք յախտե՛նահանութիւնս ॥ : Ասիկայ ամէն տանջանքէն սոսկալի պիտոր ըլայ, իմ՝ տանջանք քաշել, ու միտի թարելու, կիմ՝ խալըսելու, կամ մեռնելու յոյս մը չունենալ : Խնդրեացէն զմահ (կրօէ սբ Հովհաննէս 1) եւ թի՛ գրացէն : Կարիճը կրակի մէջ իյնալով երոր կրտսենայ որ փախչելու տեղ չիկայ՝ յուսահատութէն ինքը զինքը մկրատովը ու թիւնովը կը մեռցնէ : Բայց դատապարտեալները աս ալ չունին, մահուան վտանգի մէջ պիտի ըլան, ու երբէք պիտի չիմեռնին : \* Քանզի պատիժն այն (կրօէ Կասսիողորոս) տանջէ առ ՚ի պահել, և պահէ առ ՚ի տանջել : Տացի եղկելեաց կեանք անմահ, և պատիժ պահպանիչ ॥ :

Բայց աս զգայութիւն պատժէն աւելի սոսկալի է ինասու ըսլած պատիժը՝ որն որ արքայուէն կը զըկէ : Աս ինասը

1) Յայտ. Թ, 6:

պէտք է մեզի աղէկ մտածել. որովհետեւ  
 այնչափ դէշ ու սոսկալի է, որ Ոսկե-  
 բերանը համարձակեցաւ ըսել. \* Եթէ  
 որ բիւրս գներ գեհեանս՝ ոչինչ այն-  
 պիտի ասէր, ուրի է տարագիր լինելն յե-  
 րանաւէտ փառաց ॥ 1) : Չիկարծէ մէկը՝  
 որ աս չափէ դուրս խօսք է : Անզի աս  
 պատիժը՝ որ զմեզ Մատուծմէ կըզրկէ,  
 անսահմանութի մը ունի. իսկ զգայութե  
 ըսլած պատիժը՝ թէպէտ թշուառութի  
 կըբերէ, բայց չափ ալ ունի : Ոչ որ  
 կրնայ հասկընալ, կմ՝ իմանալ աս ցաւն  
 սասակութիւր, որն որ հոգի մը Մյ երե-  
 սէն զրկուելով՝ կուեննայ, ինչու որ խել-  
 քերնիս չիհասնիր, թէ Մյ երեսը տես-  
 նելը որչափ մեծ բարի է : Բայց ՚ի վի  
 այսր ամի քիչմը հասկընալու համար՝  
 մտքերնիս բերենք անոնք՝ որոնքոր կամ  
 անդրանկութիւնին, կամ ապրանքնին,

1) Ի ծառն խթ. առ Գողով :

կամ մէկ իշխանութիւնին կորսնցնելով  
 տրամութիւն իրենց կեանքը անցուցին :  
 Արչափ սոսկալի լացաւ Վիւսիմարոս,  
 վաճառելով իր թագաւորութիւնը քիչմը  
 ջուրի համար : Ինչպէս սոսկալի տըրտ-  
 մեցաւ Ասաւ, որ քիչմը ապուրով իր  
 անդրանկութիւնը ծախեց : Եղաղալեաց 'է  
 յայն Տէ՛ժ Գոսանայեալ յոյժ 1) : Հապա  
 ինչպէս պիտի տրամին անոնք, որոնք որ  
 միշտ պիտի տեսնան, թէ վայրկենական  
 հեշտութեւ համար՝ յաւիտենական ու-  
 բախութիւն կորսնցուցին : Չար կամ-  
 քերնին ընելնուն համար՝ իրենց թշնա-  
 մեացը չիներելնուն համար, ու անցաւոր  
 զբօսանքներէն ետ չիկենայնուն համար՝  
 զԸ՛ճ՝ զարքայուի ու զյաւիտենականութի  
 կորսնցուցին : Արքայութի երթալ իրենց  
 ձեռքն էր, միայն թէ ժամանակին մեղ-  
 քերնին խոստովանանք ըլլային, ու ապաշ-

1) Ծանոթ. իՆ. 34 :

խարէին: Մայց իրենք ասոր համար և ոչ սահաթ մը ատեն գտան, որ խղալով խնտալով ուտելով խմելով ժամանակնին անցուցին: Աս ժամանակը կորսնցնելնին սոսկալի կսկիծ իրենց պիտի տայ, որովհետև միշտ աչքերնին առջևը պիտոր բերեն բարիքները, որ երանեալները կը վայլեն, ու չարչարանքները, որ դժօխքի մէջ կը քաշեն: Ասիկայ իրենց միտքը սոսկալի պիտի տանջէ, միշտ մտածելով, թէ Ա՞ճ ասկից վերջը զիրենք պիտի մոռնայ, որ չուզեցին զինքը ճանչնալ, ապրելու կեանք պիտի չունինան, և մեռնելու ճար:

Մայց ասկից՝ չոր նախանձ ալ պիտի երանելոց վրայ ունենան: Աս նախանձը դատապարտելոց սիրտը այնպէս պիտի կսկծցնէ, որ խելքերնին կորսնցնելով պիտոր կատղին: Շատ անգամ դէպ երկինք պիտոր նային, և մտածելով, թէ ինչպէս ուրիշները քիչ մը բանով

արքայութի գացին, ու իրենք մէկ փուճ  
 ուրախուէ համար զրկըվեցան, ախ ընե-  
 լով սրտերնին պիտոր ճաթի, ու լալով  
 ողբով պիտի ըսեն: Սէք տնօրէսք զձարս  
 Գոցո յողորո-լէնն համարեաք, եւ զձախճան  
 Գոցո տնօրէս-լէն: Օխորդ համարեցան  
 ընդ որդիս ԼՅ 1): Ինչպէս սոսկալի  
 նախանձով պիտի մաշին, տեսնելով այն-  
 պիտի փառաց մէջ ոչ միայն իրենց եղ-  
 բայրը, կամ ընկերը կամ բարեկամը,  
 այլ և ծառայն, ու թշնամին ալ: Եւ  
 ցաւին մեծութիւն չիկրնար մէկը իմանալ  
 որն որ փորձով չիգիտէր, թէ ինչ գէշ  
 բան է նախանձը, որ նախանձոտին սիր-  
 տը երբեմն աւելի օտարին յաջողութիւնը,  
 քան թէ իր քաշած ողորմելութիւնը կըշար-  
 չարէ: Իտորտկաճաշ մեծատունը, (կը-  
 սէ Ոսկիարանը 2) աւելի ցաւեցաւ Վա-  
 զարոսը Երրահամին գոգը տեսնելով

1) Իմաստ. Ե. 4 \*

2) Իան ժք.

քան թէ զինքը սատանային ոտքին տակը .  
 Անոր համար Աճ որ աս պատժին մե-  
 ծուխը աղէկ կըճանչնայ՝ մեղաւորաց կըս-  
 պանայ , ու կըսէ . Փոխանակ զի արարէր  
 շար սանօղի իմ , տհաւասելի որք ծառայելնն  
 ինչ իւրեցիւն , եւ գոար քաղցիջէր . տհաւասելի  
 որք ծառայելնն ինչ որբախ ընցին , եւ գոար  
 տհաւասելի 1) :

Այս ամենայն ու ասոնց նման խոր-  
 հուրդներն շք վզնները յաճախ կուտան ,  
 ու կըսեն , որ շարունակ դժոխքի պատիժ-  
 ները մտածենք , որով անկից կազատինք :  
 Ապահով կենանք , կըսէ Ոսկերերան ,  
 \* Օ՛ի ոչոք յայնցանէ՛ որք առաջի աչաց  
 ունին զգեհեան , անկցին 'ի գեհեն || 2) :  
 Աւ շքն Պրոսպէր կըսէ . \* Խոկալ զխոր-  
 խորին հնոց դժոխոց ոչ այլ ինչ է , բայց  
 եթէ զմոլուծիս 'ի բաց հատանել 3) || :

1) Էսայ . 4Է . 12 :

2) Ի ք . ճառն Փիլիպ :

3) Կիւրք Գ . յաղ . արհ . զալխարհ . գԼ . ԴԲ .

Եւ ասով ետ կըկենայ մարդան վտան-  
գէն՝ որ դժոխք կըտանի: Իսկ սբ Բեռ-  
նարդոս՝ Վաւիթ մարգարէին ան խօսքին  
վրայ, իջէն իւրոսն՝ ի դժոխս. աս  
խօսքս կաւելցնէ. \* Օ՛ի մի իջցին ՚ի մահ-  
ուան 1) ||: Աս զի մարդիկները մեղքէ  
ետ քաշելու չիկայ այնպիսի բանմը, ինչ-  
պէս որ տանջանքները մտածելը, որն որ  
մեղք ընելնուն համար պիտի քաշեն:  
Ուստի կարդինալ Պաղղամիկեցին աղէկ  
կըսէր. շատ մարդիկ դժոխքէն արքայ-  
ութի գացին. որովհետեւ մարդիկ յա-  
ւիտենական տանջանքներէն ազատելու  
համար՝ Ը.Յ ճամբու մէջ իրենք զիրենք  
կըսկսին դնել, և այսպէս արքայութե  
արժանի կըլլան:

Պատմութիւն:

Մեծամեծ զարմանալեաց մէջ՝ որոնց  
վրայ սբն թովմաս շատ կըզարմանար,

1) Ի ճառն որ աս էղբ:

մէկնալ աս էր, որ քրիստոնեայ մարդ  
 ունենալով բանականութիւն ու հաւատոյ  
 լոյսը՝ ի վն այսր ամի փուճ ու անցաւոր  
 ուրախութիւն համար ինքը զինքը յաւիտե-  
 նական տանջանքներու արժանի ընէ:  
 Սակայն շատ անգամ սիրտը ցաւելով  
 այս զարմանալիքը տեսաւ. որովհետեւ  
 մեղաւորին յանդգնութիւն՝ բան չիկայ  
 որ՝ ոտքի տակ չառնէ: Ասոր օրինակ՝  
 միանգամայն և խրատ ըլլայ աս զարմանա-  
 լի գիպուճածը: Այլ Անտոն Պատուաց-  
 ւոյն ժամին մէջ մեծ պահոց ատեն  
 Պրանչիսկան կրօնաւոր քարոզիչ մը  
 անձային նը հոգւով լցեալ ամեն օր քա-  
 ղող կուտար: Բայց ան օրը՝ որ օր աւե-  
 տարանին մէջ կըկարդացվի աս բանս.  
 Մեռաւ Ռեծարոնն և Բարեկցաւ  
 դժոխս, 1) չեմ գիտեր բնութիւն տկա-  
 րութիւն, թէ սատանային չարութիւն, խեղճ

1) Ղուկ. Ժ. 22.

քարողչին վի ծանր հիւանդութի մը  
 եկաւ, որ յանկարծ գետինը իյնալով  
 զինքը անկողինը վերցուցին տարին: Հի-  
 ւանդը առողջացնելու, ու ոտք հանելու  
 համար բժիշկներուն չըրած դեղը չի-  
 մնաց, բայց պարսպ տեղը, վնդի ամեննկին  
 օդուտ չըրաւ: Աւստի բոլոր վանքը  
 շփոթուէ մէջ ինկած էին, մանաւանդ  
 քարողի համար զանգակ ալ զարնըւած  
 ըլլալով շատ ժողովուրդ քարողի եկած  
 էին: Աւրիշ մարդ ալ չիգար, որ տեղը  
 լեցնէր. վնդի պատրաստ չըլլալուն հա-  
 մար՝ ոչ որ կը համարձակէր կոր: Այս-  
 պիսի շփոթութե մէջն իբէն՝ կրօնաւոր  
 մը իրենց վանքը եկաւ, զգեստ իրենց  
 պէս հագած, երկայն հասակաւ, ծանր  
 երեսով մարդ մը: Աերս մտաւ, տեսաւ  
 որ կրօնաւորները մեծ տրտմութե մէջն  
 էին: Պատճառը իմանալով սկսաւ պէս-  
 պէս խօսքերով ու պատճառներով այն-  
 պէս զիրենք մխիթարել, մինչև կրօնա-

ւորները մտերնին դրին, թէ այնպիսի  
 լեղուանի մարդ մը հիւանդ քարոզչին  
 տեղը կրնայ լեցունել: Աւստի աղաչել  
 սկսան իրեն, որ աս ծանրութիւն վրան առ-  
 նու, ու եկած ժողովուրդը իւր քարո-  
 ղութիւնը ուրախացնէ: Առջի բերանը չեմ  
 կրնարի պէս զինքը ցըցուց, ըսելով, թէ  
 Աւրետոն եղած սբ Աճառնայ տնէն  
 կուգամ կոր, յոգնած եմ, և ասոնց  
 նման ուրիշ բաներ, բայց այնպիսի եղա-  
 նակներով, որ աւելի ուղելու քան թէ  
 չուղելու նշան կը ցըցունէր կոր:

Արջապէս՝ երբոր կրօնաւորները  
 սկսան շատ աղաչել ինքն ալ հաւնեցաւ:  
 Այլաւ ամպիոն, ու երկու սահաթ այն-  
 պիսի հոգևով ու նախանձու դժոխքին  
 տանջանքները մեկնելով ան օրվան ա-  
 ւետարանին համաձայն՝ քարոզ տըլաւ,  
 մինչև ամէնն ուղ զարմացան կեցան:  
 Աչքերնին առջևը կրբերէր յաւիտենա-  
 կան գերութիւնը, տանջանքները, ու ամ-

մէն թշուճառու թիները դժոխքին այնպիսի  
 խօսքերով, որ կարծես թէ դժոխքը տես-  
 նելու համար ժողովրդեան աչքին առջևը  
 բացած էր: Արպատմէր լալով դատա-  
 պարտեալներուն քաշածը, որ երբեմն  
 կրակի՝ երբեմն սառուցի մէջ կը տանջվին,  
 յաւիտենական նեղութիւն, անվերջանալի  
 գիշերը, գարշահատութիւն, սատանանե-  
 րուն տանջելու ատեննին կատաղութիւն,  
 յուսահատեալներուն ձայնը ու պոռալը:  
 Ասոնց ամէնն ալ որ ըստ ինքեան վախ  
 կը բերեն միշտ, քարոզիչը ծանր խօս-  
 քերով ու բարձր ձայնով ըսելով այնպէս  
 ժողովրդեան սիրտը վախ մը ձգեց, որ  
 ամէնքն ալ սկսան մաղերնին փետտել,  
 ու սոսկալ, կարծես թէ դժոխքը առ-  
 ջնին կը տեսնէին. չէ թէ դժոխքի վն  
 քարոզ կը լսէին: Աուլային կողբային  
 ամէնն ալ, կը հառաչէին, ու սրտանց  
 կը զղջային: Այսպէս քարոզը լըմնալով  
 ժողովուրդը լալով ողբով, ախով վա-

խով աներնին դացին, ուրիշ բան չէին  
բօեր կոր, բայց միայն աս խօսքս. Ո՛չ  
Էրէէր Խօսեցու խորդ ուղ այրն այն 1):

Վարողիչը ամպիոնէն վար իջնալէն  
վերջը երթալու պատրաստվեցաւ. աղա-  
չեցին որ քիչմը հանգչի՝ բայց չիկեցաւ,  
դրան քովը որ դուրս պիտոր ելլար՝  
դռնապանը աղէկ մը ասոր նայելով տե-  
սաւ որ գլխին վրայ վեղարին տակը այծի  
եղջիւրներու նման սև՝ երկու եղջիւր ու-  
նէր. ձեռքերուն ռաքերուն եղունգները  
(թռնախնները) արծուի մագիլներու  
(փէնչէներու) պէս բուսած էին: Վրո-  
նապանը ասոր վր զարմանալով կարծիք  
գնաց՝ չըլլայ թէ սատանայ ըլլայ աս  
մարդս: Ուստի համարձակեցաւ հարցնել  
երգիլեցնելով յանուն Ա՛յ ու սրյն Ա՛ն-  
տոնի, թէ որ կրօնէ ես, կամ սատանայ  
ես: Ալ որովհետև գիտէր որ սատանան

1) Յովհ. Ե. 46.

քրիստոնէութիւն թշնամի է, հարցուց որ  
 անանկէնէ ինչու այնպէս քարոզ տալով  
 ժողովուրդը լացուցիր: Իսկ սուտ կրօ-  
 նաւորը տեսնելով որ մարդիկները վան-  
 քին մէջէն և դրսէն չորս կողմը առին՝  
 վախցածի պէս՝ ալ չիկրցաւ շարութիւնը  
 պահել. խոստովանեցաւ որ սատանայ  
 է: Աերջը երդում ընելով ըսաւ, թէ  
 ատ քարոզը տալովս՝ չէ թէ արքայութեւ,  
 հապա դժոխքի օգուտ ըրի. վնդի իմ  
 ուղածս աս էր, որ ատողըը հառաչանքը  
 ու զղջումը՝ դժոխքի մէջ լսողներուն  
 կրակը ու տանջանքը եւեղնեն: Ինչու  
 որ հիմայ թէպէտ վախցան ու զղջացին.  
 բայց ետքը դարձեալ իրենց փոխածնին  
 պիտոր դառնան, ու ասոր համար աւելի  
 պատիժ պիտի ընդունին: Վանինները  
 մէկ օրվան մէջ իրենց առջի ըրած հպար-  
 տութեւ բղջախոհութեւ ու ազահութեւ  
 պիտոր դառնան, առանց յիշելու ան  
 վախը ու սոսկումը՝ որ քարոզիս մէջ ու-

նեցան : Որչափ որ մէկը պատիժները  
 դիտնալով մեղք կը գործէ՝ այնչափ յան-  
 ցանքը կը ծանրանայ , վնդի պատիժնե-  
 րուն վախովը մեղքէ պէտք էր ետ կենալ :  
 Ալ վերջը աս ալ ըսաւ . « Լս քարոզս  
 ,,ինձի երկու բանի կօգտէ . մէյմը որ  
 ,, սաղայէլէն գոլուի կառնում , մեղաւոր-  
 ,, ներուն չարութիւնը աւելցնելուս համար ,  
 ,, երկրորդ՝ իրաւունք կը ստանամ զանոնք  
 ,, Լ, Ե դատաստանին առջևը աւելի ամ-  
 ,, բաստանելու , ցրցունելով , թէ անոնք  
 ,, մեղաւորաց մեծ պատիժները աղէկ  
 ,, ճանչնալէն վերջը՝ նոր նոր այնպիսի  
 ,, պատիժներու արժանի մեղքեր գոր-  
 ,, ծեցին » : Լսիկայ ըսելէն վերջը մէյմ  
 ալ չերեցաւ . զարմացան լսողները այդ-  
 պիսի չարութեն վր : Ուստի ո՞վ չըսէր , որ  
 նրն (Վ) ոլմաս ճշմարտապէս ըսաւ 1) , թէ  
 մեղքը քրիստոնէին՝ որ կը ճանչնայ , ու

1) Իբ. խ. 57. պ. 2 :

կըհաւատայ մեղքերուն պատիժները,  
անհաւատին մեղքէն աւելի ծանր է, որ  
հաւատք չունի, ու աս պատիժներն ալ  
չիճանչնար: \* Հաւատացեալն ծանունս  
մեղանչէ այնու, զի առ թան հարկանէ  
ղպատուհասս մեծամեծս առ 'ի լնուլ  
ղկամս մեղաց ॥:

Հ. Ս'իտայէլ Բեհեմֆելըս. 'ի պատհո  
տարս Վարս. Եպ. որ յեշտութիւն գլխն Ան-  
պոռնիսս, և գլխն զպոռնիս Տեղը 'ի Կարգէ  
Ս'ինորեց:

### ԳԼԿ ԺԿ

Բարի Ստածութիւն արտայութիւն շք:

\* Հայեաց յերկինս և տես ॥.

Յովհ. Է. 5:

Գուցէ մահուան՝ դատաստանի՝ ու  
դժոխքին վրայ գրած մտածութիւնները  
տրամալի ու շատ դառն եկած ըլլայ  
մէկուն: Ուստի ուրիշ մտածութիւն մը

կուղեմ հոս գրել, որ շատ աղէկ բան է:  
 Այն ( ) գոտարհնոս կըսէ, թէ մենք զմեզ  
 մխիթարելու համար երբեմն երբեմն  
 երկինք նայինք ցորեկը, եբոր ամպ  
 չիկայ, կամ գիշերը, եբոր աստղները  
 ելած են: Այդի ցորեկը կըտեսնանք  
 աղուճոր արևը՝ որ անաշունչին մէջը եր-  
 բեմն մեծութե համար հսկայ կանուճանովի.  
 երբեմն գեղեցկուն համար՝ փեսայ, և  
 երբեմն՝ Գործ լէ Էստոր Լ՛ն 1): Ըս  
 արևը իբրև երկնքի աչք մը շարունակ  
 երկրիս կընայի, ու ամէն կողմը իր լու-  
 սովը կըլուսաւորէ: Ամա իբրև բոլոր աշ-  
 խրքի սիրտ մը՝ միշտ ծաղկեկներուն, տուն-  
 կերուն, կենդանեացը, ու ամէն արա-  
 բածոցը կեանք կուտայ: Գիշերը անթիւ  
 անհամար աստղներ կըտեսնենք, որ կը-  
 նմանին ոսկւոյ, բայց չեն ապականվիր.  
 կընմանին ակնվանւոյ (պիլօրի), բայց

1) Ա/բ. խ. 16.

չեն կոտորիր, կընմանին ջահերու, բայց  
 չեն մարիր: Ասոնք շարունակ երկիրս  
 կըզահեն. ինչպէս կըսէ Սիրսք. Փաս-  
 սաբէղաց լուսաւոր է. 'է պահպանու-  
 լիւնսնց ոչ դադարին 1): Սիւայն ա-  
 սոնց նայելով զարմանանք. և տեսնելով  
 երկրիս ու երկնից մէջ եղած զանազա-  
 նութիւր ու գեղեցկութիւր՝ սք խոնատիօսին  
 խօսքը ըսենք, որ իւր սիրտը անով կը-  
 մխիթարէր. «Արկինք երոր կընայիմ՝  
 աս աշխարքս ինձի շատ գէշ կերևայ»:   
 Ան ատենը ամէն աշխրքիս վայելչութիւր,  
 պարտէզներուն գեղեցկութիւր, պալատ-  
 ներուն աղօժոր շինուածքը ոչնչի պէս  
 աչքերնիս կերևայ, ան ատենը կըսենք,  
 աս ինչ խաւար մշուշ է, որ մարդուս աչքը  
 կըմթնցնէ եթէ երկնաւոր լուսոյն պայծա-  
 ոուէ հետ բազդատովելու ըլլայ: Անոր հա-  
 մար սք մարգարէները զմեզ միշտ կը յորդո-  
 րեն, որ երկիրքնայելով անոր գեղեցկութիւր

1) Սիր. խփ. 11:

մտածելիք . Համբարշէի՛ն է Բարշիւնս զաշ-  
 յիւր , եւ Գեղի՛ն 1) : Այլ յղի տեսնելով կըս-  
 կըսիմք բաղձալ , ու անով երկրաւոր  
 բաները թող կուտանք :

Իայց աչքով միայն երկինք նայելը  
 հերիք չէ . պէտք է մտքով ալ անոր ու-  
 բախուածիններուն մէջը մտնալ , ու Այ  
 տանը մեծութիւնը՝ աղուճորութիւնը՝ փառա-  
 ւորութիւնը ու կարգը տեսնել : Թեպէտ  
 ստոյգ է , որ աշխրբիս մէջ արքայութեան  
 նմանութիւնը ունեցող բան մը չիկայ :  
 Այլ մարգարէններն ալ անոր վրայ ընդ-  
 հանրապէս ու զարմանալով կըխօսեին :  
 Իարուք մարգարէնկըսէ . Ա՛նձ է Գոհն  
 Այ , եւ ընդարշալի է Գեղի « Գոհոսածոց  
 նիւր » . Տե՛՛՛՛՛ է եւ ոչ Գոյ Բոս . Բարշիւ եւ  
 անշա՛ն 2) : Այսպէս կըսէ և Արեմիայ  
 մարգարէն ալ . Այս այն չաղաք է պսալի

1) Եսայ. Խ. 26 :

2) Բար. Գ. 24 :

Ժողովուրդի ստեղծման 1) : Բայց  
 նրան Յովհաննէս որ հոգւով ԱՅ ան  
 քաղաքը տեսաւ, քիչմը աւելի բացա-  
 յայտ գրեց. Վաղարշն էր ոսկի հարուստ,  
 նման ո՞ր և սպիտակ սպառնաց 2) : Ա՛նկ  
 խօսքով ըսենք. աշխրբիս մէջ ինչ որ  
 գեղեցիկ կամ լուսաւոր կամ մեծ կամ  
 փառաւոր բան կայ՝ որ ԱՅ իմաստութիւն  
 ու ամենակարողութիւն ստեղծեց՝ հոն կը-  
 գտնուի : Բայց բաղդատելով ան ուրա-  
 խութիւններուն՝ որն որ երանեալ հոգի-  
 ները կը վայլեն՝ ան լուսաւոր փառաւո-  
 րութիւն պղտիկ բան է : Ա՛նդի ինչ որ  
 աչքը տեսնելու աղոճոր բան, կամ ա-  
 կանջը լսելու գեղեցիկ ձայն, կամ բեր-  
 նի անուշ բան, կամ քթին հոտալուտալու  
 անուշ հոտ, և կամ ինչ որ մարդս կրնայ  
 բաղձալ, հոն առատ կը գտնուի : Աւ-

1) Ողբոց, Գ. 15 :

2) Յայտ, ինք. 18 :

Եթէ ինչպէս որ Սենեքայ կըսէ . \* Չիք  
կատարեալ ուրախութի առանց քաղցր  
ընկերութե 1) ||, հոն տեղս անթիւ ու  
խմաստուն, փառաւոր ու երջանիկ ընկեր-  
ներ պիտոր ունենանք . Լ ասոնց ամէնն  
ալ զմեղ երջանիկ պիտոր ընեն, ինչպէս  
որ նք ( ) գոստինոս կըսէ, Թէ այնչափ  
ուրախութի պիտի ունենանք, որչափ  
ընկերներ : Աւ որովհետե անոնք մէկզմէ-  
կու մէջ այնպէս բարեկամական կեանք  
ունին՝ պէտք է որ ամէն ունեցած բա-  
րիքներն ալ հասարակացըլայ : Արչալ  
մեծ երջանկութի է հրեշտակները տեսնել  
որոնց խրաքանչիւրը ամէն մեր տեսած ա-  
բարածներէն աւելի գեղեցկութի ունին,  
կըսէ նրն Թովմաս : Արչալի մեծ երջան-  
կութի է Լ նք Աճաճինը տեսնել, որուն  
աստղները գլխուն պսակ է, ու արեը  
զգեստ : Հապա որչափ ասոնցմէ աւելի  
մեծ երջանկութի պիտոր ըլլայ Հ) նին փա-

1) Թ. շ. շ :

աւարեալ մարդկութիւն տեսնել, որ ա-  
թոռով ու փառօք քան զամենք կըզե-  
րազանցէ: Իրաւի կըսէ Սր ( ) գոստի-  
նոս, եթէ Տիչ մէկ երջանկութի մի ալ  
չէր ըլլար՝ Վ.Սի մարդկութիւն կատարեալ  
երջանկութի կուտար:

Իայց այս ամ ուրախութիւնները՝  
գլխաւորները չեն, ասոնք մէկ ոսկիէ  
մատնի մը են, որ մէջերնին իրենցմէ ա-  
ւելի աղուճոր քար մը ունին: Իուն ե-  
քանուէ փառքը՝ զ]՝ժ տեսնելն է, ինչ-  
պէս ինքը մեզի խոստացաւ. Ես եղից  
վարձ քս Տեժ յոյժ 1): Ե. յսինքն՝ Եժ  
կուզէ մեզի տալ ան երջանկութիւն որն  
որ ինքը ունի, ու ասով զմեզ իրեն նման  
ընել կուզէ: Ե. յսպէս կըսէ Սրն ( ) ովհան-  
նէս. Ե. ման նմա լինելուց էմք, զէ քե-սանէ-  
լուց էմք զնա ուղ ե- էն 2): Իսկ որ լեզու  
կրնայ պատմել, կամ որ խելք կրնայ

1) Տ. ննդ. Գե. 10

2) Թ. Յովհ. 7. 20

Հասնիլ , թէ զՎճ տեսնելը 'ինչպիսի ու-  
 րախուծի է : Այն Վնսելմոս կըսէ , թէ  
 երանեալք զՎճ կըտեսնեն \* ճաօք , սի-  
 րով , և ուրախուծիք ॥ : Սոս , վնզի  
 միտքը լուսով փառաց լուսաւորեալ՝ Վյ  
 կատարելութիւները կըճանչնայ , ք՝ ամե-  
 նակարողութիւն՝ որով Հայր Վճ ամէն  
 բանը ստեղծեց , իմաստութիւն՝ որով  
 Արդին Վճ ամէն արարածը իրենց փախ-  
 ճանին կըկարգէ : Աւ բարութիւն՝ որով  
 Հոգին նր ամէնուն բարիք կընէ : Սիրով ,  
 վնզի սիրտը ասով զճայրագոյն բարին  
 կըսիրէ , ու այնպէս կըբորբորի Հոգին ,  
 որ Վստուծմէ չիզանազանվիր , ինչպէս  
 կրակ կտրած երկաթը կրակէ : Ա-բ-  
 ի-բ-  
 վնզի Հոգին իբրև ամբաւ ու-  
 րախուծից ծովին մէջ կընկղմի , որուն  
 Վճ իր ուրախութիւնը կուտայ . ինչպէս  
 որ Վն կըսէ . Սոս յո-բ-բ-բ-բ-բ-բ-բ-բ-բ-բ-  
 1) : Աւստի երևելի անարանները

1) Մատթ. ԻԷ. 22 .

լըսեն, թէ ան ուրախութե՛ն կաթիլը՝  
 որնոր երանեալները Ա՛յ երեսը տեսնելով  
 կը լըլեն, եթէ դատապարտելոց մէկը  
 առնելու ըլլար՝ ամենեին ցաւ մը չէր  
 զգար: Ա՛յսպէս կըսէ ԾԲ ( ) գոսաինոսն  
 ալ. \* Ա՛յնչափ է քաղցրութի հանդեր-  
 ձեալ փառաց, զի եթէ շիթ մի իջանէր  
 ՚ի դժօխս՝ քաղցրացուցանէր զիմ՝ դառ-  
 նութի՛ դատապարտելոց 1) ||: Մանա-  
 ւանդ թէ դժօխքը չէր ըլլար դժօխք,  
 հապա արքայութի: Եւ որովհետեւ Ա՛յ  
 երեսը տեսնելը՝ բնական կարգէ ու խելքէ  
 մտքէ դուրս բարի մը նէ, անոր համար  
 նոյն ԾԲ ( ) գոսաինոս կըսէ, թէ արա-  
 բածոց վը ինչ որ աղոճոր ու փառաւոր,  
 զարմանալի ու սիրելի բան մը կը տես-  
 նանք՝ այսպէս ըսենք. Ա՛ժ որ այսչափ  
 ձիւք ասոր անոր տըւած է՝ պէտք է որ  
 բոլոր աս կատարելութիները ինքը ունե-  
 նայ: Ինչպէս որ հրեշտակն ալ երոր

1) Ա՛ ՌԵԷԷՍ. 17. փառ. գԵԷԷ. 44. ԺԳ.՝

երանելոց փառքը ուղեց նր Պրանչիս-  
 կոսին պատմել՝ ուրիշ կերպ իրեն չիկրցաւ  
 հասկցնել, բայց միայն ըսելով. եթէ  
 աշխարքս բոլոր սակի ըլար, բոլոր օղը  
 լոյս, բոլոր ջուրերը բալասան կտրէին, ու  
 բոլոր քարերը՝ ակունք (Ճէվահիր) ըլայ-  
 ին, աս ան բանը չէր բողբատվէր  
 ան ուրախութենը՝ որ մարդս Այ երեսը  
 տեսնելովը կըստանայ, վսզի անով ամէն  
 արարածոց կատարելութիւնները կըտես-  
 նայ :

Արքայութիւնը յիշելը այնպէս եկած  
 նեղութիւն կանուշցնէ, ինչպէս որ անուշ  
 բան մը ուտելը : Անորոս տկարութիւնը  
 գեղի մը պէս կըզօրացնէ, ամէն խիստ  
 ու դժուարին բաներ յանձն առնել ու  
 քաշել կըհամարձակեցնէ : Մեր վշտաց  
 հիւանդութեանց ու հալածանաց մէջ՝  
 որ աս արտասուչաց ձորը մեր գլուխը կու-  
 գայ միշտ, ասիկայ մտածենք, ինչպէս  
 որ նր Արտախրոսները կընէին, որոնց մէջը

յիշատակաց արժանի են ըր Ռարաքիսիոս,  
 և ըր Աղապիտոս, երկուքն ալ հաւատոյ  
 պաշտպաններ: Աք Աղապիտոս՝ երոր  
 բռնաւորը իրեն գլուխը տաքցած սաղա-  
 ւարտ կըսպառնար կոր դնելու, ըսաւ.  
 Գլխուս հոս այրիլը մեծ բան չէ, որ ար-  
 քայութե՛ մէջ պսակ պիտի ստնու: Իսկ  
 ըր Ռարաքիսիոս սոսկալի տանջանքնե-  
 րով տանջուած ատենը՝ քովի դահիճ-  
 ներուն այսպէս կրկանչէր. ‘Չեղ նայիմ’  
 որ ասկից աւելի զիս չարչարէք, արքայ-  
 ութե՛ համար ասոնցմէ աւելի բան պէտք  
 է քաշել: Ալ իրաւցնէ, եթէ մենք ալ  
 շատ անգամ աչքերնիս ու մտքերնիս  
 վեր վերցուցած երկինքնայելու ըլլայինք,  
 ուղղի մտածենք թէ ինչ վարձքեր պիտի  
 հոն տեղս ստանանք, մենք ալ առաքեալին  
 խօսքը կըսէինք. Ոչ էն արժանի չարչա-  
 րան, ժամանակէս համարելիլոց փառացի՝ որ  
 յայտնիլոց էն ’ի Ռեղ 1): Ա՛մէն աշխա-

1) Հռոմ. ը. 18 :

տանքը մեզի քիչ կերևային, ամէն վիշ-  
 տը արքայութե համար անուշ կըլար  
 քաշել, թէև մարտիրոսներուն ան սոս-  
 կալի քաշած չարչարանքները մենք ալ  
 քաշելու ըլլայինք: Հայրն Արեմիա  
 'Արեքսեղիոս, իւր գեղեցիկ գրքին մէջը՝  
 որ կըսվի Արեւի երանելոյ, կըպատմէ,  
 թէ Աողոնիա քաղաքը գիւհահարի մը  
 բերնով սատանային հարցուցին, որ եթէ  
 մէկ անգամ ԱՅ երեսը տեսնելու ըլլայիր՝  
 ինչ կընէիր, կամ ինչ կուտայիր, ան  
 ալ արձն տըւաւ, եթէ գեսնէ մինչև եր-  
 կինք բուրդ մը (բիրամիտէս) ըլլար, ու  
 ասոր չորս կողմը սուր գանակներով ու  
 գամերով պատած ըլլար, ես ալ մարդու  
 պէս մարմին ունենայի՝ պատրաստ էի  
 գիշեր ցորեկ մինչև վերջի դատաստանի  
 օրը անկէց վեր փատարվելով ելլալ: Ա՛՞՞  
 մեղմէ այսպիսի բան և ոչ օր մը կուգէ  
 քաշել, իր երեսը տեսնելու համար:  
 Ա՛նայն մեզի կըպատուիրէ, որ իր օրէնքը

պահենք, եկած հիւանդութիւն համբու-  
 րենք, քաշած անիրաւութիւն մոռնանք,  
 անկարգ բաղձանքնիս կարգաւորենք, կե-  
 րակուրներէն երբեմն երբեմն ետ կենանք,  
 ու մեր մարմինը քիչմը ատեն չարչա-  
 րենք: Աւ աս կերպով արքայութիւն գնելը  
 մեզի դժուար կերևայ: Ա՛խ, մէյմը ար-  
 քայութիւն ուրախութիւն մտածենք, ան  
 ատենը աշխրբիս մէջ քաշած նեղութիւնիս  
 կըմոռնանք: \* Ա՛չ զգան սրունք 'ի կո-  
 ճեղս, (կըսէ Տերտուղիանոս) յորժամ  
 միտքն է յերկինս: Ա՛յ Գրանչիսկոս  
 ուզելով իրեն կրօնաւորները քաջալե-  
 րել, ուզել ուխտած աղքատութիւնն միշտ  
 պահեն, իրենց վարձքը յիշել կուտար:  
 ,, Անձ բան Ա՛յ խոստացանք Ա՛ղբարք,  
 կըսէր, բայց Ա՛ճ անկից մեծը խոստացաւ  
 մեզի,, :

Ասկից 'ի զատ՝ արքայութիւն վ՛ր  
 մտածելով աշխարհային բաներէն կը-  
 ձանձրանանք: Ա՛թէ ազահը՝ հպարտը՝

ու հեշտասէրը՝ ան մեծութիւն փառքը ու  
 փափկութիւնը՝ գոր պատրաստեաց Մ.Տ. սէ-  
 րելեաց իւրոց, մտածելու ըլլային, աշ-  
 խրքիս մէջ ունեցած բաներնին իրենց շատ  
 անարդ կերեւար: Արովհետեւ աշխրքիս  
 բաները այնչափ ողորմելի են, որ Հայրն  
 Անուանէ արքայութեւն երկնից բաները  
 քիչ մը սանկ մտածելէն վերջը՝ աչքերը  
 գոցեց, ուղղի աշխրքիս բանը մէյմ ալ  
 չիտեսնայ: Մ.Ճ. ի, ոչ ներեցեց յեւ-  
 այլ Խոստանել զարեգակն: Մ.Ն պա-  
 տիւնները՝ որն որ երբեմն Աստուծոյ լոնի  
 մէջ Հոսովմայեցի յաղթականներուն կու-  
 տային, չեն նմանիր ան յաղթական պատ-  
 ունչն՝ որով սբ. Պօղոս անապատականին  
 հոգին հրեշտակներու մէջ յերկինս վե-  
 րացաւ, ինչպէս սբ. Մ.Նտոն ճգնաւորը  
 տեսաւ: Այլ դարձեալ, արքայութեւն ու-  
 բախութիւնները ցաւովք խառնած չեն,  
 ինչպէս որ աշխրքիս ուրախութիւնները  
 խառնած են, և թէպէտ անվերջանալի

են, բայց ձանձրութի չեն բերեր: Կու-  
րախացնեն, բայց չեն կշտացներ. կըզ-  
մայլեցնեն, միանգամայն թէ հոգւոյն,  
ու թէ մարմնոյն զօրութի կուտան: Ան  
Սաղվիսս՝ որ իր կրօնաւորներուն մտի-  
թարուներ համար մեռնելէն վերջը դար-  
ձեալ կենդանացաւ, քանի անգամ որ  
կերակուր ուտելու սեղանը կրնստէր՝  
կըյիշէր միշտ արքայութե մէջ ճաշակած  
ան սեղանին ուրախութիւն՝ որն որ Վ.Ծ  
իր աշակերտներուն ըսաւ. Ուրիցէ՛ք եւ  
ընդիցէ՛ք ՚ի սեղան իմ արքայութե (Լեւ. Իմոմ 1):  
Ասոր համար աչքերը արցունքով կըլե-  
նային փափաքելով արքայութե սեղա-  
նին: Ասոր ներհակը՝ աշխարհասէրները  
այնչափ իրենք զիրենք աշխարհա ունայ-  
նութե կուտան, որ ամենեին մտքերնին  
չիգար, մէկ անգամ ալ աչքերնին վեր  
վերցնել, ու արքայութե ուրախութի-

1) Ղուկ. ԼԷ. 30

ները մտածել : Ասոնք Ազգիպտոսի մշակ-  
ներուն կրնամանին, որոնց ազարակները  
որովհետև Աեղոս գետին հոսանքովը  
կը ջրովին, անոր համար երկինք ամենևին  
չեն նայիր, ու բուսոց օգտակար անձրև-  
ներ չեն ուզեր, ինչպէս որ Ռանաս-  
տեղծին մէկը ըսաւ .

\* Աչ որ երկրագործ յիւրում 'ի յանդի  
Ղետակն ամբարձեալ յերկինքս նայի,  
Եւ ոչ դալարիք զանձրևըս խընդրեն,  
Օհ ջուրք Աեղոսի զանդըս ոռոգեն ॥ :

Ուստի այսպիսի մարդկանց ուրիշ  
բան չըլար ըսել, բայց եթէ Հողւոյն  
սըյ խօսքը՝ որ Արեմիայ մարգարէին  
բերնովը կըսէ . (Յիշեցէ՛ք զՏէր հեռու-  
ւորսդ, եւ ելմանկցի 'ն սիրտս յեր 1) :  
Յիշեցէ՛ք ձեր Տէրը՝ որ երջանիկ ժա-  
ռանգութի պատրաստած է ձեզի : Յի-  
շեցէ՛ք երկնաւոր եկմը : \* Օհ անդ լիցին

1) Երեմ. Ծ. 51 :

սիրտք ձեր, ուր են ճշմարիտ խնդու-  
թիւնք ॥ :

Պատմութիւն :

Հայր Աբրահամը հին օրինաց պար-  
ծանք էր, որ Այ խօսքին հնազանդելու  
համար՝ իր սիրելի զաւակը Իսահակ՝ Այ  
ողջակէզ ընելու պատրաստը վեցաւ : Ան  
զաւակը կըսեմ, որ սբ գրքին ըսածին  
պէս՝ ամէն ազգաց երջանկութիւնը ու  
փրկութիւն անկից կախված էր : Այսպէս  
ալ նոր օրինաց պարծանք պէտք է ըսել  
Աբրահամ ճգնաւորը՝ որ Այ ազգեցութե  
հնազանդելու համար՝ հարսնիքի մէջ  
զինքը ու իր հարսը Այ հաճոյական  
ողջակէզ ըրաւ : Ասիկայ աղնուական ու  
հարուստ ծնողաց զաւակ էր, իր հօրը  
մօրը աչքը սիրելի, ու պզտիկութե՛ի  
վեր այնպիսի առաքինութիւններով զար-  
դարված էր, որ հայրն ալ մայրն ալ

իրենց մեռնելէն առաջ իրեն վն բարի  
 բան մը տեսնել կը յուսային : Ամէնն ալ  
 Աբրահամին հետ կուզէին կարգը վիլ,  
 միայն Աբրահամ զանոնք չէր ուզեր .  
 վնդի ինքը զինքը արքայութեն երկնից  
 բոլոր տըւած էր : Աբրահամ շատ դէմ  
 կենալէն վերջը՝ հօրը մօրը լալուն ու  
 աղաչանացը չի կրնալով չէ ըսել՝ հնա-  
 զանդեցաւ : Ասով նմանեցաւ ան ըմ-  
 բիշներուն (փէհլիվաններուն) որոնք  
 թող կուտան որ ոտվոնին պլենն, ունդի  
 իրենց յաղթութիւն վերջէն աւելի մեծնայ :  
 Այլաւ ժամանակ, ու սեղանը նստան,  
 որ ամէն կերակրեղէններով զարդարված  
 էր : Աերած խմած, ու խաղացած խնտա-  
 ցած ատեննին՝ սրտին մէջ ձայն մը եկաւ :  
 Աբան չեւի ըյս մալ ծագեցաւ սրտին  
 մէջ, որ ունեցած ուրախութիւններուն  
 ունայնութիւն իրեն սկսաւ ցըցունել . և  
 թէ ինչպէս շուտով կանցնին կը բնանան .  
 ու ինչպէս սը գիւրքը կըսէ . ( Երոյ )

ուրախութիւնն ՚ի սուգ գայ 1) : Եւ լուսով  
 յաւիտենական ուրախութիւնները սկսաւ  
 միտքը բերել, ու աշխարհային խաղերը  
 ու խրախճանները քամահրել : Անզե-  
 ինչպէս վարուց պատմիչը կը գրէ, \* Վ. Ծ  
 փեսայն հոգւոց քաղցր իմն արձակեալ  
 երկնաւոր լուսոյն ճառագայթս յառա-  
 գաստ անդր՝ բարեհրաւեր լուսով զաչս  
 Երրահամու լուսաւորեաց առ ինքն զնա  
 կոչելով և յանկուցանելով ॥ : Երդ՝ ե-  
 բոր սեղանը լըմնցաւ, ու ամէնը իրենց  
 տեղը գացին, Երրահամին սրտին մէջէն  
 արքայութե՛ն խրախճանը չէր ելլար կոր-  
 մանաւանդ Արբութի ալ առնելով (որ  
 սրտին ամէն փուճ՝ բաղձսնքը կը մարէ)  
 այնչափ սիրտը բորբոքեցաւ, որ առանց  
 ուրիշին բան մը զրուցելու՝ տնէն գաղ-  
 տուկ ելաւ, ու հեռու տեղ մը պահ-  
 վեցաւ խցի մէջ : Հոնտեղս իր փեսայ

1) Աւակ. Ժ. 13 :

ութն զգեստը թող տըւաւ, ու մինչև  
'ի մահ՝ Այ ծառայելու առաջադրուի  
դրաւ:

Վիչ մը ատեն անցնելէն վերջը հայրը  
մայրը իմացան, որ Աբրահամը անէն  
դուրս ելած է. բայց ուր է, և ինչ  
պատճառաւ դացած է՝ չէին գիտեր:  
Աւտի սկսան վանքերուն ու ժամերուն  
մէջ փնտռել, ուր որ կարծէին երթալը,  
ու գիտէին որ ուրիշ մեծ տեղեր չերթար:  
Տասնը եօթը օրէն վերջը գտան զինքը,  
որ մորթ և ոսկր մնացած էր, այնչափ  
նիհարացած էր: Ըստ նորէն սկսաւ շփո-  
թութի. հայրը ոտք կոխած էր զինքը  
դարձնելու, մայրը կուլար. հարսը կը-  
գանգատէր, ու բոլոր բարեկամները կը-  
տրտմէին. բայց Աբրահամ արքայութիւն  
մտածելով իր առաջադրութն վրայ հաս-  
տատուն կեցաւ, ու ամենևին չխիփեց:  
Իր սիրտը իր յոյսը այնպէս արքայութն  
վր դրած էր, որ ոչ պատիւները ոչ

ուրախութիւնները, և ոչ մարդկային զօ-  
րութիւն կլնային զինքը անկից զատել :  
Մշակեց իր հօրը մօրը, որ երթան հանդ-  
չին, ու սրտերնին չհամաշեցնեն, և իրեն  
ալ նեղութի չխտան : Անոնք երթալէն  
վերջը՝ գոցեց իր խցին գուռը, միայն  
ծակ մը բացաւ, ուսկից քիչմը հաց, ու  
քիչմը ջուր ուտելու համար ներս կառ-  
ներ : Բայց աս ծակը աւելի անօր համար  
բացաւ, որ անկից երկինք նայելով սիր-  
աբ մոտիմարվի, որով և հօրը տանը մեջ  
ունեցած ուրախութիւնները լեղի կերեային,  
ու հոն տեղը քաշած նեղութիւնները անուշ  
կուգային : \* Հանձուկ խցի փակեալ՝ 'ի  
յընդարձակութե երկնից վայելէր ||, կրսէ  
նրն շերտնիմոս 1) : Անացած պատ-  
մութիւն նրին մեր խօսածին չիլերաբերիր,  
անօր համար հոս տեղս չենք գրեր : Աս  
միայն կուզեմ ըսել, որ արքայութե

1) 'Ի Թղթ. առ Մարկեզ :

փառքը յիշելով՝ ուշխրքիս անցաւոր  
 փառքերէն շատ դիւրաւ ետ կը կենանք,  
 ու ամէն դժուարին առաքինութիւները  
 ընելու ձեռք կը զարնենք. ինչպէս որ Ոս-  
 կերբերան կըսէ. \* Տեսանելն աչօք զեր-  
 կինս՝ տայ միտել զձեռս ՚ի դժուարինս ॥

Սբ. Եւր. Եւր. Եւր. Եւր. Եւր. Եւր.  
 Սուրբ. Եւր. Եւր. Եւր. Եւր. Եւր. 16 :

## ԳՂ Ժ Ե.

Եւր. Եւր. Եւր. Եւր. Եւր. Եւր. Եւր. Եւր.  
 Չեայ :

\* Օգամս յաւիտենից յիշեցի ॥

Սուրբ. Եւր. 6 :

**Ո՛չ** դժօխքին տանջանքները, ոչ ար-  
 քայութիւն բարիքները զօրութի մը կու-  
 նենային, եթէ ժամանակաւոր ըլլային :  
 Անշի արքայութիւն բարիքը՝ վերջանալու  
 վախուն համար, լեղի կը ըլլային. իսկ

դժօրքին տանջանքները՝ լրմննալու յուսով՝ անուշ կերևային : Ասոր համար, ուղղի շարիքը բարիք, կամ բարիքը շարիք չըլլան՝ Ա՛ճ երկուքն ալ յաւիտենական ըրաւ : Ասիկայ նր գիրքը, ու նր վզնիները կըքարոզեն, որ մտածենք ու շիմոռնանք : Գաւիթ մարգարէն՝ որ իմաստուն ու նր էր, գիշեր ցորեկ յաւիտենականութիւր կըմտածէր. ուստի կըսէր. Ճամանեցին պահուց աչք իմ. իւրողեցայ ե ոչ իւօնեցայ 1) : Բայց ինչ բանի համար գիշերները քնանալ, սիրտը հանգիստ պահել, ու բերանը չէր կրնար բանալ : Այս պատճառը կուտայ. Խորհեցայ պահուիսն պտտաջենս, ե պահս յաւիտենեց յիշեցե : Սիրտքս բերի՝ կըսէ, անցած դացած օրերը, որ անցին գացին : Ան օրերը կըսեմ, եբօր իսրայելացւոց մէջ ետեէ ետե թագաւորներ կընրս-

1) Սաղմ. 57. 5 :

տէին, որոնք որ հիմայ յաւիտենականուն  
 մէջ մտան: Յիշեցի յաւիտենական տա-  
 րիները, որոնց մէջը քիչմը վերջը ես ալ  
 պիտի մտնամ, ու մէյ մի ալ դուրս  
 չիկրնամ պիտոր ելլալ: Աս մտածութիւնը  
 այնչափ զիս կը վախցնէ, որ բոլոր սրտիս  
 հանգստութիւնը վեր վար կընէ: Ասկից  
 'ի զատ կըմտածէր, որ արգեօք արքայ-  
 ութի՞, չէնէ գժօխք պիտոր երթայ,  
 անոր համար դողալով կըսէր. Ս'է՛ն-  
 յա-նի-նի-նից Բերժե-նցէ զէ՛՝ ՏԷ: Ասոնք  
 մտածելով օրէ օր իր կեանքը սրբութիւն  
 անցընելու կը ջանար, և իսկոյն սկսաւ սիր-  
 տը աղէկի փոխալիլ: Ասացի, այժմ «խոյ,  
 այս է նորոգո-նի աշոյ Բարձրէ-լոյն, կըսէ  
 ինքը: Այսպիսի օգտակար մտածուն  
 պտուղը նմ Վրիգոր փայլը տեսնելով  
 կըսէ. \* Հիմա 'ի դործս միտք մեր աշա-  
 լուրջ փութով յառեսցի 'ի բովանդակ  
 հաստատութի յաւիտենականութեն 1) || :

1) Գերբ ժա. 'ի Յովգ :

Վսգի ասով մեր ամէն գործքը աղէկ  
կրնանք զլուս հանել :

Հիմայ պինտ առաջ մտածենք  
դժոխքին տանջանքները՝ որոնք որ յա-  
ւիտենականութիւն աւելի ստեղծելի են :  
Արսն շատ վգայներ, թէ խելօք քննելով  
աւելի պէտք է հարիւր դար դժոխքին  
տանջանքները քաշել, քան թէ յաւի-  
տեանս յաւիտենից մժղուկի մը արւած  
նեղութիւն, եթէ Վճ երկուքն ալ մե-  
կուն առջևը ընտրելու դրած ըլլար : Վս-  
կից ուրեմն իմանանք, թէ դժոխքին  
տանջանքները որչափ անտանելի են,  
որոնք չէ թէ միայն ստեղծելի, այլ և  
յաւիտենական են : Արաւի մեր միտքը  
չիկրնար հասկընալ, թէ աս երկու բարը,  
Սէշո, Ոչ էրէէ, որ յաւիտենակա-  
նուն մէջ կըլայի, ինչպէս արտին ցաւ  
կըրերէ : Վնենք թէ Վճ դատապար-  
տեալներուն մեկուն ըսէր այսպէս . յոյսդ  
մի կտրեր, ես զքեզ աս դժոխքէն կա-

զատեմ, թող կուտամ որ մեռնիս, ու  
 անով ամէն տանջանքներէդ կըխալըսիս :  
 Բայց երբ պիտի ըլլար անիկայ Աճ,  
 արդեօք հարիւր հազար դար անցնելէն  
 վերջը, չէ : Արդեօք բիւր դար անցնելէն  
 վերջը, չէ : Արդեօք բիւրանգամ հարիւր  
 հազար դար անցնելէն վերջը, ան ատենն  
 ալ չէ : Հապա երբ : Ան ատենը կըմեռ-  
 նիս դուն, երբոր ամէն հազար տարին  
 մէկ անգամ տչքի արցունք թափելով  
 մէկ մեծ ջրհեղեղ մը կըլլայ, ինչպէս  
 որ աշխարհս նոր ստեղծված ատենը  
 եղաւ : Բայց աս ալ հերիք չէ : Արոր  
 պզտիկ ճանճմը ամէն հարիւր տարի կա-  
 թիլ մը անկից խմելով այնչափ ջուրը  
 լամնցընելու ըլլայ նէ՛ ան ատենը թող  
 կուտամ, որ դուն չարաչար մահաւմբ  
 մեռնիս, և այնպէս դժոխքին տանջանք-  
 ներէն խալըսիս : Ի՞նչ կարծէք, թէ  
 ասիկայ դատապարտեալը ըսելով ինչ  
 պիտի ըլլար : Չէի՞ք ըսեր, թէ ինչպէս

սոսկալի պիտոր պրամի: Բայց ստոյգ  
բնմ, որ անիկոյ աս բանս լսելով շատ  
կուրախանար. որովհետև ան արցունք-  
ները թէպէտ շատ էին, բայց կամաց  
կամաց կըժողվէին, ու ջըհեղեղ կը-  
դառնային, ու ժամանակաւ կըլըմնային:  
Իսկ հիմայ այնչափ միլիոն տարիներ անց-  
նելէն, ու այնչափ ջուրեր լըմնալէն  
եւրը՝ յաւիտենականութիւնոյն կըմնայ,  
ու չիհասանիր:

Ալ սոսկալի յաւիտենականութիւնչ-  
պէս դուն դատապարտեալներուն սիրտը  
յուսահատութիւն կըճաթեցնես. ու մեռ-  
նիլը իրենց ուրախութիւն սեպել կուտաս:  
Արբեմն անողորմ սատանաներուն ձեռ-  
քէն կուղեն մեռնիլ. երբեմն թիւաւոր  
վիշապներէն. երբեմն սոսկալի կըրակին  
մէջը կուղեն երիւ. բայց բոլորն ալ պա-  
րապ տեղը: Հայտնի հասանելի է քա-  
նիցէ 'ի նոյնմէ հոգ 1): Ս'եծ երջան-

1) Յայտ. Թ. 6:

կուժի կըլլար, եթէ դժոխքին մէջ մեռ-  
 նիլ ըլլար, թէև շարաշար մահուամբ:  
 Այդի ամէն թշուառութիւները հոն պիտի  
 ըլլան Ս'էշո. իսկ պակսիլը Ո՛չ երբէ՛ք.  
 Ո՛չ երբէ՛ք: Սանաւանդ ինչպէս որ ու-  
 նեցած տանջանքներով պիտի տանջուին,  
 այսպէս ալ ունելու տանջանքներուն  
 երևակայութիւնը պիտոր շարշարովին: Ա-  
 սոր համար իմաստունները շատ գեղեցիկ  
 նմանցուցին զյաւիտենականութիւնը պղծն-  
 ձէ կտր գունտի մը՝ որն որ շիտակ տախ-  
 տակի վր դնելով՝ թէպէտ պղտիկ ճօթո-  
 վը անոր վր կըկենայ, բայց բոլոր իր  
 ծանրութիւնը անոր կուտայ: Այսպէս ալ  
 տանջանքներուն յաւիտենականութիւնը,  
 թէպէտ դատապարտեալներուն քաշած  
 նեղութե ցար կըբերէ, բայց ան մտա-  
 ծութիւն՝ որ կըմտածեն թէ տանջանքնին  
 անխախտան է, իրենց քաշած նեղութիւն  
 աւելի կըծանրացընէ, ինչպէս կըսէ Աւ-  
 սերիոս Վաղղիկանոս. \* Օտանջանս

Հանդերձեալ դարուց կրեցեն մինչև  
իցեն հասեալ 1):

Աս դժոխքի տանջանքներուն մե-  
ծութիւնը աղէկ կը հասկըցվի, թէ արքայ-  
ութե մէջ եղած յաւիտենական ուրա-  
խութիւններու հետ բաղդատվելու ըլլայ 2  
Տես, որ ինչպէս տարբեր յաւիտենակա-  
նութի ունին դժոխքը ու արքայութիւնը:  
Արքայութե մէջ ոչ դժբաղդուի, ոչ  
հիւանդուի, և ոչ անհանգստութի կայ,  
հապա մշտնջենաւոր ուրախութի, անխու-  
խաղաղութի, միշտ միտիժարութի, ու ուրա-  
խալի հանդէսներ կան: Աւրտնութի  
յաւիտենից ՚ի ՀԵ Գլխոց 27 1): Եթէ  
երջանկութի մը որչափ որ երկար տևե-  
այնչափ սիրելի կը ըլլայ, հապա որչափ  
սքանչելի պիտոր ըլլան ան բարիքները՝  
որ յաւիտեանս յաւիտենից պիտոր մնան:  
Աս բանիս մը՝ Վաւիժ մարդարէն զար-

1) Եոց, Է. 10:

մանալով, միանգամայն և բաղձալով  
կըսէր. Լաւ է ինչ թէ օր 'է գաւիթս քո, քան  
զհապարս 1) : Աթէ երկնից արքայութե՛ն  
երջանիկ լոյսը օր մի ալ վայելելը՝ առ  
աշխրբիս հազար տարվան ուրախութե՛ն  
աւելի աղէկ է, հապա յախտեանս յախ-  
տենից արքայութե՛ն մէջ ըլլալը ինչ պի-  
տի ըլլայ : Բայց ասկից աւելի մեծ խօսք  
մը դատապարտեալներուն մէկը երեցաւ,  
ու ըսաւ. ինչպէս կըպատմէ Թովմաս  
կանտիպրատեցին 2) : Այսինքն՝ եթէ  
յախտեանական փառքը վայրկեան մը  
տեսնելու ըլլայի մինչև վերջին դատաս-  
տանը ամէն դատապարտեալներուն տան-  
ջանքները յօժարութի՛ք յանձն կաննէի  
քաշել : Տես, ասիկայ վայրկեան մը  
արքայութե՛ն փառքը տեսնելու համար՝  
այնպիսի սոսկալի տանջանքները կուգէ  
կօր քաշել. իսկ մենք աշխրբիս մէջ քիչ-

1) Սաղմ. 24. 11 :

2) Կիբբ Բ. 71. 87 :

մը վիշտ քաշել, կամ արիութիւն քիչմը  
ուրախութիւն՝ այսպիսի երջանկութիւն հա-  
մար թողալ՝ չենք կրնար ընել, ու  
դժուար կերևայ: Աւստի նք Հերոնիմոս  
չատ աղէկ կըզրուցէ. \* Աչնչ վաստակ՝  
խիստ, ոչ ինչ ժամանակ՝ ընդերկար  
պարտ է մեզ երևիլ. յորժամ նորօք  
զանանց զանվախճան փառս ստանամք || :

Արեւելի է որ արքայութիւն ուրա-  
խալի շերևայ՝ միայն ասոր համար. որով-  
հետև որչափ տարիներ անցնին՝ միշտ  
նոյն բան կըտեսների. իսկ փորձով  
յայտնի է, որ ամէն ուրախութիւն եթէ եր-  
կայն երթալու ըլլայ՝ վերջը անուշ չիգար,  
ու բուրգի կընմանին՝ որ ինչդրտար  
բարձր ելլայ, այնչափ մարդուն աչքին  
կըզգտիկնայ: Ինչպէս հիմայ խրախճան  
մը՝ որ համադամ կերակուրներով լեցուն  
ըլլայ, կամ խաղ մը՝ որ շատ ուրախալի  
ըլլայ, եթէ սահաթներով քշելու ըլլան՝  
մարդուն ձանձրութիւն կըբերեն: Բայց

այս խօսքը՝ աշխարհիս ուրախութե՛ն վիճչմարիա է . վնդի ինչպէս որ ժամանակաւ կը վերջանայ , այսպէս ալ միշտ գէշ բան մը հետը մէկտեղ կունենայ : Սակայն արքայու՛ն ուրախութի՛ր՝ որ ամէն կողմանէ կատարեալ է , գէշուի մը հետը չունի , ու ամէն բարեաց նորութի՛ր ու աղէկութի՛ր կերեցնէ , ձանձրութի՛ր ամենեկին չի բերեր : Ըսոր համար սբն Յովհաննէս երանեալ հոգիներուն համար կըսէ . Երգե՛ին զԷրգո՛ւ նորո՛ 1) Չէ թէ ամենեկին նոր էր . որովհետեւ միշտ ԸՅ երգը կերգեն . հապա նոր երգի մը պէս էր . որովհետեւ այնչափ աղէկ է , և ականջին այնչափ անուշ կուգայ , որ ան ատենը նոր սկըսած կը կարծը վի : Վարձեալ երբոր մէկ բարւոյն վրայ անտարակոյս կը յուսանք որ պիտի առնենք՝ ան յոյսը զմեզ շատ կուրախացնէ . աս կողմանէ

1) Յայտ. Ժ. 3 :

երանեալը ամէն վայրկեան երկու ուրախութի կունենայ, մէյմը ան փառքին՝ որն որ ունի. մէյմալ անոր՝ որ պիտոր ունենայ, որուն վր կորսնցընելու տարակոյս չունի, գիտնալով որ ունեցած փառքը յաւիտենական է: Աւստի որչափ որեր ու սահաթներ անցնին, այնչափ երանելոց սիրտը իրենց ունեցած յաւիտենական փառքով կըզմայլի, որ իրենց անսահման ուրախութի կուտայ:

Արդ՝ աս երկու յաւիտենականութի՝ որ մէկզմէկու մէջ շատ կըտարբերին՝ յաճախ ու սրտանց մտածենք. քի՛ արքայութե՛ն յաւիտենական փառքը, ու դժոխքին յաւիտենական տանջանքները. արքայութե՛ն անլախճան խնսումը, ու դժոխքին անլախճան գերութիւնը. արքայութե՛ն անլախճան ցնծութիւնը, ու դժոխքին անլախճան լացը ու անտանելի ցաւերը: Ասկից ՚ի զատ մտածենք, որ աս երկու յաւիտենականութե՛ն մէջ իյ-

նալէն վերջը՝ տեղերնիս կամ վիճակնիս  
 փոխելու մէյմ ալ յոյս չիգայ: Աս եր-  
 կու հարկէն՝ որ այսչափ մէկզմէկու մէջ  
 կըզանազանվին՝ ոչ որ կրնայ խալըօիլ:  
 Բայց դուն նայէ անոնց անխելքութեը՝  
 որոնք որ աս վիճակները չեն մտածեր  
 ամենեին: Առնեն լիոս Ալափիտէ՝ որ սբ  
 գրոց երևելի մեկնիչ է, իր ամէն մեկնուե  
 գրքերուն վերջը աս խօսքս կըզդէր. \*Մ  
 թելէ միօջէ կեանք, ՚ի կենաց մահ, ՚ի  
 մահուանէ անտի կախեալ կայ յախտե-  
 նականութին: Յուստոս Վիպսիոս՝ որ  
 վերն ալ յիշեցինք, սբ Աճածնայ միշտ  
 աս աղօթքը կընէր. \*Ո՛վ Սայրդ Աճ,  
 մերձ լեր ծառայի քում որ պատերազմի  
 ընդ բովանդակ յախտենականութն:  
 Մի թողուր զիս յայնմ ժամու՝ զորմէ  
 կախի յախտենական փրկուի հոգւոյս:  
 Ճիշեալ զիս յայնմ վայրկենի՝ վայրկենի  
 ասեմ մեծի, յոր մեան այնպիսի զանազան

յաւխտենահանութիբ ॥ 1) : Յաւխտե-  
 նահան արքայութիբ, ու դժոխքը մեր  
 առջևը դրված է : Ա՞՞՞ չարը ու բարին,  
 կեանքը ու մահը մեր ձեռքը առւաւ :  
 Ասոր համար սբ Աննարդոս կըսէ .  
 \*Օ՞՞՞ին յերկուց ընտրեսցուք, կամ միշտ  
 տանջիլ ընդ ամբարիշտս, կամ յաւխ-  
 տեանս զմայլիլ ընդ սբս : Օ՞՞ի բարին  
 և չարն, կեանք և մահ եղեալ են առաջի  
 մեր 2) ॥ : Իսկ եթէ մէկը կուզէ իմանալ  
 քանի մը նշաններով, թէ որ յաւխտե-  
 նահանութե մէջը պիտոր մտնայ՝ շատ  
 դիւրաւ կրնայ իմանալ, միայն թէ քննէ  
 իր վարքը, թէ որ կողմը աւելի կրճոխ  
 կոր : Սառ մը եբոր կտրուվելու ըլլայնէ՝  
 որ կողմը կիյնայ : Առանց կարծեաց ան  
 կողմը կիյնայ՝ որ կողմը որ ծանրութիբը  
 ծռած է : Աւստի եթէ հարաւի կողմը  
 ծռած է՝ հարաւի կողմը կիյնայ, եթէ

1) Ինգելցրաւ. Լոյս Աւետ. Դր. 12 :

2) Ի գիրո հոգւոյ. զԼ. 7 :

քիչմը աւելի հիւսիսի կողմը ծուած է՝  
 ան կողմը կիյնայ: Ասոր համար թէ որ  
 մէկը կենդանութեան ատենը հիւսիսային  
 կի՛ մեղաց կողմը ծուած է նէ՛ ինչպէս  
 կրնայ յոյս ունենալ, որ մեռնելու ատենը  
 հարաւային կամ շնորհաց կողմը պիտոր  
 կրնայ: Ա՛հ. որչափ մարդիկ աս յուսով  
 խաբովեցան, և սը դրքին խօսքը մըտ-  
 քերնին չերերին, որ կըսէ. Ա՛լէ՛ անկցի՛  
 ժայտն ՚ի հեւնէս կամ ՚ի հարտա՝ ուր անկցի,  
 անդ կացցի 1), Աւրեմն ուլ որ հաւատք,  
 կի՛ քիչմը բնական լուսով ճանաչումն  
 ունի՛ թո՛ղ սը Վրիգորին ըսածը պահէ,  
 Չայս խօրհնցարուք մտադիրուլ. սիրտք  
 ձեր յառեցին ՚ի սեր յախտնակա-  
 նութեան 2) ՚:

1) Եղով. Գն. 3.

2) Ի ճառն Գր. Աւետ.

## Պատմութիւն :

Մք ( ) գոսաինոս ճշմարիտ իմաստունի վր սյապէս կըսէ . \* Որ զյաւիտեանականս 'ի վեր դասէ քան զժամանակայս : Ոչ լինի յօգուտ վարել զժմնն , բայց յորժամ արդիւնք դանձին , որով յաւիտեանս մնալք կենդանի 1) ॥ : Այժմէ գտնըվեցաւ մարդմը , որ աս խօսքը կատարած ըլլայ՝ իրաւի ան մարդը (ծովմաս Սօրոսը եղաւ , որ ինկիլիշի թագաւորին մեծ խօրհրդական , կամ ըսենք՝ թագաւորին երկրորդն էր : Ասիկայ իր սիրտը բոլոր յաւիտենական բարիքներուն տալով՝ աշխրբիս բաները այնպէս ոտքի տակ առաւ , որ հարստութիւն ու իր հանգստութիւն աղէկցնելու կարողութիւնննալով՝ ամենեին չուզեց ընել , որ իրմէ առջինները ամբաւ դանձեր ժողոված

1) Ի թղթ. ճիւղ :

ու ըրած էին : Այդի աս բարեպաշտը միշտ Վսին ըսածը կը յիշէր . « Կանյէցէ՛ր յէ՛ւ Գանյս յէրկէնս 1) , որ հիշ մէկ դժբաղդութիւն չի կորսը վիր : Աւտի եբոր Հենրիկոս ու թերորդ ամպարիշտ թագաւորէն իր հարստութիւնը քննելու Վննիչներ եկան՝ ուրիշ բան չի գտան , բայց միայն վաթսուն ոսկի , որ իր հայրենական ժառանգութէն աւելի էր : Հարմացաւ բոլոր թագաւորութիւնը (Վովմասին աս արդարութեան վր , որ այնչափ տարի այնչափ ստակներ ձեռքէն անցնելով՝ ինքը միայն ունեցածը պահած էր . հրաշք մը իրաւցնէ երևցաւ : Վայց որչափ իր վրայ խնայելով կընայէր՝ այնչափ աղքատներու վրայ առատ ձեռք ունէր , որովհետեւ ժամանակաւորները յախտենականներուն հետ կուզէր փոխել , և զանոնք իրմէ առաջ հոն խրկել , ունի վերջը արքայութեան մէջ

1) Մատթ. ք. 20 :

դանայ . ինչպէս Վ.Ս ըսաւ . Օ՛ր յորժամ  
 որպիսիցէ այն , ընկալին զյէզ 'է յարլան  
 յաւիտեանսնս 1) :

Թուովմաս երոր Հենրիկոսին Ռո-  
 ղենեսայի հետ ամբարշտութիւ կարգըվե-  
 լուն , ու Հաովմայ Ազկեղեցւոյն տակէն  
 դուրս ելելուն չհհաւնեցաւ՝ ու անոր  
 համար բանտ դրվեցաւ նէ՛ շատ բարե-  
 կամներ իրեն կուգային կերթային , իրեն  
 քաշած ողորմելութե վն կըցաւէին : Իսկ  
 անիկայ ցըցունելու համար , որ ինքը  
 միայն յաւիտեանական նեղուէն՝ չէ թէ  
 ժամանակաւորէն կըվախնայ՝ աս գեղեցիկ  
 խօսքը ըսաւ . « Աշխարքս բանտ է . աս  
 « բանտէն ամէն օր մարդիկներ իրենց  
 « դատը քննելու համար կըկանչուին :  
 « Իսկ եթէ իմ բանտս ուրիշներուն բան-  
 « տէն պղտիկ է՝ ևս անիկայ բարերարուի  
 « յըսեպեմ . որովհետև չարիքներուն մէ-

1) Ղուկ. ԺՊ. 9 :

„ջէն՝ միշտ պղտիկը պէտքէ ընտրել“ :  
 Թովմաս Սարգրիտ անոճամբ աղջիկ մը  
 ունէր , որ իրեն շատ սիրելի էր : Ասիկայ  
 լացով ողբով աղաչանքով ու ամէն կերպով  
 ջանաց իր հօրը սիրտը շինել , որ  
 գոնէ դրսէն Թագաւորին ու զածին հաւնի  
 չըլայ որ իր շինհաւնելովը՝ բոլոր ընտա-  
 նեացը գժբաղդութի մը հասցնէ , ու  
 ինքն ալ չարաչար տանջանքներով մեռ-  
 նի : Բայց անկարելի եղաւ իր հօրը միտքը  
 փոխել , վնդի անիկայ Քնին ըսած խօսքը  
 աղէկ հասկըցած էր . Որ ո՛ր էլ ո՛ւզ զ՛նայր ,  
 է՛ք զ՛նայր , է՛ք զ՛լինն , է՛ք զ՛րդէն , վն անո՛ւտն  
 է՛ոյ՝ հարի՛րտոյտարի՛ն տոցէ . ե զ՛լեանս  
 յո՛ւիփէնտո՛ւտնս ժոտո՛ւտնգէլացէ 1) :

Թովմաս երոր ասով ալ միտքը  
 չիփոխեց նէ՛ կնիկը իր դաւակները ժող-  
 ված իրեն եկաւ : Չըրածը չըսածը չի-  
 մնաց . կուլար՝ կողբար՝ կըցըցունէր իր

1) Մատթ. ԺԹ. 29 :

զաւակները՝ որ ըլլով իրենց հօրը ոտքը  
 ինկած էին : Այաղաչէր որ ծուռ բան մը  
 միտքը դնելով՝ իր հարստութիւնը իր մե-  
 ծուիը իր համբաւը՝ ու կեանքը չիկոր-  
 անցընէ, որով կարելի է՝ կըսէր, շատ  
 տարի երջանկութիւն կրնաս ապրիլ : Աւ-  
 որովհետեւ կնիկը երկայն ապրիլը շարու-  
 նակ կըսէր կօր իրեն՝ թուովմաս ասոր  
 վի սկսաւ քիչմը մտածել : Բայց վերջը  
 իր կնկանը հարցուց, որչափ կրնաս խօսք  
 տալ ինձի որ աւելի կապրիմ : Անիկն ալ  
 ըսաւ, աստուծով քսան տարի ալ աւելի  
 կապրիս : Ընատեննը թուովմաս ար-  
 ւաւ, « Ըտ խօսքը շատ անխելքութիւն  
 յըսիր, յաւիտենականութե քովը քսան  
 » տարին ինչ պիտոր ըլլայ « : Աուզնս  
 որ աս ողորմելի աշխրբիս քսան տարին  
 համար, յաւիտենական երջանկութիւն  
 կորսնցընեմ : Իբրեւ զի՛ ի կանանց անպա-  
 մայ խօսեցար 1) : Աթէ ինձի հաղար տարի

1) Յովհ. Բ. 10 :

մը խոստանայիր՝ բանի մը տեղ կըդրվէր .  
 Բայց յաւիտենականութեն քովը աս հա-  
 ղար տարին ալ ինչ պիտի ըլլար : Արաւի  
 այնպէս կըսեպիւնք . ինչպէս կաթիլ մը  
 ջուր ծովին քովը , կամ պզտիկ բան մը  
 բոլոր աշխարհիս քովը : Աւ այսպէս ոչ  
 իր կնիկը , ոչ զաւակները , ոչ բարե-  
 կամները , ոչ սիրելիները կըցան իրեն  
 յաղթել . վնդի յաւիտենականութեն վա-  
 հանը ձեռքը առած էր , որն որ սը հաւատ-  
 քը իրեն կըբարոզէ ու կըխոստանայ :  
 Ահա աս իմաստուն մարդը եղաւ . որ  
 մինչև իր վերջին սահաթը սը Բեռնար-  
 դոսին ըսած խօսքին ճշմարտութիւնը ցը-  
 ցուց . \* Արու՛մ քաղցր են երկնաւորք՝  
 երկրաւորք ոչ ևս քաղցրանան նմա :  
 Արու՛մ ցանկալի են յաւիտենականք ,  
 անցաւորքս են տաղտկալի || 1) :

Թո՛ղմաս Արատղէ-տոնաս Դ Վարս  
 Թո՛ղմասս- Ա՛րրոսի . ե- Ամնդէ-բաս :

1) Ի Թղթ. ՃԺԾ :

## ԳԼԵ ԺԲ.

Բարի Սրբաձուլի Կենաց Խորճութեւն վրայ :  
 \* Համարեալ են առուրք մարդոյ. ժա-  
 մանակ եղեր և ոչ անցցէ ॥

Յով. ԺԳ. 5 :

**Լ**ուելի իմաստնական գիւտ մը, քան թէ  
 ճշմարիտ պատմութի կերևայ, որն որ  
 Մաթուսաղային վն կը պատմը վի, որ  
 աչխրքիս մը քան զամեն մարդիկը շատ  
 ապրեցաւ : Արսի, թէ հինգ հարիւր  
 տարի ապրելէն վերջը՝ հրեշտակ մը եկաւ  
 իրեն ու ըսաւ. Եթէ կուզես՝ առանց  
 վախճալու քեզի տուն մը շինէ. վնզի  
 հինգ հարիւր տարի դեռ ունիս ապրելու :  
 Մաթուսաղայ անն տըւաւ, ու ըսաւ.  
 "Ենչ քանի համար ինձի նոր տուն  
 " շինելու ձեռք պիտոր զարնեմ, եբոր  
 " շատ ապրելիք չունիմ, որովհետեւ աս  
 " հինգ հարիւր տարին ալ առջինին պէս



որ ճամբորդներու պէս քանի մը սահաթ  
 պիտի կենայինք, և եթէ չիմտածէինք  
 ան տեղը՝ որն որ Իմաստունը Տուն յու-  
 նիքէն կըսէ, մեզի հանգիստ ու ուրա-  
 խալի բնակարան գտնելու համար: Ասի-  
 կայ (ինչպէս Թովմաս Մորոտը շատ  
 աղուոր կըսէր) ճամբորդի մը նման կըլ-  
 լար, որ իր հայրենիքը գացած ատենը՝  
 գեղեցիկ զարդերով զարդարել ջանար  
 ան տունը՝ որուն մէջ գիշեր մը պիտի  
 պառկի, ու ամէն կահը կարասիքը՝ որն  
 որ հայրենի տանը կըլայլէին, հոն դնել  
 ասար:

Նմանապէս նր Հակոբը նահապե-  
 տին ալ մարդու սկեանքը կարճ երեցաւ,  
 մնգի երոր փարսուն թաղաւորը իրեն  
 հարցուց. Քանի էն ամբ տառաքի ինչոց բոց,  
 այսպէս արևն արևաւ. Աստուք ինչոց ինչոց  
 զորս պանդխտեցայ՝ հարիւր եւ երեսուն ամ  
 է՝ ոսկուք եւ գլխաւորինք 1): Այսպէս կըսէ

1) Ճննգ. խէ. 77

Գաւիթ մարգարէն ալ, որ իր կեանքը  
 ծաղկի կընմանցնէ, որն որ առարկանց  
 աղուճոր կըծաղկի, ու իրիկվան դէմ կը-  
 թռամի: Այդ աստուծոյն սոյ զուարէ  
 Բոսային, ընդ էրեւոյն Լարշտեային շո-  
 բոսային և ոմիցին 1): Ա՛ս նմանութիւնը  
 այնչափ յարմար է, մինչև Ա՛ծ ալ մարգ-  
 կային կենաց կարծութիւնը ցըցունելու  
 համար՝ Ասայի մարգարէին ասիկայ ըսաւ,  
 երոր ամէն մարդուն իրենց կենաց ան-  
 ցաւորութիւնը մարգարէին բերնովը կու-  
 դէր ծանուցանել: Աւստի մարգարէն  
 Ա՛յ խորհուրդները մեկնած ատենը՝ Ա՛ծ  
 իրեն հրամայեց ու ըսաւ. «Կոչեալ. հար-  
 ցուց մարգարէն, զի՛նչ Գոչեցեց. Ա՛ծ  
 անին տըւաւ. Կոչեցի, ան հարմին խոր է.  
 և ան զուարճարդ ոյ իբրև զծուղի խորայ:  
 Հոմաւեցաւ խորն, և Լոխտիկցաւ ծուղի  
 նի 2): Արովհետև ինչպէս ծաղկիկը առ-

1) Սաղմ. 2թ. 5:

2) Եսայ. խ. 7:

տրվանց դէմ աղուճոր կերևայ, ու անուշ  
կըհոտի. բայց իբիկվան դէմ կըչորնայ,  
այսպէս ալ մարդուս կեանքը՝ որ մեծ ու թի  
և փառք կըցըցունէր, քիչ ժամանակվան  
մէջ կըլըմննայ կերթոյ:

Անհը որ կենաց գողն է՝ միշտ կը-  
վաղէ, ոնդի մեր ետեէն շուտով հասնի:  
Սահն ոչ անագոնէ 1), ու հիչ մէկը  
չիկայ, որ ասոր դէմ դնէ: Նսած օ-  
րերնէս սկսած մինչև վերջի օրը ետենէս  
ինկած է, ու օր աւուր վրայ կըմօտիկնայ:  
Սանաւանդ թէ՛ ինչպէս Սենեքա ըսաւ-  
ամէն օր կըմեռնինք: \*Նուազի զօր ամ  
մասն ինչ կենաց մերոց 2) ||: Ինչվան  
հիմայ ճար մը չիգանըվեցաւ, որ մեր  
կեանքը քիչմը, աւելի երկնցընենք մեր  
ուղածին չափ: Աչ ահուճքներ հալեցը-  
նել ու խմելը, ոչ ոսկին մանրել ու գեղ  
չինելը օգուտ մը ըրաւ. մանաւանդ

1) Մկր. Գր. 12:

2) Յաղ. Կարճ. կենաց:

ասոնք շատ անգամ կեանքը կարճըցուցին,  
 քան թէ աւելցուցին: Շատ մեծամեծ  
 եթէ երիկ՝ եթէ կնիկ մարդիքներ ամ  
 հոգւով աշխատեցան իրենց կեանքը  
 երկնցընել: Ասոր համար բոլոր հոգը ու  
 նեղացուցիչ բաները մէկդի թող տըւին,  
 պէսպէս անուշ կերակուրներ սկսան ու  
 տել, զբօսանքներ ընել, աշխատանքէ  
 փախչիլ, ասոնցմով երկայն ապրել կու  
 ղէին: Այց պարսպ տեղը, մանաւանդ՝  
 որն որ իրենցմէ հեռացընել կուղէին՝ անի  
 կայ աւելի շուտով իրենց զլուխը հասար:  
 Աւր թողունք, որ մահը ոչ պարագայի  
 մը, և ոչ տեղւոյ մը կըսպասէ, վնդի  
 ամէն տեղ մեր վր կընայ գալ, թէ տան  
 մէջը, թէ անէն դուրս, թէ ցամաքը,  
 թէ ծովի մէջ, թէ փողոցը (սոխախը),  
 թէ ժամը, թէ հրապարակը, և թէ  
 գաղտուկ տեղը: Ժամանակ ալ չունի.  
 վնդի թէ պղախկու թն, թէ երիտասար  
 դու թն, թէ սյրու թն, ու թէ ծերու թն

ատենը զմեզ կրնայ մեռցնել : Ամէն օր  
 ամէն գիշեր մեր վրայ կրնայ գալ . ամէն  
 ատեն մեր հոգին կրնայ մեզմէ առնել :  
 Վայ մեզի, որչափ անթիւ անհամար  
 եղանակաւ կրնանք մեռնիլ : Կրնանք  
 մեռնիլ սրով, կամ կրակով, կամ ջրով,  
 կամ փլածին տակը, կամ գէշ հիւանդու-  
 թիւ, կամ կայծակով, կամ ուրիշ  
 պատահարով, և կամ զինչ և իցէ  
 հիւանդութիւն : Աթէ միայն ներսէն ալ  
 կրճելու ըլլար՝ ինչպէս օրէ օր միշտ  
 կրնէ, բաւական մեր կեանքը կը կարճե-  
 ցընէր այնպիսի եղանակաւ : ինչպէս որ  
 Յովբ ըսաւ . Իբրեւ զ՝անդէրջ ո՞ր ու-  
 որիցէ ըստ օրէնսի՞ն ցեցոյ 1) :

Վանի քանի մեզի ծանօթ մար-  
 դիքներ իրենց երիտասարդութեն ատենը  
 մահաբեր հիւանդութեն մէջ իյնալով  
 Ազնկիայ թագաւորին պէս լալով ըսին .  
 Հարաւոսն ուր յոսրայնէ ի՛նչմէ ի՛նչ . Տիւրքե-  
 տանն ուր յոսրայնէ ի՛նչմէ ի՛նչ .

1) Յովբ. Գ. 19 .

«Ի՛նչու է՛նչ է՛լ ոչ չէ՛ 1) : Շատ մարդիկ  
 երեսներորդ կամ քառասներորդ տարին  
 հաղիւճ կը հասնին . և ասոր պատճառը  
 յայտնի է , որ առջի բերանը անհաւա-  
 տալի բան կերևայ : Անձի շատ մարդիկ  
 երիտասարդուն ատենը կը մեռնին , քան  
 թէ ծերութիւն : Այլ սակայն աշխրբիս մէջ  
 երիտասարդները (կի՞ կէնճերը) շատ են ,  
 քան թէ ծերերը : Աս այնպէս ստոյգ է ,  
 որ աչօք ալ կրնանք տեսնել : Բնենք  
 քաղաք մը , գեղ մը , կամ ուրիշ անդամը ,  
 և կը տեսնանք , որ շատերը մանկութեան  
 կամ երիտասարդութիւն հասակը մտած  
 չեն , և քիչերը կը գտնուին՝ որ սյրութիւն  
 հասակի մէջ են , կամ ծերացած են :  
 Ասկից յայտնի կիմացվի , թէ քիչ մար-  
 դիկ երեսուն , կամ քառասուն տարին  
 կանցնին : Այլ թէ այսպէս չէր ըլլար՝ պէտք  
 էր յիսուն կամ վաթսուն տարին ան-

1) Եսայ . ԼԸ . 12 :

ցունողները շատ բլլային : Իսկ հիմայ ծե-  
րերը քիչ են քաղաքներուն մէջ . և  
ան ալ ամէն տեղ չեն տեսնուիր . ուս-  
տի երիտասարդները երկար ապրելու չնն  
կրնար յուսալ : Այլ որչափ մարդիքներ  
կան , որոնց վրայ քիչ ժամանակիւն մէջ  
Վիրգիլիոսին ըսած խօսքը կըսվի 1) .

\* Սոցա զերկիր միայն ցուցցէ

Այլ յերկարել՝ մահ ոչ թողցէ ॥ :

Աշխարհս տեսնան , բայց չի վայելեն  
պիտոր . կայծակի մը պէս շուտով պիտի  
կորսըվին : Հազիւ հազ թէ սկսած են՝  
պիտի մերջանան : Իրենց ունեցած մեծ  
մեծ յոյսը գերեզմանի մէջ թաղեն ,  
մարդկային փառաց չափը հոն պիտի  
գրտնեն , որ երևելի հանգէսներու մէջ  
կուգէին ունենալ :

Ապամինոնդ քաջ ու իմաստուն  
զորաւարը շատ անգամ աս խօսքը կըսէր .

1) Ենեական զ. ՏՊ. 870 .

այնչափ մեր կեանքը շուտով կանցնին,  
 որ ամէն մարդու՝ թէպէտ տարիներով  
 ապրած ըլլան, իրեք խօսք հազիւ կրնայ  
 ըսվիլ: Այսինքն՝ ծնած օրէն սկսած  
 մինչև երեսներորդ տարին՝ իրեն կըսվի.  
 Բարով եի՞ր: Երեսներորդ տարիէն  
 մինչև յիսուներորդ տարին՝ կըսվի. Ի՞նչ  
 պէ՞ս էս, աղէ՞լ էս: Իսկ ասկից վերջը  
 ուրիշ բան չիմնար ըսել, բայց եթէ՝  
 Գեշէր Բարէ 1): Այդի յիսուն տարւան  
 եղողներուն արևը մարը մտնելէն քիչ  
 հեռու է, և այսպիսի մարդիկները ուրիշ  
 բան պիտի չիմտածեն, բայց եթէ իրենց  
 մահը ու մեռնիլը: Փիլեմոն երևելի  
 փիլիսոփան մարդուս կեանքը այնչափ  
 կարճ սեպեց, որ ուրիշ բան չէ  
 ըսաւ, բայց եթէ ծնանիլ, և ճառանիլ:  
 Բայց ինչ հարկ կայ մարդուս կենաց  
 կարճութիւնը ցըցունելու համար՝ փիլիսո-

1) Բարբի փիղա. Ի. Քսենոփ:

փաներուն խօսքը բերել . որովհետև սր  
 մարգարէները , ու առաքեալներն ալ ա-  
 սոր վի՛րաւական գրեցին : Միայն Յովբ  
 որ երկուհարիւր տարիէն աւելի ապրեցաւ  
 ու աշխրբիս յաջողութիւնը ու վիշտը  
 համբերութիւն քաշեց , այնչափ տարիներ  
 ըր ոչինչ սեպեց . (Նպոտոսյն էն կէտն  
 ի՛ 1) : Աւ որերուն շուտութիւնը ցըցու-  
 նելու համար պէսպէս նմանութիւններ կը-  
 բերէ : Արբեմն կըսէ , թէ որերս սուր-  
 հանգակէն աւելի՝ որ վաղան ձիով կեր-  
 թայ , շուտ անցան , երբեմն՝ թէ նախ  
 պէս անցան , որ լեցուն առագաստներով  
 ծովն երեսը կըթռչի . երբեմն՝ թէ արծ-  
 ուի պէս , որ որսի ետեւէն ինկած առնը՝  
 սոսկալի կըթռչի : Արբեմն կըսէ , թէ  
 կեանքս աւելի շուտով կտրեցաւ , քան  
 թէ դերձանը՝ որն որ կտաւ գործողը  
 մկրատով կըկտրէ : Արբեմն ալ՝ ծաղկի

ու ստուգելի նման են՝ կըսէր: Իբրև  
 գծադէլ ծագլէալ Լօ՛ւտիւցաւ. խոյս էր  
 իբրև սպուտը և թէ կայցէ 1): Լ'ս ըստ-  
 ունէրին նմանութիւնը Ղաւիթ մարգարէն,  
 ու Սողոմոն իմաստունն ալ կըբերեն.  
 մնոյ ժամանակին շուտ անցնիլը ամեն  
 բանէն աւելի ազէկ կըցըցունեն: Որով-  
 Հետեւ թէպէտ նաւը՝ արծիւն՝ ու սուր-  
 Հանդակը շուտ կերթան, բայց անոնց եր-  
 թայը կըտեսնենք. իսկ ստուգելը այնպէս  
 կանցնի, որ անցնիլը ոչ որ կըտեսնայ.  
 մանաւանդ՝ կըկարծենք որ, տեղէն ամե-  
 ննին չիշարժիր: Նայէ մէկ անգամ ա-  
 րեւէ ժամացոյցի վրայ, հոն կըտեսնաս թէ  
 քնչպէս ստուգելը առանց իմանալու շու-  
 տով կանցնի, որովհետեւ արեւին շարժման  
 հետ մէկտեղ կըքալէ. իսկ արեւը մէկ  
 սահաթվան մէջ հազար մղոն կերթայ.  
 Լ սակայն ստուգելին քալելը՝ մինչև որ

1) Յայտ. Ժ. 2:

Հանցնի նէ՝ չես կրնար իմանալ : Մեր  
 կեանքն ալ ասանկ է . անհաւատայի շու-  
 տութիւն կանցնի կերթայ , բայց մինչև որ  
 Հանցնի նէ՝ երթալը չես իմանար : Ըրդ՝  
 չուղելով ալ խօսքերնիս աւելի երկնցընել՝  
 մեր ըսածին ճշմարտութիւնը սբ Պետրոս  
 Ղաամիանոս իր թղթին մէջ՝ որ երկրորդ  
 Ըղէքսանդր փափին գրեց , շատ աղուճօր  
 կը հաստատէ : Աս թղթին մէջ մէկ քանի  
 սբ փափերու անուն կուտայ , որ իրենց  
 քահանայապետութե մէջը տարի մի ալ  
 չապրեցան : Իսկ Ըգնէս կայսրուհւոյն  
 գրած թղթին մէջը կը սպասուէ , թէ եղան  
 կայսերներ , որ քանի մը ամիս հազիւ  
 ապրեցան : Անդի աշխրբիս ուրախութիւնը՝  
 կըսէ , փոփոխութե միշտ տակն է , և  
 խաղերու պէս կը փոխուի կերթայ : Աւս-  
 տի ևս ալ հոս ուրիշ պատմութի մը  
 կուղեմ բերել , որով սորվինք ճաւ-  
 տալ անոնց , որոնք որ երկայն կեանք  
 մեղի կը խոստանան :

Սատանան՝ որ մէկ անգամ Մ. դամբ  
 ու Աւան խարեց սուտ բանով, թէ չէք  
 մեռնիր, տեսնելով Հիմայ որ շատ դժ-  
 ուար է մարդուս աս խօսքը հաւտացընել,  
 կըջանայ միայն հաւտացընել, թէ ուշ  
 ու շատ տարի անցնելէն վերջը կըմեռնին :  
 Այն Ա ինչնեցիոս Փերրաբացին իր երի-  
 տասարդութե՛ն ատենը՝ գիշեր մը առա-  
 ւօտեան ժամասացուիք լըմնցընելէն վեր-  
 ջը՝ գնաց սը Մ. ճածնայ պատկերին առ-  
 ջեր, ու կաղաչէր, որ սը Մ. ճածին իրեն  
 համար Այ բարեխօս ըլլայ, օնդի կրօ-  
 նաւորական կատարելութե՛ն մէջը՝ որուն  
 ինքը զինքը բոլոր տըւած էր, մինչև ՚ի  
 մահ կենայ : Մ. զօթը ըրած ատենը սա-  
 տանան ծեր ճգնաւորի մը կերպարանքով  
 իրեն երեցաւ, ընքվնները աչքերուն  
 վրայ ինջած, մօրուքը երկայն, գլխուն  
 մազերը ճերմկցած, կարծես թէ Այ

ծառայ մը, Անուիրիոս, կամ նր Անտոն  
 Ճգնաւորը, կի՛ ան Ճգնաւորներուն մէկը՝  
 որոնք որ իրենց սրբութիւն ու ճգնութիւն  
 աշխարհիս մէջ զարմանալի եղան : Տինչ  
 և իցէ աս ծերը սկսաւ խաբերայ սիրով  
 Անջննցիոսը բարեւել, ու վերջը սիրտ  
 տալ և ըսել. Աս ալ Աղիպտոս նր ճրգ-  
 նաւորներուն մէջը կեցայ, և մեղքերուս  
 համար՝ որ առաջ շատ ըրած էի, մար-  
 մինս շատ չարչարեցի. ինչպէս դուն ալ  
 կրտեսնես : Անջննցի առնես  
 գէշ խորհուրդներս չուզելով մէկդի ընել՝  
 ամէն մտքիս եկածը կրնէի, որովհետեւ  
 այդ բնական եռանդը երիտասարդներուն՝  
 իրենք զիրենք երկայն բռնել թող չե-  
 տար : Բայց երոր քիչմը տարիքս առի՝  
 Այ շնորբովը որ ամէն մարդկանց միշտ  
 կրտովի խելքս վրաս ժողովեցի, և սկսայ  
 Այ ճամբան բռնել, ուսկից որ առաջ  
 կրփախէի : Աս ժամանակիս մէջ մեղ-  
 քերուս վրայ այնպէս ապաշխարանք ըրի՝

որ ողորմած Մճ շուտով մեղացս թողու-  
 թի, բարի գործքերու մէջ հաստատու թի,  
 ու վերջը յաւիտենական արքայու թի տը-  
 ւաւ :

Ուստի քու սիրուդ համար, ու քե-  
 ղի խղճալով ելայ եկայ հոս անդս, ուղ-  
 ղի ըսեմ քեզի որ իմ ճամբաս բռնես :  
 Մարմինդ չարչարելը թողաւր հիմայ,  
 անոր ժամանակը չէ . ապա թէ չէ՛ ի՞նչ-  
 պէս կրնաս ապրիլ : Հիմայ քու հասա-  
 կիդ բարիքը վայելէ . զբօսանքներ նայէ  
 որ ընես, որոնք որ երիտասարդները ա-  
 ղէկ դիտեն ընել : Մենկոյն ժամանակ  
 է՛ և ժամ մի իբրայ, ըսաւ Սողոմոն իմաս-  
 տունը 1) : Աս քեզի չեմ ըսեր, որ  
 բռնած ճամբադ բողբոլիկն թողտաս . հա-  
 պա՛ առ խիստ վարքդ ծերուն թողաւր .  
 որովհետեւ ապրելու շատ անրի ունիս :  
 Այլի մարդս իր կեանքը անանկ պէտք է

1) Ժողով. 7. 1 :

անցընել, որ երիտասարդութեն ատենը  
 մարմնոյն ուղածը ընէ, ընտոր որ աժ-  
 խոյժ հասակի կրկայէ. իսկ ծերութեն  
 ատենը՝ որ չորչորուկ հասակ է, մարմնոյն  
 ուղածը յաղժելու ետեւէ ըլլայ: Մանա-  
 ւանդ՝ որ մարդս իր թշնամին ներսէն  
 ունենալով՝ ու շարութեն ետեւէն յօժա-  
 րութիւն իյնալով՝ ամէն ատեն վտանդի  
 մէջն է. ուստի աւելի աղէկ է որ երի-  
 տասարդութեն ատենդ անոր համաձայն  
 վարք ունենաս, քան թէ ծերութեն ատ-  
 ենդ երիտասարդական մեղքեր ընես:  
 Ա՞՞՞ որ ամենուն դժամ է՝ քեղի ալ կո-  
 ղորմի ու կրներէ, թէ որ ծերութենդ մէջ՝  
 իրեն դէմ գործամ մեղքերուդ վն զըղ-  
 ջալու ըլլաս, ինչպէս ինձի ժամանակ, ու  
 շնորք ապաշխարուն տրւաւ: Արդ՝ որով-  
 հեաւ ինձի պէս երկայն պիտի ապրիս՝  
 դուցէ՛ աւելի ալ, դուն ալ ինձի պէս  
 երիտասարդութեն ատենդ կեանքդ ուրախ  
 զըւարթ անցուր. չըլլայ որ խենթ ըսլիս:

Ըստ խօսքերը Ահնջենցիոս լսելով  
 սկսաւ զարմանալով քիչմը մտմտալ, ու  
 վերջը հասկընալով, թէ ինչպիսի ճրգ-  
 նաւորի խօսք է անիկայ, և լսելով որ  
 ծերուն ատենը պէտք է առաքինութի  
 ընել, հարցուց ան շար ծերին. « Բնէ  
 ,,ինձի՛ ըսաւ, ինչպէս դուն ըսածդ կըր-  
 ,,նաս հաստատել. կամ ինչ կըխօստա-  
 ,,նաս, որ ըսածիդ անտարակոյս հաւտամ,  
 ,,թէ ևս ծերանամ պիտոր » : Ընտեղս  
 սուտ ճգնաւորին բերանը գոցվեցաւ. ան  
 ատենը Ահնջենցիոս խօսքը մեկդի թող-  
 տալով՝ երեսը խաչ հանեց, ու սը  
 Ըճածնայ օգնութիւր ինդրելով՝ զշար  
 թշնամին յանդիմանեց այսպէս. « Ա՛յլ  
 ,, շար օձ, կարծես թէ չեմ գիտեր, թէ  
 ,, առ խօսքովդ ինչ կուզես հասկըցընել :  
 ,, կարծես թէ քու սուտ խօստմունքովդ  
 ,, կըխարսվիմ ևս որ կըսես, թէ երկայն  
 ,, պիտի ապրիս : Գիտեմ որ կեանքս կարճ  
 ,, է. բայց դնենք թէ երկայն պիտոր ապ-

„բիմ՝ ես ան բոլոր կեանքը ԱՅ կուղեմ  
 „տալ, որուն որ ինքը զինքս բոլոր յանձ-  
 „նեցի ՚ : Աս խօսքէն սատանան՝ ալ չի-  
 կրցաւ հոն կենալ, շուտ մը Ա ինջնեցի-  
 սին աչքին առջևէն կայծակի պէս կոր-  
 սրվեցաւ գնաց, ու գարշելի մուխ հոն  
 ձգելով իրեն ինչ ըլլալը յայտնեց : Աս  
 տեսիլքէն յը Ա ինջնեցիոս առիթ առ-  
 նելով քարոզ տրւած ատենը միշտ մար-  
 դուս կենաց կարճութիւնը կը յիշէր, ք չըլ-  
 լայ որ մէկը երկայն ապրելու յուսով  
 սատանայէն խաբւի : Ա՛ճ աս յրին մար-  
 գարէական հոգի տրւած էր, որով շատ  
 մարդկանց մահը իրենց կը գուշակէր ու  
 կըսէր. բաներդ հոգա՛, վնդի վաղը պի-  
 տոր մեռնիս : Չեր ուժին, ձեր տարիքին  
 վն յոյս մի գնէք, այլ արքայութի եր-  
 թալու զձեզ պատրաստեցէք :

Լուրբեհար . Սուրբիոս . և Յովն . Ռուբանդ  
 'Նլուրս քէջն Ա ինի փերբ . Աւրել . 5 :

---

# ՄԸՄՆ ԵՐԿՐՈՐԳ՝

---

## Գ Լ Ո Ւ Խ Ե .

Բարէ Ս' Գաճո-ւնի՛ Բ. սի չարչարանաց Վ՛ :

\* Բ. սի չարչարելն մարմնով վն մեր , և  
դուք՛ի նոյն միտս վառեցարուք և .

== Պէ-ր. Գ. 1 :

Շատ բաներ կան , որոնք որ թէ մարդս  
մտմտալու ըլլայ՝ իսկապէս մեղքէ ետքա-  
շել կուտան , ու առաքինի ըլլալ կը յորդո-  
րեն : Բայց ասոնց գլխաւորը՝ Բ. սի չար-  
չարանաց Ստաճո՛ւնն է . ասոր վն թէպէտ  
չատ բան կրնայ ըսվիլ , բայց համառօտ  
խօսելուս համար՝ երկու բան կը լինմ հոս  
գրել : 'Նախ՝ թէ աս բանա Մ. յ որչափ

Հաճելի է : Արկրորդ՝ մարդուս ալ որ-  
 չափ օգտակար է : Թէ որչափ Այ Հա-  
 ճոյ է՝ կրնանք իմանալ՝ կըսէ սբ Ան-  
 սելմոս անկից, որ Վն սրբութե խոր-  
 հուրդը դրաւ ոչ միայն իբրև նշան կամ  
 դրաւ (ուհին) մեր փրկութեը, այլ նաև  
 իբրև իր չարչարանացը յիշատակ մը, որն  
 որ շատ կըսիրէ, ինչպէս ինքը ըսաւ, ու  
 յայտնապէս ուզեց ալ աս խօսքով . «Օչս  
 արարէ՛ր տու իմոյ յիշատակէ 1) . քի՛նչպէս  
 սբ Անսելմոս կըմեկնէ . \* առ յիշատակի  
 իմոց չարչարանաց . զի յուշ ամ ջիբ զայն,  
 զոր մն ձեր կրեցի ॥ : Մանաւանդ՝ երոր  
 Թարսոր լեռը լոյսը ու պայծառութիը  
 զգեստի պէս Հագած ատենը՝ ուզեց որ  
 Մոլտէսու Աղիսն որ հոն եկած էին, իր  
 քաշելու չարչարանքներուն մը խօսին :  
 Անէն գլխիցն զոր Խորսելոյ եր յիշէ 2) :  
 Կարծես թէ իր փառքը կաւելնար, եթէ

1) Առևկ. իբ. 19 :

2) Առևկ. Թ. 31 :

շարձարանքները յիշվելու ըլլար, ուսկից  
 որ ինքը ուրախուի ու քաղցրուի կըղգար:  
 Ասկից 'ի զատ՝ երոք յարութի առնելէն  
 վերջը երկու աշակերտներուն՝ որոնք որ  
 Ամմաուուս գեղը կերթային կոր՝ երեցաւ  
 նէ՛ լսելով անոնցմէ ինչ որ ան օրերը  
 եղէմայ մէջ եղաւ նէ՛ կուրախանար, կար-  
 ծես թէ իրեն եղած բանը ինքը չէր  
 գիտեր, ուստի իմանալ ու լսել կուզէր:  
 Անոր համար պէսպէս հրաշքներով շատ  
 անգամ ցըցուց, թէ ինչընտար իր շար-  
 շարանաց յիշատակը ընելը Վ.Ս կըսիրէ:  
 Ինչպէս նր Պրանչիսկոս շատ բաղձալով  
 ուրիշներէն աւելի ՉՎ.Ս սիրել՝ Ա.Յ ա-  
 ղաչեց որ աս բանը իրեն յայտնէ. ձայն  
 մը եկաւ իրեն, որ առանց նայելու ան-  
 շունչ գիրքը ելիւ բաց: Իրեք ան-  
 գամ բացաւ, իրեք անգամին ալ Վ.Սի  
 շարձարանաց գլուխը բացվեցաւ. ասով  
 հասկըցաւ, որ սրտի մտօք Վ.Սի շար-  
 շարանքները մտածելը Ա.Յ շատ հաճելի է:

Եսիկայ մտածելով այնպիսի շնորհք ա-  
 սաւ, որ Վնին ունեցած հինգ վէրքերը  
 Ե՛՛ծ իրեն ձեռքերուն, ոտքերուն, ու կո-  
 ղին տպաւորեց :

Իսկ թէ Վնին չարչարանքը մտա-  
 ծելը՝ մարդուս որչափ օգուտ կը բերէ՝  
 այնչափ յայտնի բան է՝ որ ցուցանելը  
 իրաւի աւելորդ է : Այն ( ) գոստինոս ա-  
 ղէկ կը զրուցէ . \* Ձիք ինչ այնչափ օգ-  
 տակարարոյն մեզ , քան զխոկալն զչա-  
 րակրութիս՝ զոր Վն վն մեր կրեաց ॥ :  
 Ես ըսելէն վերջը՝ իր մտածութիւնները որ  
 աս բանիս վն ունէր՝ շատ աղու՛ւոր ու եր-  
 կայն կը բացատրէ ըսելով . \* Աիրով վի-  
 ,, բաւորեցաւ նա վն մեղաց մերոց : Հան-  
 ,, դիստ անքոյթ և անվկանդ վն հիւան-  
 ,, դաց և մեղաւորաց գտանի՛ի վերս փրկ-  
 ,, չին : Ենդ անդորր է բնակութի իմ . բաց  
 ,, են մուտք գթոյ նր՛ի ձեռն վերաց :  
 ,, Արինչ միանգամ օրակաս է ինձ՝ զայն  
 ,, առնու մ՛ի գթոյ Տն իմոյ . զի զեղուն

,, ողորմութիս, ունելով զհոսելոյ ծա-  
 ,, կունս: Տուաւ մեզ առատ փրկութի  
 ,, ՚ի վերս Յնի փրկչին մերոյ. բազում  
 ,, է մեծութի քաղցրութեն նր, լիութի  
 ,, շնորհաց, և լրութի զօրութեց: Աթէ  
 ,, գայ յիս խորհուրդ աղտեղուն՝ գիմեմ ՚ի  
 ,, վերս Վնի: Աթէ ճնչէ զիս մարմին  
 ,, իմ՝ յիշատակաւ վերաց Տն իմոյ անդ-  
 ,, բէն զօրանամ: Աթէ դարանակալ լինի  
 ,, ինձ սատանայ՝ ՚ի գութս ողորմութեն Տն  
 ,, իմոյ ապաւինիմ, և փախտական լինի  
 ,, յինէն: Աթէ վաւաչ ցանկութին զօ-  
 ,, բացի յանդամս իմ՝ առ յիշատակէ  
 ,, վերաց Տն մերոյ Որդւոյն Այ շիջանի:  
 ,, Յամ ՚ի վիշտս ոչ գտի գեղ ազգողա-  
 ,, գոյն քան զվերս Վնի. յայս և ՚ի  
 ,, սոյն ննջեմ անխռով, հանգչիմ աներ-  
 ,, կեան: Յոյս իմ գլխովին է ՚ի մահուն  
 ,, Յնի: Մահ նր արդիւնք իմ, ապաւէն  
 ,, իմ, փրկութի իմ, կեանք իմ, և

„ յարուի իմ 1) || : Այս ամ խօսքերը  
 կըսէ սբն ( ) գոստինոս : Ասոր նման կըսէ  
 սբ Նոնավենդուրա ալ այսպէս . \* Նա-  
 „ բեպարիշտ մտածութի չարչարանաց  
 „ Վնի հանցէ զսիրտ քո յաշխարհային  
 „ ցանկունց, և զմիտսդ ամբարձցէ յերկ-  
 „ նաւորս : Աթէ լիցիս աղքատ՝ ձո-  
 „ խացուցէ զքեզ պատուական գան-  
 „ ձուք : Աթէ՛ի պահպանութի ամային  
 „ պատուիրանաց տկար կամ յամբ բեր-  
 „ ցիս՝ զօրութիւն շնորհաց իւրոց զօր-  
 „ ցուցէ՛ զքեզ : Աթէ ցամաք ես յա-  
 „ ղօթս և անպտուղ՝ երկնաւոր ցօղովն  
 „ պտղաբեր արացէ զքեզ : Աթէ՛ի  
 „ մեղս է շաղախեալ հոգի քո՝ մկրտու-  
 „ թեամբ արեան իւրոյ սրբեցէ զքեզ :  
 „ Աթէ դեն դարանօք իւրովք ճգնեսցի  
 „ վնաս հասուցանել քեզ՝ լիցի քեզ  
 „ վահան՝ ի պաշտպանել, և սուր՝ ի

1) Չեանուած. ՉԼ. ԻԲ :

,, Հարկանել : Աթէ ես վտարանդի, կամ  
 ,, յուղիղ շաւղէ խոտորնակի գնաս՝ դար-  
 ,, ձուսցէ զքեզ 'ի ճանապարհ ուղիղ ,  
 ,, և ասպա ասարցի զքեզ յարքայութի 1) ։

Վայց մէկ քանի բանի վն մասնաւորա-  
 պէս կուղեմ խօսիլ, որոնց մէջ աս մտա-  
 ծուն օգուտը կերևայ : Առաջինը ան է,  
 որ աս մտածութիւնը մեղքի դէմ ատելունի  
 կրբերէ : Ա՛ճ՝ ոնղի մեղքին չարութիւնը  
 իմանանք, սոսկալի դժօխք մը դրաւ,  
 որուն մէջ մեղաւորները յախտեանս  
 յախտենից իրենց մեղքերնուն պատիժը  
 կըքաշեն : Վայց այսու ամիւ չիկրնար  
 համեմատիլ մնոր հետ՝ որն որ Վող-  
 գոթայ լեռան վն եղաւ, ուր տեղ որ  
 շայրն Ա՛ճ չէթէ մեղաւորի կմ՝ ապըս-  
 տամբի մը, այլ իր անձային ու անմեղ  
 Սրգւոյն՝ որն որ մեղաւորի կերպարանք  
 առած էր, այնչափ սաստիկ չարչարանք

1) խթան անձային սիրոյ. մ. 10 :

քաշել տըւաւ : Իրաւի չար հրեշտակ-  
ներուն անկումն ալ որ մէկ մեղքի համար  
երկնքէն ինկան , ու յաւիտենական կրա-  
կի մէջ կայրին կըտուչորին , մեծ բան կը-  
ցըցունէ : Բայց աւելի մեղքին մեծութիւնը  
կիմանայ մէկը , եթէ մտածելու ըլլայ ,  
թէ Մ.ճ մեղքը քաւելու , ու մեղաւորը  
դժոխքէ ազատելու համար , իր միածին  
Որդւոյն վն պատիժ դրաւ , որ սոսկալի  
մահաւամբ մեռնի : Մ.ս բանիս վն նրն  
Թուլմաս 'Աորագիւղեցին զարմանալով  
կրսէ . \* Առաւել զարհուրեցուցանէ զիս  
քաղցր փրկութիւն մարդոյ , քան զհը-  
րեշտակին չարաչար կորուստն 1) || : Մ.ս  
խօսքը չիկարծէ մէկը որ յանդգնութիւն  
է : Անզի Մ.Յ արդարութիւն մարդկան  
մեղքերը ջնջելու համար ուղեց որ իր  
ածային Որդին դառն մահաւամբ մեռնի .  
բայց հրեշտակաց հպարտութիւն տեսնե-

61

1) Քար. Գ. յաղ. Ծ. ննդ. Քնի :

լով զանոնք ՚ի դժոխս դատապարտեց : Աս  
 պատճառաւ ո՛վ չըսէր, թէ այնչափ խիստ  
 արդարութի՛ն եղաւ, երոյր Վ.Ս՝ որ ամեն  
 արարածներէն աւելի գերազանցութի  
 ունէր, ուրիշին մեղքին համար չարչա-  
 րեցաւ, քան թէ երոյր հրեշտակները  
 իրենց մեղացը համար դժոխք գացին :  
 Արնար ըլլալ, որ Վ.Ս մէկ գործով կամ  
 քիչ շարչարանքով Ա.Յ հատուցում  
 ընէ. ու մարդուս մեղքը քաւէ. որով-  
 հետեւ Վ.Սին ըրած գործքը իր անութիւնը  
 համար անսահման արժողութիւն կուներ-  
 նար, ու անով մարդկային մեղքերը կը-  
 վերցընէր : Ասանկ իքէն՝ Ա.Ճ աս հատու-  
 ցումը չուզեց. հասկա ուզեց՝ որ Վ.Ս  
 անթիւ անհամար շարչարանքներ քաշէ .  
 ոնզի ասով մարդուս սրտին մէջ մասնա-  
 ւոր ան մեղքին վախը ձգէ, որուն ջնջը-  
 վելուն համար անանկ լեղի դեղ պէտք  
 եղաւ, ի՞նչ արուն քրանիլ, մարմինը բոլոր  
 ծեծին տակը պատառ պատառ բացվիլ .

գլուխը փշովք պսակվիլ, ձեռքերը ու-  
 քերը գամերով ծակվիլ, ու խաչին վի-  
 մեռնիլ: Ապա թէ չէ՝ մեր տկար միտ-  
 քը ըրած չարութիւն մեծ չէր սեպեր,  
 ինչու որ մենք շատ անգամ հիւանդութեց  
 գէշութիւն կամ աղէկութիւն ուրիշ կեր-  
 պով շնք իմանար, բայց եթէ դեղերէն  
 որ կը տրվի:

Ասոր համար մէկ անգամ միայն  
 մտածելը, մանաւանդ՝ մէկ անգամ Վ.Նի  
 խաչելութե նայելը՝ շատ անգամ մար-  
 դուս ըրած մեղքին չարութիւն իրեն ցը-  
 ցուց, ինչպէս որ շատ մարդկանց դարձը  
 ասիկայ կը վկայեն: Աքանչելի է Տայասին  
 պատմութիւնը, որ ասով իր չար վարքը  
 փոխեց, ու զարմանալի վարք ստացաւ:  
 Հիպպոդիտոս Վաղասինոս մեծ ծառայն  
 Ա.Յ՝ գէշ գործքէ դարձնելու համար  
 չար կնիան մէկը՝ որ իր տանը մօտ կը-  
 բնակէր, ու շատ անգամ իր սենեակը  
 կը նայէր՝ աղո՛ւոր բան մը ըրաւ: Աս սի՛ր

գեղեցիկ պատկեր մը ունէր, որուն վր  
 Վ.Ս խաչին վր ելած, փշովք պսակած,  
 ու բոլոր արունի մէջ թաթղըված քաշ-  
 ված էր: Պատկերին փառաւոր շրջանակ  
 (չերչիվէ) շինել տալով պատուհանին  
 քովը հայլիի պէս կախել սրբաւ: Հիպ-  
 պոդիտոս աս պատկերին առջևը կերթար  
 աւելի առտուները, ու անոր նայելով  
 կրմտած էր: Վէշ կնիկը ասիկայ տեսնե-  
 լով՝ որ սուրբին ամէն բրածը զգուշութիւն  
 կրգիտէր, կարծեց որ ծրը հայլիի քով  
 հագովելու կապովելու համար կրկայնի,  
 ինչպէս որ գարշելի կնիկները կընեն:  
 Աւտի սկսաւ ծիծաղել, ու ծաղը ընել  
 այսպէս. ահա կեղծաւոր ծրմը, որ կնկան  
 պէս հայլի նայելով զինքը կըղարդարէ:  
 ( ) Իմը ծրը ըստ սովորութեան սկսաւ պատ-  
 կերին նայիլ, բայց քիչմը երկնկեկ նայ-  
 ելով կնկան սիրտը նեղացուց, անոր հա-  
 մար կնիկը սկսաւ բերնին եկածը ըսել,  
 ու նախապել: Ան ատենը ծրը առաւ

պատկերը, ու կնկան երեսը դարձուց,  
 դարձուց թէ չէ՝ կնիկը ան տեսակ հայ-  
 լին տեսնելով, խելքը վրայէն գնաց:  
 Այսպիսի գարշելի մարդմը դարձնելու  
 համար՝ ասկից ուրիշ բան իրաւի պէտքը  
 չէր ընել, վնդի մէկ նայելովը սկսաւ  
 մտմտալ, թէ ինքը ըրած մեղքերովը  
 որչափ Վնի շարչարանքը աւելցուցած է,  
 անանկ որ ծնկան վն գետինը ինկաւ, ու  
 պատկերին նայելով, և աչքէն արցունք  
 թափելով՝ Աստուծմէ իր մեղքին համար  
 թողութի խնդրեց: Թողութի խնդրեց  
 Հիպպոդիտոսէն ալ, որ սյնչափ զինքը  
 նախատեց: Անքն շոգւոյն նրջ ազ-  
 դեցութիւն ըրած մեղքերուն վրայ ա-  
 պաշխարելու համար՝ գնաց ապաշխարող  
 կանանց վանքը մտաւ, ու հոնտեղս մինչև  
 ՚ի մահ սրբութիւն ապրեցաւ: Արանի թէ  
 մեղաւոր մարդը խաչելութե պատկերին  
 շատ անգամ դառնար նայէր, ան ատե-  
 նը իր ըրած մեղքը կրճանչնար, ու վարքը

կրփոխէր : Տերտուղիանոս կը յորդորէ զմեղաւորը , որ նայի . \* Հայեաց'ի խաչ-  
 ելեալն Վ.Ս . սա լիցի քո հայելի : Յո՛ւշ  
 ած 'ի նմ' զարիւնոռոգ . վերս ն'ը . բեր 'ի  
 միտ և զքո խիղճ 1) :

Անն ուրիշ օգուտներ ալ աս չար-  
 չարանաց մտածութիւն մէջը : Ատիա առա-  
 ջին աշխրբիս մէջ քաշած վշտերնիս կը-  
 թեթեցընէ , ու զմեզ կը զօրացընէ : Արու-  
 հետե ինչպէս սբ Վրիգոր կըսէ . \* Ա-  
 թէ զչարչարանս Վ.Սի ածցուք զմտաւ'  
 չելանէ ինչ դժուարին , զոր ոչ համ-  
 բերութիւն տարցուք ॥ : Աթէ հանդիպելու  
 ըլլայ , որ մէկուն բանը յաջող չերթայ ,  
 կամ հիւանդութի մը քաշէ , կամ սրտի  
 նեղութի , ու թշնամեաց ձեռքէն հալա-  
 ծում կրէ , կամ աղքատութի մէջ իյնայ'  
 այնպիսի մարդը եթէ Վ.Սին մեզի համար  
 քաշած սոսկալի տանջանքները մտածելու

1) 'Ի գիրս կուռս :

Ըլայ՝ իր ամէն ունեցածնեղուծի առանց  
 տրանջելու ու խռովելու համբերութի  
 կրնէ : Եւ զօգուտ կունենար զինո՞ւոր մը ,  
 եթէ իր զօրապետին ետեւն չէր երթար .  
 որն որ կը տեսնէր, թէ զիշերները բանակի  
 պահպանուի կրնէ, թշնամեաց դէմ կեր-  
 թայ, անոնց բռնուի դէմ կը կենաց, քրք-  
 տնքի ու արեան մէջ կը թաթխուի : Եւ  
 բանիս համար Պետրոս առաքեալը կըսէ .  
 Վեւ զի յեր Բեռնոս, եւ յեւ Եւստի օրինակ  
 զի զԵւստի Եւստիոսի, Կեոսի 2) : Վեւ  
 մեր թագաւորը ցաւերու ծովին մէջը  
 մտաւ, մենք իր զինո՞ւորները ըլլալով՝  
 ամօթ չէ՞ մի, որ քիչմը չարչարանք  
 քաշելէն ետ կը կենանք . քիչմը նախա-  
 տինք, քիչմը հիւանդութի չենք ուզեր  
 քաշել : Մեծ համբերութի էր, որ  
 Սարգրիտ անուն Սպանիացուց թագու-  
 ճին անկողինին մէջ սոսկալից ցաւեր քա-

1) տ Պետ. ք. 21 .

չած ատենը ունէր: Անգամ մը աղափինը  
 որ կը ծառայէր՝ իր Տիկնոջը վը սիրաբ  
 խշխշալով՝ խաշելուն պատկեր մը բերաւ  
 ձեռքը տըւաւ, ու կըսէր որ Աստուծակ  
 մխիթարութի խնդրէ, կամ բողոք ցա-  
 ւերդ վերցընէ, կի՞ քիչ մը թեթեւցընէ:  
 «Դարձաւ հիւանդը, ու ըսաւ իրեն. „Չի-  
 „վայէր, որ ես ցաւերէս աղափիլ ուզեմ,  
 „երոք Վ.Ս խաշին վը այնչափ ցաւ կը-  
 „քաշէ“: Ակրջը Վ.Սին երեսը նայելով  
 ըսաւ. „Տը Աճ իմ, դուն իմ ցաւերս  
 „չատցուր, բայց համբերութիւն ալ մեծ-  
 „ցուր“:

Արկրորդ՝ Վ.Սի չարչարանաց մտա-  
 ծութիլը ձեռքերնիս ամուր վահան մը  
 կըլլայ, որ աշխրբիս՝ ու մարմնոյն և սա-  
 անային որոգայթներէն զմեզ կը պահէ,  
 ինչպէս որ կը խրատէ, ու կըսէ նր. Պետ-  
 րոս. Վ.Սի շարշարէլն հարմուլ վը հէր, ե-  
 դու՛ր ի նոյն ձգտ վառեցարու՛ր: Ասել  
 կուզէ առաքեալը, թէ Վ.Ս որովհետեւ

ձեր սիրոյն համար այնչափ չարչարանք  
 ու նախաափնք քաշեց, դուք ալ պէտք  
 է որ անոր նմանեւ լու համար համբերութիւն  
 նեղութիւն քաշելով ձեր թշնամեացը դէմ  
 պատերազմիք : Բայց որովհետեւ գիտէր  
 առաքեալը, որ մենք տկար ու անճրկած  
 ենք, անոր համար չուղեց ըսել՝ 'ի նոյն  
 շարժումս, հասցա՛ 'ի նոյն միտք լուսա-  
 ցորո՛ւք : Այսինքն՝ եթէ մարդ մը չար-  
 չարանք չիկրնար քաշել նէ՛ գոնէ Վսի  
 չարչարանքը մտածելով իրեն թշնա-  
 մեացը չարութիւն դէմ կենայ : Անգի կը-  
 յուսար առաքեալը, որ մենք աս մտա-  
 ծուիւ ամէն չարութիւն կրնանք դէմ կե-  
 նալ, ու վահանի մը պէս ձեռքերնիս  
 առնելով մեր թշնամեացը կը յաղթենք .  
 ու թէ աշխարհս, և թէ սատանան արիա-  
 կան քաջուիւ կը հալածենք : Աստի Ա-  
 րեմիայ մարգարէն իր մարգարէութիւն  
 մէջը կըսէր Վսի . Տո՛ւր նոյն լուսան սրտի

Կէրին խոստովոյ 709 1) : Այսինքն՝ տու  
 անոնց՝ որոնց որ Հուկոն կարգինալին  
 զուրցածին պէս, \* Չարչարանք Վ.սի է  
 վահան, որով կարող եմք զամ նետս  
 մուխս չարին շիջուցանել ։ Ասիկայ իբրև  
 Սոսէր Հոգոյն ալ մեր ձեռքը առնենք,  
 որով մեր վնասակար բաղձանքները կըտ-  
 րենք նետենք, մեր մարմինը իբրև ընտանի  
 թշնամի մը ոտքի տակ առնենք, ու  
 հողւոյն հնազանդեցընենք։ Ասղի ինչպէս  
 կրնայ ըլլալ, որ քրիստոնեայ մը ճշմար-  
 տապէս միտքը դնէ Վ.սի խաչիլը մտա-  
 ծել, որ իրեն համար արեան ու վիրաց  
 մէջը թաթախեցաւ, և միանգամայն ան-  
 վայել ուրախութիւններ ուզէ ընել : \* Աճ  
 իմ ՚ի խաչ է ելեալ, և ես փափկութի՞ս  
 խնդրեցից ։ կըսէր միշտ իր անձին քր  
 Նեւնարդոս :

1) Արեմ. Գ. 65 :

## Պատմութիւն :

Ազրիանոս Վիւրեցիին Վ.Յի համբերութեամբ լին գրած գրքին մէջը իրաւագիտաց մէկ առակը կը բերէ, որ Վ.Յի չարչարանաց մտածութեամբ աղէկ կուգայ, և աս է. Աթէ կուզես գիրք մը իմանալ՝ ճակատը նայէ. վստի ճակատը նայելով կրնաս իմանալ : Ասանկ ալ՝ կըսէ, դուն քու մեղքդ, ու պատիժներդ ճանչնալու համար՝ նախ Վ.Յի չարչարանքները մտածէ, որ զմեզ արքայութի տանելու համար քաշեց : Ասիկայ ըսելէն վերջը աս վարի պատմութիւնը կը պատմէ : Արկու բարեկամ մարդիկ կային՝ կըսէ. ասոնք թէպէտ մեծատանց զաւակներ էին, բայց երկուքն ալ մէկզմէկու նման գիտուն չէին : Ասոնց մէկը եկեղեցական էր, որ անձային ու մարդկային գիտութիւնները սորված էր, մէկալը աշխարհական էր, շատ պարզամիտ, ու գիտութեամբ ալ ամէ-

ներին տեղեկութի չունէր : Ասոնք ուղեցին  
 աշխարհքս թող տալ , ու երթալ անա-  
 պատ ճգնաւոր ըլլալ : Գացին անապատ ,  
 ու մեկզմէկէ քիչմը հեռու խուցեր շե-  
 նեցին , ու նստան : Ակսան իրենք զիրենք  
 չարչարել , առարւրնէ մինչև իրիկուն  
 աղօթք ընել , ծոմ բռնել , չիսօսիլ ,  
 արթուն կենալ , և ասոնց նման ուրիշ  
 բաներ ընել : Իմաստուն եկեղեցականը  
 սկսաւ օրէ օր իր բռնած ճամբէն ձանձ-  
 րանալ , ու հոգւոյալ ամենեին միտիթա-  
 բութի չունենալով՝ գէշ տրամութի մի  
 ալ վրան եկաւ : Աւստի տեսնալով որ  
 կարգալէն սրտին տրամութիը չերթար  
 կոր՝ դուրս ելաւ , սկսաւ անապատին մե-  
 ջը պտըտիլ ; ոնղի սիրտը բացլի : Բայ  
 ասկից ալ օգուտ մը չիգտնալով ուղեց  
 աշխարհ դառնալ , ու առջի ըրած զբօ-  
 սանքները ընել :

Ասոր ներհայը մեկալ պարզամիտ  
 մարդը իր ներշնչութի մէջը մեծ միտիթարու-

Թի ունենալով երեսէն ալ կըցըցունէր :  
 Աս ուրախուէն նշանը աքոր վը եկեղե-  
 ցականը տեսնալով շատ կընախանձէր .  
 աս պատճառաւ սկսաւ հարցընել , թէ  
 ինչպէս դուն աս նեղուէս մէջը այնպիսի  
 խաղաղութի ու սրտի ուրախութի կըր-  
 նաս ունենալ : ” Աս (կըսէր եկեղեցա-  
 նականը) հոս տեղս գիշեր ցորեկ վախէն  
 ու տրտմութէն ուրիշ բան չեմ գտնար  
 կոր : Այսի թարութիւն մը Աստուծմէ  
 ամենեին չունիմ . երկիրս ինձի նե-  
 ղութեն փուշեր միշտ կըբերէ , ինձի  
 լաւ կերեայ կոր , որ հոս այսչափ չար-  
 չար վելուս տեղը իմ քաղաքս իմ աղ-  
 զականներուս երթամ . հոն հանգիստ  
 կըգտնամ . ու Այ ալ աղէկ կըծառայ-  
 նեմ “ : Չարմացաւ բարեկամը աս  
 խօսքերս լսելով . և թէպէտ գիտութի  
 չունէր , բայց շնորհալի խօսքերովը որ  
 Աստուծմէ սորված էր՝ ջանաց իր բարե-  
 կամին միտքը փոխել : Ակսաւ պինտ ա-

ուաջ ճամբուլ մը Վճին օրինակը բե-  
րել, որն որ՝ ըսաւ, երկինքէն վար ին-  
ջաւ, ու մեր փրկութիւնը համար սոսկալի  
չարչարանք քաշեց, անանկ որ խաչէն  
չէր ուղեր վար իջնալ: Աս խելացի խօսքին  
եկեղեցականը չիկրցաւ դէմ դնել. բայց  
չիկրնալով ալ համբերել, որ անգէտ  
մարդ մը այնպիսի մեծ խօսք ըսէ, հար-  
ցուց իրեն զարմանալով, թէ ատ սքան-  
չելի խօսքերը ուսկից սորվեցար. որ մար-  
դուս սրտին խաղաղութի կուտան:

Այն տըւաւ անգէտ մարդը, ու  
ըսաւ. գիրք մը ունիմ քովս, ու անկից  
Որդւոյն ԱՅ ուզած բաները կըսորվիմ:  
Ան ատենը եկեղեցականը աւելի հետա-  
քրքրութիւն սկսաւ հարցընել. թէ ինչ  
գիրք է ատիկայ, ո՞վ է գրողը, ու ինչ  
բանի վր կըգրէ: Անալ պին տըւաւ.  
„Վաստքս չերկնցընեմ, ու զքեզ տարա-  
կուսի մէջ չիձգեմ, ըսաւ, իմ գիրքս  
„Վճի խաչելութին է, անկից ամէն գի-

„տուժիք կըսորվիմ“ : Աս ըսելէն վեր-  
 ջը՝ բարեկամին ձեռքէն բռնեց, ու իր  
 սննեակը տարաւ. հոն Վ.Յի խաչելու թիւր  
 իրեն ցըցունելով ըսաւ. „ Ասոր վը իրեք  
 „ գիր կըտեսնամ . մէկը ոսկեղէն, մէկը  
 „ կարմիր, մէկն ալ սև : Ոսկեղէն գիրը  
 „ Վ.Յի ըրած անձային առաքինութիւններն  
 „ է : Կարմիր գիրը իր քաջած ցաւերն  
 „ է : Իսկ սև գիրը իմ գէշ մեղքերս է :  
 „ Առաջինը զիս կը յորդորէ, որ վարքս  
 „ Այ պատուիրանքներուն համաձայն  
 „ շտկեմ : Արկորդը կը յորդորէ զիս, որ  
 „ առանց վախի ապաշխարանք ու ծոմա-  
 „ պահուի ընեմ : Արրորդը զիս կամչցը-  
 „ նէ, որ ծանր մեղքեր չընեմ, որոնց  
 „ համար Վ.Յ արունը թափեց : Աթէ  
 „ աս գիրքը դուն ալ կարդալու ըլլաս,  
 „ և աս իրեք գիրը մտքէդ չի հանես, աւել-  
 „ լի ասկից օգուտ կը գտնես, քան թէ  
 „ ուրիշ գիտութիւններու գրքեր կարդա-  
 „ լով : Ան ատենը ամէն խստութիւր քե-

## Գ Լ Բ .

Բարի Արամածու-Լէ՛ն Այ՛ Բարու-Լէ՛անը շրայ :

\* Քաղցր ես դու Տը՛, և քաղցրութի՛ք  
քով ուսո՛ ինձ ॥ :

Սարճ . ճԶԷ . 68 .

Ա՛զնուական հողին ոչ նրբէք ուրիշ  
բանով ինքը զինք անանկ՛ դիւրաւ Այ՛  
սիրոյն ու ծառայութե՛ն կուտայ , ինչպէս  
որ անային Բարութի՛ը յիշելովը : Ասի-  
կայ սբ ( ) գոսաինոս իր անձին վն՛ փոր-  
ձելով կըսէ : \* Նում անպատում քաղց-  
րութեամբ սիրոյն . յորժամ լսեմ , թէ  
քաղցր ես Տէր ॥ : Աս հոս տեղս Այ՛ ու-  
նեցած կատարելութի՛ններուն վն՛ չեմ  
ուղեր խօսել . վն՛դի ո՛վ կրնայ անոնց խելք  
հասցընել : Աուզեմ միայն իր բարերա-  
րութե՛ն ու ողորմութե՛ն վն՛ քիչ մը խօ-  
սել , որոնքոր իր արարածներուն վն՛

կըցըցունէ: Քարերարու թիւր ոսկի շղթայ  
է, որ ուրիշին սիրաւ ընողին հետ կը-  
կապէ, անանկ է նէ՛ ի նչըլտար բորբո-  
քեալ սիրով զՎճ սիրելու պարտական  
ենք, որ այնչափ բարերարութիւններ մե-  
զի կընէ: Սանաւանդ՝ երոք առանց ա-  
սոր անոր նայելու՝ եթէ բարի, եթէ չար  
մարդկանց, և եթէ անհաշտ թշնամի-  
ներուն ալ բարերարութի կընէ: Չինայ-  
իր, որ օգուտ կամ վարձ մը առնէ ա-  
նոնցմէ, որոնք որ Ղաուիթ մարդարէին  
խօսքը կրնան ըսել. Տէ ի՛ն է՞ ու, Ե-  
բարէ՛ն ի՛ն շէն ի՛նչ ի՛նչ պիտոյ 1): Իսկ  
եթէ կուզէ, որ երախտագէտ ըլլանք,  
ու իր դրած պատուիրանները պահենք,  
ան ալ մեզի բարերարութե համար կը-  
նէ: Անզի ասիկայ ան վախճանաւ կը-  
դնէ, ու կըպատուիրէ, ունզի ինքը ասով  
աւելի կարող ըլլայ մեզի բարերարութի

1) Ստղմ. ԺԵ. 26

գանձը աս է, ուսկից շատ անդամ իր  
 փառքը կը հանէ : ՂՂ շմարիտ է որ անձային  
 կատարելութիւնները՝ ԱՅ վր իբրև աղբիւ-  
 րի մը մէջ նայելով՝ մէկզմէկէ զանազա-  
 նութի չունին . ամենն ալ հաւասար, ու  
 անսահման են : Բայց աստիճանաւ, ու  
 իրեն գործքերուն մէջ՝ որոնք որ գրսէն  
 կը ցըցունէ, մէկը միւսէն աւելի քիչը  
 մեծ կերևայ . ինչպէս կըսէ մարգարէն .  
 Ողորտութիւն Տէ լէ եղև երկր . և գլխ-  
 նի լէ լի մի արարածոց իւրոց 1) : Դար-  
 ձեալ՝ նր գրոց մեկնիչ վիպաները կըսեն,  
 թէ Դաւիթ մարգարէն անձային կատա-  
 րելութիւններուն վր խօսած ատենը՝ միշտ  
 ողորմութիւնը ամենէն առաջ կը գնէ : Բա-  
 ռէ է, կըսէ, խոստովան լինել Տէ . . .  
 պարտել աստուծոս զողորտութիւնս յս, և  
 զճշտարտութիւնս ի գեղեցիկ 2) : Բսել կուզէ,  
 թէ Աճ առարկանց գէմ իր բարեբար

1) Մատթ. լի. 5 • Ծխ. 9 •

2) Մատթ. զն. 2. 3 •

ողորմութեան անձրևը կուտայ . ցորեկը  
 քիչ , ու գիշերը՝ իր արդարութեւ պա-  
 տիժը : Անդի անձային նախախնամութիւր  
 զմեզ ծառայելու յորդորած ատենը՝  
 միշտ գիւրութի կըցըցունէ , շնորհք ու  
 երախտիք կընէ . վերջը երօր կըտեսնայ  
 որ ասոնք օգուտ չեն ըներ կօր՝ կըս-  
 պանայ ու կըպատժէ : Ասիկայ այսպէս  
 ըլլալով՝ չիկրնար ըսվել , թէ ԱՅ մեծ  
 ողորմութիւր մտածելը որչափ խստացեալ  
 մեղաւորաց սիրտը կըդարձընէ : Արով-  
 հետե ինչ աւելի անուշութի մեր սիրտը  
 դարձընելու համար կրնայ ըլլալ , որնոր  
 Աճ մեզի չընէ : Ինչդուտար անուշութիւ  
 կերթայ մեզի հետ . որչափ ներսէն օրը-  
 տերնիս կըդրգէ , անանկ որ կրնանք ըսել ,  
 թէ Աճ բոլոր մեզի բարիք ընելու կրնայի :

Արտպասէ երկար ժամանակ մեղա-  
 ւորներուն դարձին : Անդէս ասնէս զէրս  
 հարդիան ապաշխարութիւ (1) : Աարծեօ թէ

1) Իմաստ. Ժա. 24 :

մարդիքները քանի անգամ որ մեղք կը-  
 գործեն՝ իր աչքէն կը փախչին : Իսկ թէ  
 մեղքը ապաշխարելու ըլլայ մէկը առջի  
 ըրածները մէյմալ չիյիշեր : (Նիկեացի 'ե  
 խորս ժողո՞ւս զամօրէնո-ւթի՞ս Տէր . կըսէ  
 Միքիայ մարգարէն 1) : Կամ ինչպէս  
 Ղաւիթ մարգարէն կըսէ . Որչա՞ր հեռի  
 էն արեւելք յարեմոսից , այնպէս հեռի արար  
 'ի Տէնջ զամօրէնո-ւթի՞ս Տէր 2) :

Իսոյց մեծ սքանչելիք անձային ու  
 ղորմուծն անիկայ է . որ Մ<sup>ծ</sup> ոչ միայն  
 մեղաւորին դառնալուն ողորմութի կընէ ,  
 և մեղքերուն թողութի տալ կուզէ ու միշտ  
 պատրաստ է , հապա նաև նախ ինքը  
 անոր հետ՝ որուն մեղօքը անարգված է ,  
 խաղաղութի ընել կըջանայ , հաշտելու  
 կըկանչէ , առատ շնորհք կուտայ , միտքը  
 կըլուսաւորէ , կամքը անուշութի կըշի-  
 նէ , օնգլի մոլորեալ մարդը իր ճամբան

1) Մեք. Է. 19 :

2) Սաղմ. ԾԷ. 12 :

դարձընէ: Աթէ մարդ ուրիշ մարդմը նախատեչու ըլլայ՝ նախատեալը չուզեր, որ առաջ ինքը հաշտըլի. հասլա որն որ իրաւունքի դէմ ըրաւ՝ անոր կիյնայ, որ խոնարհուի աղաչէ, ու միւսին սիրտը շինէ, ունզի հաշտըլին: Բայց Ա՛յ գթու-թիւր այնչափ է, որ մեղաւորը իրեն հեա հաշտեցընել կըջանայ, թէպէտ մեղաւորէն մեծապէս նախատված ըլլայ: Ա՛յս պիտի յորդորանքներ լեցուն են նք գրքին մէջը: Գաւրճարու՝ս սրտի՝ս, պէ է՝ է՛ Ա՛ճ 1): Գաւրճ աս է՝ է՛ Գրիկեցեց պէպ 2): Գաւրճ աս Տէր Ա՛ճ Կ՝, պէ Գրիկեցար յա-նորէնս-լէն Կ՝ 3):

Ի՛նչ ըսենք հասլա իր սիրոյն վը, որ բարերարութէ ալ մեծ է, երոր Ա՛ճ ապաշխարող մեղաւորը՝ որ իր ողորմու-թէ գիրկը կուգայ՝ կընդունի, ու անանկ

1) Եսայ. խդ. 9 :

2) Անդ. խդ. 22 :

3) Ավա. յդ. 2 :

կուրախանայ, որ հրեշտակներն ալ կը-  
կանչէ ուրախակից ըլլալ չէթէ ապաշ-  
խարողին հետ. հապա իրեն հետ, կըսէ  
քրն [ձուլմաս. \* Աւրախ լերուք ընդիս,  
ոնց թէ մարգս ան էր Ա.Յ, և բովանդակ  
անձային փրկութի զգտանելոյ մարգոյն  
կասեալ կայր 1) || : Վմանելով աւետա-  
րանին մէջը պատմըված հովոհին, որ  
գտնելով կորսըված ոչխարը՝ չիծեծեց  
գաւազանաւ, այլ փատտըվեցաւ պագաւ,  
ու իր ուսին (օմուղին) վն դնելով փա-  
րախը (աղըը) տարաւ. ուրախութի ը-  
բաւ, կանչեց իր բարեկամները, որ իրեն  
հետ ուրախանան : Աւրախ էղէրու-ր ընդ  
իս. զէ գրի զոչխարս իմ զվորու-սեալ 2) :  
Ասանկ բարեկամական սէր ցըցուց իր ա-  
նառակ օրդւոյն անաւետարանական հայ-  
րը՝ որ երկնաւոր հօրը օրինակն էր : Ար-  
չափ մեղաւորներուն սիրտերը շարժե-

1) Պիտառն. կգ. գԼ. Է.

2) Ղուկ. ԺԷ. Ե.

ցան, երօր տեսան, թէ հայրը Քնչպէս սիրով իր օրդւոյն դիմացը ելաւ, ձեռքերը բացած վզին պլլովեցաւ, ու պագաւ, և յանցանքը ներեց: Ա՞րչափ քաղցր յորդորանք եղաւ, որ յանցաւորները, իր հայրական գթութիւն վր յոյս ունենան: Անտուանդ եթէ իմանալու ըլլան մեծամեծ բարիքները որ դարձողին ըրաւ, փառաւոր զգեստ հագցոյց օղորմելոյն, անօթի էր՝ աղէկ սեղան մը պատրաստեց, իր բարեկամներուն հետ նստեցուց երգոց և պարուց մէջը: Ուրտի լինել և խնդալ պարտ էր, զէ էղբ ըսյր յո այս՝ իւրոսեալ էր՝ և գրտա 1): Այս ամ սիրոյ նշանները՝ Այ յօժարութիւնը կըցըցունեն, որով կուզէ որ մեղաւորները ապաշխարեն: Իրենց թըռուճառութիւն՝ որն որ առաջ կըքաշէին, չէ թէ միայն կազատէ, հապա կըմխիթարէ,

1) Ղուկ. ԺԵ. 32 :

ու մեծ մեծ բարիքներ ալ կընէ : Իրեն շնորհաց գանձը ուսկից որ զըկըված էին, չէ թէ միայն կուտայ, հասպա իրենց առջի ըրած արդեանց վարձքն ալ, որն որ մեղանչելով կորսնցուցած էին : Ինչպէս մարգարէին բերնով կըսէ, Հասարակաց յիշ փոխանակ ամացն յարս էկէր հարսին 1) : Ի՞նչ \* Հասարակաց մեղաւորին որ ապաշխարէն զամ առաքինութիւն և զամ զարդիւնս զառաջինս ॥ ինչպէս սր (Թովմաս կըմեկնէ 2) : Այսպիսի սքանչելի սէր էր, որ Վ.Ս ցըցուց երանուհւոյն Անգեղեայ փուլիգնեան, որ երբեմն մեծ մեղաւոր էր : Ասոր զարձած օրէն սկըսած անանկ սէր Վ.Ս իրեն կըցըցունէր, որ յաճախ կուգար կերևնար իր սենեկին մէջ կեցած ատենը : Արբեմն քովը կընստէր, ու իր չարչարանքներուն ցաւը իրեն կըպատմէր, երբեմն զլուսն ալ

1) Յովէլ, Բ. 25 \*

2) Գ. մ. խ. ճթ. պ. Ե. .

կուրծքին վն կըղնէր : Աս շնորհքը իրաւի մեծ էր, ու վար չէր մնար անկից, որն որ իր սիրելի աշակերտին Յովհաննու ըրաւ . որովհետեւ աշակերտին թողալու որ գլուխը իր կուրծքին դնէ . բայց ասոր ինքը իր գլուխը դրաւ :

Ասոր համար ԱՅ ողորմութիւն՝ կըրնայ ըսվիլ որ ծով է : Բայց զգոյշ կենանք, որ աս ծովին ալեկոծութենը չհհանդրալինք, ու ժայռերուն չիղարներվինք . ինչպէս որ կըղարներվի մէկը, երբ որ ըսելու ըլլայ . ԱՅ երկայնատութիւն՝ որ մեղաւորին դառնալուն կըսպասէ՝ մեծ է, ուստի իմ դարձս կրնամ քիչմը ուշացընել : Աճ՝ իմ յուսալէս աւելի դիւրաւ մեղաւորներուն կըներէ, ուստի եթէ մեղքէ ետ ալ կենալու չըլլամ, անիկայ իր գթութիւնը կըներէ : ԱՅ, որչափ գէշ խօսք է ատ խօսքը : Ճշմարիտ է, որ Աճ կըսպասէ, ու կը յորդորէ որ մեղաւորը դառնայ, և ապաշխարէ : Բայց աս

ալ ճշմարիտ է, որ Աճ յաւիտեանս չըս-  
 պասեր. հայտա այնչափ ժամանակ միայն,  
 որչափ անհասանելի խորհրդովք սահմա-  
 նած է: Իրաւի կը յորդորէ, բայց շնորքն  
 ալ չափով կուտայ. և նր ազդեցու-  
 թիւնները լուսով և իշուով: Ամեն մար-  
 դուն մեղքերուն համրանքը սահմանած  
 է, որոնց թողութի ախտոր տայ. իսկ թէ  
 մէկը համրանքը անցընելու ըլլայ՝ դիտ-  
 նայ որ այնպիսի շնորք չաններ, որով  
 մեղացը թողութի կըլլայ: Ինչպէս Վա-  
 մասկոս քաղքին վն սպաննալով կըսէ.  
 'Ի լէ երեց անօրէնութեցն դամասիւտայ, և  
 'ե լէ շրեցն ոչ դարձայց 'ե նմանէ 1):  
 Աս բանս աւելի անոնց գլուխը կուգայ,  
 որոնք որ Այ բարութե վն յանդուգն  
 յուսալով՝ մեղք մեղքի վն կաւելցընեն:  
 Արովհետեւ Աճ ոչ զոք անանկ արդարա-  
 պէս կըսպատէ, ինչպէս զանոնք, որոնք

1) Ամսիս. Թ. 3 =

որ իր ողորմութեան վրէ չարաչար կը յանդգնին, և չարութեն չեն ուզեր ետ կենալ, ըսելով. **ՄԾ** ողորմած է:

Ուստի աղէկ պէտք է գիտնալ **ՄԿ** ողորմութիւն մեր վրէ դարձնելուն կերպը, և ուղղի աղէկ գիտնաս՝ պէտք է որ ճանչնաս նախ, թէ **ՄԿ** ողորմութիւն երկու կը բաժանվի, նախընթաց, և հետևորդ, ինչպէս որ **ՄԾ** արանները կը ըսեն: Սախընթաց ողորմութիւն շնորհք մի է, որով շողին սը մեղաւորը կը յորդորէ որ ապաշխարէ, ու մեղքերէն ետ կենայ: **ՄԶ** շնորհքը շատ անգամ չի արվիր անոնց, որոնք որ իժի պէս ականջնին կը գոցեն, ուղղի **ՄԿ** ձայնը չի լսեն, ու չի հասկընան ըսածը՝ է դէպ ժամանակի: **ՄԷ** սոնք անարժան կը լլան աս շնորբին, ոտքի տակ առնելով **ՄԿ** բարերարութիւնը, ու մտքերնին դնելով, թէ իրենց ուզած ատենը աս շնորհքը կընան միշտ ունենալ: **ՄԸ** սոր համար **ՄԾ** իրաւամբ ասոնց կը սպառնայ,

ու կըսէ. Խնորրեցեն զէս շարժ և ոչ  
 Գրանիցեն. զէ ասիցին զէմաստու-լն. և  
 զէրն-ը Տն ոչ Խնորրեցին 1) : Ընտեօրդ  
 ողորմութիւն շնորհք մի է, որով Մ.ճ  
 մեղաւորը կընդունի, որ իրեն կըդառնայ,  
 թողուի կուտայ մեղացը, ու նորէն իրեն  
 հետ կըբարեկամանայ : Աս ողորմութեն  
 ինչպէս սբ գիրք կըսեն, Մ.ճ հիւճ մէլը  
 չիզրկեր : Դարչարսու-ս ասիս՝ ասէ Տէր  
 զօրու-նց, և դարչայց աս-յէ-ը 2) : Ուստի  
 խօսքս լրմնցընել կուզեմ առաքեալին  
 ըսած խօսքովը. Տէս զաղղրու-լն և  
 զաստու-լն Մ.յ 3) : Աս խօսքս թէ որ  
 մտածելու ըլլաս՝ հասարակաց թշնամոյն  
 ձեռքէն կըխալըսիս : Աթէ Աստուծմե  
 ետ կենալ ու յուսահատիլ միտքդ կը-  
 բերէ՝ մտածէ դուն, թէ որչափ ողոր-  
 մած է Մ.ճ մեղաւորին վն որ կապաշխա-

1) Առակ. Թ. 28. 29 :

2) Չար. Թ. 3 : Յովել. Բ. 13 :

3) Հաւովմ. Ժ. 22 :

րէ: Տէն զհասարակութիւն Մ, Աթէ չափէն  
 աւելի վստահութի, ու յոյս կըբերէ քե-  
 ղի՝ խոնարհեցուր զքեզ, ու մտածէ,  
 թէ Մճ անզեղջ մեղաւորը ինչպէս խըս-  
 տիւն կըպատժէ: Տէն զսասիւն-  
 Աթէ այսպէս մտածելու ըլլաս՝ սատա-  
 նան քովէդ կրտախչի:

Պատիւն-  
 լիւն :

Արտարակուսիմ իրաւի, թէ եկե-  
 ղեցական պատմութիւններուն մէջը՝ ապաշ-  
 խարող մեղաւորին աւելի զարմանալի  
 պատմութիւն կայ մի անոր նման, որն որ  
 անցած դարուս մէջը Սաղմանդիկա քա-  
 ղաքը ՄՅ ողորմութիւն մեղիցըցուց: Ա-  
 ճառական մարդուն մէկը անանկ թուղթ  
 խաղալ կըսիրէր, որ անկից չիկըցաւ  
 ետ կենալ, ինչուկ որ ունեցածը չու-  
 նեցածը բովանդակ կորսնցուց Աբոր  
 աղքատութիւն մէջ ինկաւ նէ՝ խելաղա-

բական յուսահատութի մը իրեն գալով  
 թուղթ խաղալուն վն բարկանալուն  
 տեղը՝ սկսաւ Մ.յ նախախնամութե վն  
 բարկանալ : Մանկ սրտին մէջը Մ.յ դէմ  
 ատելութի ունեցաւ . մինչև երգում ը-  
 նելով ըսաւ . որ հիչ մեղք մը թող  
 պիտոր չհտամ , որ գիտութի ու կամօք  
 զՄ.ճ անարգելու համար չընեմ : Արսու-  
 կամ ես , ասոր Մ.յ դէմ ամբարշտութի  
 ըրած մեղքերը մէկիկ մէկիկ գրել . ըրած  
 չարութիները հայհոյութիները , որ Մ.յ  
 շօր ու Որդւոյն դէմ իր գէշ բերնէն  
 կը հանէր , միշտ ան գիտաւորութի , որ  
 Մ.մենասը Արրորդութիը անարգէ , ու  
 բարկացընէ : Հանդգնութի , որ մարդուն  
 խելքէ մտքէ անցած չէ : Պէտք էր ի-  
 բացընէ , որ երկնքէն ամէն վայրկեան  
 մէյմէկ նորնոր կայծակներ ասոր վն իջ-  
 նար . կամ երկիրս բացվէր , ու ասանկ  
 ամբարիշտ մարդը կուլ տար : Արդ՝ որով-  
 հետև խորք վերս խորքան , ցմ մեղք մը

ընողը՝ ուրիշ մեղքի մէջ ալ կիյնայ, մեղք չիմնաց, որ Այ արդարութիւնը բարկացընելու համար չըրաւ: Իմացաւ որ Վաւարրոս վիշափն անարանութիւն մէջը ամէն տեսակ մեղքերը գրված են, որ խոստովանահարց սորվելու ու գիտնալու հարկաւոր է: Վնաց անմիջապէս գնեց աս գիրքս, ուղղի չիգիտցած շարութի կայ նէ անկից սորվի, ու ընէ:

Արդալով աս գիրքը՝ գտաւ որ Աճ շատ կըբարկանայ, թէ որ մէկը խոստովանելու երթայ, ու անոր մէջը մեղք մը պահէ ու չըսէ: Ե ուտ մը ելաւ քահանայի մը գնաց, որ խոստովանանք ըլլայ, սկսաւ միայն պզտիկ մեղքերը ըսել, ու մեծ մեծ ըրած մեղքերը պահել: Իայց Այ ողորմութիւնը եղաւ, որ այնպիսի քահանայի հանդըպեցաւ, որ շատ խելացի, ու բանը գիտցող մարդ էր: Ասիկայ քանի մը նշաններէն, քի ձայնին կտրելէն, խօսվածքին եղանակէն, ու

աւելի Հողոյն նբյ լուսաւորութեն իմա-  
 ցաւ, որ աս մարդս իր ծանր մեղքերը  
 սրտին մէջ պահած է: Մայց կարծեց  
 որ մարդկային նկատման, ու փուճ վախի  
 համար չէր խոստովաներ կոր: Աւստի  
 ուզի ասոր սիրտ տայ՝ սկսաւ երկայն եր-  
 կայն Մ.Յ ողորմութե վն խօսիլ, որ մե-  
 ղաւորները կընդունի, եթէ իրենց մեղ-  
 քերուն վն իսկապէս զղջալու ըլլան:  
 Մայէ ըսաւ, Վն ինչ կըսէ, ինչ պատ-  
 ճառի համար ինքը աս աշխարհս եկած  
 է: Ոչ էիէ ինչէլ զարդարս, այլ զե-  
 ղաւորս յարաշխարհի (1): Մ.Յ հաճելի  
 անանկ բան չիկայ, ինչպէս որ մէկը իր  
 հայրական գիրկը գիմելու ըլլայ. ինքը  
 առանձին շնորք ու պարգևներ մեղաւոր-  
 ներուն կուտայ: Մտոնք ու ասոնց նման  
 խօսքեր ըսած ժամանակը՝ տեսաւ որ աս  
 մարդուն սիրտը քիչմը կակղցաւ: Մն

1) Ղուկ. Ե. 32 :

ատենը անուշութի մը սկսաւ յորդորել , որ յայտնապէս զրուցէ ինչ որ սրտին մէջ ունի , ու ինչ բանի վր խիղճը կը զարնէ կոր նէ : Ըս անուշ խօսքը վաճառականը լսելով՝ սրտէն սկսաւ հառաչել , ու քիչմը մտմտալէն ետքը կայեւնին խօսքը ըսաւ . Սէժ է անօրէնութի ին , շան զէրուղու զէն 1) : Պատասխան տրւաւ իմաստուն քահանայն ու ըսաւ , ինչզըտար մեծ ըլլայ անօրէնութիւնդ՝ Ըյ որդորմութիը կրնայ ներել : Ըժ ձեռքը բաց կըսպասէ կոր , ուղղի իր մեծ սէրը քեզի ցըցունէ : Ուրիշ բան չուղեր , բայց ըրած մեղքերուդ վր սրտանց զղջում ընես :

Ըն ատենը մարդը աչքէն արցունք թափելով սկսաւ ըսել . անանկ է նէ Ըյ որդորմութիը իմ մեղքերէս աւելի մեծ է . անանկ է նէ այնչափ մեղքերուս

1) Տննք. Դ. 12 .

Համար թողութի կրնամ առնել :  
 Անանկ է նէ պէտք է որ լամ , ու կա-  
 տարեալ խոստովանութի զղջամ : Մայց  
 անղըտար շատ են , ու անղըտար բրած  
 եմ , որ շատ ժամանակ պէտք է , ինչուկ  
 որ ամէնն ալ միտքս բերեմ : Վաճա-  
 նայն ժամանակ տըւաւ իրեն , որչափ որ  
 կուղէր : Վիչ ժամանակէն վերջը դար-  
 ձաւ , ու քահանային առջևը լացով ող-  
 բով ամէն մեղքերն ալ խոստովանանք  
 եղաւ : Ազատելով աս պարտքէն , ու  
 Այ որորմութն վի յոյս ունենալով ու-  
 բախութի տուն դարձաւ : Մայց ուզի  
 ալ Այ աղէկ ծառայէ՛ կրօն մը մտաւ ,  
 ու հոնտեղը ինքը իրեն շատ նեղութիւն  
 ու չարչարանք կուտար . անոր համար  
 Աճ ալ երբեմն երբեմն իրեն միսիթա-  
 բութի տալով կուրախացընէր , ուստի  
 մարգարէին խօսքը բերնէն չէր ձգէր .  
 Ողորմութիւն Տն անսպասու էն 1) : Իրեք

1) Ողբոց . Գ . 22 :



## Գ 1: Գ

Բարէ Մտածողն Բարէ Եր Ինտել- լէ:

\* Օյանցուածս իւր ուլ կարէ առնուլ 'ի միտ || :

Սաղմ. ԺԷ. 13 :

Ո՛չ մարդիկ, ո՛չ հրեշտակներն ալ կրնան խելք հասցընել ան մեծ չարութիւն որն որ մահացու մեղքը ունի, ինչպէս որ մարգարէն կրսէ. Օյանցումս իւր ուլ իւրէ առնուլ 'ի Բար, Բայց 'ի վի սյսր ամի, ինքը կրգրուցէ, թէ ես շատ անգամ կրմտածեմ, ուղղի օրչափ կարելի է նէ՛ հասկընամ: Լոգոցայց վի Բարց իմաց 1): Ես հոգը մենք ալ ջանանք ունենալ, ուղղի աս գարշելի մեղքը ատենք ու ետ կենանք: Մեղքի չարութիւնը սելով պէտք է իմանալ անիրա-

1) Սաղմ. լԷ. 19:

Հուժի՛ր ու անարգանքը, որ մարդ մը  
 մեղանչելովը Մ.Յ մեծ վայելչուժեան գէմ  
 կընէ. ինքը անարգ արարած մը ըլլալով՝  
 ծայրագոյն արարիչ Մ.Ծը կանարգէ:  
 Ուստի աս չարուժի՛ր անդունդ չարեաց  
 կըսվի, որ տակ չունի. կամ ծով անօ-  
 րէնաւժե՛, որ եզը (խըյի) չունի: Արով-  
 չեաւ աս անիրաւուժի՛ր ու անարգանքը  
 ոտքի տակ առնել կուտայ ան պատիւ՛ը  
 ու փառքը, որ Մ.Յ կըվայլէ, ու պէտք  
 է: Ինչպէս Մ.Ծ ինքը կըսէ. Որդե՛ս ծնայ  
 եւ Բարչբայրոցի, եւ նոյն պէս անարգե-  
 ցին 1): Օհրի՛ն-ը Տ՛ն արհամարհեցին. 2):  
 (Յանցանէ՛լ ըստ օրէնսն պ՛Ծ անարգե՛ս 3):  
 Մ.յսպիսի խօսքեր նր գիրքը շատ տեղ  
 կըսէ: Մ.մէն մարդ գիտէ, թէ որչափ  
 անարգեալին պատիւ՛ը անարգողէն մեծ  
 է՝ այնչափ մեծ անիրաւուժի՛ կըլլայ:

1) Էսայ. Կ. 2:

2) Սիր. խթ. 6:

3) Հաովմ. Ը. 23:

ինչպէս ըսենք, եթէ գեղացի մը անվայ-  
ել խօսք մը ըսէր մեծ թագաւորի մը :  
Մ, սպառնաւ սր (Սովմաս ճշմարտա-  
պէս ըսաւ . \* Մեղքն արարեալ ընդդէմ  
Մ, յ ունի զանսահմանութի իմն յանսահ-  
մանութենէ անտի անձային մեծվայել-  
չութի : Քանզի այնչափ առաւելու  
յանցանքն, որչափ մեծ է նա, յոր յան-  
ցանեմք 1) : Մ, սոր համար կրնանք ըսել,  
թէ այնչափ մեղքին չարութիւնը մեծ է,  
որչափ Մ, յ բարութիւնը մեծ է :

Մ, րդ՝ մեղքին չարութիւնը հասկը-  
նալու համար՝ սկսինք համրել, թէ  
անով անձային ինչ ինչ կատարե-  
լութիւնները կանարգիլի : Անարգիլի  
նախ Մ, յ արդարութիւն, որովհետեւ ոչ  
օրէնքը կը պահիլի, ոչ վարձքը կ'ի՛ պա-  
տիժը բանի տեղ կը դրիլի, թէպէտ և  
գիտենք, որ Մ, ճ ամբարիշտները յաւի-

1) Ը. մ. խ. Դ. Գ. Բ. ա. Դ :

տենական տանջանքներով կը պատժէ,  
 ու այնչափ բիւրաւոր հրեշտակները մէկ  
 մեղքի համար՝ որ մտքով ըրին, դը-  
 ժոխքին մէջը դատապարտեց: Անարգ-  
 վի անձային ողորմութիւն. որովհետեւ մե-  
 ղաւորները յանդուգն համարձակութիւն  
 կը յուսան, որ ամէն մեղքերնուն վի-  
 թողութիւն կրնան առնել. ուստի մե-  
 ղաւոր ըլլալ, Ա՛յ դէմ ընել կուզեն,  
 ըսելով՝ թէ Ա՛ճ գթած ու հեղ է:  
 Չեն գիտեր ասոնք որոշել, թէ ուրիշ  
 բան է, մեղքի մէջ գտնուելով Ա՛յ ու-  
 ղորմութիւն գիմել, և ուրիշ բան է համար-  
 ձակ մեղանչել, ու ըսել, թէ Ա՛յ ու-  
 ղորմութեւն կը դիմեմ: Առաջինը ընողը՝  
 Ա՛յ ողորմութիւն իրեն միջնորդ կամ բա-  
 րեխօս կը կանչէ, բայց երկրորդը ընողը,  
 կուզէ ըսել, որ Ա՛ճ իր մեղքերը պաշտ-  
 պանէ: Անարգավի Ա՛յ ամենակարողու-  
 թիւն. որովհետեւ մեղաւորները մեղան-  
 չական գործքերովը իրենց ծառայեցընել

կուտան բռնի: Այդի առանց անձային  
 օգնութեան արարած մը ինքիրեն չիկրնար  
 շարժիլ կամ գործել, անոր համար եբոր  
 մարդս ընդունով կը հայհոյէ, կամ ձեռ-  
 քով կը յափշտակէ՝ Այ օգնութիւնը Այ  
 դէմ կը բանեցընէ, ուստի Ա՛ճ մարգա-  
 րէին բերնով կը գանգատէ. Օտտայե-  
 ցոցերը զէս 'ի հեղս քս, ե յանօրէնո-  
 քս աշխարհ տարերը զէս 1): Ինչպէս որ  
 անգութ Շամիրամը՝ Աինոս թագաւորէն  
 որ իր երիկն էր՝ իրեն համար պատրաս-  
 արված խարէութիւն՝ որով թագաւորը  
 զինքը մեռցընել կուզէր, ինքը թագա-  
 ւորին գլուխը դարձուց, ու զանհկայ  
 սպաննեց:

Աննարգիւն նաև անձային անչա-  
 փութիւնը, որով Ա՛ճ ամէն տեղ, ու ամէն  
 ժամանակ ներկայ կը գտնուի: Աւստի կը ը-  
 լայ, որ ինքը իր տանը մէջ, իր աչքին

1) Եսայ. խ. 24:

առջևը կանարգ վի, թէպէտ և մեղաւորը  
 գիտէ, որ անոր աչքը արևէն աւելի  
 լուսաւոր ըլլալով իրեն միշտ կընայի  
 կոր, ասոր համար ոչ միայն մեղքերը,  
 այլև անոր աչքին առջևը ընելը՝ Ա՛յ մեծ  
 վայելչութիւն մեծապէս կանարգէ: Ա-  
 թէ կարելի ըլլար մեղքմը այնպիսի տեղ  
 ընել, ուր որ Ա՛ծ չէր կրնար տեսնել,  
 'ի վն այսր ամի մեղքը իր գէշութիւնը կու-  
 նենար, հապա որչափ գէշ է անոր աչ-  
 քին առջևը ընելը: Ասոնց՝ որոնք որ  
 Ա՛յ ահանջին քովը զինքը կըհայհոյեն,  
 իր աչքին առջևը իրեն դէմ մեղք կը-  
 գործեն, չըսվիր ան խօսքը՝ որն որ Ա՛ն-  
 աիգոնոս թագաւորը անգամ մը իր զին-  
 ճորներուն ըսաւ, ասոնք եբոր իր վրա-  
 նին (չատրին) քովը իրեն վն կըտրան-  
 ջային կոր սաստիկ՝ գլուխը վրանէն դուրս  
 հանեց, ու ըսաւ. «Վիշմը հեռու գա-  
 ոցէք, որ թագաւորը ձայներնիդ չի-

Թէ 1) ,, : Ասանկ պէտք էր ըսել՝ մեղա-  
 ւորներուն . քիչմը հեռու գացէք, եթէ  
 ձեր անասնական կամքը կուզէք ընել :  
 Մեղք չընելէն առաջ հեռու տեղ մը,  
 կամ մութ անկիւն (քէօշէ) մը փնտը-  
 ունցէք, որ Ա՛յ աչքը չհկրնայ տեսնել :  
 Քայց պարսպ տեղ կաշխատիս, եթէ  
 Ա՛յ աչքէն կուզես փախչիլ : Ա՛յ զի ան-  
 չափ է Ա՛ծ : Աննաւանդ՝ թէև Ա՛ծ ու-  
 զելու ըլլար, որ ինքը անչափութի՛ չու-  
 նենար, ունի իրեն գէմ եղած մեղքե-  
 րէն կարող ըլլայ աչքը դարձընել, սա-  
 կայն ինչ որ ընէր՝ չէր կրնար ընել :  
 Ասկից մեղաւորը կրնայ դիւրաւ իմանալ  
 թէ իր չարութիւնը որչափ մեծ է, երբ  
 Ա՛յ աչքին առջևը մեղք ընելը՝ յան-  
 դգնութիւն բանի տեղ չի գներ, որ Ա՛ծ  
 մեղքերուն դատաւոր եմ կրսէ, ու վրէժ-  
 խնդիր : Աս ինչէն իրագրեալ եւ վստայ է՝

1) Աննէք. գիրք Գ. յաղ. բարե. գԼ. իբ.

1) : Ո՞ր անզգամ մարդը այն-  
 չափ համարձակեցաւ օրինաց դէմ գոր-  
 ծել անոր առջևը՝ որն որ օրէնքը դրաւ .  
 ո՞վ այնչափ կարող եղաւ թագաւորին  
 առջևը ժողովուրդը իրեն դէմ ոտք հա-  
 նել : Իսոյց մենք Ա.Յ աչքին առջևը,  
 որ օրէնսդիր ու թագաւոր է, չենք վախ-  
 նար իրեն օրէնքին դէմ ընել, ու զին-  
 քը անարգել : Ուստի Ա.Ծ սաստիկ կը-  
 գանգատէ ու կըսէ . Իսրայելացիներն  
 զէս աստիճանով երէսաց ինոց 2) : Աս բանս,  
 թէ ի՞նչը քտար մեզքը կը ծանրացընէ  
 դիտէր Գաւիթ, ուստի շարունակ կը-  
 սէր . Ի՞նչ թայն թեղայ Տէր, եւ շար  
 աստիճանով քո արարէ 3) :

Ոտկի տակ կառնըվի անային բա-  
 րերարուծին ալ, որով զԱ.Ծ կընախա-  
 տենք . միայն բարերարուծիը մոռնալը .

1) Երեմ. իթ. 23 \*

2) Եսայ. 4Է. 3 \*

3) Սաղմ. Ծ. 6 \*

ապերախտ անձին ցածութիւ կը ցըցունէ :  
 Խոզերուն նման կը լայ, որ կաղնի ծա-  
 ոին պտուղները ուտելու կը նային, ու  
 ամենեւին ծառին վնաս քերնին չեն դար-  
 ձըներ : Իսկ որ լեզու կրնայ հասկըցընել  
 այնպիսի մարդկանց չարութիւն, որոնք  
 որ առատ շնորք առնելով՝ անոր գէմ  
 մեղք կը գործեն : Ա՛ճ ասոնց առատ պար-  
 գեներ կուտայ, ուղղի իրեն փառացը  
 համար բանեցընեն, ասոնք ներհակը՝ ա-  
 նոնցմով զինքը կանարգեն, ու կար-  
 համարհեն, ու իրենց ուղածներուն կը-  
 բանեցընեն : Ա՛ս բանիս վնասը Էրո-  
 նիմոս կուլայ, ու կըսէ, \* Օստողջու-  
 թիւն 'ի ցանկութիս առնումք 'ի կիր-  
 և զմեծութիս 'ի յանառակութիս դար-  
 ձուցանեմք ॥ : Իշխանուն մը հասածնիս  
 պէս՝ վախը մեկդի թող կուտանք, խել-  
 քերնիս մտքերնիս գէշ գէշ զբքեր կար-  
 դալու, ուտելու խմելու, նորնոր մեղքեր  
 գտնելու կը բանեցընենք : Ի՛նչ կը ցըցու-

նենք ասով, բայց եթէ այնպիսի մեծ բարերարին ըրած բարեացը դէմ մեր չարութիւնը: Այնպիսի անձային բարերարութեան դէմ՝ որ մասնաւոր շնորք տրւած էր, մեր ապերախտութիւնը: Աս է չար ապերախտութիւն, որ գաղանները խկ չըրին անոնց դէմ, որոնք որ իրենց բարիք ըրած էին: Պատմութիւններու մէջ կը կարդանք, թէ առիւծները օձերը ինձերը (ղափլանները) սորվելով հեզ եղան, ու իրենց բարերարը ճանչցան: \* Օերախտիս ճանաչեն և գաղանք՝ և չիք անասուն այնպէս վայրագ, որ ոչ ընդելացի խնամաստարութիւն, և ոչ լիցի հեզահամբոյր ॥ կըսէր Սենեքայ:

Բայց ամէն անիրաւութիւններուն մէջը՝ որ մեղքին չար պտուղներն են, մեծը ան է, որ Վնի խաչելութիւն չարչարանքը կընորոգէ: Պօղոս առաքեալը հասկըցընել ուզելով սոսկալի անարգանքը՝ որ մեղաւորը Վնին կընէ, երկու

վախնալու բան կըսէ : Առջինը աս է, Որ ՂՈՐԴԷՆ ԱՅ ԽԽ ԽԽԽ Ե՛ՀԽԽ 1) : Կուզէ ըսել, որ մեղաւորը ոտքին տակը կառնէ զՔ.Ս. կարծես թէ անարգ գերի մի էր, ու նախատվելու արժանի էր, ընտոր որ անզգամ հրէաները նախատեցին : Երկրորդը աս է. ՍԵՐԽԷՆ Ի ԽԽԽ ԿՈՆԷՆ ԽՅԽՅ ՂՈՐԴԷՆ ԱՅ 2) : Այսինքն՝ մեղաւորները իրենց մեղօքը զՔ.Ս նորէն խաչ կըհանեն : Աս առաքեալին խօսքերը՝ չիկարծէ մէկը որ չափէ դուրս խօսքեր են. ու ըսէ, թէ ինչուկ հիմայ քրիստոնեայ մը ձեռք չիձգեց այնպիսի անիրաւութի՛ ընելու : Ստոյգ է, որ Ք.Ս ի կեանքը չեն վերցըներ. որովհետեւ չիկրնար մէյմալ ցաւ քաշել, կի՛ մեռնել : Բայց ինչ պակաս է մեղաւորին ան չարութիւնը ընելու, քանի անգամ որ անոր դէմ մահացու մեղօք կըմեղանչէ

1) Եբբայ. Գ. 19.

2) Անդ. 7. 6.

նէ : Անդի ինչպէս սբ Թովմաս կրտէ ,  
մեղանչած ատենդ՝ ձեռքէդ եկածին չտի  
առիժ կուտաս , որ Վ.ս նորէն խաչի  
և այսպէս զՎ.ս կանարդես :

Ըս բանս ինքը Վ.ս հաստատեց ,  
երոր սրբուհի Պրիճիտային երեցաւ  
կրճակը խաչ առած , բոլոր մարմինը  
արունի մէջ թաթխըված , ու վերքերը  
նորէն բացված : Սրբուհի Պրիճիտա աս  
տրտմալի տեսիլքին վրայ սասանած կե-  
նալէն ետքը հարցուց , որ ինչ բան է  
ասիկայ : Վ.ս ալ սրտէն ան ընելով  
պատասխան տրւաւ . “ Ըհա ասանկ վի-  
,, բաւորեցայ , ու նորէն չարչարվելու  
,, մատնըվեցայ անոնցմէ , որոնք որ ինձի  
,, դէմ մեղք կրգործեն : Անդի երոր չար  
,, կամքերնին կընեն՝ զիս ձաղանքով ,  
,, ու գաւազանով կըծեն : Աբոր մըտ-  
,, քով հպարտութի կընեն՝ շխուս փուշ  
,, պսակ կըդնեն : Աբոր ձեռքով ոտքով  
,, մեղք ընելու կերթան՝ իմ ձեռքս ոտքս

„ սուր գամերով կրծակեն : Աբոր սըր .  
 „ տերնուն մէջ գէշ սէր՝ ատելութի ու  
 „ վրէժխնդրութի կունենան՝ իմ սիրտս  
 „ տէգով (մղրախով) նորէն կըստա .  
 „ ռեն “ : Սը ( ) գոստինոս ասկից աւելի  
 սոսկալի խօսքեր կըսէ , ին՝ թէ աւելի աս  
 խաչը կսկիծ կուտայ , որուն վն քրիս-  
 տոնեաները իրենց մեղօքը ՂՎն կըխա-  
 չեն , քան թէ ան խաչը՝ որուն վն հրէ-  
 աները խաչեցին : Արովհետեւ Վն մարդ-  
 կանց փրկութիւնը համար աս խաչը յօ-  
 ժարութի յանձն առաւ . իսկ միւս խա-  
 չը բռնի կըքաշէ , վնզի մարդս դատա-  
 պարտել կուտայ : Ասենք ինչ խօսք որ  
 Վն մեղաւորին կըսէ , ինչպէս որ նոյն  
 սը վզնը կըգրէ . \* Ան իմէ հաներ զիս  
 'ի խաչ մեղաց քոց , որ առաւել դառն  
 է ինձ քան զայն՝ զորմէ երբեմն կախե-  
 ցայ : Վնզի ծանրագոյն է ինձ խաչն  
 մեղաց քոց , յոր ակամայ ելանեմ , քան

Թէ այն յոր գծալով 'ի քեզ բարձրացայ 1) ॥ :

Պատմութիւն :

Վն Տրն մեր շատ անգամ երևցաւ, ու յայտնեց, թէ որչափ կանարգ վի Մծ մեղօք, ու որչափ իր շարչարանքներն ալ իրեն նորէն կսկիծ կուտան : Հատերուն մէջէն լսելու բան է սրբուհի Ատարինային եղած տեսիլքը : Մտիկայ ազգաւ Հռովմայեցի էր, ու իր գեղեցկութեւ համար իրեն Ռուչրա կը կանչէին, ի՞նչ գեղեցիկ : Մնջի ատենը սատանայի որոգայթ մի էր, որով շատ մարդկանց կորստեանը պատճառ եղաւ : Ռայց ետքը Վնի ուռկան եղաւ, որով շատ հոգիներ դարձուց : Պզտիկութեւ ատենը իր գեղեցկութիւնը՝ վարմունքներովը, մանաւանդ արհեստովը՝ հռովմայ-

1) Բան ՃՃԾ. յաղ. Ժամ. 'ի հսկ. հոգ. զեբբ Թ :

եցի իշխաններն ալ իրեն ձգած էր,  
 ու անով այնչափ ստակ դիզած էր, ինչ-  
 պէս որ Աթենացի Փրինէ ըսված կնիկը  
 այսպիսի բանով ժողված էր: Վաղքին  
 մէջը հագված կապված՝ ձեռքերը ապա-  
 րանջան (պիլէղիկ) վիզը մանեակ (կեր-  
 տանլըխ) իշխանի աղջկան պէս կը պըտը-  
 տէր: () Ըմը ինքիրենը, կամ ըսեմ,  
 աստուծով ժամ մտաւ, ուր որ սբ  
 Ղաովինիկոս աշխրբիս ունայնութե մը  
 քարոզ կուտար կոր: Այլ Ղաովինիկոս  
 գիտնալով Վատարինային ինչպիսի  
 կնիկ ըլլալը, ու անոր աղէկութեանը  
 բաղձալով վարդարան մը տըլաւ, ու  
 յորդորեց, որ ամէն օր 'ի պատիւ սբ  
 Ածածնայ ըսէ: Վատարինա յօժարութի  
 առաւ աս վարդարանը, ու սբին ըսածին  
 պէս՝ յաճախ վարդարան կըսէր, ուսկից  
 օգուտ ալ կըտեսնէր, թէպէտ բարեկամ-  
 ներէն՝ որ իրեն կուգային կերթային,  
 ու գարշելի գործքէն ետ չէր կենար:

( ) Ըմբռ քաղքին մէջ պտըտած ատենը՝ որ ինչպէս պէտք է նէ՝ զարդարված էր, ուղղի ինքը զինքը ցըցունէ, ու ուրիշ մարդիքներ նորէն իրեն ձգէ, մէկ շնորհալի երիտասարդ մը դիմացը ելաւ :  
 ‘Այեցաւ առաջ երեսը, ու անոր սիրովը անանկ բորբոքեցաւ, որ երկուքն ալ մտիկցած ատեննին՝ մէկզմէկ սկսան բարևել, և անուշութիւն խօսակցիլ : Ատքը Աատարինա զինքը իրիկվան սեղանի կանչեց. երիտասարդն ալ սիրով յանձն առաւ, ու երթալը հրաշք մը եղաւ :  
 Արնատէին կոր երկուքն ալ սեղանի վր, որ փառաւոր զարդարած էր, տեսակ տեսակ կերակուրներ կարգաւ կերթային կուգային կոր, բայց ամենուն մէջն ալ արուն լեցված կըտեսներվէր կոր : Աատարինա աս նոր բանի վր զարմանալով մտքէն կըսէր կոր, թէ չըլլայ որ երիտասարդը ձեռքը կտրած ըլլայ, ու անոր

Համար այսչափ արուն լեցված է : Բայց  
 պարապ ելաւ , եբոր երիտասարդը իրեն  
 ըսաւ , թէ ձեռքս չեմ կտրած , ու ան  
 արունը՝ որ կերակուրներուն մէջը կայ ,  
 կըցըցունէ , որ քրիստոնեայ մարդուն կե-  
 րակուրին վն Վնին արունը ցանված պի-  
 տի ըլլայ , ոնղի անոր յիշատակը մտքէն  
 չիհանէ : Աս բանս՝ որ ամենեին ան սե-  
 ղանին վն չէր խօսված , Ատտարինա ե-  
 բոր լսեց նէ՝ սրտին մէջը սէր մը եկաւ ,  
 որ աս պարկեշտ երիտասարդին պատիւ  
 ընէ . սկսաւ հարցընել ու աղաչել , թէ  
 դուն ո՞վ ես . վնղի կըսէր՝ քու ըրած  
 բարեկամութիդ խելքէ մտքէ դուրս բան  
 մը ինձի կերևայ կոր : Արիտասարդը նլին  
 տըլաւ ու ըսաւ . կըպատմեմ քեզի , ե-  
 բոր երկուքնիս միայն մնանք նէ : Ան  
 ատենը շուտմը սկսան սեղանը վերջա-  
 ցընել , երիտասարդը փափաքելով աս  
 շնորքը անոր ընել , իսկ Ատտարինա բաղ-  
 ձալով իմանալ , թէ իր տունը եկողը

ինչպիսի մարդ է՞, որ այնչափ ուրախու-  
թի սրտին մէջ ձգած էր :

Աստի եբօր երկուքն ալ սննեակ  
մը գացին նէ՛ որ մարդ մը չիգար, հոն  
երիտասարդը պզտիկ ու աղուճօր տղայ  
մը եղաւ, և ինչպէս սի՛ գիւրքը կըսէ .  
Գիւղէցիի որեւանելով ժամը մի որդիս աւրտ-  
լան 1) : Բայց գլուխը սոսկալի փուշ  
պօակ մը կար, կոնակը երկայն ու ծանր  
խաչ, ձեռքերուն ոտքերուն կողին վր  
վէրք բացված . իսկ ուրիշ անդամները  
արունի մէջ թաթխըված : Ահա դողու-  
մէջ մտաւ Աստարինա աս անկարծելի տե-  
սիլքը տեսնելով . խելքը վրայէն գնաց,  
գետինը ինկաւ . ու անշարժ մնաց : Իսկ  
անիկայ որ Վն էր՝ սկսաւ իրեն հետ  
սիրով՝ ու անուշութի խօսիլ, ու ըսել .  
« Ինձի դարձիր, նայէ՛ քաշած նեղու-  
» թիններուս ու շարշարանքներուս : Ահա

1) Սողմ. խԳ. 3 :

„ շարձարանքս նորոգվեցաւ : Եւ այս-  
 „ շափ ցաւերուս պատճառը քու մեղ-  
 „ քերդ են : Եւ ո՞ղ տուր ալ ատ խելա-  
 „ գարութիդ . նայէ քու հոգւոյդ հա-  
 „ մար որչափ բան քաշեցի , խկ դուն  
 „ քու մեղքերովդ ան հոգիդ կորսնցընել  
 „ կուտաս կոր “ : Եւ ըսելէն ետքը՝  
 ան կերպարանքին փոխվեցաւ , որն  
 որ խաչին վրէ ելած ատենը ունէր , ու  
 առջի խօսքը շարունակելով ըսաւ . „ Այ՛տ  
 „ կեցիր ալ քու անօրէնութիւներէդ :  
 „ Եւսկից ետեւ մի ջանար հոգիները դժօխք  
 „ տանիլ . առաջ քու վրադ՝ ետքը իմ վրաս  
 „ նայէ , որ քեզի փրկիչ եղայ . ու մըտ-  
 „ մտայ , որ ինչպէս անիրաւութի ինձի  
 „ կընես կոր “ : Եւ ըսածին պէս՝ մէյ-  
 մալ աներևոյթ եղաւ իր լուսովը . մնաց  
 Աստարինա ահու գողու մէջ , ու սրտանց  
 զղջալով գնաց սբ . Գումինիկոսին ոտքը  
 ինկաւ : Աջով ողբով իր ամէն մեղքը  
 անօր խոստովանանք եղաւ . կորսնցուցած

շնորհքը առաւ, ու այնպէս սրբութեան  
 ճամբայ սկսաւ բռնել. որ ինչպիսի  
 մահ կեցաւ անոր մէջը: Աս պատմութիւնը  
 կրնայի երկնցընել, բայց չուզեցի. ու  
 բովնեալե կուզէի միայն ցըցունել, թէ  
 մեղաւորները իսկապէս պարտաւոր կըս-  
 վին, որ իրենց մեղքերովը զՔ.Ս նորէն  
 խաչ կըհանեն. ինչպէս որ առաքեալը  
 ըսաւ:

Պիւրիւնանոյ. իստիւղեան. 'ի վարս  
 ելլան Ղաթնիկոս. 5. 3. Գիւր. 3. Գլ. 15.  
 Ի. Զ. 11. 1221. ԿՊ 10:

## Գ Լ Գ.

Բարի Մարտնալի մեղքին պըտած  
 շնամեկրուն լի:

\* Շուրջ եղևն զինև չարք, որոց ոչ էր  
 նյ թիւ, հասին ինձ անօրէնու թիւնք իմ Վ.

Սաղմ. ԼԷ. 13:

Լ յ դէմ մեղքով եղած անիրաւու-  
 թիւ մտմտալը՝ քիչմը խելք ունեցող  
 մարդու ամէն մեղքէն ետ կենալու հա-  
 մար պէտք էր հերիք ըլլալ: Բայց ո-  
 րովհետև ոմանց մարդկանց խելքը ասոր  
 չեն հասնիր, ու իրենց վնասը աւելի զի-  
 րենք կը շարժէ քան թէ ուրիշին վնա-  
 սը. անոր համար աղէկ կը սեպեմ հոս  
 համառօտիւ գրել վնասները՝ որ մեղա-  
 ւորները իրենց մեղքերէն կը քաշեն: Սա-  
 կայն ամէն վնասն ալ չեմ ուզեր գրել՝  
 որոնց վր նր վիպները կը խօսին, ինչպէս

Հին սբ Հարց մէջէն սբ Մերրոսիոս  
ասոր վն խօսելով կըսէ . \* Սեղքն նման  
են ծննդոց իժին , որ սպանանէ զմայրն ॥<sup>1</sup>  
Եւ նորերուն մէջէն Եղգովիկոս Վրա-  
նատացին կըսէ . \* Սեղքն է ժանտախտ  
հոգւոյ , ծախիչ բարեայն անի , և ան-  
դունդ չարեաց ॥ : Ես մէկ քանի բաները  
կուզեմ գրել : Ուստի նախ՝ մեղքը ա-  
ռաքինութիւններով ստացած արդիւնք-  
նիս կը կորսնցընէ : Վաւիթ մարգարէն  
մեղքը կարկուտի կը նմանցընէ , որ մէկ  
վայրկենի մէջ այգին ստիկի մը կընէ ,  
որուն վն մշակը աշխատելով պտուղ  
տալու հասուցած էր : Հար իւր իւրէն զայ-  
գին նոյն 1) : Իրաւցընէ ասանկ է . վնզի  
մեղքմը՝ միայն մտքով ալ մէկը բաղձա-  
լու ըլլայ , ու գործքով չընէ , այնչափ  
չար է , ու այնչափ գէշ է , որ ամէն ը-  
րած բարի գործքերը , աղօթքը , ծոմա-

1) Սաղմ. հե. 47.

պահուածիւր, տըւած ողորմութիւնները,  
 առած սրբութիւնները, ու տեսած պա-  
 տարագնները կորսնցընել կուտայ, ու  
 ոչինչ կընէ: Ս'անաւանդ եթէ պաք  
 պահած ըլլար սբ Ռոմիլալդոսին պահա-  
 ծէն աւելի խիստ. եթէ չարչարանք քա-  
 շելու ըլլար սբ Ալեմեսէն աւելի, որ  
 քսանը ութը տարի քաշեց, եթէ ու  
 ղորմութի տալու ըլլար սբ Վրիգորէն ա-  
 ւելի առատ. եթէ Պօղոս առաքեալին  
 պէս անթիւ անհամար մարդիքներ հա-  
 ւատքի դարձընէր, ասոնց ամենէն ալ  
 շահած արդիւնքները կըփճանային, ու  
 հողին որ ասոնցմով մեծցած էր՝ մեղան-  
 շելէն ետքը ասոնցմէ կըզրկուէր, ու  
 աղքատ կըմնար: Մարտարոնի նի զոր  
 տար՝ ի յիշեացին 1): (Թէ որ մեկը աս  
 վիճակիս մէջը գտնուվելու ըլլար՝ ունե-  
 ցած արդեանցը մեծութիւր որչափ էր նէ՝

1) Եզէէ ժր. 24.

այնչափ ետքը պատիժը մեծ կըլլար :  
 Այսչափ գարշելի է մեղքը, ուստի Տեր-  
 տուղիանոս իրաւի մեղքի անուն դրաւ  
 \* Կորուսիչ փրկութեան ॥ :

Ա. ս միայն հերիք չէ : Անշքը ա-  
 պականիչ մրրիկ (խայ) մընէ, որ ծա-  
 ոին հասուն պտուղները չէթէ միայն  
 կըթափէ, հապա ծառն ալ գէշ փշելո-  
 վը կըչորցընէ : Ուստի մեղաւոր հոգւոյն  
 ըրածները՝ մեռած գործք կըսվին . Ա. յ  
 առջևը ամենեկին ընդունելի չեն, ինչպէս  
 Կայենին ըրած զոհը, որուն համար սք  
 գեռքը կըսէ . 'Ի կայնն ե 'է զհս հի ոչ  
 նայեցաւ Տէր 1) : Իայց կրնայ ըսվիլ,  
 որ ան գործքերը քիչմը օգուտ ունին .  
 Ի՞նչ կորսըված շնորքը ձեռք ձգելու ճամ-  
 բայ կըբանան : Ա. ս պատճառաւ ձեռքէն  
 պէտքը չէ թողտալ, թէպէտ ալքայուի  
 երթալու արժանի գործքեր չեն :

1) Տանգ. Գ. 5 .

Ըսկից ՚ի զատ՝ մեղքով մեղաւորին միտքը կը կուրանայ, կամքն ալ կը չարանայ: Առ-բացոյց զնն շարունակն 1): Ընօրէնութիւնը մեղաւորներուն վրէ խաւար մը կը բերէ. իրենց մտքին լոյսը որով ճշմարիտ բարին կը ճանչնան, իրենցմէ կը հեռացընէ: Սասնաւոր սրտին լուսաւորութիւնները անոնցմէ կը պակսեցընէ, որոնք եթէ չունենալու ըլլանք՝ շիտակ արքայութիւնը կը նար երթալ: Ընօրէնութիւններուն ալ լոյսը կը վերցընէ, որոնց լոյսը մարդուս յորդոր մը կուտայ որ ձեռքէն չի ձգէ: Միայն հաւատք մը իրենց թող կուտայ. բայց ան ալ իրենց մեղքը շատ անգամ կաւելցընէ, ու իրենց խիղճմտանքը աւելի զարնել կուտայ, ու կը չարչարէ: Ինչպէս որ Աստիւ կայսրը տասնը հինգ հազար Ռուլ-զարցի գերիներուն ասոր նման բանմը

1) Իմաստ. ք. 21 :

ըրաւ : Աս գերիները որովհետեւ հաւատարմութիւն դէմ ըրած էին՝ ամենուն ալ աչքը հանել տրւաւ , միայն հարիւր հոգւոյ մէկ աչք ունեցողմը թող տրւաւ , ուրիշ ծանր ծանր աշխատանքի մէջ իրենց առաջնորդ ըլլայ :

Մեղքը չար կընէ կամքն ալ , որ գարշելի հեշտութիւն ետեւն սյնպէս կիյնայ , որ թէպէտ շատ անգամ անոր չար ըլլալը կըտեսնայ , ու ետ ալ կենալ կուզէ , 'ի վն սյսր ամի թող չիտար : Մէկ մարդ որ մեղք մը կընէ՝ ալ ամօթը ու վախը մէկդի կըձդէ , որոնք որ կապանք մը ըլլալով բնութիւնը ու շնորքը անոնցմով զմարդը մեղքէ կըպահեն : Ասոնք կորսնցընելէն ետքը մարդս ամէն չարութիւն մէջ դիւրաւ ու համարձակ կիյնայ , ու չիկշտանար , ինչպէս որ մեղքերը՝ սրտին խաղաղութիւն վերցունելէն ետքը՝ կամքն ալ բոլորովին մոլութիւններուն մէջը կըթաթխեն : Վնային նորա ըստ իսր-

հրդոյ սրբից իւրեանց 1) : Իրենց մտա-  
ծուծիը՝ փափաքը՝ ու յօժարուծիը,  
թէ արժնուծն, թէ քնոյ մէջ միշտ  
մեղքերու ետեւն կըլլան, ու ասոնցմէ  
ուրիշ բան իրենց միտքը չիգար :

Ուստի զարմանալու չէ, որ մեղա-  
ւորին մտքին վն գիշեր մը կըհասնի կը-  
մըթնցընէ, կամքը ամէն բարեաց կարգէն  
դուրս կելայ կըհեռանայ, վնզի մեղան-  
չելովը՝ ամէն լուսաւորուծեց ու բարի  
բաղձանաց աղբիւրը՝ որ անային շնորքն  
է՝ կըկորսնցընէ : Եւ վնասը մարդմը չի-  
կրնար հասկընալ, ինչվան որ շնորքին  
գինը աղէկ չիճանչնայ : Սիրաք շնորքի  
վն նմանուծիւն մը բերելով կըսէ .  
(Հորհրն ուղ զգրախոս յօրհնու-լէն 2) :  
Պետրոս առաքեալը կըսէ, թէ անային  
շնորքը անոր համար մեղի կըտրվի . Օ՛հ  
հորիլէք անձիւն բնու-լէն լինելիէք հա-

1) Սաղմ. հք. 7 :

2) Սիրաք. Ն. 17 :

զլրդալիցս 1) : Այլ սբ (Թովմաս կրսէ .  
 \* բարին միոյ շնորհաց առաւել է քան  
 զբարին բովանդակ բնութիւն 2) || : Ուս-  
 տի եթէ Մ.ճ մարդու մը սիրուն համար  
 նոր աշխարք մը ստեղծէր, ոսկիով ա-  
 կունքներով (ճեւայիրներով) բոլոր զար-  
 դարված, ու ասոր տար իշխանութիւն,  
 աս պարզէր որչափ մեծ ըլլար, շնորբին  
 պղտիկ մասէն ալ վար էր : Մ.սկից կըր-  
 նանք իմանալ, թէ մէկ մեղքի համար  
 մարդուս որչափ վնաս կըլլայ : Մ.նզին  
 մարգարիտը ոտքի տակ կըկոխվի, որ Վ.ս  
 աշխարք եկաւ, այնչափ աշխատանք,  
 այնչափ վիշտ, այնչափ ցաւեր քաշեց  
 աս մարգարիտը առնելու համար : Ու-  
 քի տակ կ'առնըվի հարուստ գանձը, որն  
 որ ժառանգելու համար իմաստուն մար-  
 դիքներ, անհամար խոստովանողներ, մար-  
 աիրոսներ իրենց քրտինքը՝ իրենց արու-

1) Ը Պէտ. Թ. 4 :

2) Մասն Ը. Խ. ԾԺԳ. պ. Թ :

նը թափեցին, ու կեանքերնին տրւին :  
 Արեմն ինչ պատճառաւ մեղաւորը աս  
 շնորքը ոտքի տակ կրնայ առնել : Ար-  
 դեօք ծովու մէջ ընկղմողներուն պէս  
 կեանքը անվտանգ պահելու համար, կ'ի  
 թագաւորութի՞ մը ձեռք ձգելու համար :  
 Բայց ասոնց համար շնորքին պղտիկ մասն  
 ալ պէտքը չէր կորսնցընել : Անանկ  
 է նէ՛ ինչ անխելքութի է, որ մեղաւո-  
 րը քիչմը ուրախութեան համար՝ որ  
 վայրկենի մէջ կանցնի կերթայ, քիչմը  
 պատուէջ համար՝ որ ծուխի պէս կըրցըն-  
 դի, քիչմը բերկութե՛ համար՝ որով  
 գազաններու նման կըլլայ, կըզրկէ զին-  
 քը ան բարեքներէն, ու այնպիսի պար-  
 գէէն, որ արքայուն ուրախութե՛ հետ  
 մեկտեղ բերելով, ու մարդու մը առջև  
 ընտրելու համար դնելով՝ եթէ ան մար-  
 դը խելացի ըլլար՝ աւելի արքայութե՛  
 ուրախութի՛ը կուղէր թողտալ, քան թէ  
 սրբարար շնորքէն զըկըվիլ : Անգի ինչ-

պէս որ սբ Բոնավենդուրա կըսէ . \* ( ք-  
նորհքն 'ի մէջ ստեղծեալ պարգևաց ա-  
ռաջին է և նախապատիւ ։

Աճային շնորհքը մեր որդէգրութե  
նշան է ու գրաւ (ուհին), որով Հայր  
Աճ իր որդւոցը պէս զմեզ կըսիրէ, ինչ-  
պէս սբ Յովհաննէս յայտնի կըզուցէ .  
Տե՛ւէ՛ որդի՛ն «էր շնորհեաց Տեզ Հայր .  
դէ որդի՛ն Աճ ի՛նչե՛ց» ( Թ 1 ) : Ասկից  
յայտնի կերևայ, որ շնորքը կորսնցընողը՝  
Աճ որդւոցը մէջէն կելայ : Աշխարհիս  
մէջ որչափ և գէշ դժբաղդութի մը մար-  
դուս գլխուն գալու ըլլայ՝ իրաւի պէտքը  
չէ շատ կսկըծալ : Սրբուհին Մարգա-  
րիտա Վորդոնեան եբօր իր աղնուակա-  
նութե անվայել սխալանք մը ըրաւ  
ու աս պատճառաւ հայրն ալ զինքը իր  
ազգէն, ու իր տանը մէջէն դուրս վրոն-  
տեց նէ՛ անանկ մեծ արամութի սրտին

1) Թ Յ = ՎՏ . Գ . 1 .

մէջը ունեցաւ, որ միայն Վն իրեն երև-  
 նալով իր սիրտը կարող եղաւ մտիթա-  
 րել, ու փրկութե՛ն ճամբու մէջ գնել :  
 Հապա մեղաւորը ինչ զըտար աւելի ցա-  
 պիտոր ունենայ, թէ որ կորսնցուցած  
 վիճակը միտքը գալու ըլլայ նէ : Այսինքն՝  
 թէ Վճ զինքը ալ իրեն որդին չհասկեր,  
 իրեն վն բարի աչքով չինայիր ոչ իբրև  
 բարեկամ, և ոչ իբրև ծառայ. հապա  
 իբրև թշնամի մը իրմէ ետ կրկենայ, ու  
 իբրև անհաւատ երեսը չուղեր նայիլ :  
 Ուստի եթէ Վստուծոյ որդւոց մէջն  
 դուրս կելլայ՝ ինչպէս հօրը ժառանգ  
 ըլլալ կրնայ յուսալ, երոր մեղանչելովը  
 զժառանգութե՛ն իւր անտէս աբար 1) . ք'  
 իր ժառանգութի՛ր ոտքի տակ առաւ :  
 Աւ ահա աս ալ ուրիշ, ու խիստ ծանր  
 վնաս մի է, որ ամէն մեղքէն կըծագի :  
 Թէ աս կորսնցընելը որչափ գէշ բան է՝

1) Սաղմ. հէ. 62 :

մենք չենք կրնար իմանալ . միայն ար-  
 քայութեն մէջ եղողները կ'իմանան , որոնք  
 որ արքայութեն փառքը կը ժառանգեն :  
 Իրաւի ինչպէս կը զարմանան անոնք ,  
 երբ կը տեսնան , որ աշխրբիս վրէ եղող  
 ողորմելի մարդիքները փուճ ու բախութեն  
 համար՝ թող կուտան ան մեծ երջան-  
 կութիւն , ու յաւիտենական ժառանգու-  
 թիւն , քի Մ.Յ երեսը տեսնելը , ու անոր  
 բարիքները վայելելը : Չենք գիտեր ա-  
 մենևին , ու չենք կրնար այս մեծ վնասին  
 խելք հասցընել , բայց եթէ մէկ քանի  
 օրինակներով , որ աշխրբիս մէջը կը դրտ-  
 նըվին : Աստի մեղաւորը կը նմանի թա-  
 գաւորի մը պղտիկ տղուն , որ թագաւո-  
 րութեն ժառանգ ըլլալով՝ անիկայ պղտիկ  
 խնձորի մը հետ կը փոխէր : Ա՛յ կը նմա-  
 նի ան հնդիկ մարդուն , որ անդաման-  
 դը (էլմասը) զառեկի (վառասի) հետ  
 փոխելով՝ կը կարծէր որ ինքը անով շատ  
 կը շահի կոր :

Իայց տես, որ մեղաւորները Մյ  
 որդւոցը կարգէն դուրս ելլելով, ու հայ-  
 բնական ժառանգութի զրկւիլով՝ որք  
 ու խեղճ շնն մնար. հապաստանայի որ-  
 դիք կըլան, ու դժօխքի ժառանգ: Մ-  
 սանք կըսէ Վ.Ս մեղաւորներուն դէմ,  
 'Վ.Ս' ի հօրէ 'ի ստրանայէ եր: Ե զցան-  
 իս-Լին հօրն յերայ իտիք առնել 1): Մ  
 շատ ողորմելի վիճակ է, քի՛ աշնպիտի բըռ-  
 նաւորի ձեռք իյնալ, որ ուրիշ բան չի-  
 նայիր, բայց եթէ իր տակի եղողները  
 ծանր ծանր մեղքերու մէջ խոթէ. ուղի  
 ետքը վարձքին տեղը՝ մեծամեծ տանջանք-  
 ներ իրենց տայ: Իրենց մարմնոյն ուզա-  
 ծը թող կուտայ որ ընեն, յաւիշտակու-  
 թի ընելով զիրենք հարստացընել կու-  
 տայ. ունայն պատիճներով զիրենք կը-  
 հպարտացընէ. ուղի մեռնելէն ետքը ա-  
 ւելի տանջելու զանոնք իշխանութի ու-

1) Յովհ. ը. 14՝

նենայ : Ասանկ կրսէ սբ Արարիանոս .  
 \* Խնդայ առ ՚ի դժնէանալ . շնթէ առ  
 ՚ի տանջել : Ապշխիւ իմն վնասելոյ՝ այն-  
 չափ առաւել տոկոսիս պահանջէ զպատ-  
 ժոյ , որչափ առաւել եղև փափկութեց  
 և փառաց մեծութի 1) : Ասզի դժոխ-  
 քին մէջը իր սիրելի որդւոցը մեծ ժա-  
 ռանգութի պատրաստած է : Սառան-  
 գութի մը զգայութիները տանջելու հա-  
 մար . ժառանգութի մալ հոգւոյ կարո-  
 ղութիները տանջելու համար : Անդա-  
 ռորը ասոնց երկուքն ալ կորսնցընելու ,  
 կամ մէկ կողմանէ պակսեցընելու յոյս  
 կամ վտանգ մը չունի : Արդ՝ մտմտայ  
 թող հիմայ , թէ որչափ շարութի ու  
 անզգամութիւն է , Այ որդի ըլլալէն՝  
 կամօք սատանային որդի ըլլալը , ու ան-  
 գութ բռնաւորին իր հոգին ծախելը ,  
 որն որ Վս իրենն սբ արեամբը գնեց :

1) ՚ի թղթ . առ Դամ :

Այն ( ) գոստինոս կուլայ ասոր վն , ու կը-  
սէ . \* Ա՛վ որպիսի անօրէնութի , և ող-  
բալի է չարութիւն , զի անձն անառակ  
վն միոյ միայն վայրկենական բերկրուն  
սատանայի վաճառէ զհոգին 1) ॥ :

Պատմութիւն :

Ուղղի մեղքէն ծագած երկու վնա-  
սը՝ քն՝ մարդուս Մ.յ որդէգրութեն զըր-  
կըվիլը , ու սատանային գերի ըլլալը  
երկնայ՝ տեղւոյս շատ յարմար կուգայ  
պատմութիւնը՝ որ թուովմաս Աննգիպրա-  
տացի երկեւլի պատմիչը կը պատմէ : Ա-  
րիտասարդ մը գաղղիացի (Պրանսըղ)  
հարուստ մարդու զաւակ՝ քիչմը ժամա-  
նակ պարկեշտ վարուք ապրելէն ետե՛  
մեծ մեղքի մը մեջ ինկաւ : Ա՛ս բանս  
ասոր գլուխը անկից եկաւ , որ հեռու

1) Բան ճճ. յող. ժամ :

չէր կենար չար ընկերներէն, որոնք որ  
 մարդուս սատանայ են, ու չարեաց պատ-  
 ճառ: Այլ որովհետեւ մէկ մեղքը ուրիշ  
 մեղքի ալ ճամբայ կը բանայ, ինչպէս  
 որ նր գիրքը կըսէ. Սեղանորն յա-եւել  
 ՚ի Ռեդանիէլ 1), անոր համար աս տղան  
 մէկ անգամ անուշ թոյնը ուտելէն ետքը՝  
 ալ չափ մը չի դրաւ իրեն, անանկ որ  
 ԱՅ շնորքը ու առջի ունեցած զօրութիւն  
 կորսնցընելով՝ փորձութիւններուն չէր  
 կրնար դէմ կենալ: Աճ իր ողորմութիւն  
 աս տղուն վրայէն պակաս չէր ընէր  
 կոր. ներսէն ազգեցութիւններ, դրսէն  
 յորդորանքներ կընէր, ուղղի առջի ճամ-  
 բան դարձընէ, ուսկից որ դուրս ելած  
 էր: Այց քարին վր ցանված հունտի  
 պէս ասոնք տեղ չըրին: ( )րէ որ գէշի  
 երթալով, մեղք մեղքի վր աւելցընելով  
 անանկ եղաւ, ինչվան թէ շնորքը, թէ

1) Աճք. Գ. 29 :

ունեցած՝ առաքինութիւնները կորսնցուց, ու թէ հաւատքն ալ ուրացաւ, որն որ Ա՛յ ողորմութիւն մեղաւորներուն վր թող կուտայ, ուղղի իրենց ողորմելութիւն ճանչնալով՝ խելքերնին գլուխնին ժողվեն, ու ապաշխարեն :

( ) Ըմբ իրեն պէս ընկերները ժողվելով՝ գնաց գինեատուն մը, ուղղի հոն ուտեն խմեն, ուրախութիւն ընեն : Աբոր գինի խմելով տարցան նէ՝ սկսան խօսիլ մարդուս գլուխը ինչ որ մեռնելէն ետքը կը հանդիպի նէ : Ա՛ս չար տղան, որ անոնց նման եղած էր, որոնք որ կը սեն . ( ) Ինչ առաւելութիւն է մարդոց շուն պանասնոյ, ե ոչինչ 1) . սկսաւ բերնին եկածը անամօթաբար ըսել այսպէս .  
 ,, Ա՛յ մեղի, որչափ քարոզիչներ զմեզ  
 ,, կը խտարեն, ըսելով՝ թէ մարդս եբոր  
 ,, կը մեռնի՝ հոգին անմահ կը մնայ : Ա՛նչ

1) Ժողով. Գ. 19 :

« բանով աս խօսքս մեզի կրնան ցըցու-  
 « նել, որովհետեւ ինչուկ հիմայ մարդ-  
 « մը չեկաւ անկից, որ առ բանը մեզի  
 « հաստատէ: Աս անխելքութիւն է, որ  
 « աշխրբիս զբօսանքները տակն ու վրայ  
 « ընել կուտայ: Անք վայելենք, որչափ  
 « կրնանք նէ»: Աս անզգամական խօս-  
 « քերուն կարելի է որ ընկերները չիհաւ-  
 նեցան, բայց երեսն'ի վեր ծիծաղեցան,  
 ու անոր պէս սկսան խմել գինի, որ ի-  
 բնց չար օրինակ կը լար կոր: Աս ուրա-  
 խութեան մէջն իքէն՝ մէյմալ կընայիս որ  
 երկայն հասակաւ (պօյով) ահարկու դէմ-  
 քով մարդ մը ասոնց քովը եկաւ. բարե-  
 տրւաւ, ու քովերնին նստաւ: Վինի  
 ուղեց, ու ամենուն առողջութենը համար  
 առաւ խմեց: Ատքը հարցընել սկսաւ,  
 թէ ի՞նչ բանի վն կը խօսէիք կոր: Պին  
 տրւաւ աս չար տղան, ու ըսաւ. « Հող-  
 « ւոյն վն կը խօսէինք կոր, որն որ մէկ  
 « քանի լեզուճագարները (լաֆաղանները)

„կուզեն՝ հաւտացընել, թէ անմահ է :  
 „Եւ այնչափ անխելք չեմ, որ անօնց հաւ-  
 „տամ : Եւ թէ մէկը հիմայ հոգիս ստակով  
 „գնելու ըլլար՝ սիրով կը ծախէի, ու  
 „առածս՝ աղէկ գինիի կուտայի, ուղղի ըն-  
 „կերներս ուրախանան“ : Դնկերները  
 սկսան ծիծաղիլ, բայց եկող մարդը  
 ըսաւ. „Եւ թէ ատ խօսքը իսկապէս կը-  
 „ղբուցես կորնէ՝ գիտնաս որ ես կը գնեմ .  
 „ըսէ, ինչ որ կուզես“ : Գնոյն վն շատ  
 կոխ չըրին. տըւաւ մարդը ինչ որ ու-  
 զեց նէ, ու գնեց : Առաւ ստակը տը-  
 դան, ու կէսէն աւելին խմելու տըւաւ .  
 ընկերները սկսան խաղալ խնտալ, ու ա-  
 սոնցմէ աւելի հոգին ծախողը, կարծելով,  
 թէ փուճ բանմը անանկ սուղ ծախեց :

Իրիկունը ըլլալ մօտիկցաւ նէ, ամէնն  
 ալ գինիէն հարբած տկոած երթալու վրայ  
 իբէն՝ գնողը սկսաւ ըսել. „Հիմայ ժա-  
 „մանակն է, որ ամէն մարդ իր տունը  
 „տեղը երթայ. բայց երթալէն առաջ՝

« բան մը կուզեմ ձեզի հարցընել, տես.  
 « նամ ինչ կըսէք, որ ես ալ ըսածնիդ  
 « պէս ընեմ: Աթէ մէկը պախուրցով  
 « (իւլարով) կապված ձի մը գնելու ըւ-  
 « լայ՝ պախուրցն ալ ձի գնողին չըլար  
 « մի»: Ամենն ալ արհեստըն, թէ ըստ  
 արդարութե պէտք է որ ատանկ ըլլայ:  
 Աս հարցումը ու արհեստը հոգին ծա-  
 խողը լսեց նէ՝ սկսաւ տարակուսիլ, երե-  
 սին գոյնը նետել, սիրաբը դողալ ու վախ-  
 նալ, թէպէտ վախուն պատճառը չէր  
 գիտեր: Վայց շուտ ճանչցաւ, երոր հո-  
 գին գնողը՝ որ սատանայ էր՝ իր վզէն  
 բռնելով պոռալով կանչելով վերվեր-  
 ցուց, ու ընկերներուն առջևը մէկ քա-  
 նի ուժով մը զարնելով դժոխքին տա-  
 կը առաւ տարաւ, ուղղի յաւիտենական  
 տանջանքներու մէջ աչքով տեսնայ, թէ  
 հոգին անմահ է, թէ չէ Ահա ա-  
 սոնք են դժբաղդութիները, որ աս տղուն  
 գլուխը եկան: Առաջ մեղքի մէջ ին-

կաւ, ու ամէն բարեգործութիւն ժողոված  
արդիւնքները կորսնցուց: Այ շնորքը  
վրայէն վերցաւ, առանց որոյ չէր կրնար  
փորձութեան դէմ կենալ: Աւստի մեղ-  
քը մեղքի վրէ դնելով՝ հաւատքն ալ ու-  
րացաւ, ու ետքը ոչինչ գնով հողին ալ  
ծախեց որն որ չար սատանան որ գնեց,  
իրաւի ձիու նմանցուց, որ մարմնոյն հետ  
իրրե պախուրցով կապված էր: Անդի  
անզգամ տղան կրսէր, ( ) նշ առաւ-  
լու-ի է հարգոյ շան պնտանոյ, և ոչ  
ինչ: Անոր համար՝ ըրած չարութիւն սուտ  
հանելու համար ուրիշ ճամբայ չիգար,  
բայց եթէ դժօխքի մէջ երթալ չարչար-  
վիլ, ուղղի հոգւոյն յաւիտենական ըլլալը  
ճանչնայ: Ա՛՞՞ տայ՝ որ աս ողորմելի տը-  
ղուն կորսրվելէն ինչպէս որ իր ընկեր-  
ները խելքերնին գլուխնին ժողվեցին,  
ու դարձան, ասանկ ալ դառնան ամէն  
մեղաւորները՝ որ փուճ ու անցաւոր հեշ-  
տութեան համար հողինին սատանային

կըծախենն. ինչպէս ըբ ( ) գոստինոս կըսէ .  
 \* Ա՛յ՛ որք յորժամ մեղանչէ՛ զհոգին սա-  
 տանայի վաճառէ , և առնու զգին զառ-  
 ժամանակեայ փափկութիս ॥ 1 ) :

Թ՛ւովնս Կանդեղրատ . գեղ . Թ . Ս՛եղ-  
 աւայ . իմ էրեւել . օրինակ . գլ . ծն : Պա-  
 ինիկեղն , Լ՛նիւերց . Բարոյ . Լ՛նիւերց . էԹ :

### Գ . 1 . Ե .

Բարի Ս՛րտածութիւն Լ՛ն Ներկայութիւն  
 ձեռայ .

\* Յառաջագոյն տեսանէի զՏի՛ առաջի  
 իմ յամենայն ժամ ॥ .

Սուր . ծն . 8 :

Վաւիթ մարգարէն իր սաղմոսին մէջը  
 ամեն տեղ գրեթէ մեր առջևը կը դնէ , որ

1) ՚ի Թ զԹ . առ Հոսովմ . գլ . Է .

մէջ եղածները կըտեսնայ ։ Արկորդ  
 հարցուցին , ով կրնայ ինքը զինք յաղ-  
 թել , և ինչ բանով կրնայ , որ նեղի  
 մէջ ինկած ատենը բարկութե նշան չի-  
 ցրցունէ , աջողութե ատենը չիհպար-  
 տանայ , սիրտը ասոր անոր հոգով չի-  
 մաշէ , ու իրենն օգտակար չեղած բանե-  
 րը չիմտմտայ : Ա՛յլ ըսած ըրած ատենը  
 անանկ զգոյշ կըկենայ , որ անոնց մէջը  
 պղտիկ մեղք մալ չընէ : Ա՛յլ կրնայ  
 այնպիսի ճամբայ բռնել , որ առաքինու-  
 թի ընելը ձեռքէ ամենեին թող չիտայ :  
 Ասոնց ալ ամենուն ծր Բարսեղ աս մէկ  
 պիտը տըլաւ . \* Ասոնց ամէնը անիկայ  
 դիւրաւ կընէ , ով որ կըմտմտայ , թէ  
 Ա՛ճ միշտ իր քովն է ։ Ասոր համար ծր  
 դրոց երևելի մեկնիչ մը կըսէ թէ Ա՛յ  
 ներկայութիւնը Բանայէ՞ս ըսված խոտն  
 է , որ ամէն հիւանդութիւն կառողջացը-  
 նէ . կամ անանկ դեղ մընէ , որ ամէն  
 մեռած հոգիները կըկենդանայրնէ :

մէջ եղածները կը տեսնայ ։ Արկրորդ  
 հարցուցին , ո՞վ կրնայ ինքը զինք յաղ-  
 թել , և ի՞նչ բանով կրնայ , որ նեղի  
 մէջ ինկած ատենը բարկութե՛ն նշան չի-  
 ցըցունէ , աջողութե՛ն ատենը չիհպար-  
 տանայ , սիրտը ասոր անոր հոգով չի-  
 մաշէ , ու իրեն օգտակար չեղած բանե-  
 րը չիմտմտայ : Ա՞յլ ըսած ըրած ատենը  
 անանկ զգոյշ կը կենայ , որ անոնց մէջը  
 պղտիկ մեղք մալ չընէ : Ա՞յլ կրնայ  
 այնպիսի ճամբայ բռնել , որ առաքինու-  
 թի՛ ընելը ձեռքէ ամենեւին թող չիտայ :  
 Ասոնց ալ ամէնուն սբ Նարսեղ սս մէկ  
 պիտը տըւաւ . \* Ասոնց ամէնը անիկայ  
 դիւրաւ կընէ , ո՞վ որ կըմտմտայ , թէ  
 Ա՛ճ միշտ իր քօմն է ։ Ասոր համար սբ  
 դրոց երևելի մեկնիչ մը կըսէ թէ Ա՛յ  
 ներկայութի՛ր Մանուշէ՛ս ըսված խոտն  
 է , որ ամէն հիւանդութի՛ր կառողջացը-  
 նէ , կամ անանկ դեղ մընէ , որ ամէն  
 մեռած հոգիները կը կենդանացընէ :

Աւ իրաւի, թէ որ ճշմարիտը կու-  
 զենք ըսել նէ, Այ ներկայութիւն մի-  
 շելը զմեզ ամէն մեղքէն ետ կըքաշէ :  
 Ասանկ կըսէ Սենեքայ, որ բարուց վիպ  
 կըկոչվի. \* Պակասին մեղաւորաց բաղ-  
 մութիւնք, եթէ մեղաւորն առ իւր հա-  
 մարիցի զտեսանողն || 1) : Ատքը իր Աւ-  
 կիլիոս բարեկամը կըսկըսի յորդորել, որ  
 ըսելու խրատը մտքին մէջ աղէկ պահէ,  
 ու չիմոռնայ. \* (Նտրեսցուք (կըսէ) մեղ  
 զայր ոք բարեկիր, զոր ցանգ առաջի ա-  
 շաց մերոց կալցուք զնա, որով իբրև  
 յանդիման նր անցուցուք զաւուրս մեր,  
 և արասցուք զամ իբրև ՚ի տես նր : (Նտ-  
 բեսցէ զոք հոգին, յորմէ պատկառ կաց-  
 ցէ, որոյ հրամանաւ սրբեսցէ և զգաղտ-  
 նիս իւր : Արանի այնմ, որ ոչ զտե-  
 սանելիս միայն, այլև զխորհուրդս ուղ-  
 զէ : Արանի որ զայսօրինակ երկնչի յու-

1) Թղթ. Ժն. առ Լուկ.

մէքէ, մինչև 'ի յիշատակել անգամ  
 զնա՝ զանձն ամփոփեալ կալցէ յուղղուն :  
 Որ ըստ սյդմ օրինակի պատկառ կայ՝  
 վաղվաղակի լիցի պատկառելի ॥ : Աթէ  
 մարդուս ներկայութիւն այսչափ կընէ,  
 հասպա Այ որչափ աւելի, որ ամէն ը-  
 բաժ գործքերնիս իր առջևը կըլլայ, իր  
 սուր աչքովը սրտերնուս մէջ ունեցած  
 գաղտնիքը կըտեսնայ, ու մեր մեղացը  
 վկայ՝ դատաւոր՝ և վրէժխնդիր է : Ասոր  
 համար նք Ամբրոսիոս զարմանալով կը-  
 սէ, \* ՚Ա մարդկային աչաց խուսափեմք,  
 և զխորդ յաչս Այ զանարժանս գոր-  
 ծեմք : Անիրաւութի է մարդոյ հայել 'ի  
 մեղս, և զխորդ զՎճճ դատաւոր գիտելով  
 յանդիմաննն՝ մեղանչեմք ॥ 1) : Այլ չը-  
 սէր, թէ մենք անարգ արարած մը աւել-  
 լի կըմեծցընենք, քանթէ ամենակալ ա-  
 ըրարիչը : Իայց ասոր համար մենք կը-

1) Զատ. յղ. Դաւթի. ԴԼ. 3.

սխալինք, որովհետեւ արարածը աչքով  
 կրտեսնանք, իսկ զՄ.Ճ շենք տեսներ,  
 մանաւանդ մտքերնէս ալ շատ անգամ  
 կելլայ, ու շենք ալ մտածեր, որ Մ.Ճ  
 անչափ ըլլալովը ամէն տեղ է, ու զմեզ  
 կրտեսնայ: Արնմանինք ան դողին, որ  
 առջի Սաքսիմիանոս թագաւորին գան-  
 ձը իրեն առջին համարձակեցաւ գող-  
 նալ, երոր թագաւորը երեսը դէպ 'ի  
 գանձատուն դարձուցած էր, չիգիտնա-  
 լով, որ թագաւորը առջևը կախված  
 հայլիյին մէջէն իր ամէն ըրածը կրտես-  
 նէր: Արաւցընէ կրսեմ, որ սատանան  
 մեզի փորձութի բերած ատենը՝ պէտք  
 է որ հաւատոյ ներգործութի ընելով  
 յիշենք, թէ Մ.Ճ անթարթ աչքով մեզի  
 դարձած կրնայի կոր: \* Յիշեա՛ զՄ.Ճ,  
 (կրսէ սբ Ագնատիոս անձազգեացը), և  
 ոչ մեղիցես: Իսկ ներկայութի Մ.Յ եր-  
 կաբումը զմեզ 'ի մեղաց յետս նահան-

ջէ, թէ վնդի տեսանեմք զնա, և թէ զի նա 'ի մեզ հայի || 1) :

Զեթանոսներն ալ միայն բնական լուսով ճանչցան, թէ որչափ անվայել բան է իրենց աստուածներուն առջևը մեղք բնելը : Անոր համար ծածուկ տեղվանք կրփնտրուէին, ու մութի մէջ կը գոցվէին : Այլ Աիւրեղ նէմացին ոմանց կռապաշտներուն անխելք գործքերը կը պատմէ, որոնց ոմանք արևը, ոմանք լուսինը կը պաշտէին : Արև պաշտողները՝ ունգի արևին առջևը մեղաւոր չերևնան, ցորեկը առաքինութի, գիշերը մեղք կրնէին, կարծելով՝ թէ իրենց աստուածը անիկայ չիտեսնար, ու իրենք ալ պատիժ չեն առներ : Իսկ լուսին պաշտողները՝ ցորեկը չըրած մեղքերնին չէր մնար, ու գիշերը իրենք զիրենք բոլոր կը ժողվէին, ունգի իրենց աստուածը չըլլայ որ բարկացընեն : Ահա նր Աիւրղին խօս.

1) Թուղթ Թ. առ. հերոն :

քերը . \* Խոտորեալ ոմանց 'ի միոյ Այ  
կէսք զարև պաշտէին , զի 'ի մտանել  
նր 'ի գիշերի մնասցեն առանց Այ . և  
կէսք զլուսին , զի մի տեսցեն 'ի տուէ :  
Յայդմ ամբարշտութեւ այսու էին բա-  
րեպարիշտք , զի յաչաց աստուածոց իւ-  
րեանց պատկառ կային || 1) : Աղէկ միտք  
դնենք աս ըսած խօսքին . \* Յայդմ ամ-  
բարշտութեւ այսու էին բարեպարիշտք ,  
զի յաչաց աստուածոց իւրեանց պատ-  
կառ կային || . Կ' Այդ անօրէնութեւ մէ-  
ջը՝ բարեպաշտ կըսվին ասով , որ իրենց  
աստուածներուն առջին վախ մը ունէին :  
Ա՛հ , որչափ քրիստոնեաներ իրենց նր  
հաւատքին մէջ անհաւատի պէս կապրին .  
հոգերնին չըլար որ Ա՛ծ իրենց առջևնին  
է , ու բանի տեղ չեն դներ նր գրքին  
ըսած խօսքը , որ հաւատով կըհաւա-  
տան . Կ' Յմ Գեղէն աշ Տ՛ն ԴԷԷԷ

1) Հրահանգ . Դ :

Գլխաւի և Գլխաւ 1) : Աս պատճառաւ  
 կոապաշտներէն աւելի չար են ու ան-  
 զգամ ան քրիստոնեաները, որ կը հաւա-  
 տան թէ Ա՛ճ իրենց քովերնին է, և  
 բանի տեղ չեն դներ : Ընթանոսները  
 գողի կը նմանին, որ օտարի բանը ծածուկ  
 կը գողնայ. բայց ասոնք աւազակներու  
 նման են, որ Ա՛յ ներկայութե պատիւը  
 կը յատկատակեն, որով Ա՛յ փառքը աւելի  
 կանարգեն : Թէ որ ասիկայ մտմտալու  
 ըլլայինք՝ ամէն մեղքէ ետ կը կենայինք, ու  
 միշտ արդարութի ու առաքինութի ընելու  
 ետեէն կը ըլլայինք : Անդի ինչպէս աղէկ  
 կըսէ Ռոյեսիոս, որ վիճակ էր և մարտի-  
 րոս եղաւ. \* Մեծի առաքինութե զհարկ  
 յանձինս ստանամք, յորժամ գործեմք  
 զիմ ինչ առաջի նր որ զիմ ինչ տե-  
 սանէ ॥ 2) : Ասանկ մտմտալով՝ սիրտը  
 մաքուր պահեց Շուշան իր տկար զօ-

1) Առակ. Դե. 3 :

2) Գլխաւ Է. Մտեթ. Վեւ.

բութիւնը չար ծերերուն ձեռքէն, որոնք  
մեղքով աւելի, քան թէ հասակաւ ծե-  
րացած ըլլալով զինքը մեղք ընելու  
յորդորեցին ըսելով: Չէ՞ որ որ Կիւս-  
նէ գլխ: Իսկ Շուշան մտմտալով, թէ  
Աճ իրեն կընայի կոր, ու իր քովն է,  
աւելի ուզեց մեռնիլ, ուղղի Այ պատ-  
ուիրանը պահէ, ու անոր ներկայութիւնը  
պատուէ: Իսկ է ինչ չգործել զայր՝ Կ-  
անիւնէն ՚ի յետոյ յեր, քան թէ ինչոյ  
տեսնէ Տ՛ 1):

Ասկից ՚ի զատ՝ Այ ներկայութիւնը  
յիշելը առաքինի բարեգործութի ընելու  
յորդոր կըլլայ: Արտեանանք, որ զին-  
ուէրները իրենց թագաւորին առջևը ինչ-  
պէս կարիճ կըլլան իրենց քաջութիւնը  
ցըցունելու համար: Ինչպէս մշակները  
աղէկ կաշխատին տէրերնին իրենց քովը  
եղած ատենը: Յովսեօս կըպատմէ,

1) Դան. Ժ. 23:

Թէ եղէմ քաղաքը շորս կողմէն պաշա-  
 րած ատենը՝ հասկնայեցի զինուորները  
 Տիտոս կայսրը քովերնին տեսած ատեն-  
 նին՝ շորած քաջութիւննին, ու աշխա-  
 տանքնին չէր մնար կոր. որովհետեւ  
 կայսրը քովերնին կուգար կըկենար,  
 ուղղի քաջութեամբ պատերազմ ընողին՝  
 պարգև տայ: Ասանկով շատերը մեծ  
 մեծ քաջութիւն ընելու ձեռք զարկին: Ա-  
 նանկ է նէ՝ մենք որչափ աւելի սիրտ  
 պիտոր առնենք ԱՅ առջևը, որ առատ  
 պարգևատու է. ու իրեն ծառայութեւ  
 մէջ եղած ամէն բարի գործքը, ամէն  
 մտմտալը, ու ամէն անգամ շարժիլը ա-  
 ռանց վարձքի թող չհտար: Այլ հոյ-  
 հան ոսկերերան Մովսէս մարգարէին  
 ըրած սքանչելի գործքերը մտմտալով  
 կըսէ, թէ ասոնք բոլոր ԱՅ ներկայու-  
 թիւն յիշելէն առաջ կուգար, որն որ  
 սրտին մէջը միշտ ունէր. Օ՛հ գանձեր-  
 ոյնն իբրև պիտեալ համբերութեամբ համա-

րէցաւ 1) : Ասկից կը հետեցընէ . որ չէ  
 թէ միայն Սուլսէս, հապա ուրիշ նահա-  
 ւագետներուն ալ առաքինի ըլլալը՝ որով  
 ամբարիշտները վերցուցին, ու արդար-  
 ներուն օրինակ եղան, առ բանէս առաջ  
 կուգար : \* Այլք նահապետք խրախու-  
 սեալք զանձինս առ 'ի գործել վն Տն  
 զմեծամեծս, և 'ի համբերել՝ յանդիման  
 աչաց իւրեանց զնէին զԱճ իբրև զե-  
 րևելի || 2) : Ուստի սբ գրքին մէջը կը-  
 կարդանք, որ քաջ Մակարայեցիները  
 իրենց թշնամիներուն չէթէ պարզ զէն-  
 քով կը յաղթէին, հապա ջերմեռանդու-  
 թի ալ զԱճ յիշելով, որն որ ամէն տեղ  
 աչքերնին առջևը կը տեսնային, կուրա-  
 խանային ու կը պարծէին, որ այնպիսի  
 Այ առջին կընեղվին ու կը պատերազմին :  
 Օյեան 'ե գործ արարեալ, և զսիրտ  
 աղօլիւս առ Աճ յերկինս, հաստնէին հար-

1) Եբբ. Ժն. 27 :

2) 'Ի ճառն թղթ. Եբբ. :

խնէին... ոչնչ պատու յերկն Բեւոյ  
 և 'է հինգ հազարէ. Տե՛ժապէս պատարճա-  
 ցեալս յերեւել օգնականութի՛ն Տե՛ժո-  
 ւելցն  
 Լ՛յ 1) :

Լ՛յս ամ պատճառներուն համար  
 սբ և իմաստուն վիճակները, որ զմարդիք-  
 ները առաքինի ընելու կը ջանան՝ յաճախ  
 կը յորդորեն զմեզ, որ մտմտանք թէ  
 Լ՛ծ միշտ քովերնիս է. և կը բերեն  
 Պաւլոս մարգարէին խօսքը, որ կըսէ.  
 Խնդրեցէ՛ք զՏԵ՛ և հզօրք եղելուս, Եւրո-  
 բեցէ՛ք զԵրեսն նի՛ յամ Ժամ 2) : Լ՛ս խօսքը  
 սբ () գոստինոս մեկնելով կըսէ. \* Օ՛րնչ  
 են երեսք Տ՛ն, բայց ներկայութի՛ նր ॥ :  
 Արիտասարդին մէկը քրիստոնէական կա-  
 տարելութիւնները բաղձալով ստանալ՝ զը-  
 նաց սբ Լ՛նտոն ճգնաւորին խորհուրդ  
 հարցընել, կարծելով թէ նոր բան մը  
 կի՛ մասնաւոր իրատ պիտոր անէ. բայց

1) Բ Մակ. ԺԵ. 27.

2) Սաղմ. ԾԳ. 3 :

ուրիշ նշան չառաւ, եթէ ոչ ասիկայ.  
 \* Ուր որ երթալու ըլլաս՝ զՎ.Ճ՝ աչքիդ  
 առջևը բռնէ ॥ : Եւ դովիկոս Ֆրանսայու  
 նր թագաւորը՝ կըսէ Սուրիոս, Տովբի-  
 թայ պէս բարի խրատներ կուտար իր  
 զաւակներուն : Եւ Տովբիթը խրատ մը  
 ունէր, որ ամէն խօսքին մէջը իր որդւոյն  
 կուտար. (Յիշէ՛՛մ Կո՛ւ զՏԷ՛՛ Ե՛՛՛՛՛ յո՛ւ շո՛ւ  
 առա՛ւրս Է՛՛նայ յոյ. և Տ՛՛ Ե՛՛ղանչեցէ՛՛ս 1) :  
 Եւ յսպիտի խրատներ աս նր թագաւորը  
 իր զաւակներուն կուտար. քի՛ թէ Վ.Ճ՝  
 իրենց աչքին առջևէն չի՛հեռացընեն,  
 որով կրնաք՝ կըսէր, ամէն մեղքէն ետ  
 կենալ : Սրբուհի Թերեզիայն՝ որ մեծ  
 սրբասէր կոյս էր, իրեն կարգէ եղած  
 կուտանքներուն առաջին խրատը աս կու-  
 տար, որ ամէն դործքերնուն մէջը մըտ-  
 քերնին դնեն, թէ Վ.Ճ՝ կրնայի կըտեսնայ  
 կոր, որ ամէն բանը տեղն՝ ի տեղը ու

1) Տովբ. Կ. 6 :

աղէկ ընելու մէկիկ դեղմը կըսեալեր :  
 Բայց ինչ պէտք է խօսքերնիս երկնցը-  
 նել . որովհետեւ Աճ ալ պատուիրեց  
 Աբրահամին . որ իր ներկայութիւն մտքէն  
 չիհանէ , որն որ ամենէն աւելի աղէկ  
 կատարելութի ստանալու ճամբայ կը-  
 բանար : Բայտ այնմ . Հաճոյ լէր տա-  
 լէ իմ , եւ լէր անորոք 1) :

#### Պատմութիւն :

Անգամ մը Վ.Ս սրբուհւոյն Լուդ-  
 գարդեայ երեցաւ անանկ լուսաւոր ճա-  
 ուագայթներով , որ կրնանք ըսել , թէ  
 Սիրաքայ Այ վը ըսած խօսքը մէկ մեծ  
 բան մը չէ . Այ՛ր Տ՞ն լուսաւոր էն տա-  
 տէլ ժամ զարեգակն , եւ արեւմտեան զմի ճա-  
 նապարհս ճարդիւն 2) : Այ՛ս ճառագայթ-  
 ներէն աս կոչսը լոյս մը առաւ , որով

1) Տ՞նդ . ԺԷ . 1 :

2) Սիր . ԵԳ . 28 :

շատ անգամ ուրիշներուն ծածուկը կի-  
 մանար, ու անոնց դարձին համար Այ  
 աղօթք կընէր, մինչև որ կըդառնային:  
 Հոս տեղս կուզեմ մէկ դիպունած մը  
 պատմել, որ ըսածներնուս շատ յարմար  
 է: Արիտասարդին մէկը ծածուկ ու մութ  
 տեղմը գէշ մեղք մը ըրած էր. աս մեղ-  
 քը անանկ գաղտուկ կըպահէր, որ ե-  
 թէ նեղի մը գալու ըլլար՝ աւելի խիստ  
 պատիժներ կուզէր քաշել, քան թէ  
 աս գէշ մեղքը զրուցել: Մանաւանդ՝  
 խոստովանահօրն ալ չէր ուզէր յայտ-  
 նել, թէպէտ խիղճմտանքը կըզարնէր,  
 ու հանգիստ թող չէր տար զինքը: ( )ը  
 մը ելաւ սըտըտելու քիչմը գնաց՝ սրտին  
 տրտմութիւնը փարատելու համար, տե-  
 սաւ օտարական մարդ մը, որ պարկեշտ  
 հագված կապված էր: ( )տարականը  
 տեսնելով աս երիտասարդին երեսին  
 գոյնը՝ ճանչցաւ անոր տրտմութիւնը, ու  
 սրտմաշուկ մտմտութքը, ուստի ցաւելով

մը իրեն հարցուց. թէ ուսկից է ատ  
 տրամուծիդ : Ասաց մէկ շփոթ պինն մը  
 առաւ, որ ամենեին բան չհասկըցաւ :  
 Այսու ամիւ օտարական մարդը համար-  
 ձակեցաւ, ու սկսաւ ըսել, որ ճամբէն  
 կուգամ կոր՝ վրաս գլուխս փոշուով (թօ-  
 զով) լեցուն է, կաղաչեմ, առ ջուր սա  
 մօտիկ գետէն, ու գլուխս քիչմը լըւա՛,  
 ուղղի Ա՛ճ աս աղէկութիւնը ընելուդ հա-  
 մար տրամուծիդ քեզմէ վերցընէ, քե-  
 ղի առատ մտիթարութիւն տայ, և մե-  
 ղացդ ալ թէ որ ունիս նէ՛ թողութի  
 տայ : Արիտասարդին սիրտը աս բանե-  
 րէն շարժելով ուզեց ընել ըսածը. ե-  
 րոր մազերը սկսաւ վեր վերցընել՝ գըլ-  
 խուն օրթան աչք մը տեսաւ, որ արևի  
 պէս ճառագայթներ արձրկած էր : Աս-  
 սանելով երիտասարդը աս բանէն կան-  
 չել սկսաւ. Աս ի՛նչ հրաշք կըտես-  
 նամ կոր ես, որ մինչև հիմայ տես-

նըւած չէ. ինչպէս կրնայ ըլլալ որ մարդ մը գլխուն օրթան աչք ունենայ:

Անանկ է՝ ըսաւ օտարական մարդը որ Վ.ն էր, սա ան չիտեսնըւած աչքն է, որ զքեզ տեսաւ ատ գէշ մեղքը ըրած ատենդ: Ինչ օգուտ ունի մարդուս աչքէն գաղտուկ պահելդ, եթէ Այ աչքը տեսած է նէ: Աս ըսելէն վերջը տեսիլքը աներևոյթ եղաւ. սակից երիտասարդը անանկ զղջման եկաւ ու անանկ առաջագրութիւն ըրաւ ամէն ամօթը մէկդի ձգելու, որ անմիջապէս գնաց խոստովանանք եղաւ ան մեղքը: Անկից ետքը տեսած տեսիլքը մտքէն չէր հաներ, ու յաճախ կը յիշատակէր Վ.նին իրեն ըսած խօսքը, թէ Այ աչքը միշտ ներկայ է, ու ամէն ծածուկ մեղքերը կը տեսնայ: Արանի թէ մեղաւորները յաճախ մտքերնին բերէին Սողոմոն իմաստունին խօսքը. Յմ գեղէն աչք Տն գեղէն գէտրէն ե զարս:

ույ՛ զի ամով մեղաւորաց պատիժ, ու  
 առաքինեաց վարձք պատրաստէ, ուստի  
 նր ( ) գոստինոս շատ աղէկ ըսաւ . \* Ը՛ծ  
 գլխովին աչք է, զի տեսանէ զամ .  
 գլխովին ձեռք է, զի գործէ զամ . գլխ-  
 խովին ոտն է, զի է յամ տեղիս ॥ 1) :

Լուսինի . Սուրբին 'ի շարս Կէյն  
 Լուսինի . Յոսի . 16 :

Գ. Լ. Օ.

Բարի Սրբաձուլն Ը՛յ Բարեբարո-լեցը  
 ձեայ :

\* Խոստովան եղիցի քեզ , յորժամ բա-  
 ըի արասցես դու նմա ॥ .

Սուրբ . Ի՛ն . 19 :

Քիտն իմաստուն երբայեցին իր մեծե-  
 ըն լսած մէկ գեղեցիկ աւանդուի մը

1) Թուղթ ՃԺա :

կըպատմէ, թէ Մ<sup>Ծ</sup> ցըցունելով մարգարէի մը աշխարքս ամէն կատարելութիւններով մէկտեղ՝ հարցուցերէ իրեն, թէ ինչ պակսուի ունի այսպիսի մեծ գործքը, կամ չէնքը: Մարգարէն ալ պինտ տըւերէ. ուրիշ բան պակաս չիկայ ըսերէ, բայց եթէ մէկ ձայնմը, որ աշխրբիս չորս կողմը ձգված՝ գիշեր ցորեկ շինողին փառքը գովէր, ու այսպիսի բարերարութիւն վն շնորհակալ ըլլար 1): Մ<sup>Ե</sup> պատմութիւն ուղեւով Փիլոն՝ որ մեկք Մ<sup>Ե</sup> գէմերախտագէտ ըլլանք, ասանկ կըսէ. \* Մ<sup>Ժ</sup> առաքինութիւն սր է, այլ երախտագիտութիւն ամենասր ॥: Մ<sup>Ն</sup>անկ էնէ նայինք, որ ինչըտար մարդուս կըվայէ Մ<sup>Ե</sup> բարերարութիւն մտքէն չիհանելը, ուղղի ըրած բարեացը գոնէ քիչմը հատուցում ըլլայ: Թէ որ աս ըսածը ձանձանք, ու շնորհակալ ըլլանք նէ՝ սր վաշխառութիւն

1) Յաղ. անկա. նոյն:

մը կրնանք ընել, որ Ա՛յ բարերար ձեռ-  
քը կըշարժէ, մանաւանդ թէ կրնամ  
ըսել, որ զԱ՛ծ կըբռնադատէ ըրած բա-  
րերարութե՛ն կրկնապատիկը ընելու: Ա-  
սոր համար սբ Ալեքննտիոս Յուստինի-  
անոս կըսէ. \* Աթէ շնորհակալու տեսա-  
նէ զքեզ Ա՛ծ 'ի վերայ պարգևաց իւ-  
րոց՝ զառաւելագոյնսն արդարեւ ըղերձէ  
քեզ || 1): Իսկ եթէ չէ՛ կըտեսնայ որ դուն  
իրեն երախտիքը կըմոռնաս կոր, ան ալ  
իր ձեռքը քեզի պարգև տալէն կըքաշէ,  
մանաւանդ թէ մասնաւոր շնորհքներուն  
աղբիւրը՝ որ քեզի տալու կըպատրաս-  
տըվեր կոր, բոլորովին կըգոցէ: Ա՛նչի  
ինչպէս սբ Բեռնարդոս կըսէ. \* Այե-  
րախտութի՛ն հողմ՝ է, որ ցամաքեցու-  
ցանէ զաղբիւրն ողորմութե՛ն և զհոսանս  
շնորհաց || 2):

Արդ՝ թէպէտ աս նիւթիս վր՛ ու-

1) Ի գիրս հնազ. ԳԼ. Է:

2) Բան. ծա. Երգոց:

ըիշ տեղ մը քիչմը խօսեցանք : Բայց  
 իւր քաղցրութիւն համար կուզեմ քիչ-  
 մընալ հոստեղս խօսիլ, և կը յուսամ  
 որ կարդացողները չեն ձանձրանար : Այն  
 ( ) գոստինոս և սուրբ Ամբրոսիոս իրիք  
 տեսակ կը բաժնեն բարերարութիւնները՝ ու  
 ընդ պէտք է որ չհմոռնանք : \* Չէ պարտ  
 երբէք զանձային բարերարութիւն մոռանալ  
 եթէ զանցեալս, եթէ զներկայս, և եթէ  
 զհանդերձեալս, այլ անջինջ տպաւորութիւն  
 պահել զնս ॥ 1) : Անցեալ բարերարու-  
 ին յիշելը այնչափ պիտի ըլլայ, ինչպէս  
 կընէր Արիոնսոս Արագոնացոց թագա-  
 ւորը, որ Այ միշտ շնորհակալ կըլլար,  
 զինքը մարդ, քրիստոնեայ, ու քրիս-  
 տոնէից թագաւոր ընելուն համար :  
 Գուն ինչու համար ասանկ շնորհակալ  
 չես ըլլար : Ստեղծեց զքեզ, ու քու  
 չափիդ համաձայն քեզի պարզ և տրւաւ :

1) Գիւրջ յաղ. Ասց. ԳԼ. Ը՞

ուրիշ անթիւները իրենց ոչնչութիւն մէջ  
 ջը թողուց, որոնց մէջէն գիտէր որ ի-  
 րեն աղէկ ծառայութիւններ կը զգա-  
 նը վէին: Վեզի մարմին տըւաւ առողջ,  
 որ հինգ հատ զարմանալի զգայութիւններ  
 ունի: Վանի մարդիքներ ասոնց ամէնն  
 ալ չունին. քանիները հիւանդութիւն  
 գլուխ չեն կրնար վերցընել: Վեզի հո-  
 գի տըւաւ, որ իրեք կարողութիւն ունի,  
 ու ամենամբ Արրորդութեան պատկեր  
 է: Վանի մարդիքներ կան, որ ասոնք  
 ալ չունին, որոնք որ ճշմարիտը ճանչ-  
 նալ, ու բարին կամել չեն կրնար: Վայց  
 աս բնական պարգևները ինչ պիտոր ըլ-  
 լան գերբնական պարգևներուն քովը:  
 Այսինքն թէ՛ սբ եկեղեցւոյ մէջը ծնած  
 ես, սբ մկրտութիւն Այ որդեգիր եղած  
 ես, անձային շնորհաց դանձը ու գերբ-  
 նական առաքինութիւններուն ունակութիւնը  
 առած ես: Ինչ պիտի ընէիր, եթէ ա-  
 րևելք կուսակաշաներուն մէջը ծնած ըլլայ-

իր. կամ հիւսիսային կողմը հերետիկոս  
 հօր ու մօր զուակ ըլլայիր. հոս քիչմը  
 ժամանակ ապրելէդ ետքը յաւիտեանս  
 յաւիտենից դատապարտէիր պիտօր: Ա՛ր  
 թողունք, որ Ա՛ճ հազար մէկ վտանգնեւ  
 բէն ազատեց զքեզ, որոնց մէջը կորսը  
 վէիր պիտօր: Օ՛անք ծանր փորձութիւ  
 ներէն պահեց զքեզ, որոնք մեծ մեծ  
 մեղքերու մէջ զքեզ պիտօր ձգէին:  
 Այամ երոր դուն քու տկարուէդ ու  
 մարդկային չարութէն՝ գէշ փորձութիւ  
 ներու հաւնեցար նէ՛ Ա՛ճ երկայնամիտ  
 եղաւ թող տըւաւ, ուղղի քեզի զղջում  
 տայ: Ա՛նուշ խրատներով յորդորեց  
 զքեզ որ դառնաս, դարձած ատենդ ալ  
 անանկ սիրով ու անուշութիւ զքեզ ըն  
 դունած է, որ կարծես թէ ամենեին  
 յանցանք չես ըրած: Ա՛յ աս բարերա  
 րութիւր՝ ամէնէն աւելի մեծ է՝ կրօէ նք  
 թ՛ողմաս. և Սանկտիա Արիղեան որ  
 իմաստունն նք ու աղնուական կնիկ էր,

Այ երկայնմտուիր հրաշքը ըսեպէր, անոր  
 համար միշտ կըսէր, թէ որ Այ մէկ կա-  
 տարելուէն ժամ շինելու ըլլայի՝ կուզէի  
 անոր երկայնմտուիր համար շինել: Իսկ  
 եթէ Այ հասարակ ամէն քրիստոնէից տը-  
 ւած շնորհքներէն՝ ի դատ՝ քեզի մասնա-  
 ւոր շնորհք տըւած է նէ՛ ինչդըտար իրեն  
 ծառայելու ու շնորհակալ ըլլալու պար-  
 տական ես: Այ թէ քահանայական կար-  
 դի՛ կամ կրօնաւորուէ մէջ զքեզ խո-  
 թած ըլլայ՝ քու պատիւդ թագաւորնե-  
 րուն սրտուէն մեծ չըլլա՛ր մի: Մեծ կըլ-  
 ւայ կըսէ նր հօլհան ոսկերերան, \*Պա-  
 տիւն քահանայական առաւել, է քան  
 զարքունականն: Իայց դնենք թէ այն-  
 պիսի կարգի մէջ զքեզ խոթած չըլլայ,  
 քեզի այնպիսի մասնաւոր շնորհքներ տը-  
 ւած է, որ կրնամ ըսել թէ համբան-  
 քի շիգար, այնչափ շատ է, ասիկայ դուն  
 ալ կրնաս շուտով իմանալ, թէ որ ան-  
 ցուցած կեանքդ լաւ մը մտածելու ըլլաս:

“Աերկայ բարերարութիւն ան է, որ  
 Մ.Ճ քու կեանքդ մինչև հիմայ կը պահէ  
 կոր. այս պահելը միշտ նորէն ստեղծա-  
 նել է, կըսեն փիլիսոփաները: Մ.Ճ կը-  
 նայի միշտ, որ քու մարմինդ զգայու-  
 թիներդ առողջ մնան. հոգւոյդ ալ կա-  
 բողութիւնները իրենց գործքը ընեն:  
 Մ.յսպիսի ու ասոնց նման բարերարուի-  
 ները Մ.յ ձեռքէն աւելի առատութիւն կը  
 լան, քան թէ կենսական ոգիքները սր-  
 տէն: Իայց ըսէ ինձի, քանի անգամ  
 արդեօք միտքդ կուգայ այսչափ ծառայ-  
 ութն համար Մ.յ շնորհակալ ըլլալ:  
 Այն Ազիտիոս որ իր պարզմտութիւնը ի-  
 մաստուն էր, անգամ մը հարուստ ու  
 առողջ մարդու մը հետ գացած ատե-  
 նը՝ դիմացը կոյր ու կաղ մուրացիկ  
 մը ելաւ. սրն Ազիտիոս հարցուց ասոր.  
 „ Թէ որ մէկը աչքդ բանար, ոտքդ շտ-  
 „ կելու ըլլար, ու քեզի բաւական ապ-  
 տրուստ տար՝ ինչ կուտայիր անոր տե-

„ղը“ : Անբացիկը նկնն տըւաւ . զիս  
 անոր մշտնջեննաւոր ծառայ կընէի : Ղար-  
 ձաւ Ազգիտիոս աւ հարուստ ու առողջ  
 մարդուն , և ըսաւ „ Ապէ , Աճ քու  
 „ աչքդ , քու ձեռքդ ու ոտքդ անվնաս  
 „ կըպահէ կոր մինչև հիմայ , տանդ մէ-  
 „ ջը բաւական հարստութի կուտայ կոր ,  
 „ դուն ի՞նչ ծառայութի ըրիր , ի՞նչ դո-  
 „ հութի ու շնորհակալութի ցըցուցիր  
 „ իրեն : Վիչ բարիք է ատիկայ , որ  
 „ զքեզ ոչնչէ ստեղծեց , ու մինչև  
 „ հիմայ ամէն անդամովքդ անվնաս կը-  
 „ պահէ կոր զքեզ , ինչպէս ըսեմ , թէ  
 „ զքեզ կազատէ կոր նեղութիւններէն  
 „ որոնց մէջը կընայիր իյնալ“ : Այլ Հե-  
 բոնիմոս և սբ Վրիգոր կուլան կողքան  
 ապերախտ մարդկանց վրայ , որոնք Աս-  
 տուծմէ այնչափ փառք առնելով , այն-  
 չափ հարստութիւններով մեծնալով թէ  
 բարերարութիւնները , ու թէ բարերա-  
 ըր կըմտնան : \* Առաւել զԱճ մտանան ,

որ առաւել առատաձեռնութիւնն յա-  
նարժանս մեծանան ։ Աստուծոյ ամէն օր  
ուտելու խմելու խաղալու խնտալու եւ  
տուէ ևն , առանց երկինք վերցընելու  
աչքերնին , ուսկից որ Աճ ամէն բարիքը  
կը պարգևէ ։ Ասանկ մարդիքներ տեսնեն  
թող , ինչ որ Հովհաննէս Գերսոնին  
բարեպաշտ մայրը իր զաւկին կը ներ-  
Աս կնիկը ուղղի պղտիկուց սորվեցընէ ,  
թէ ամէն բարիքը Աստուծակ հուզայ ,  
տղան անկողինէն ելածին պէս ծունկ  
չբեկ կուտար , ու ձեռքերը վեր վեր-  
ցուցած աղօթք ընել կուտար , ուղղի  
Աճ հաց տայ իրեն ։ Ասկից ետքը ծառա-  
ներուն մէկուն կըսէր , որ տղան աղօթք  
ըրած ատենը՝ տանը պատուհանէն պէս  
պէս տեսակ ուտելու բաներ՝ որն որ  
տղաքը կը սիրեն , ներս նետէ տղուն դո-  
ղը . և այսպէս կը սորվեցընէր , թէ ամէն  
բարիքը ու պարգևները ԱՅ ձեռքէն  
կուզան ։ Աս բանս տղուն սիրտը անանկ

տպաւորեցաւ, որ մեծցած ատենը աւարինի ու յաճապաշտ մարդ եղաւ Վերսոն: Արդ՝ եթէ մեր մարմնոյն Աճ աւանկ բարերարութիւններ ընելուն համար իրեն պարտական ենք ծառայելու, հապա որչափ պարտական ենք գերրնական շնորքներուն համար, որ մեր հոգւոյն կը պարգևէ: Արչափ նա խորհուրդներուն համար, որ յաճային դանձերուն հարստութիւններն են, մանաւանդ նա Հաղորդութիւնը, որ ամէն շնորհաց անըսպառ աղբիւրն է: Արչափ հոգւոյն նրա աղբեցութեւ համար, որով մեր սիրտը առաքինութիւն ընելու կը շարժէ, ու կաճեցընէ: Արչափ հրեշտակաց հաւատարիմ պահպանութեւ համար, որոնք երկնաւոր պաշտօնեայններ ըլլալով Աճ զմեզ պահելու համար զանոնք դրաւ: Նայց ասոնց վրէ երկայն խօսիլ չեմ ուզեր. աւելի լաւ է խօսքը կտրել, քան թէ երկնցընել:

Սակայն Այ աւելի պարտական ենք ծառայելու հանդերձեալ բարերարութեցը համար, Օգր պարտաստեաց սիրելեաց էրոց 1) : Աթէ թագաւոր մը աւարդ տղուն մէկը իրեն որդէգիր ըներ, ուղի ետքը իր թագաւորութե մասնակից ընէ, ու մեծ իշխանութե հասցընէ, կ'մեռնելէն վերջը զանիկայ թագաւորութե ժառանգ թողու, ինչ շնորհակալութի, ինչ ծառայութի թագաւորին չէր ըներ : Անք ալ ընտրեցանք, կըսէ սր Յովհաննէս, զէ որդի Այ ինչեացու 2) : Գաւիթ մարգարէն տեսնելով որ Աճ զինքը հովհաննէս իր ընտրած ժողովրդեան վր թագաւոր դրաւ՝ ինչ շնորհակալութիներ՝ ինչ ծառայութիւններ, ինչ գովութիւններ, ու օրհնութիւններ չորաւ Այ : Իր սաղմոսները այսպիսի շնորհակալու-

1) Եւ Աորնթ. Բ. 9 :

2) Եւ Յովհ. Գ. 1 :

Թիւ լեցուն են . որ չափի արդեօք կըսէր  
 աս խօսքս . Օ՛հնչ որոց որբիորբ Տ՛ն , ընդ  
 եմի զոր եւ եր ինչ 1) : Վ՛իչ բան է ա-  
 տիկայ , որ դուն ալ երկնից արքայու թե  
 ժառանգ եղար , չէ թէ քիչմը ատեն  
 կենալու համար . հասպա յախտեանս  
 յախտենից : Թող որ մենք աղէկ գի-  
 տենք , թէ երախտաքը շիմօնալը ,  
 պարտքը խոստովանիլը՝ Մ.յ ձեռքը մեղի  
 առատ պարգև տալու աւելի կըբանայ :  
 () րինակ ունինք հայր Մ.բրահամին վն ,  
 որ միշտ երախտագէտ ու Մ.յ ըունելի  
 էր , որուն Մ.ճ յայտնեց , որ Վ.ս իր  
 զաւկէն պիտոր ծնանի : Մ.ս շնորքը՝ կը-  
 սէ նր Յովհան Ոսկերերան , իր երախ-  
 տագիտութիւնը համար արժանի եղաւ  
 առնել , որ թէ հանդերձեալ , թէ ան-  
 ցեալ , ու թէ ներկայ բարեբարութիւնը  
 համար շնորհակալ կըլար Մ.յ : \* Ու

1) Մատթ. ՃԺԵ. 12 :

մնայ (կըսէ Եր վիպը) մինչև եկեօցն  
 խոստացեալքն, այլ անդէն դո՛հանայ  
 յաղագս խոստմանն, ուղղի զմիամիտ զե-  
 րախտագիտութե՛ պարտս յանձին ցու-  
 ցեալ՝ փութացուցէ զՏ՛ն ընուլ զխոս-  
 տացեալն ॥ 1) :

Ի այց գիտէք ինչո՞ւ բարերարու-  
 թի՛նները կը մոռնանք, և Մ՛ծ որ բարերար  
 է՝ մոքերնէս կելլայ: Ա՛յլի Մ՛ծ ուրիշ  
 մարդկանց ալ առատ պարգև կուտայ:  
 Արտեանանք որ ուրիշներուն ալ տրված  
 է՝ անիկայ մեզի մասնաւոր բան մը չենք  
 սեպեր, և սակայն ամէն մարդու անանկ  
 յարմար ու մասնաւոր տրված է, որ կար-  
 ծես միայն մեկուն համար է: Մտոր հա-  
 մար Ասկերերան կըսէ, որ հասարակաց  
 տրված շնորքը մենք մեզի համար տրված  
 սեպենք: \* Օ՛հ կայ քո, թէ Մ՛ծ ետև  
 այլոց, զի զոր քեզն ետ՝ այնպէս պա-

1) Ի ճառն ԼԷ.

տարուն են, ուղեթէ այլք չէին ինչ  
 առեալ յայնմանէ ॥: Ինչպէս արևը  
 թէնդ աշխարհ իմ կըլուսաւորէ, սա-  
 կայն դուն անոր լուսաւորութիւնը բոլոր  
 կառնես: Անձրևը ուրիշներուն արտե-  
 բուն վրայ ալ կուգայ, սակայն քու ար-  
 տերդ ալ պտղատու կընէ: Պօղոս առա-  
 քեալին մենք ալ նմանինք, որ Վնի  
 համար կըսէ. Որ սիրէ-այն զէս, և հար-  
 նէ-այ զանձն իմ իմ. 1): Առաքեալը զի-  
 տէր, որ Վն զամենն ալ կըսիրէր, ա-  
 մենուն համար մարդ եղաւ, ծնաւ, չար-  
 չարեցաւ, և դառն մահուամբ մեռաւ,  
 և սակայն այն իմ բարեբարութիւնները  
 առաքեալը իբրև իր վն միայն եղած կը-  
 սեպէ: Ասկերերան առաքեալին խօսքը  
 այսպէս կըմեկնէ. \* Տրն մեր զիմ զիւր  
 խնամ զնէ ՚ի պահպանել և ՚ի վերկել  
 զիս. վն իմ չարչարեցաւ. վն իմ մեռաւ,

ույ Եթէ զինէն և Եթ օճէր զմտաւ :  
 Չայս ասելով ցուցանէ միոյ միոյ 'ի  
 մէնջ գոհանալ զՔ.Յէ, ույ Եթէ վն միոյ  
 միայնոյ եկեալ էր ॥ 1) :

Պատմութիւն :

Այլ Բունավենդուրոյ նք Լերոնի-  
 մոսին վկայութիւն բերելով կրսէ, որ նք  
 Մ.Ճ. օճինը իր երախտագիտութիւնը ցըցու-  
 նելու համար միշտ կրսէր. Փաստ Է՛ւ  
 Մ.Ճ. : \* Երանուհի կոյսն օրհնէր զՄ.Ճ.  
 անդադար, և առ 'ի ոչ վերջանալ յօրհ-  
 նելոյ զՄ.Ճ. յողջունելն, Եթէ որ զնա  
 ողջունէր, նա փխկ պատասխանելոյ ասէր.  
 փառք քեզ Մ.Ճ. : Մտախ սխտեցաւ, զի  
 արք նքը զողջոյն ընկալեալ տան լգիտի,  
 փառք քեզ Մ.Ճ. ॥ 2) : Մ. յսպիտի նք մար-  
 դիկներուն մէկն էր նք Վեկիքս քափու-

1) Ի Եթէ, առ Գաղատ :

2) Առկումն վար, Ք.Յի զԼ. Գ :

չինը, որ միշտ ԱՅ ըրած բարերարուեր  
 համար կօրհնէր զԱ՛ճ: Աս սրբ անանկ  
 ԱՅ շնորհակալ ըլլալու սէր մը ունէր,  
 որ ամէն բարե տըւողին՝ Վառք բեղ Ա՛ճ,  
 կրտէր. աս երախտագիտութե ճանաչ  
 չումը Ա՛ճ անանկ իրեն տըւած էր, որ  
 վերի խօսքը ըսած ատենը՝ կարծես թէ  
 անուշ բան մը բերանը դրած է: Հռովմ  
 քաղքի մէջ պտըտած ատենը երօր  
 տղաքները ժողված կըտեսներ նէ, կը-  
 յորդօրէր զանոնք, որ աս խօսքը ըսեն,  
 ու զԱ՛ճ զարարիչը ամ բարեաց իրեն  
 հետ մէկ տեղ օրհնեն: Տղաքը մէկ քա-  
 նի անգամ ասիկայ տեսնելով սօրվեցան  
 աս խօսքը, ուստի Փեղիքս կանակը տօպ-  
 բակով դռնէ դուռ հաց մուրացած ա-  
 տենը՝ տղաքը ասօր ետեէն կըժողվէին,  
 ու կըկանչէին. Վառք բեղ Ա՛ճ, եղբայր  
 Փեղիքս, Վառք բեղ Ա՛ճ: Վիչ ժամա-  
 նակէն վերջը Փեղիքս անունն ալ թող  
 աըւին, ու Վառք բեղ Ա՛ճ, սկսան կան-

չել : Այսպիսի բարեպաշտութիւն կեր-  
 թար պատարագի սպասաւորութի կրնէր,  
 ու աւետարանէն ետքը՝ Փատար շէշ Տէ  
 Աճ Տէր, ըսելու ատենը՝ սրտին անանկ  
 ջերմեռանդութի մը կուգար, որ արցուն-  
 քը չէր կրնար բռնել սրտին քաղցրու-  
 թէն : Նմանապէս երօր հիւանդները  
 տեսնելու կերթար նէ՛ դռնէն ներս  
 մտած ատենը տուային խօսքը աս կը-  
 լար : Փատար շէշ Աճ, ու հիւանդներուն  
 ալ կըսէր, որ ըսեն :

Պատմեմ բան մալ որ կարդինալ  
 Փիղային եղաւ : կարդինալը ծանր հի-  
 շանդութիւնը մեռնելու մը ըլլալով ուզեց  
 որ եղբայր Փելիքսը կանչեն, որովհետեւ  
 կարդինալը զինքը կըսիրէր՝ իր աղօ-  
 թիւքը կըյուսար որ օգուտ մը գտնէ :  
 Ահա Փելիքսը՝ սենեակէն ներս մտա-  
 ծին պէս՝ Փատար շէշ Աճ, սկսաւ ըսել :  
 Ատքը անկողինին քովը եկաւ, բռնեց  
 կարդինալին ձեռքէն ու բարձր ձայնով

կանչեց որ ինքն ալ ըսէ . Փատոք քեզ ԱՃ :  
 Սկսաւ ըսել հիւանդը , ու հոն տեղի  
 եղողներն ալ մէկ տեղ ըսին : Պարծաւ  
 հիւանդը , ու ըսաւ ասոնց . « ահա այս  
 « մարդս է մեծ ծառայ ԱՅ , որ եկածին  
 « պէս՝ ես զիս ըննացածի պէս կըտես ,  
 « նեմ կոր : Փատք քեզ ԱՃ աս մեծ բաւ  
 « ըրերարութեղ համար » : Պին տըւաւ  
 Ֆելիքս ու ըսաւ . « մի ըսեր փատք քեզ  
 « ԱՃ , մարմնոյդ ըննանալուն համար ,  
 « այլ յախտենական փրկութեղ հա-  
 « մար ըսէ : Արկինքը նայէ , ու ԱՅ  
 « ուրիշ մեծ երախտեացը համար իրեն  
 « գոհութիւն տուր : Ասանդի զքեզ  
 « իր արքայութիւնը կըկանչէ կոր » :  
 Ինչպէս որ ըսաւ նէ , անանկ եղաւ , ու  
 բովհեաւ քիչմը ետքը հիւանդութիւնը  
 սաստկանալով մեռաւ . բայց հոգի տը-  
 ւած ատենը՝ կըլսէր կոր որ շարունակ  
 կըսէր . Փատոք քեզ ԱՃ : Ասանկ մեռած  
 ատենը Ֆելիքսն ալ , երբոր երեսին գոյ-

նը դեղնցած էր, ինքը անգաղար, Փոփո-  
 ղեւ Մ.Ճ, փոփո՞ ղեւ Մ.Ճ, կըսէր կոր,  
 մինչև որ հողին աւանդեց: Տեսար հի-  
 մայ, որչափ մարդկանց օգտակար քան  
 է, Մ.Յ բարերարութիւնը յիշելը, ու-  
 շնորհակալ ըլլալը: Ս'ենք ալ ասոնց  
 հետևիմք, ու միտք դնենք, ինչ որ յը  
 ( ) գոտիմնոս կըսէ, \* Իցէ՞ ինչ լաւա-  
 գոյն 'ի տանել 'ի սրտի, և ասել բե-  
 րանով, քան զգոհանալն զՄ.Յ: Չիք  
 ինչ հակիրճ ասել քան զայս, չիք քաղց-  
 րագոյն 'ի լսել, և ոչ շահեկան 'ի գոր-  
 ծել || 1):

Օտարութեան Բռնութիւնը, 'ի Կարեւոր, Բա-  
 րեւելեաց, 1587: Լեւոնտիւն Պատմութե-  
 ան ի Յ. Բ. Լեւոնտիւն, Ե.

1) Թ. Պ. Տ. 55:

Գ. 1. 12:

Բարի Սրտածուլն աշխարհս ցաւալն ու  
նայնուլեան շրայ:

\* Տեսի յամենեսին զընդունայնութիւն և  
զանձկութիւն որպէս ॥ .

Վարդը, Է. 1:

Պղատոն փիլիսոփաներուն գլուխը աղ-  
ւոր առակ մը կը պատմէ, որ մեր բանին  
շատ համաձայն է: Հեշտուիլը ու ցաւը  
կըսէ՝ սկսան մեկզմէկու հետ հակաճա-  
ռութիւն ընել, թէ ո՞վ արդեօք աշխար-  
քիս վրէժ մեծ տէրութիւննի: Վիտս տես-  
նելով, որ պարսպ տեղ զիրենք հաշ-  
տեցընելու համար կաշխատի կոր, ան-  
դամանդեայ շղթայով առաւ երկուքն ալ  
իրարու հետ կապեց, ուղղի ամենեին  
մեկզմէկէ չիզատվին. ասոր յարմար, ո՞վ  
որ կուզէ հեշտութիւն զգալ՝ պէտք է որ  
ցաւ ալ զգայ: Ասոր փորձը կը տեսնանք

միշտ, որ աշխարհիս բարիքները նեղու-  
 թիւնով խառնելովս են, մանաւանդ՝ ա-  
 ւելի ալ է: Ամէն մարդ իրեն վկայ կըր-  
 նայ ըլլալ, թէ քանի անգամ՝ որ մէկը  
 բարի բան մը ձեռք ձգելու ետեւէն կըլ-  
 լայ՝ ձեռք ձգելէն ետքը՝ դառնութիւն  
 առաջ կըղգայ, քան թէ անուշութիւն  
 որ կըյուսար: Անշի ան բարին անհա-  
 մար հոգ կըբերէ պահվելու համար,  
 անդիէն աստիէն վախ՝ չիկորսնցընելու  
 համար, ու հաղար ու մէկ տառապանք-  
 ներ: Աս փորձը ասանկ յայտնի ըլլա-  
 լուն համար՝ անաշունչէն վկայութի բե-  
 րել հարկ չիգայ: Աչ իմաստութեն, որ  
 աշխարհիս բարիքները ծովի փրփուրին  
 կընմանցընէ, անանկ աղի ըլլայնուն  
 համար: Աչ իմաստունէն, որ առակաց  
 դրքին մէջ զանոնք իրենց դառնութեւնը  
 համար օշինդրի (փելինի) կընմանցընէ:  
 Աչ Հակորոս առաքեալէն, որ զանոնք  
 իրենց կարճատեւութեւնը համար մըրկի

(խայի) կընմանցընէ, որ շուտով կանցնի: Բարիքը՝ որոնք որ Սողոմոն ուզածին չափ վայելեց, ետքը չէ թէ միայն ունայնութի կանչեց զանոնք, այլ նաև անյիւստի ոգոյ, կամ մանաւանդ՝ ճարտի հողոյ, ինչպէս սբ. Հերոնիմոս կը մեկնէ: Աուզէր ըսել, թէ որոնք որ աս բարիքները կըվայլեն՝ հով կըկլեն, որ չէթէ անօգուտ հապա մնասակարալ է, որովհետև սնուցանելու տեղը, աղիքը կըքաշէ, ու ցաւ կըսպատճառէ:

Բայց աղէկմը քննենք տեսնենք, թէ աշխարքս ինչ բարիք կուտայ: Այլխաւորաբար իրեք բարիք կան. քն՝ հեշտութիք, հարստութիք, ու վատք, ասոնք իրեք կուռք են, որոնց մարդկային ազգը շատ զարնըւած է: Հեշտութիքը իրաւի ճաշակելիքը, ու շոշափելիքը կըբերկրեցընեն, եթէ շատ ու սաստիկ ըլլան: Բայց քիչմը քաղցրութիւն երկար ու խիստ ցաւեր կըբերեն:

Մեկարգ ուտել խմելը կենսական ոգիք,  
 ներուճն չափը վերվար կրնեն կապակա-  
 նեն . ու անբժշկելի հիւանդութիւններ  
 կը պատճառեն : Վանի քանի հարուստ  
 մարդիքներ չափէն աւելի իրենք ղերենք  
 պէսպէս աղնիւ կերակուրներու , ու խմե-  
 լու տալով՝ ետքը անկողինը կէյնան ,  
 ձեռնառութն ունառութն ու միզար-  
 գելութն հիւանդութիւն կը պատկին , կամ  
 ստամոքսի , կամ փորի , կի՛ գլխու ցաւ  
 կունենան . անոր համար գեղացւոց կեան-  
 քին կընախանձին , որոնք ցրտի տաքի  
 մէջ սորվելով մինչև ծերանան՝ կապրին  
 առանց հիւանդութն : Վանիները ան-  
 չափ գինի խմելէն , կամ գիներբութէն  
 յանկարծ մեռան : Աստիմիրոս Պողո-  
 նիացւոց երկրորդ թագաւորը իր իշխան-  
 ներուն սեղան (ղիյաֆէթ) ընելով կե-  
 րակուրին վր հարբած տկոած գինիին  
 գաւաթը բերանը տարած ատենը յան-  
 կարծակի մեռաւ : Աայց ասիկայ մեծ

չարիք չէ, որ անչափ ուտելէն կը պատ-  
ճառի. մեծ չարիք ան է, որ բղջախո-  
հու թն նիւթ կը լայ, ու կը բորբոքէ:  
Մտիկայ ուրիշ բանով չիմարիր, կը սնն  
իմաստունները, բայց եթէ չափաւոր  
ուտելով. ինչպէս Տերենտիոս բանաս-  
տեղծը կըսէ.

\* Թէ Գեմետրէ՝ Բագոս բարձցի:

Մնդէն Մստղիկ ցըրտով պաղի ||:

Երգ՝ մէկը որ մարմնասիրութեան ետեւէ  
կը լայ՝ անօրէնութեան տղմին մէջը կը թաթ-  
խը վի, որ թէ հոգւոյն, ու թէ մարմնոյն  
փնասակար է: Չեմ ուզեր հոստեղս աս  
մոլութեան գեշութիւնը, ու ինչ ըլլալը բա-  
ցատրել: որովհետեւ այնչափ գեշ ու  
աղտոյն է, որ անարգողին ալ լեզուն  
կը պղծէ: Զերիք է ըսել, թէ աս մեղքը  
մարմնաւոր առողջութիւն կը պահսեցընէ,  
փորոտիքը կը մաշին, ու կեանքը կը կար-  
ծի, ինչպէս որ նոյն Տերենտիոս կըսէ.

\* Պիղծ մարմնասէրք ապրին տըհաս,

Մ.ՅԼ մեռանին յոյժ վաղտհաս ॥ :

Ո՛ր թողունք, որ մարդուս բանականու-  
թիւր կըվերցընէ. միտքը կըմըթացընէ,  
անկարգ բաղձանքով կամքը կըչարացը-  
նէ, ու զմարդը անասնոց նման կընէ,  
ինչպէս որ Ղաւիթ մարգարէն ըսաւ.  
Սարդ 'ի պարտէի էր եւ ոչ իմացու-  
հաւասարէաց անասնոց անբռնից եւ նմա-  
նէաց նոյ 1) : Եւ խօսքս նք ( ) գոստինոս  
կըմեկնէ ան մարդուն վն, որն որ իր  
զգայութիւններուն գերի կըլայ : Եսկից  
յայանի կերևայ, թէ Մ.Ծ ինչու բղջա-  
խօհները խիստ կըպատժէ, ինչպէս նք  
Թովմաս նորագիւղեցին կըսէ. \* Տեսա-  
նեմք զի զմեզս բղջախօհութեւն Մ.Ծ առա-  
ւել քան զայլ մեզս խտիւ պատուհա-  
սէ ॥ 2) : Վ նզի անձաշունչին մէջը կըկար-  
դանք, թէ Սողոմ Ղոմորին վն երկինքէն

1) Սաղմ. խը. 13 :

2) Ի բանն 7, մ. Վիւր :

կրակ ինչեցուց, ու մոխիր դարձուց,  
բոլոր մարդկային ազգը ջրհեղեղով ջրն-  
ջեց, վնդի ամէն մարդ իրենց ճամբէն  
դուրս ելած էին :

Արկրորդ կուռքը՝ որուն աշխարհս  
շատ զարնըված է ու կըսիրէ, հարստու-  
թիւն է, ասիկայ թէ որ աղէկ մտածելու  
ըլլանք՝ չեմ գիտեր՝ արդեօք ունայնուի՞  
աւելի ունի, կըսենք, չէ նէ վտանգ :  
Ք.Ս Տըն մեր փուշ կոչեց զհարստու-  
թիւր, թէպէտ մարդիքը անոր խայթե-  
լը չին իմանար, ինչպէս ծք Վրիդոր  
շատ աղուճոր կըսէ. \* Ո՛ արդեօք հա-  
ւատայր, եթէ զմեծութիւն անուանէի  
փուշս, մանաւանդ՝ յորժամ ինչք խայ-  
թեն, և մարդիկ բերկրին : Աւ սակայն  
փուշք են, զի զմիտս խայթմամբք խոր-  
հրդոց իւրեանց պատառեն ॥ 1) : Ա՛յ  
սինքն՝ հարստութիւն ժողովելուն խիստ աշ-

1) Ի ճառն ՏԴ. Աւեա.

խատանքը կը շարձարէ միտքը . սրտմաշուկ հոգը՝ զանոնք պահելու, ու անդադար վախը՝ զանոնք կորսնցընելու : Ուստի Պօղոս առաքեալը իրացընէ ըսաւ . Եւրմասս մէջ չարեաց՝ արժամախիտութիւն է . որում ոմանց ցանկացեալ . . . պանդինս արկին ընդ բազում ցառով : Եւ ցաւերուն մէջն պէտք է դնել ան նեղութիւնները, որոնք որ ստակ ժողովելու համար մարդուս գլուխը կը հանդրպին ճամբորդութեց, տքնութեց, ու վատրկելուն մէջն : Հաւ կրբերէ շատ հոգը, որ կը լայ, թէ ինչ կերպով հարստութիւն կրնայ շատնալ, ինչպէս ուրիշներուն ձեռքէն կրնայ պահվիլ, ու վաշխի արվիլ . աս հոգերը շատ անգամ գիշերները մարդուս քունն ալ կը հատցընեն, ինչպէս բանաստեղծ մը ըսաւ .

\* Ենցուցանէ զանքուն գիշեր

Եւս արծաթոյն պըժգալի սէր ॥ :

1) in Տիմ. ք. 10 :

Ասոր փորձը առաւ Սիդիսմունտոս  
 թագաւորը, որ քառասուն հազար ոսկի  
 առնելով՝ քառասուն հազար հողի մէջ  
 մտաւ: Արովհետեւ գիշերը սկսաւ իրեն  
 մտածմունք դալ, թէ ինչ բանի կըր-  
 նայ աղէկ գործածել առած ստակը,  
 աս մտածութե մէջը լյնալով գիշերը  
 աչքէն քունը դնաց, ու սիրտն ալ  
 սկսաւ անհանգիստ ըլլալ: Աւտի առտու  
 եղածին պէս կանչեց դատաւորները ու  
 իշխանները. ստակը ձեռքերնին տըւաւ,  
 ու ըսաւ. «Առէք սա անդութ դահիճ-  
 ոները, որ ինձի հանգիստ ամենեին չեն  
 » տար կոր: Կացէք ձեր մէջը արդա-  
 րութեամբ բաժնեցէք»: Աս անուշ  
 բերքը եբոր վրայէն նետեց, ու սկսաւ  
 երթալ նէ, ըսաւ. «Փառք Այ դնաց  
 » սա դահիճը, որ զիս կըչարչարէր կոր,  
 » առկից ետքը հանգիստ կընամ քնա-  
 » նալ»: Գոյց խօսքերնիս չերկնցընելիք,  
 ու քիչ բանով շատ բան ըսենք, հարս-

տութիւնը Տերտուղիանոս կրկանէ \* Աս-  
կի շղթայ || . որ փայլուն գունով իրեն  
տէրը կրկնապէ . նր Արարիանոս , \* Գե-  
ղեցիկ տանջանարանք || , որ ուրախութն  
կերպարանքովը կը շարձարեն : Աւսերիոս  
եմիսսացին , \* Բաժակք քաղցրարբոյց ,  
այլ թիւնալիք || . որ քիչմը անուշութի  
բերանը կանուշընեն , ու կը լօսարեն .  
մարմինը կապականեն , հոգւոյն ալ կը-  
մնասեն :

Աւստի խելք ունեցող մարդը թէ  
որ աշխրբիս սուտ փառքը աղէկ քննե-  
լու ըլլայ , կը տեսնայ որ բոլոր ունայնու-  
թիւն է , ու թշուճառութի : Գեղեցիկ  
բան է , միանգամայն շատ օգտակար  
մարդուս ան խօսքը , որ կըսէ Սենեքայ ,  
թէ փառքը մարդուս վն բեռ կը զնէ ,  
ու կը զարդարէ : \* Ի մէջ պատուոյ և  
բեռին ոչ այնչափ գոյ լծորդութի ձայ-  
նին , որչափ ճշմարտութի իրին . զի Ի  
բեռանէ ելանէ պատիւ , կամ յաւէտ Ի

պատուոյ բեռն 1) : Սնորհկային փառ-  
քը ծուխի կրնամանի, որ չէ՛մէ միայն  
միտքը կըմ թնցընէ, հապաշատ անգամ  
ալ հետը բերած տառապանքին համար  
աչքէն արցունք կըբերէ : Իշխանութե  
պատիւները մեծ մեծ հոգեր մարդու  
զլխուն կըբերեն, որոնք այնպիսի իշխա-  
նութիւններուն իբրև ընկերու ընտա-  
նիքներն են : Ըսիկայ կարօլոս հինգե-  
րորդ երևելի կայսրը յայտնի ցըցուց,  
երօր կայսերական պատիւը Փիլիպպոս  
երկրորդ իր որդւոյն տալով՝ թագը  
զլուխը դրած ատենը ըսաւ.՝ « Ըն-  
քեզի թագ մը, որ որչափ մարգրիտ-  
ներ այնչափ ալ փուշեր ունի » :

1) Աս խօսքը պէտք է Լատին լեզուին  
բառերուն համաձայն իմանալ, որ Պա-  
տիւր կըսին հոն որ, կի՛ հոն ու ա.  
խակ բեռը օն ու ա, որ մեկզմէկու նման  
են : Մենք ալ մեք լեզուին մեջը կրնայ-  
ինք յարմարցընել սյսպէս Պատի՛ :  
Պատիւ . բայց չուզեցինք հեղինակին  
խօսքը փոխել :

Որովհետև հոգւոյն խոնարհութիւնը կը վերցընեն. երևելի մարդիքները ծանր ծանր ծառայութեան տակ կը դնեն, ինչպէս որ կը գանգատէր կարդինալ Ռարոնիոսը, թէ կարդինալութիւնը իրեն թող չէր տար տնէն դուրս ելլալու պարտելու համար, ուղղի սիրտը քիչ մը բացվի: Արն որ պարզ քահանայ իքէն կրնար ընել նէ՛ հիմայ չէր կրնար, ու սենեակը իրեն բանտ եղած էր, որովհետև այնպիսի պատուո՛ւց մէջ գուռը չէր կրնար բանալ, բայց եթէ ծառաներն ալ մեկտեղ պիտի ըլլային, ինչպէս որ ան ատենները սովորութի էր: Սակայն տանելի կըլլար, եթէ մարդուս պատիժ ըլլար միայն, գէշը ան է, որ մեղքի մէջ ալ կըխութե, քիչ հպարտութե մէջ, ինչպէս Թաշուհանը կըսէ. Սիւլէն ան Ռ-պայ ան-Բարդուսանի-էն 1): Աւ սը վիպիները՝

1) Ար. Գ. 11 :

Հիդրայ օձ կրկանչեն հպարտութիւն իբրև  
 ամէն չարեաց պատճառ . որ եօթը  
 ղլխովք իբրև իր զէնքերովը մեր վրայ  
 կուգայ , ինչպէս որ աղէկ մտածող մար-  
 դը կը հասկընայ : Անգի հպարտութեն  
 կը սկսի մարդ սուտ փտաքի ետեւէն ըլ-  
 լալ , որ շողոքորթներուն չափէ դուրս  
 կը հաւատայ : Եսկից կեւայ պատուախ-  
 րութի , որ թէ ուրիշներուն իշխել կու-  
 ղէ , ու թէ ուրիշներէն աւելի յարգելի  
 ըլլալ կուղէ : Անլայ բարկութիւն ալ ,  
 որով մարդ վրէժխնդրութի կընէ ա-  
 նոր , որն որ կարծէ թէ զինքը բանի  
 տեղ չի դներ կոր : Անլայ յանդգնութի  
 ու նախանձ ալ , որոնց մէկը իրեն անար-  
 ժան պատիւներ կը պահանջէ . ու մէ-  
 կալը ուրիշներուն ունեցածէն ու հարս-  
 տուէն կը տանջուի :

Երդ՝ որովհետև աշխրբիս բարիք-  
 ներէն չարիք շատ կեւան , անոնցմէ հե-  
 առ կենալու համար մէկ քանի խրատ .

ներ դնենք հոս տեղս: Առաջինը կու-  
 տայ Արիստոտէլու այս է. \* Անցաւ որ  
 հեշտութիւները մտածենք || . քննենք թէ  
 ետքը ի՞նչպիսի նախատինք՝ ցաւ՝ ու ա-  
 նարգանք կը բերեն: Արկրորդ խրատը սր  
 ( ) գոստինոս կուտայ որ շատ օգտա-  
 կար է. մեկնելով Վաւիթ մարգարէին  
 խօսքը, Ս'եծու-Ը՛ն Ը-է ասի՛ւ գոյցէ,  
 Քի յօժարեացին սիրոյ յեւ 1), կըսէ,  
 որ հարուստները թէ իրենց հարս-  
 տութէն փուշ քաղել չեն ուզեր նէ՛  
 ունեցածնուն վրայ շատ չկուտան: Չու-  
 նին ամէնն ալ այնպիսի հոգւոյ արիու-  
 թիւն, ինչպէս ունէր Արաթէս (Թե-  
 բայեցին, որ տեսնելով թէ ունեցած  
 հարստութիւնը իրեն նեղուի կուտայ կոր՝  
 ժողովեց ամէնն ալ, ու ծովը դնաց նե-  
 տեց ըսելով. \* Վնաւ կորսելէ չմը ցան-  
 կութի, ես զքեզ ընկղմեմ, ուղղի դուն

զիս չընկզմես ॥ : Անոր համար մեր հոգին  
 պէտք է զսպել, և որչափ կարելի է՝  
 սիրան ալ հեռու բռնել, և նայիլ, որ  
 զանոնք ժողովելու ետեւէն ըլլալով չըլ-  
 լայ որ աշխատանքով հոգերով ու ահով  
 վախով կեանքը անցնի : Չկանց պէտք  
 է նմանիլ՝ կրօնքնք Վեռնարդոս, որ  
 ծովի ջուրին մէջը կապրին, բայց աղի-  
 ուիը ամենևին չեն առներ : Շատ հարս-  
 տութիւն չէ թէ գեշ կմ չար է, որով-  
 հետե շատ մարդիքներ զանոնք բարի  
 դործքի բանեցուցին, հապա ազահուիը  
 ու չափէ դուրս սիրելը չար է : Վայց  
 որովհետեւ գեղար բան է հարստութի  
 ունենալ, ու չափէ դուրս չիսիրել . ա-  
 նոր համար իմաստունք կրօնքնք . (Չէ՛ն լե-  
 ցիս Բեթսաբան՝ ոչ լեցիս Եթ՛ ՚ի Բեղայ 1) :  
 Իսկ աշխրբիս փառացը համար, շատ  
 աղու՛որ է ան դիրքը, որն որ նք Վեռ-

1) Աճր. Ժն, 10 :

նարդոս՝ երրորդ Եւզինէոս փափին գրեց.  
 ես մէկ բանը կուզեմ՝ բերել որ կըսէ  
 նր Նեոնարդոս. \* Խնդրեմ զբարձրուի  
 փառաց, այլ 'ի մերձաւոր վտանգէն  
 երկնչիմ: Ալանեն փառք զմիտս 1), ին՝  
 կըկուրացընեն, որով իշխանութիւն, ժո-  
 ղովորոց ծառայութիւն, ու աշխրբիս ու-  
 բախութիւն մեծ կըսեպէ, ու չիմտածեր,  
 թէ որչափ նեղութի կուտան իրեն աս  
 աշխրբիս մէջ, ու մահո՛ւն ատենն ալ,  
 որչափ վախ կըբերեն: Ասոր շատ փո-  
 ճը առաւ վեցերորդ Ադրիանոս փափը,  
 ուստի ուրիշներուն ալ յայանելու հա-  
 մար՝ իր գերեզմանի քարին վն աս տա-  
 պանագիրը դնել տրւաւ:

\* Ադրիանոս յայս 'ի տապան  
 յոր նընջէ՝

Յաստի կենցաղ ոչինչ թըշուառ  
 և դըժնէ

1) Թուղթ մէ. առ Եւզ.:

Համարեցաւ անձին իւրում  
այնպիսի

Բայց զոր կալաւ իշխել այլոց  
’ի դահէ ॥ :

Պատմութիւն :

Սիայն Սողոմոն իմաստունը չեղաւ, որ աշխրբիս բարեացը համար ասխօսքը ըսաւ . Սանայնո-ւնի ունայնո-ւնից ան ինչ ընդունայն է . հապա Վլիմերոս Սանդալաց թագաւորն ալ : Ասիկայ ուսմիկ մարդու զաւակ ըլլալով չարութիւն ելաւ թագաւոր եղաւ, ու անանկ սկսաւ հպարտանալ, որ ամենուն ալ յանդդնութիւն, ու հրամայելով կրտսպառնար, նմանելով շողիքներու որ դետնէն օդի մէջ ելլալով կը փայլին, կը փայլատակեն, կորոտան, ու կը սպառնան : Ասոր համար ինչպէս որ ուրիշները վախցուցած էր, ասանկ ալ ուրիշներուն ատելի էր . և այսպէս աս բռնաւորը թէ վախի, ու

Թէ հոգի մէջ էր, մեծ ցաւի մէջ ուրա-  
խութի մը ունէր իր ընդունայն իշխա-  
նութէ: Ասոնք հերիք չհսեպելով աս  
Թագաւորը՝ պատերազմ բացաւ հռով-  
մայեցւոց հետ՝ յուսալով իր ունեցած  
մեծ մեծ դանձերուն: Աւստի հուստի-  
նիանոս կայսրը ասիկայ յաղթելու համար  
Մելիսարիոս մեծ զօրավարը խրկեց, որ  
քիչմը պատերազմելէն ետքը՝ իր թշնա-  
միները կէսմը կոտրեց, կէսմը փախցուց,  
մինչև Մելիմերոս Թագաւորն ալ հար-  
կաւորեցաւ փախչիլ, ու Նումիդիայ լե-  
րան մը վրայ պահվիլ: Փարոս Մելիսա-  
րիոսին տեղակալը եկաւ աս լեռը անանկ  
պաշարեց, որ խեղճ Թագաւորին ուտե-  
լիքն ալ հատաւ:

Ան ատենը ճանչցաւ Մելիմերոս,  
Թէ մեծութիւնը ու իշխանութիւնը ի՞նչ դը-  
տար թշուառութիւն կրկերջանան: Աւստի  
Փարոսին մարդ խրկեց, որ իրեն հաց  
սպունգ (սիւնկէր) ու քնար մը տայ:

Իմացաւ փարոս, թէ ինչ պիտոր ըներ զանոնք. հացը անօթիու թիւ անցընելու համար. սպունգը աչքին արցունքը սրբելու համար, որ իր ողորմելու թէ վրայ կուլար կոր. իսկ քնարը իր սիրտը մտի թարելու համար, որ այնչափ փորձանքներէն նեղված էր: Հրաման տրւաւ փարոս որ տան. ու ետքը աւելի պաշարեց, մինչև Գլխմերօսը բռնեց: Ասպեց Տելիսարիոս ասոր ձեռքը ոտքը ու Աարթագինէ (Թունուզ) տարաւ. անկից Սարգոնիա (Սարտենեա) դացած ատենը ճամբան շարունակ կը ծիծաղէր. քովի եղող պահապանները կարծեցին առաջ որ գլխուն եկած նեղունէն խելքը թռուցած է. բայց երբ ծիծաղելոյն պատճառը հարցուցին նէ՛ խելացի պիտն տրւաւ, կը ծիծաղիմ՝ ըսաւ, փառքի անհատատունը վն, որ երբեմն մարդը վեր կը վերցընէ, երբեմն վար կինջեցընէ: Ըսբանը դուցէ յաղթական կառաց (առաւ-

պային) անիճներուն դառնալէն սորվեցաւ, որոնք ասդին անդին կը դառնան, երբեմն վեր կելեն, երբեմն վար կինջնան ու ծանրութե տակը ձայն կը հանեն: Եւ յապէս կը ձեռնարկեն նախնիքը զՆախար, որ մէկ ոտքով անուշոյն վրայ կեցած շարունակ կը դառնար, ինչպէս որ Քանաստեղծ մը կըսէ.

\* Սա հօշովէ զանցըս համայն  
դիւրագարձ.

() Ը ՚ի ծագման զոր տեսանէ  
վերամբարձ,

՚Ի մուտըս իւր երեկորին  
գիշերոյ

Չայն տեսանէ ըստօրաբարչ  
և ներքոյ || :

Վլիմերոս՝ թագաւորին առջևը հանդէսներով ելլալէն առաջ՝ նեղ բանտի մէջ դրվեցաւ, մինչև որ հանդէսներուն ամէն բանը պատրաստեն: Եւ ամառնակը եկաւ՝ եւ ան հանդիսի բոլոր զօր-

քերը իրենց կարգաւը շարւած, Յուս-  
 տինիանոս իրեն պատրաստըւած տեղը  
 նստած, որ չորս կողմը մեծամեծները  
 կեցած էին. բերին զՎլիմերոս քալեցը-  
 նելով ձեռքը ստքը շղթայ, որուն վրայ  
 ժողովուրդը կընայէին կըխնտային կոր:  
 Ի՞նչ կընար ընել ողորմելին հոս տեղս,  
 որուն բախտը թագաւորական թագին  
 տեղը շղթայ դրած էր. ու իրեն ուրա-  
 խուլթիւնը նախատինքի փոխված էր:  
 Ա՛վ չէր ըսէր, թէ այսպիսի բանէն ա-  
 նիկայ խելքը կըթռցունէր: Բայց ինքը  
 իր խելացիութիւնը ցըցուց. վնզի սը զըր-  
 քին ըսածին պէս նեղութիւնը իրեն խելք  
 սորվեցուց: Ա՛չ իր թշուառութիւն, ու  
 խեղճութեան վն լացաւ, և ո՛չ շուով-  
 մայեցւոց հարստութիւն նախանձեցաւ,  
 հապա միշտ հաստատուն կեցաւ, ու  
 զինքը միտիթարելու, ու օրինակ առնելու  
 խօսքը ըսաւ. Անայնուհիւն ունայնու-  
 լիւանց՝ եւ ինչ ընդունայն է:

Պրոֆուլիոս յաղ. պատեւասզին Վ անդ.  
 Գեր. Բ. Գ. և Ժ. : Պրոֆուլիոս 'է Հոմե.  
 Բնութեց. ԼԷ :

Գ. 1. Բ.

Բնութի Սրտածուլի յախղ դիպուածնե-  
 րուն Բեջե :

\* Նեղութիւն տացէ զմիտս ॥

Եսայ. ԷԷ. 19 :

Չախորդութիւնները որ մեր գլուխը  
 կը հասնին՝ կը նմանին շուփայի (թիւթ-  
 եայի) որ աչաց դեղ կը լայ, կի՞ մե-  
 րի զոն ըսլած նիւթին, որ մարմարիոն  
 քարը կը ճերմկցընէ : Անդի ՄԾ մարդուն  
 վրայ նեղութիւն կը խրկէ, ոնդի իրեն  
 մտածմունքը շտկէ ու սիրտը մաքուր  
 ընէ : Թիէ չէ՛ եթէ չափէ դուրս բաներ-  
 նիս յաջող երթալու ըլլար նէ՛ կը-

մոռնայինք թէ ՂՆԾ, թէ յաւիտենա-  
կան կեանքը, ինչպէս սբ ( ) գոստինոս  
կրսէ . \* Աթէ դադարէր ՂՆԾ, և ոչ  
խառնէր զգառնութիւն ընդ աշխարհիս  
երջանկութեց՝ մոռանայաք զնա || 1) :  
Հազիւ իրեն կերթայինք ազաշելու :  
Հազիւ անոր օգնութիւնը կըխնդրէինք,  
կամ բարի բանմը կըմտածէինք, եթէ  
թշնամի չունենայինք, ու ամէն բան  
ուղածնիս պէս յաջողէին : Ասոր համար  
ՂՆԾ բարեգութ հօր պէս երոր իր սի-  
րելի զաւակը կըտեսնայ որ գէշի կեր-  
թայ, ու շիտակ ճամբէն դուրս կելայ  
կոր՝ կըծեծէ թող չիտար, ուղի դառ-  
նայ : Աս ծեծելը չէ թէ անգթութիւն  
է, հապա մասնաւոր բարիք մը նէ .  
ինչպէս որ Հոգին սբ կրսէ . Ո՛չ Բողո-  
ղանօրէնս ըստ հոյն գործել, այլ արագ  
արագ զգոտութեանն 'ի վերայ անձն թե՛

1) 'Ի Սաղմ. 27 :

նշան բարեբարութիւն է 1) : Ազահին՝ ուրուն խելքը միտքը ստակ ժողվելու ետակէն է, ձախող դիպուճածով մը ունեցածը ձեռքէն կորսնցընել կուտայ, իրեն սորվեցընելու համար որ արքայութեան նանց գանձը փնտրուէ : Սարմնասերը՝ որ բոլորովին աշխրբիս զբօսանաց մէջը ընկղմած է, թող կուտայ որ հիւանդանայ, ուղղի ասանկով սիրաը Այ տայ, հոգւոյն զբօսանքը խնդրէ, ու յաւիտենական փրկութեան բաղձայ : Հպարտը՝ որ պատուոյ Միշտ կրփափաքի, կը թողու որ զըպարտութեան ու նախատանաց մէջը լյնայ, ուղղի անով առաքինութեան գեղեցկութիւնը սիրել սորվի, ու յաւիտենական փառաց երանութեանը ետեկէն ըլլայ, ինչպէս Ղաւիթ մարգարէն Աստուծոյ կուղեր. 1) Գլխիս ինչ անարգանօք, եւ ինքրեւցեմ զանուան իմ Տէր 2) :

1) Թ Մակ. Գլ. 13

2) Սաղմ. Ժբ. 17\*

Անառակ որդին՝ ինչպիսի աւետարանին մէջը Ք.Յ կը պատմէ, որ խելքին ուղած չարութիւնները ընելու համար՝ հօրը տունը տեղը թող տըլաւ, ու օտար քաղաք գնաց, խելքը ան ատենը վրայ եկաւ, երօր սկսաւ անօթիութիւն, ցրտէն ու մերկութիւն չարչարուիլ: Աստուծոյ հրահրանքով (1). կը սէր հառաչելով: Այնպէս ինչ որ ինչ... յարուցեալ Գնացից աստուծոյ ինչ (2): Այնպէս ինչ հայրը կը սիրէր, հապա հարկը ղինքը ներկելով խելքը վրան ժողովեց, ինչպէս որ Ասկիաբանը կը սէր. \* (Յետոյ դարձուցանէ քաղցն զոր յղիութիւն վտարանդեալ էր || 3):

Սմանք Այն աս ըրածին վրայ չեն հաւնիր, ասոնք կը կարծեն, որ մեր վրայ եկած ձախորդութիւնները՝ Ա.ճ անօր համար կը խորկէ ու թող կուտայ, ուղիղ

1) Առկ. Ժ. 17:

2) Անդ. 17. 18:

3) Բան Է. յաղ. անառ. որդ.

ըրած մեղքերնիս պատժէ, իբրև թէ Մ. Յ  
 Հաճելի բան է մեղաւորներուն պատժը-  
 վիլը: Բայց մեծապէս կըստալին ասոնք:  
 Անոնք սը գրքին ըսածին պէս. Մ. Տ ոչ  
 խնայ ընդ իրոսոսոս հարդիւն 1). ու  
 չուզեր, որ մեղաւորը աս աշխարհիս մէջ  
 մեղքի համար պատիժ առնու. բայց  
 նեղութիւն կըսպանայ մեղաւորին պա-  
 տիժ. ունի մեղքէն դադրի, և անոնք  
 ողորմութեւն զիրկը դիմէ: Աւստի անտա-  
 րակոյս մտովնիս դնենք, թէ Մ. Տ մեղք  
 պատիժ սպանալովը, մեր օգտին հա-  
 մար կընէ: Այլ թէպէտ մեր նեղութի  
 քաշելը իրեն օգուտ մը չըլլար. բայց  
 շատ կուզէ, որ մենք աս վիճակի մէջ  
 եղած ատեննիս զինքը յիշենք, իրեն  
 դիմենք, աչքերնիս երկինք վերցընենք,  
 ու իր ողորմութեւնը ապաւինինք: Հատ  
 աղէկ կըզրուցէ սը () գոստինոս. \* Նուս

1) Իմաստ. ան. 13:

վշտօք զամ, ուրիշ որք սնկանին՝ի վիշ-  
տըս դիմեսցեն առ քեզ ॥ 1) : Ուստի  
բարերարութիւններ են անոնք, որոնք  
որ մենք ծուռ դատելով պատիժ կըսե-  
պենք : Արկօտասաներորդ Աւղոյլիկոս  
Պրանսայու թագաւորը որ մը ուզեց  
որ ամէն իշխաններուն ու պաշտօնա-  
տէրներուն անունները թուղթի մը  
վրայ գրած իրեն բերեն, որոնք որ ժա-  
մանակաւ թագաւորութն ու թագա-  
ւորին բարիք մը ըրած են : Արդացած  
ատենը տեսաւ որ առջինները ամենէն  
աւելի բարիք ըրած էին, անոր համար  
անոնց վրայ խաչ մը քաշեց, աս խաչը  
սննեկապետին մէկը տեսածին պէս կար-  
ծեց որ գէշ նշան է, ուստի բարեկամա-  
բար գնաց ան իշխաններուն խապար  
աըւաւ, որ գլուխնին ճարը հոգան, ա-  
նոնք ալ ելան դաղտուկ փախան : Թա-  
գաւորը եբոր լսեց նէ իրենց փախչիլը

1) Ի Սաղմ. ծը :

ծիծաղեցաւ, ու ըսաւ. «Մտոնք չեն  
 ,, գիտեր Վ.Սի այբենարանը, որ խա-  
 ,, չէն կըսկըսի : Աս նշան փրկութեան  
 ,, անոնց վրայ դրի, որոնց բարիքը կուղէի  
 ,, մեծ մեծ պարգևօք ու պատուովք վար-  
 ,, ձատրել » : Մասնկ ալ Մ.Ճ իրեն ծա-  
 ոայողներուն մէջէն որոնք որ իր շնոր-  
 հացը աւելի արժանի կըսեպէ, անոնց  
 վր խաչի նշան կըդնէ, կամ իր չարչա-  
 րանաց նշանաւը կուղէ հաստատել : Մ-  
 սոր համար ոչ երբէք կրնայ ըսվիլ, թէ  
 Մ.Ճ միշտ մեղքը պատժելու համար ձա-  
 խորդութիւններ կըխրկէ. հապա աւելի  
 բարիք ընելու համար : Մասնկ կըսէ Ծր-  
 շերոնիմոս մեկնելով Աղէկիէլ մարգա-  
 րէին խօսքը [Թ. 4. ուր տեղ Մ.Ճ կըպատ-  
 ուիրէ հրեշտակին, թէ որոնք որ մեռ-  
 նելէն կուղէր պահել նէ՛ անոնց ճակ-  
 տին վրայ նշան դնել. աս նշանը կըսէ  
 նման էր աս դրին F. որ կընը-  
 շանակէ խաչը : Օ՛ի \* խաչն է նշան

ընտրելոց, առիթ կենաց, և առհասարակաց յաւիտենիցն երանութեան || 1) :

Այս ճշմարտութիւնը Վաւիթ մարգարէն աղէկ կը ճանչնար, և զինքը անոր յանձնած էր. ծանր ծանր ձախորդութիւններ քաշած ատենը՝ կօրհնէր զԱ՛ծ և շարունակ Ա՛յ շնորհակալ կը լար. Նարէ է ինչ զէ խոնարհ արարելը զէս, ո՞ր ուսոյց զարդարուիլն 2) : Արժիշէր Ա՛յ իրեն ըրած երախտիքը, ու իրեն բարերարը կը գովէր, որ հովուութիւն զինքը թագաւոր ընտրեց, խրայելացւոց վրայ թագաւորեցուց, իրեն թշնամիներուն յաղթեց, ու անոնց կապուտ կողոպուտովը հարստացուց : Նայց աւելի կօրհնէր զԱ՛ծ անոր վրայ, որ զինքը թագաւոր իքէն Ա՛րիստղոմ զաւկին ձեռքովը հալածեց, թագաւորութիւն արտաքսեց, եօթանասուն հազար իր ժո-

1) Առ Աիւրեյւոյն անգ. ՚ի Թ. ԳԼ :

2) Սաղմ. ԾՃԸ. 7. :

զովրդեան մահաճամբը զօրքը պակսե-  
 ցուց, և ասոնց նման ձախորդութիւնե-  
 րով իրեն շատ ներդութի քաշել տրւաւ :  
 Արովհետեւ աս ձախորդութիւները ի-  
 րեն հպարտութիւր վերցուցին . ինքնաւ  
 սկսաւ մարդկային փառաց ունայնութիւր  
 ճանչնալ . Այ պատուիրանները աղէկ  
 մը պահել, որոնցմով ամէն բարիքը կըս-  
 տացվի : Իսրէ է ինչ զէ խոնարհ ուրախ  
 զէս, սի՛ր ուսայց զարդարու-՛նս քո : Սա-  
 նաւանդ թէ այս ամ ձախորդութիւները  
 իբրև իր յաւիտենական փրկութե նշան  
 մը սեպեց Ղաւիթ, ուստի համարձա-  
 կութիւ Այ կըսէր . « Այլք քո հարան յիս .  
 ե յիս հասարարէցա- յեան քո 1) : Ղաւիթ  
 հոս տեղս որսորդի նմանութիւն կըբե-  
 րէ . որսորդը կենդանին փախած ատենը՝  
 զարնելու համար ետեէն շատ նետ կը-  
 նետէ, ուղղի շատ տեղէն վիրաւորելով

1) Սաղմ. լԷ. 3 :

պատկեցընէ, ու բռնէ տուն տանի: Ա-  
 սանկ կընէ Ա՛ճ ալ մեղաւորներուն. կը-  
 տեսնայ որ կըփախչին կօր իրմէ՝ պէսպէս  
 նետերով ու նեղութիւններով կըլախ-  
 ցընէ, սրտանց կըցաւցընէ, և այսպէս  
 իրեն կըդարձընէ, ու բարերար ձեռքո-  
 վը կըբբռնէ: Ա՛ս ալ պէտք է գիտնալ,  
 որ մարդարէն կըսէ. Հասրասրէցաւ յէ-  
 րո, քի՛ Ա՛ճ որոնք որ ձախորդութիւննե-  
 րով իրեն կըկանչէ կըդարձընէ, անոնք  
 շատ անգամ իրեն ծառայութեան մէջը  
 հաստատուն կըմնան, մէյմալ Ա՛յ ձեռ-  
 քին տակէն դուրս չեն ելար: Աւստի  
 նեղութիւն ալ յաւիտենական փրկութե-  
 նշան կըսեպիլի: Արովհետեւ Ա՛ճ աս նե-  
 ղութեամբ զմարդը չէ թէ միայն կըդար-  
 ձընէ, հապա կըհաստատէ ալ, որ ան-  
 կից ետքը իր պատուիրանները միշտ պա-  
 հէ, ու բարեգործութիւն ընելու ջանայ:  
 Այլէ ուրեմն, թէ ինչըտար քիչ  
 պէտք է վախնալ նեղութիւններէն,

մանաւանդ թէ սիրել պէտք է որով-  
 հետև մտքին աղէկ խորհուրդ կը բերեն :  
 Անդ-էն-ու-ուս-ու-ուս : Աս խօսքին  
 ճշմարտութիւնը ցըցունելու համար մէկ  
 քանի երևելի մարդկանց օրինակները  
 բերենք , որոնք գլխերնին եկած ձախոր-  
 դութէն իմացան , թէ ինչը տար գէշ  
 ու ցաւալի է աշխրբիս ծառայելը , ու  
 ինչը տար միտիմարութիւն կը բերէ ԱՅ  
 ծառայելը : Այն Անսելմոս տեսնելով որ  
 հայրը անզգամ մարդ մընէ՝ գնաց սբ  
 Աննա տիկտոսին կրօնը մտաւ , ու զԱՅ  
 իրեն հայր ըրաւ : Այն Հերոնիմոս Ամ-  
 միանոս խաւարային բանաբը գրվելով՝  
 ուխտ ըրաւ աշխրբիս զինուորութիւն հրա-  
 ժարիլ , թող տըւաւ հարիւրապետութե՛ն  
 պաշտօնը , ու Սոմասկեան ըսված կրօնը  
 հաստատեց : Ասանկ Սարկեղոս Սաստ-  
 րիլեանին ալ ըստ պատահման ոտքը  
 սախտելով պատճառ եղաւ իրեն , որ  
 աշխրբիս ընդարձակ ճամբան թողտայ ,

ու կատարելութեն նեղ ճամբան մըտ-  
նայ Յսեան կրօնին մէջը :

Բայց չուզելով խօսքերնիս աս նիւ-  
թիս վրայ ալ երկնցընել, իրեք մտա-  
ծութիւն կուզեմ առաջ բերել, որոնք  
սբ Բեռնարդոս կըզրէ, որով ձախոր-  
դութիւնները մեղի անուշ կուգան :  
Նայինք կըսէ իրեք բարիքին, որ ասոնց-  
մէ կըծագին, քի մեղքին որ թող կը-  
արվի, շնորքին որ կառնըվի, ու փառ-  
քին որ կըխոստացվի : Աս իրեք բանը  
մտածելով իրաւի նեղուի քաշողը շատ  
մխիթարութի ու թեթևութիւն կըզ-  
գայ : Բայց ամենէն առաջ ասիկայ մըտ-  
վընիս դնենք որ թշնամւոյն ձեռքէն, կիմ  
ուրիշ դիպուճածէն եկած նեղութիւն-  
ները՝ չէթէ անոնք կուտան, ասիկայ  
շանց բնութիւնն է, որ քար կամ ոսկր  
վրան նետած ատենդ՝ քարը ու ոսկրը  
կըխածնէ, չիխածներ նետողին ձեռքը :  
Ուստի մտքերնիս վեր վերցնենք, ու

Հաւտանք թէ Այ կամօքն է աս մեր  
քաշած ներդուծիւր, որ աս բարերարու  
թիւ իբրև գծած հայր մը մեր հոգւոյն  
փրկուծիւր կուզէ հոգալ: Օրբ «էրէ  
Տէր՝ իրարէ Գան ըն զէ՛ս որբէ զոր ըն-  
Գանի 1):

### Պատմութիւն:

Չախորդութիւնները պատճառ եւ  
ղան, որ Ղուղովիկոս Յլոսիոս մեծանուն  
վարդապետը իր մեծութիւր ու մեծ  
պաշտօնը թող տալով վանք մտաւ, ու  
Քնի խոնարհ աշակերտ եղաւ: Ասիկայ  
Վերմանիայի մէջ ծնած էր, բայց իր  
ծնողքը որ երևելի էին, յայտնի չէ, թէ  
մեծ ազգէ՞ (սոյէ) էին, կամ հարուստ  
ըլլալնուն համար այնպէս երևելի էին:  
Ինչ և իցէ իր ազգին համաձայն մե-

1) Առաջ, Գ. 13:

ծուծիւն՝ ունենալու համար, հինգերորդ  
 կարողոս կայսեր ծառայութե՛ն պաշտօնին  
 մէջը մտաւ . քիչ ժամանակիան մէջ ու-  
 նեցած խելքովը թէ՛ կայսեր թէ՛ իշխան-  
 ներուն աչքը մտաւ : Չիգար առաքի-  
 նութիւն մը որ ազնուականի վայելչա-  
 կան ըլլալով չունենար ինքը . ասանկ իր  
 պղտիկութե՛ն ՚ի վեր շնորհալի տղայ էր :  
 Ամենէն աւելի մէկ կտրիճութի մը ունէր ,  
 և շուտ սորվիլ մը այն ամ՝ արհեստնե-  
 րը՝ որն որ ազնուականներուն զաւակ-  
 ները միայն կը սորվին, ինչպէս ըսեմ ,  
 զէնք շարժել , ձիու վըայ ըստ կանոնին  
 հեծնալ , սուրին ճութովը ու բերնովը  
 ամէն կողմը զարնել : Այլ թէպէտ օձէն  
 փախչելու պէս ամէն մեղքէն կը փախչէր ,  
 սակայն իր վարքը իր գործքը այնպէս  
 կը շտկէր , ինչպէս որ աշխարհական թա-  
 գաւորութե՛ն ծառայի մը կը վայլէին , չէ  
 թէ բարեպաշտ քրիստոնէի մը : Արով-  
 հետե սրտին մէջը հպարտութե՛ն ոգի մը

ունէր, ու ասով զինու՛որութե՛ն մէջ կը  
 ջանար առաջ երթալ, ուղղի ինքնալ  
 մեծամեծ մարդկանց ըրած քաջութիւնը  
 ընէ: Մայց Ա՛ճ այն ամ շնորհքները որ  
 իրեն տրւած էր, զինքը իր ծառայութե՛ն  
 մէջը գործածելու պատրաստած էր: Ա՛րդ՝  
 երոր այսպէս երիտասարդութեան ա-  
 տենը ըսած ճամբանիս բռնած կերթար  
 կոր՝ Ա՛ճ յանկարծ դիպու՛ածով մը աս  
 ճամբան ուղեց գոցել, ուղղի իր սիրած  
 աշխրբիս փառքը թող տայ, և արքայ-  
 ութե՛ն փառացը բաղձայ: Ղիպու՛ածը  
 այսպիսի բան էր:

( ) ր մը իրեն նման ընկերներուն  
 հետ վարժութե՛ն համար կեղծ պատե-  
 րազմ կընէին կոր, որուն մէջը Վուգո-  
 վիկոս իր աջողակութիւնը ուրիշներուն  
 աւելի յաղթող կըլար կոր. բայց ինչ-  
 պէս եղաւ յանկարծ մէկը նիզակովը կըռ-  
 նակին ուժով զարկաւ, ու գլխին խելա-  
 պատակը (թասը) սախտեց: Ա՛նմիջապէս

բժիշկ կանչեցին . բժիշկը շատ վտան-  
 գաւոր է ըսաւ վերքը , թէպէտ դրսէն  
 բան չիցըցունէր կոր : Անոր համար՝  
 ուրիշ բժիշկներն ալ որ եկած էին ա-  
 մենը մեկտեղ խորհուրդ ըրին որ դե-  
 ղերով վերքը դուրս հանեն , ու խելա-  
 պատակին վերի կողմը չորս կտրեն : Աս  
 գժուար բանը Ղուգովիկոս լսելով ա-  
 մենեին չիվախցաւ , ու թող աըւաւ որ  
 ուղածնին պէս ընեն : Ակաւ կտրելու  
 ժամանակը , վիրահատը (ճերահը) իր  
 գործիքը պատրաստած ատենը , Ղուգո-  
 վիկոս ալ իր սրտոտութիւնը կըպատրաս-  
 տէր կոր , ուղղի առանց վախնալու ընե-  
 լու բանը քաշէ . անանկ առանց ցաւի  
 նշան ցըցունելու կըկենար կոր , որ կար-  
 ծես թէ արձանի մը գլուխը կըբանային  
 կոր , չէթէ իրենը , Մանաւանդ կտրե-  
 լը երկայն տևելէն ետքը՝ իմացաւ որ  
 նորէն մէյմալ պիտի սկսին , շատ ուրա-  
 խացաւ , որ կտրելէն իրեն նոր վիշտ

պիտի գար, ու ասով Վճի նմանող կըլ-  
լամ կըսէր, որ գլխուս վր խաչ ունիմ :  
Աս ուրախութեն անձային լոյս մը սրտին  
ծագեցաւ, որ իր աշխարհային մտած-  
մունքները բոլոր վերցուց, ու սրտին մէ-  
ջը բարի բարի խորհուրդներ բերաւ, ու  
բով կայսերական ծառայութիւնը ուղեց  
թողտալ, ու Վճի թագաւորին ծառայ  
ըլլալ : Արովհետեւ աս գլխին եկածը Վճի  
ծառայ ըլլալու նշան մը կըսեպէր, ու  
այնպիսի արտօնութիւն մը առած կըհա-  
մարէր, որ չէթէ կուրծքին վրայ կախած  
խաչ տանի, հապա գլխուն վրայ ալ,  
ուստի առաքելոյն խօսքը կըսէր. Այլ  
ինչ բաւ լէցի որբօքէլ, Բայց Ռայն 'է Խաչն  
Տ՞ն Բերոյ (Յ՞նի Վճի 1) :

Այսպիսի մտածութիւններ իրեն բե-  
րաւ աս գլխուն վերքը, որ մինչև ըսնա-  
ցաւ նէ՛ շատ ժամանակ տուեց. բայց

1) Գաղատ. Գ, 14 :

աւելի իրեն երկայն կըբերէր աւ ժամա-  
 նակը մէկ սր անհամբերութի մը , որով  
 ամէն վայրկեան ունեցած բարի դիւ-  
 րութիը կատարելու կըփափայքէր : Արդ  
 երոր ընտացաւ՝ կայսերէն հրաման ա-  
 ռաւ , թող տըւաւ անմիջապէս կայսե-  
 րական պալատը , ու գնաց սրչն Վենե-  
 դիկտոսի կրօնը մտաւ : Չիկրնար ըսվիլ ,  
 թէ ինչպէս քիչ ժամանակվան մէջ ա-  
 մէն առաքինութիները ստացաւ : Աւ ինչ-  
 պէս որ իր դարձին սկիզբը խաչով սկսաւ ,  
 ասանկ ալ ետքը բոլոր իր կեանքը խա-  
 չերով կըլեցվէր : Ա սղի լը մտնալը կրօն ,  
 ու պահել սկսիլը կանոնները՝ ինչ նե-  
 դութի չեղաւ , որ չիքաշեց իր չար ըն-  
 կերներէն , որովհետեւ իր այնպիսի խիստ  
 վարքը ու կանոնապահ ըլլալը՝ իրենց  
 վրայ կարծէին որ մեծ նախատինք կըլ-  
 լայ կոր : Աս տառապանաց մէջը երբեմն  
 երբեմն Աճ զինքը կըմխիթարէր . ուս-  
 տի Ղաւիթ մարդարէին պէս ինքն ալ

կըսէր. Բայ Բողոքս ցաւոց սրտի ինչ  
 ճիւղաբոլակէն ուրախ ասանէր զանձն իմ 1) :  
 Աբոր ուրիշներուն վրայ մեծաւոր եղաւ  
 նէ՛ որչափ ձախորդութիւններ իր վրայ  
 եկան. որովհետեւ ան ատենները հին-  
 գերորդ Կարողոսին, ու առաջներորդ  
 Ֆրանչիսկոսին մէջը կռիւ պատերազմ  
 ըլլալով Պաննոնիայի կողմերը՝ այնպիսի  
 նեղութիւն մէջ ինկաւ, որ հարկադրեցաւ  
 զօրացը ձեռքը աւարի (եաղմայի) վան-  
 քը թողտալ ու փախչիլ : Թէպէտ ետ-  
 քը դարձաւ, ու աւելի փառաւոր վան-  
 քը շինեց նորոգեց, կարծես թէ արի-  
 լը իրեն օգնութիւն ըրաւ : Այս ամբ ը-  
 նողը Մ. Թ. էր, որ անոր կեանքը վշտած  
 ու յաջողութիւն մէջը ուզեց որ անցնի :  
 Յովն. Բողոքս ի վարս Եւրոպ. Յոսիւ.  
 7. յորում յիշատակէ զայլը :

1) Սաղմ. շք. 19 :

## Գ. Լ. Թ.

Բարի Մտածութիւնք ար աստիճանի հարգումն  
 փեսութեան կ' իրարաներէն կ'անելանս :

\* Բերան արդարոյ բղխէ զիմաստութիւնս ॥  
 Առաջ. Ժ. 31 :

Առաքինի ու իմաստուն մարդուն պար-  
 կեշտ նայլածքը կամ խելացի խրատ-  
 ները որչափ օգտակար ու բարեգործութի  
 ընելու յորդոր կըլլան, իր օրինակաւը  
 աղէկ կըցըցունէ Պողեմոն : Առաջուց  
 ասիկայ գէշ մարդ էր. բայց ետքը  
 երևելի փիլիսոփայ եղաւ : Անանկ մարդ  
 մի էր՝ որ ամէն տեսակ զբօսանքներու  
 ինքըզինք տալով կանանց պէս ծաղիկնե-  
 րով կըզարդարվէր, հօտաւէտ բաներ  
 վրան կըցանէր. անուշ զինիի ու աղնիւ  
 կերակուրներու ետեւէ էր : Արիշ մտած-  
 մունք կի՛հ հոգ չունէր, եթէ ոչ մարմնոյն  
 ուղածը ընէ, ու ամէն զբօսանքները վայ-

ելէ : Ընգամ մը Քսենոկրատէս փի-  
 լիսոփային դասատուներ մտաւ , ու անոր  
 համեստութիւնը և պատկեշտութիւն վրայ  
 ըսած խօսքերը լսելով սկսաւ Պողեմոն  
 մտքէն մտմըտալ , որ ծաղիկները , հո-  
 տաւէտ բաները վրայէն մէկդի նետե-  
 ւ անմիջապէս գիներբութիւն , ու կերպ  
 կուրներէն ետ կենայ : Ընանկ փոխվե-  
 ցաւ , որ մարդուն խելքէ մտքէ դուրս  
 բան եղաւ : Ընկից ետքը՝ կրտէ նը Ըմբ-  
 բոսիոս , այնպիսի մեծ փիլիսոփայ ու  
 պարկեշտութիւն օրինակ եղաւ , ինչպէս  
 որ առաջ անառակուէ եղած էր : Մեծ  
 զարմանալիքը ան է , որ Պողեմոնին ե-  
 բեսին պատկերը՝ գարշելի կնկան մէկը  
 իր ընելու գործքէն ամչցուց : Ըս կընի-  
 կը սրտին մէջը գէշ սէր ունենալով իր  
 սիրականին տունը կերթար կոր . ճամ-  
 բան գացած ատենը այնպէս եկաւ , որ  
 աս համեստ ու պարկեշտ փիլիսոփային  
 արձանը տեսաւ , երեսը նայեցաւ կնիկը՝

կարծես թէ իրեն բերնէն և աչքերէն  
 համեստութի կըլսէր, անով իր սրտին  
 սէրը սկսաւ մարիլ, անմիջապէս կըսէ  
 Պլուտարքոս իր խորհուրդը իր ոտքը ետ  
 դարձուց. ու անանկ առաջագրութի մը  
 ըրաւ, որ առջի ըրած գէշութեան անունն  
 ալ չէր ուղէր բերանը առնուլ: Ուստի  
 ճշմարտութի կըսէ Սենեքայ. \* Չէ եր-  
 բէք ընդվայր գործ բարւոյ քաղաքաց-  
 ւոյ, զի օգտէ և՛ լսելեօք և՛ աչօք, և՛  
 ակնարկութեամբ և՛ երեսօք և՛ գնա-  
 ցիւք || 1):

Ի այց ինչ հարկ մեր բանը ցըցունե-  
 լու համար հեթանոսներէն վկայութիւն  
 բերել, երբօր քրիստոնէից մէջէն ալ  
 աղէկ օրինակներ ունինք: Շատ զար-  
 մանալի ու լսելու բան է, որ Սուրիոս  
 կըպատմէ յբ Առկիանոս քահանային  
 համար: Ըստր հոգւոյն խոնարհութիւր,

1) Ի գիրս անգործ. գլ. Թ:

Երեսին զոճարթուիր, ու շարժոճածքին  
 պարկեշտութիւր չէթէ միայն գէշ քրիս-  
 տոնեաները աղէկի կը դարձնէր, հապա  
 կուպաշտներն ալ հաւատքի կը բերէր  
 այնպիսի եղանակաւ, ինչպէս որ ուրիշ-  
 ները քարոզելով ու հրաշք ընելով  
 կը բերէին: Աւստի Սաքսիմիանոս գիտ-  
 նալով Վուկիանոսին սա գործքը, որով  
 մարդիքները դարձի կը բերէր, չէր ու-  
 ղեր ամենեին որ զինքը տեսնայ, կամ  
 իրեն հետ խօսի, մնդի կը վախնար, չըլ-  
 լայ որ սնոր պարկեշտութիւր իր սիրտն  
 ալ դարձնէ, ու քրիստոնեայ ընէ: Ա-  
 նոր համար իրեն վարձք խոստացած կամ  
 տանջանք սպառնացած ատենը, յուսա-  
 լով թէ կրնայ հաւատքը դարձնել՝ սե-  
 նեակին մէջը վարագոյր (փերտէ) մը  
 կախել կուտար, ունդի մէկզմէկու երես  
 չիտեսնեն, միայն ձայներնին լսեն:  
 Ասանկ վախով կը կասկածէր, չըլլայ  
 որ մարդ մը տեսնելու համար քրիս-

տոնեայ ըլլայ: Աթէ աս սրին միայն պարկեշտ երևնալը այնպիսի զօրութիւն ունէր, որ կռապաշտները հաւատքի կրգարծրնէր, հապա որչափ մեծ զօրութիւն ունէր մեղաւորները ուղղութեան ճամբայ դարծրնելու, կամ արդարները կատարելութեան մէջը հաստատելու:

\* Ապա ուրեմն (կըսէ սրն Սլարիոս) օգտակար է երկիւղածաց Այ ներկայութի առն սրյ, ոչինչ ընդհատ 'ի հաւուց անտի, որոց տեսութիւն բժշկարար է ախտից ոմանց ||: Սըն Սլարիոս կարծեմ թէ նմանութի կուզէ բերել ան թըռչնոյն վի որ կըսվի Քալադը, որուն վրայ Պլինիոս այսպէս կըգրէ. \* Այս հաւանուանի դալկաւորի գունոյ, յոր եթէ որ հայեսցի՝ բժշկի 'ի դալկանէ || 1):

Աս բանս իրաւի փորձով ալ կը տեսնենք յաճախ, որ բարեպաշտ ու սր

1) Գեղե Ն. ԳԼ. ԺԹ.

մարդուն ըստ պատահման նայիլն ալ՝  
 շատ մարդիկ աղէկի դարձուցած է։  
 Անդի աս արտօնութիւն միայն սբ Լստ-  
 ունածածիներ շունեցաւ, որ ներկայութեն  
 ատենը զուրիշները կը զարմացնէր,  
 Տեղաւորաց ապաշխարութիւն ընել կը-  
 յորդորէր, գաղջացելոց եռանդ կը բե-  
 րէր, փորձութիւն ունեցողներուն հաս-  
 տատուն առաջադրութիւն կուտար՝ շատ  
 անգամ ալ ուրիշներուն հաւատքը սե-  
 ըր մաքրութիւնը ամօթը կաւելցընէր։  
 Հապա ուրիշ շատ սուրբեր ալ ունեցան  
 աս զօրութիւնը, որով անոնց մօլութիւնը  
 կը շակէին, որոնց վրայ աչքերնին կը-  
 դարձընէին։ Այլեղեցական պատմութի-  
 ներուն մէջը օրինակներ շատ ունինք,  
 որ Լ. Ե ծառայութե մէջ գաղջ ու պաղ  
 մարդիքները մէկ անգամ տեսնելով սբի  
 մը ըրած եռանդադին գործքերը՝ իրենք  
 ալ քաջալերած են անոր հետեւելու։  
 Այս օրոնք որ կը վախնային Վ. սի հա-

ւատքը յայտնի խոստովանելու՝ տեսնել-  
 լով զմարտիրոսները որ տանջանայ տե-  
 ղը արիութիւն և ուրախութիւն կերթային,  
 իրենք ալ անոնցմէ աւելի ուժ առնելով  
 անոնց ըրածը կընէին: Արնամ ըսել,  
 որ մարդուս բնութիւն եղջերուէաց (կէյիկ-  
 ներուն) նման են, կըպատմելի, որ եղ-  
 ջերուները գետին քովը պտըտած ատեն,  
 նին տեսնելով որ դիմացի կողմը պա-  
 րարտ խոտ, ու աղու՛ որ անտառներ կան՝  
 շատ կըփափաքին ան կողմը անցնելու,  
 բայց գետին ջուրը իրենց արգելք կըլ-  
 լայ, ու մանաւանդ անցնելու ալ կըվախ-  
 նան: Սակայն ետքը իրենց մէջէն կըտ-  
 րիճնին կըհամարձակի ու գետին մէջը  
 զինքը կընետէ, ասիկայ ուրիշները տե-  
 սածնին պէս իրենք ալ ետեւէն կընետ-  
 վին: Մարդս ալ ասանկ կընէ: Վի-  
 տենք հաւատոյ լուսով, թէ որչափ  
 սիրելի ու աղէկ բան է ԱՅ պատուի-  
 րանները ու ըսածները ընելը, բայց

դժուհարուհիները որ աստիէն անդիէն կը-  
 հանդիպին՝ գրեթէ միշտ զմեզ կարգելէն  
 կըլախցընեն, մինչև որ մարդ մը տես-  
 նանք, որ ԱՅ պատուիրանները պահե-  
 լու մեզի խորհուրդ տայ, ինքը օրինակ  
 ըլլայ, ու զմեզ իր ետեւէն ձգէ տանի:

Արդ՝ թէպէտ սբ մարդկանց հե-  
 ոուէն տեսնելիլն ալ՝ անպաշտութեան  
 եռանդ մը կըբերեն, որոնք՝ կըսէ Աւթի-  
 միոս, իրենց տեսնելուիլը կըխօսին՝ չէ  
 թէ բերնով, սակայն եթէ խրատ մըն ալ  
 տալու ըլլան նէ՛ աւելի մեծ շահ ու օ-  
 գուտ կընեն: Արիտախոս կըսէր, որ  
 զՍոկրատէսը տեսած ատենս օգուտ կը-  
 գտնեմ, բայց աւելի իրեն հետ խօսած  
 ատենս: Աղերիանոս երևելի մարդը  
 սբ Աւքերիոս ենթին օրինակովը ու խր-  
 րատներովը անանկ ինքը զինք շտկեց,  
 որ բոլորովին ԱՅ դարձաւ, փուճ բա-  
 ներուն հոգը թող տըլաւ, և անպիմ  
 բաներուն ետեւէն եղաւ: Սբ Ռեոնար-

դոսին առաքինութիւն չիկրնար ըսվիլ,  
 թէ որչափ տեսնողներուն սիրտը կը-  
 շարժէր, բայց առաւել մարդկանց սիր-  
 տը կըշարժէր անոր մէկ քանի խօսքե-  
 րէն, որ նեափ պէս կըզարնէին ուրիշ-  
 ները: Այսպիսի խօսքերով իր գրքերը  
 ու գրքերուն թղթերը լեցուն են: Շա-  
 տերուն մէջէն մէկ խօսքը կուզեմ բե-  
 րել, որ կըգրէ բարեկամին մէկին, որ  
 իշխանութեան մէջը քրիստոնէական խո-  
 նարհութիւն, ու անձին ճանաչումը չի-  
 մոռնայ: \* Ասլ 'ի մտի զերիս զայսոսիկ,  
 զէնչ եղեր, զինչ ես, և զինչ լինի-  
 ցիս ||: Աչինչ էիր առաջ, հիմայ մեղա-  
 ւոր ես, ետքը որդերուն կերակուր պի-  
 տոր ըլլաս: Աս մտածութիւն շատ յար-  
 մար է մեր մտքէն հպարտութիւն վերցը-  
 նելու: Բայց մեր ատեններն ալ եղած  
 բան մը պատմենք: Իդալիայու մեծ իշ-  
 լպան մը երևելի քարոզիչին մէկը իր տու-  
 նը հրաւիրեց, ուղղի անոր իր պաշտօնը

ու պարտէզը ու ամէն ունեցած զո՛ւար-  
 ճալի տեղո՛ւանքը ցըցունէ : Իշխանը իր  
 ունեցած աղո՛ւօր բաները ցըցունելէն  
 ետքը՝ հարցուց քարոզիչին, թէ ի՞նչ  
 համարում ու մտածութի՛ ունիս տեսած  
 բաներուդ վրայ : Վարոզիչը որ կըսի-  
 րէր միշտ օգտակար խօսք մը ըսել, պի՛ն  
 տըւաւ, ու ըսաւ. « իմ մեծ մտածու-  
 ՛ թիս՝ որ այսչափ փառաւոր բաներ  
 ՛ տեսնալէն միտքս եկաւ, եղաւ ցաւակ-  
 ՛ ցութն նշան քու ազնուութե՛դ վրայ,  
 ՛ որ սկսայ մտածել՝ թէ ի՛նչպէս ցաւ  
 ՛ պիտոր զգաս մեռնելու ատենդ ասոնց-  
 ՛ մէ բաժնըլեւուդ, ու ուրախութի՛դ  
 ՛ թող տալով քաւարանի մէջ երթա-  
 ՛ լուդ համար. ի՛նչպէս ան ատենը սկսիս  
 ՛ պիտի ըսել. «՛հ, մեռնելուն ալ այս-  
 ՛ չափ դառն ըլլալը չէի գիտէր » : Աս  
 համարձակ խօսքը իշխանը շատ գովեց,  
 ու գովածին չափ ալ իրեն օգտակար ընել  
 տըւաւ, որով իր վարքը աղէկի փոխեց :

## Պատմութիւն :

Սք Ռեռնարդոս կըսէ . \* Դ ճայնէ կամ նաև 'ի տեսութէ առն սբյ և կատարելոյ վաղվաղակի շնչէ հոգմ և գնան ջուրք ॥ 1) : Ըս խօսքին ճշմարտութիւր յայտնի ցըցուց Ընտոնիոս Աղեղեան , որուն խօսածը ու տեսնելիլը զուրիշները կըլացունէր : Ըս սբը՝ որ Աբաբլի քաղաքը բարեսէր գործակալուէ ըսված կրօնը հաստատեց , կերթար քաղաքներ ու գեղեր հոգի դարձընելու համար . աշխրբիս ունայնութիւր ու ողորմելութիւր ժողովը գոց կը քարոզէր . անդիի աշխրբիս գժոխքին ու արքայութե վրայ անանկ սրտաշարժ խօսակցութի կընէր , որ խստասիրտ մեղաւորն ալ ըսածին չէր կրնար դէմ կենալ : Ըսիկայ գրսէն պարկեշտութին ալ անանկ կըցըցունէր . որ մէկ

1) Բ.ան. ԺԳ. Երգոց :

քարոզ մի էր առանց բերան բանալու,  
 ու տեսնողներուն սիրտը կըշարժէր :  
 Ասոր համար թէ ռամիկներուն թէ աղ-  
 նուհաններուն առջևը մեծ յարգ ունէր,  
 ու ուր տեղէն որ անցնելու ըլլար, ա-  
 մէնն ալ իրեն խոնարհութիւն ու քաղա-  
 քավարութիւն բարե կուտային : Մանա-  
 ւանդ անուշութիւն ալ վարձուներին եղա-  
 նակը ուրիշներուն սիրտը իրեն կըձգէր,  
 անոր համար շատ մարդիկ իրեն կու-  
 գային կերթային իրենց գործքերնուն  
 պատճառաւ :

Իսկայ երիտասարդ մը կար, որ աս  
 սբ մարդու հետ ամենեւին չէր ուղեր  
 խօսիլ, մանաւանդ թէ հետու կըլիախ-  
 չէր, կարծես թէ գէշ ախտ մը ունի  
 աս սբը, կամ հերեփկոս է : Սակայն  
 փախչելուն պատճառը աս էր, որպէսզի  
 չըլլայ թէ անոր տեսութիւնը ու խրատ-  
 ներովը իր գէշ վարքը փոխէ : Աս երի-  
 տասարդին անունն էր Աստանդին

ԱՆՈՒՍԱՑՕ . աղնոճական մարդու զաւակ ,  
 բայց իր անառակութիւն անարդանք մեծ  
 հասուցած էր աղնոճականութենը . թող  
 որ իր շոայլութիւնը ու ըրած զբօսանքնե-  
 րովը բոլոր քաղքին գայթակղութիւն  
 զած էր : Անգամ մը փողոցի մէջ (սօ-  
 խախը) պարապ կը պտրտէր կոր , ու կը-  
 խօսէր կոր ընկերներուն հետ՝ որ իրեն  
 պէս աղնոճական էին , բայց իրեն վարքը  
 չունէին , մէյմալ տեսաւ որ անդիէն աս  
 սը մարդը իր պարկեշտութիւնը կուգայ  
 կոր : Անկերները որ սրին հետ բարե-  
 կամութիւն ըրած էին , շուտմը դիմացը  
 ելան , ու ձեռքը պագին : Աինակ Աստ-  
 տանդին շփոթեցաւ մնաց , չէր գիտէր  
 որ ինչ ընէ : Ա սղի եթէ ուրիշներուն  
 ըրածը չընէ՝ հպարտութիւն ու անբաղա-  
 քավարութիւն ըրած կըլլար . իսկ երթալը  
 անոր քովը՝ իր խելացը շատ հակառակ  
 բան էր , Ա երջապէս ուղեց որ ընկեր-  
 ներուն ըրածը ընէ , ու թէպէտ ներսէն

չէր ուզէր կոր, բայց դրսէն ուզեց որ  
 պատիւ մը ընէ, անոր համար գնաց  
 ձեռքը պագաւ: Ան ատենը սրը չգիտ-  
 ցածէն դալով Աստանդինոսին անառակ  
 վարքը՝ սկսաւ իրեն սէր ցըցունել, ու  
 անանկ ընտանեբար խօսակցիլ, մինչև  
 սրը համարձակեցաւ իրեն ըսել, որ  
 շնորք մը կըխնդրեմ քեզմէ, ու կաղա-  
 չեմ չէ չըսես: Արիտասարդը չիգիտ-  
 նալով որ ինչ պիտի խնդրէ իրմէ, պին  
 տըւաւ, որ պատրաստ եմ ինչ որ խըն-  
 րելու ըլլաս: Աւրեմն ըսաւ սրը կաղա-  
 չեմ քեզի շատ, որ ութը որ երբեմն  
 երբեմն մտմտաս աս խօսքս. \* Այրկե-  
 նական է որ բերկրեցուցանէ, յախտե-  
 նական որ տանջէ:

Խելքը վրայէն գնաց Աստանդի-  
 նոսին աս բանին վրայ որ ամենևին չեր  
 կարծէր, բայց որովհետև պատուոյ դէմ  
 է խոստումը ետ առնելը՝ ըսաւ որ կը-  
 նեմ կըկատարեմ: Սըր երթալէն ետքը

խաղալու խնտալու զնաց ընկերներուն  
 հետ . ու բարկու թի մը կընախատէր սրը  
 որ ասանկ բան իրմէ խնդրեց : Սակայն  
 իրիկվան դէմ տուն զարձած ատենը՝  
 սրին խօսքը տեղը տանելու համար  
 սկսաւ քիչմը մտմտալ ըսածը . բայց  
 տեսաւ որ լալու բան է , չէ թէ ծիծա-  
 ղելու : Ասղի երոր միտքը սկսաւ բերել  
 առջի ըրած զբօսանքները՝ տեսաւ որ ա-  
 մէնն ալ վայրկենի մէջ անցած են , ու  
 անոնցմէ ուրիշ բան մնացած չէ , բայց  
 եթէ մեծ մեծ մեղքեր , ուստի աղէկ ը-  
 սաւ . \* Այրկենական է որ բերկրեցու-  
 ցանէ ॥ : (Վանք հիմայ) կըսէր , որ միւս  
 ըսածն ալ փորձով տեսնանք . \* Հա-  
 լիտենական որ տանջէ ॥ : Աս բանս իմ  
 գլուխս ալ կընայ գալ , թէ որ աս վի-  
 ճակիս մէջը մեռնելու ըլլամ , ընտոր շա-  
 տերուն գլուխը եկան , որ իրենց կեան-  
 քերնին մեղքի մէջ անցընելով՝ ետքը  
 չարաչար մահո՛ւամբ մեռան : Աս մտա-

ծուծէ մէջը Մ.Ծ իրեն շնորհք տալով  
 սկսաւ ճանչնալ թէ ինչպիսի հիմայ ինչ  
 վտանգներու մէջ պտըտէր է, որչափ  
 դժոխք երթալու մօտիկցեր է. ուստի  
 սկսաւ լալ ըրած մեղքերուն վրայ, ու  
 հաստատուն առաջագրութի դրաւ, որ  
 ասկից ետքը ատ անխելքութիւնը չընէ,  
 որ վայրկենական հեշտութիւնը աւելի սի-  
 րէ, ու յաւիտենական տանջանքները  
 հոգը չըլլայ: Էտեւեալ օրը դնաց անմի-  
 ջապէս սրին, նախ շնորհակալ եղաւ որ  
 այնպիսի օգտակար խրատ իրեն տրւաւ,  
 ետքը իր ամէն մեղքը անոր խոստովա-  
 նանք եղաւ: Անկից ետքը սկսաւ տար-  
 բեր ճամբայ բռնել, ու ինչպէս որ ա-  
 ռաջ մեղաց պատճառ եղած էր, անա-  
 տենէն վերջը առաքինութեան օրինակ  
 եղաւ: Այնպէս սրին հաստատած կրօնին  
 մէջը մտաւ, ու Մ.Ե մեծ ծառայ եղաւ,  
 ու հոգւոյ փրկութիւն պատճառ: Աօրհ-  
 նէր միշտ ան օրը, որ աս սրը իր դի-

մացը ելաւ, ու այնպիսի հոգեւոր խրատը տրւաւ :

Պէտքոս գէտաւէոս 'ի Վարս հօջն  
Անբոնէ Ասլէղէան. գլ. Է :

## ԳԼ. Ժ.

Բարէ Արամաւէն որ պէտպէս պատահե-  
մաննէրէն իւհանձն :

\* Որոց սիրենն զԱճ՝ յամենայնի գոր-  
ծակից լինի 'ի բարիս ॥ .  
Հոով. Է. 28 :

Այլ Պրանչիսկոս Սայեղեան իր գրք-  
քին մեջը որ բարեպաշտութիւն ապրելուն  
կերպը կըսորվեցընէ, բարի մտածու-  
թիւներու աղբիւր մը մեզի կըբանայ, ցը-  
ցունելով թէ ինչպիսի եղանակաւ մեր  
միտքը առ Աճ կրնանք վերացընել այն  
ամբ բաներու մեջ որն որ մեր գլուխը

կուգայ : Աւ չիկայ արարած մը, որ մե-  
 զի Մ.Յ ճանաչումը ու սէրը չիցըցունէ,  
 Աս զի աշխրբիս մէջը ինչ որ կայնէ՝ ա-  
 մէնն ալ անձայն բերանով մարդուս ի-  
 մացընելով Մ.Յ կարողութիւնը իմաստու-  
 թիւր ու բարութիւնը կը պատմեն, սբ մտա-  
 ծութիւներ մտքերնիս կը բերեն, ու մեր  
 սէրը կը բորբոքեն : Աս խօսքը սբ Պրան-  
 չիսկոս առած է սբ ( ) գոսափնօսէն որ  
 կը սէր. \* Արկինք և երկիր ազազակեն  
 Տէր սիրել զքեզ ॥ : Աթէ աչքս վեր  
 վերցընեմ, ու արևին նայելու ըլլամ՝  
 որ իր պայծառ լոյսը կուտայ, եթէ ա-  
 տեղներուն նայիմ՝ որ մեզի բարերարու-  
 թիւն կընեն, ամէնն ալ իմ մտքիս շա-  
 բունակ կը կանչեն. \* Սիրէ զՄ.Յ, որ զքեզ  
 այսչափ կը սիրէ ։ Աթէ օդը նայելու  
 ըլլամ, որուն մէջը տեսակ տեսակ թըռ-  
 չուններ կը թռչին, եթէ ջուրը նայելու  
 ըլլամ, որ տաքութիւնը կը պաղեցընէ.

եթէ երկրիս՝ որ այնչափ օգտակար բոյ-  
 սեր կրբուսցընէ, ամէնն ալ ինձի աս  
 խօսքը կըսեն . \* Սիրէ զՎ՛ճ ։ Եթէ աղ-  
 ուոր պարտեղի մէջ ընտիր ծաղիկնե-  
 րուն հոտը առնեմ, անուշ պտուղներ  
 ուտեմ, ամէնն ալ ինձի կըսեն . \* Սիրէ  
 զՎ՛ճ որ զքեզ կըսիրէ ։ Եւսպէս յք  
 ( ) գոստինոս ամէն բաներէն բարի մտա-  
 ծութիւն կըհանէր, ու օգտակար խրատ-  
 ներ, որոյլ իր ժողովուրդը փրկութեան  
 կըյորդորէր . Եմանապէս եբոր ծիծ-  
 օունքները կըտեսնէր, որ աշնան մօտ ի-  
 րենց պատին կամ գերանին վրայ շինած  
 բոյներնին թող կուտան, որն որ գարնան  
 աշխատեցան շինեցին, ու առանց ինչ  
 կերակուրի ուրիշ տեղւանք կըթռչին  
 կերթան՝ ասանկ ենք կըսէր մենք ալ՝  
 որ աս աշխարհիս մէջ ճամբորդ ենք . շուտ  
 մը աշխարքը պիտոր թող տանք, հարս-  
 տութիւնը փառքը ու ուրիշ բաները ու-  
 րոնք որ աշխատանքով ու հոգով վաս-

տըկեցանք Հոս պիտի մնան, միայն մեր  
անձը հետերնիս պիտի տանինք ուրիշ  
երկիր: Ա՛նձի ամէն մարդ իր տանը մէջը  
հիւր (միսաֆիր) է:

Մ. յսպիսի խորհուրդներ ամէն սուրբ  
վիճակները ունէին, որ ամէն տեսած բա-  
ներնէն մէյմէկ իմաստուն ու հոգևոր  
մտածմունքներ կը հանէին: Այն կիւրեղ  
եէմացին տեսնելով զմիջիւնները՝ որ ա-  
մառը ցորենի հատեր կաշխատին կը ժող-  
վեն, ու գետնի տակ շինած տեղերնին  
կը տանին, ուղղի ձմեռը ապրուստ գտնեն,  
կը մտածէր ասով, [Թէ ի՞նչպէս ինքն ալ  
յաւիտենականութե՛ն համար պիտոր աշ-  
խատի: \* Տեսել զմիջիւնս յամառան  
հոգալ զպէտս կերակրոց, ասէր. նմա-  
նող լեր և դու, և ժողովեա՛ս քեզ զար-  
գասիս բարեաց գործոց ՚ի հանդերձեալ  
յաւիտեանսն ॥: 1) Ա՛նձի աղէկ գիտէր

1) Կաթ. շ:

Սողոմոն իմաստունին խօսքը , որ կըսէ ,  
 Լ՛ըբէ աս իրջէն ո՛վ զայս ե նախանշե՛մ  
 ընդ ճանապարհս նի՛ 1) : Սի՛ն Անսելմոս  
 կանգվարիայու եպիսկոպոսը որ բարի  
 մտածութիւն ամէն բանէն կըհանէր ,  
 իրեն գործքին համար ճամբայ կերթար  
 կոր : Ա՛էյմալ նայիս որ նապաստակ մը՝  
 որ շուները կըհալածէին կոր , եկաւ ձի-  
 ուն տակը մտաւ՝ որուն վրայ սրը հե-  
 ծած էր , եկան շուները չորս կողմը պա-  
 շարեցին , սկսան հաչել , բայց չէին կրը-  
 նար կոր նապաստակին քովը մերձենալ ,  
 կարծես թէ կըվախնային կոր մտնալ ան  
 տեղը , ուր որ նապաստակը փախաւ կե-  
 ցաւ : Աս ծիծաղելու բանը քովի եղող-  
 ները տեսնելով սկսան ծիծաղիլ , բայց  
 սր Անսելմոս սրտէն հառաչելով ըսաւ .  
 գուք կըծիծաղիք ու կըխնտաք կոր ,  
 այլ խեղճ նապաստակը չիծիծաղիր կոր :

1) Առակ . Կ . 6 :

Ահա ասանկ սատանաներն ալ պէսպէս  
 մոլուեց ու մեղաց ճամբաներ մարդը տա-  
 նելէն ետքը՝ մեռնելու ատենը եբոր հո-  
 դին ՚ի մարմնոյն պիտոր բաժնրվի՝ չորս  
 դիէն վրան կրվաղեն դժոխք տանելու  
 համար: Ան ատենը մարդս ահու դողու  
 մեջ մտած՝ տեղ կրփնտրուէ փախչելու,  
 ու երանի՛ եթէ գտնելու ըլլայ. բայց ե-  
 թէ չհագտնելու ըլլայ՝ յաւիտեանս յա-  
 ւիտենից կրկորսրվի կերթայ: Աս ըսե-  
 լէն ետքը բռնեց նապաստակը ազատեց,  
 ընկերներուն միտքը բարի մտածութի  
 նիւթ տրւաւ, ու ինքն ալ անիկայ սկսաւ  
 մտածել: Այլ փուղգեւնտիոս Հռուս-  
 պայու ենթը տեսնելով զհռովմ որ յաղ-  
 թական հանդէսներով զարդարված է,  
 ու յաղթական հանդէսով Թէոդորիկոս  
 թագաւորը ներս կրմտնայ կոր՝ սկսաւ  
 մտածել ու ըսել. \* Եթէ ասանկ աղւոր  
 է հռովմ քաղաքը՝ հապա որչափ աղւոր

պիտոր ըլլայ արքայութիւնը: Այլ եթէ  
 ունայնութիւն սիրողները այսչափ փառք  
 կանուան, հասպա ինչ փառք ինչ պա-  
 տիւն պիտի անուան ճշմարտութի սիրող  
 սուրբերը ॥ :

Տես որ ինչպէս ամէն բանէն բարի  
 ու օգտակար մտածմունքներ կը հանէին:  
 Կարգմը որ ամէն աղտեղի մտածմունքը  
 մտքէն մեկզի թող տըւած է, գէշ բանէ  
 ալ աղէկ մտածութիւն կը հանէ: Ինչպէս  
 որ սր՝ Ա՛ննոս Ենդսը ըրաւ, «ասիկայ Ա՛ն-  
 տիոք քաղաքը Եկեղեցնայ մէջը ութը Ե-  
 պիսկոպոսներուն առջին քարոզ տըւած  
 ատենը՝ Եկեղեցնայ քովէն Եկաւ անցաւ  
 Վեղազիս, որ իր անպարկեշտ անառա-  
 կութը քաղքին մէջը բոլորին գայթակ-  
 ղութի եղած էր, որովհետեւ ինչպիսի  
 գարշելի կնիկ ըլլալը դիւրաւ կրնար հաս-  
 կընալ տեսնողը անոր հագովէն կապ-  
 վելէն որ բոլորովին ոսկիին ու գոհարնե-  
 րու մէջ կը թաթխուէր, կուրծքին բա-

ցութէն, գլխուն ու մարմնոյն անվայել  
 շարժվածներէն, ինչպէս ան ատենները  
 սովորութիւն էր: Այլ եպսնները տեսնե-  
 լով հոն տեղս շատ շփոթեցան, ու աչ-  
 քերնին մէկդի դարձուցին. միայն սր  
 Նոննոս քիչմը երկայն նայեցաւ անոր  
 վրայ. ետքը երգսներուն դարձաւ հար-  
 ցուց լալով, ինչ մտքերնիդ եկաւ սա  
 դարշելի կնիկը տեսաք նէ. անոնք երօր  
 ւրան չհտըւին նէ՝ ինքը ըսաւ. « Այ  
 „ ինձ, որչափ կըսոսկամ ես, չըլլայ որ  
 „ վերջի դատաստանի ատեն Վստակայ  
 „ մեզի հետ բաղդատէ, ու մեր ըրած  
 „ գործքը, մանաւանդ մեր ունեցած  
 „ անձային պաշտօնը աս ողորմելի կնկան  
 „ իր ըրած զարդարանքներուն աշխա-  
 „ տանքին հետ մէկտեղ կշռէ: Անիկը  
 „ մարդկանց աչքին աղէկ երևնալու հա-  
 „ մար ինչ զըտար օրեր կանցընէ հագ-  
 „ վելու կապվելու համար. մենք Վսի  
 „ հաճոյ ըլլալու համար՝ ինչ զարդարանք

„կուտանք մեր հոգւոյն, ու ինչ կը-  
 „նենք, մեր հոգը մեր ջանքը աս գարշե-  
 „լի կնկան ունեցածէն աւելի պիտոր ըւ-  
 „լար. բայց եթէ հաւասար ալ ըլլար՝  
 „պէտք էինք գոհանալ“: Ատքը տուն  
 դարձաւ նէ սբ Աոննոս գետինը ինկաւ  
 ու սկսաւ Ա՛յ աղաչել, որ եթէ եպսոպոս  
 մէջը ծուլութի մը ըրած է նէ՝ իրեն նե-  
 րէ: Ասոյն կրմամտար սրը, թէ ինչ է  
 Ա՛ծ, ու ինչ է ինքը, որ անանկ քիչ  
 հոգ ունի Ա՛յ սիրելի ըլլալու: Արմամտար  
 զկնիկն ալ, թէ ինչպէս մարդկանց սի-  
 րելի ըլլալու համար անանկ կաշխատէր:

Հատ երկայն կըլլար մէկիկ մէկիկ  
 գրել ցըցունել իւրաքանչիւր բաները,  
 ուսկից բարի մտածութիւններ ու պտուղ-  
 ներ կելլան: Ինչպէս ըսեմ, ժամա-  
 նակին ամէն իժիր փոփոխութէն, վա-  
 ճառականներուն անչափ անհամար սրբա-  
 մաշուկ հոգերէն, զինուորներուն պատե-  
 րազմի մէջ ըրած հնազանդութէն, մշակ-

ներուն աշխատանքէն, թռչուններուն  
 հոգածութէն, կենդանեաց հնարագի-  
 տութէն բարի մտածութիւներ կրնայ  
 հանվիլ: Արովհետեւ առաքինութիւն սի-  
 բող հոգւոյն ամէն բանը իրենց բարին  
 կըցըցունեն: Աւր թողունք որ թէատ-  
 րոնական խաղերն ալ՝ որոնք աւելի տես-  
 նողներուն կրվասեն, քան թէ օգուտ  
 կրնեն, երբեմն բարի մտածութիւներու  
 պատճառ եղան:

Վերը պատմեցինք, որ գարշելի  
 կնկան մէկուն զարդը սբ ենդսին բարի  
 մտածութիւն բերաւ. հիմայ պատմենք  
 անոր ներհակը, քի սբ մարդու մը առա-  
 քինութիւն ալ թէատրոնի խաղին մէջը  
 յարմարցընելով՝ գէշ կնկան մէկը իր  
 չար ճամբայէն դարձուց: Սեգովիա կաս-  
 տեղեայ հին երևելի քաղաքը թէատ-  
 րոնին մէջը Լոպեզիոս Ալգային շինած  
 խաղը կըխաղային կօր: Լոպզին անունն  
 էր՝ Իմաստուն յիմար: Լսողք մէջը երբ-

տասարդին մէկը եղաւ Յովհաննէս Ա.Յ,  
 որ գարշելի կնիկները պիտի յանդիմա-  
 նէր, ինչպէս աս սրը կընէր նէ: Այս  
 ուղի սրին ըրածին պէս ընէ՝ ելաւ բարձր  
 տեղմը ու այսպիսի կնկան մը գէմ  
 սկսաւ խօսիլ, բայց անանկ սքանչելի  
 խօսքերով, որ հոն տեղի եղած կնիկը՝  
 որ ինքը զինք բոլորովին գէշ գործքի  
 արւած էր, սրտին մէջը անպաշխարելու  
 սէր մը սկսաւ զգալ: Անդի նախ բարի  
 մտածութիւն մտքին մէջը սկսաւ զգալ.  
 ետքը կամքը սիրով բորբոքեցաւ. ետքը  
 ձեռքը կուրծքին սկսաւ զարնել, հա-  
 աւաչել, մեղքերը յայտնապէս ըսել ու  
 քահանայ փնտրուել, որ մեղքերը խօս-  
 տովանի: Աս անկարծելի բանը հոն ե-  
 ղողները տեսնելով, ոմանք զինքը ձեռ-  
 քէն բռնեցին, ու քահանայի տարին:  
 Քահանային մեղքերը խօստովանեւէն  
 ետքը՝ աշխարքս ալ թող տըւաւ. աս  
 առաջադրութիւնը վրայ հաստատ կենալու

Համար շատ մարդիկ իրեն սպրուստը  
կըհոգային: Բայց չէ՛թէ թէատրոնին  
խաղերուն մէջը, հասկա կաքաւելու մէջն  
ալ մէկը բարի մտածութիւն ունեցաւ,  
ինչպէս հիմայ պիտի պատմենք:

### Պատմութիւն:

Լոնտոն բոլոր Բրիտանիայու երեւելի քաղաքը ամբարիշտ Լոնտոնէթ  
թագուհին թագաւորած ատենը՝ լծով-  
մաս Պոնտոս անուամբ երիտասարդ մը  
կար հոն, որ թէ մեծ մարդու զաւակ  
էր, ու թէ առաքինի էր: Անորմէն ու  
հոգւոյն գեղեցկութիւնը, արհեստը ու  
գիտութիւնը, ասոնց ամէնը մէկտեղ գա-  
լով աս տղան անանկ զարդարած էին,  
որ թագաւորական պաշտօնի մէջ մտնե-  
լու արժանի եղած էր: Ասոր համար  
թագուհւոյն առջին ամէնէն շատ սիրելի  
ըլլալով՝ աւելի անոր աչքը մտնալու,

ու աշխրբիս զբօսանքները ընելու հա-  
մար՝ ուղեց որ դրսէն թագուհւոյն ա-  
ղանդին հաւնած ցրցունէ զինքը, ու սըր-  
տէն ուղղափառ հաւատքը պահէ : Անգ-  
ղիացիք (ինկիլիզները) սովորութի ու-  
նին որ Վսի ծննդեան օրը շատ ուրա-  
խութի խնտում կրնեն, մանաւանդ կա-  
քաւ ալ (իմ Պալլօ) : Աղիսարէթ թա-  
գուհին որովհետեւ կուզէր որ մեծ կա-  
քաւելուն խաղը ընէ, թուովմասը կանչեց  
որ ասոր մէջը մտնայ. վնդի թէ կաքա-  
ւել աղէկ գիտէր, միանգամայն և թէ  
երեսով ալ շնորհալի ըլլալով՝ ուրիշնե-  
րէն աւելի լաւ կերեար :

Աստի եկաւ թուովմաս նոյն օրը,  
անանկ աղոճոր հագված կապված, որ  
խաղացած ատենը ամենուն աչքը իր վրայ  
էին : Կաքաւելուն մէկ տեսակը կայ որ  
շատ դժոճարին է, բայց շատ ալ գովելի  
թէ որ յաջողելու ըլլայ : Ասիկայ այն-  
պէս բան է, որ կաքաւողը ինքը զինք

վեր կընեաւ, վերջէն վար ինկած ա-  
 տենը ոտքի վրայ շիտակ պիտի կենայ՝  
 ու շուտ շուտ կըօր պիտի պտըտի,  
 որ շատ դժուար բան է, եթէ առանց  
 գլուխը դառնալու կրնայ ընել նէ: (Թով-  
 մաս տս տեսակը ուղեց ընել: Առջի ան-  
 դամուն յաջողեցաւ, տեսնողները ամէ-  
 նը մէկէն ձեռք ձեռքի զարկին, թա-  
 գուհին ալ տեղէն ելաւ՝ (Թովմասին ձեռ-  
 քէն բռնեց քովը նստեցուց, ինչիւն որ  
 ուրիշներն ալ իրենց խաղը ընեն: Ասոնք  
 լրմննալէն ետքը՝ թագուհին սկսաւ յոր-  
 դորել զ (Թովմաս, որ նորէն մէյմալ կա-  
 քաւ է: (Թովմաս առջի ըրածին պէս դար-  
 ձեալ ընել սկսաւ նէ՝ աղէկ իմացաւ որ  
 ինչիւ ճշմարիտ ըսաւ Սողոմոն իմաստու-  
 նը. (Երոյ ուրուխտ-լին ի սուգ գայ 1):  
 Այդի մարմինը յոգնելով, գլուխն ալ  
 այնչափ դառնալէն պարտելով՝ յան-

1) Ասակ. ԺԳ 13:

կարծ խաղին մէջը օրթան ինկաւ մնաց :  
Տեսնողները սկսան ծիծաղիլ , ինչպէս  
առաջ կը գովէին կոր . թագուհին ալ  
էյնալուն համար ցաւակցելուն տեղը բար-  
կանալով ծաղը սկսաւ ընել զձօովմաս  
ու ըսել . ելիր եղ : Աշխառ ոտքի վրայ  
երեսը կասկարմիր կտրած ամէնալէն .  
բայց ծունկի վրայ իքէն աչքերը առջևը  
նայելով կամաց ձայնով մը ըսաւ ինք  
իրեն . աշխրբիս փառքը ասանկ կանցնի :

Աս մտածութիւնը ելաւ թագաւո-  
րական պաշտօնէն , ու Աեղմոնդէ ըսված  
իր տունը գնաց . ասիկայ մտքէն չէր կըր-  
նար հանել , թէ աշխրբիս ամէն ու-  
րախալի զբօսանքն ալ՝ ետքը այսպիսի ա-  
մօթ կը բերէ : Աւստի մտմտալով թէ աշ-  
խարքս իրեն ծառայողներուն ինչ վարձք  
կուտայ , ինչպէս չարութեամբ մեծու-  
թէն կըխոնարհեցընէ , ու գովու-  
թեան հետ մէկտեղ նախատինք ալ կու-  
տայ , սկսաւ մտքէն ասանկ ըսել . “ Այ

„ինձի, որ ասանկ ապերախտ ու չար  
 „տիրոջ մը այսչափ ատեն ծառայեցի՝  
 „եթէ Ա՛յ փառացը ու հոգւոյս փրկ-  
 „կութենը համար ընելու ու քաշելու  
 „ըլլայի, որչափ որ աշխարքիս ղիւրու-  
 „թենը, ու փուճ բանի համար ըրի, ինչ-  
 „պէս հիմայ երջանիկ կըլլայի, ու Ա՛ս  
 „տուճմէ առատ վարձք կառնէի: Բայց  
 „հազար գոհութի՛ Ա՛յ, որ ինձի ողոր-  
 „մեցաւ, ու իյնալովս ղիս մեծ չարէն ա-  
 „ղատեց, որուն մէջը կորսըվէի պիտոր  
 „եթէ խափանելու չըլլար նէ: Ա՛րանի  
 „ինձի կուտամ՝ որ մեռնելէս առաջ  
 „աչքս բացվեցաւ, ուզի յայտնի տես-  
 „նամ թէ աշխարքս ինչպիսի վախճան  
 „ունի իր ունայնութենը: Յաւիտեան  
 „թշուճառ պիտի ըլլայի, եթէ մեռած  
 „ատենս միայն՝ աս լոյսը ունենայի“:  
 Ա՛ս բաները խորունկ մտածելով լծով-  
 մաս առաջադրութի՛ դրաւ ինքը ղինք  
 շտկելու, սկսաւ ծոմապահութի՛ ընել,

մարմինը չարչարել, և սրբութե՛ն ճամբայ բռնել. իր խօսակցութի՛նը պարզ հոգևորի վրայ էր, եբօր իր քովը մարդիք գալու ըլլային: Ետքը Յնեան կրօնի մէջ մտաւ, ու իր առաքինութի՛ններովը կրօնին պարծանք եղաւ, մանաւանդ ուղղափառ հաւատքին դաւանութի՛ւն ալ, որուն համար տասը տարի աստին անդին բանտի մէջ կեցաւ՝ բոլոր աշխարքիս պարծանք եղաւ: Ա՛ս պատմութի՛նը որ այսչափ երկայն պատմեցինք, կուզէինք ցըցունել, թէ այն ամ միջոցները՝ որ թուլմասին կեանքը յաւիտենական դատապարտութե՛ն մէջը կը դնէին կօր, Ա՛ծ անոնցմով իրեն սրտին մէջը բարի մտածմունքներ դրաւ, ու ետքը յաւիտենական փրկութեան սէրը:

Հ. Դանիէլ Բարդուղան գէրս աս  
 Անգղիոյ և Հ. Մարտիանի՛ն Կարեգի  
 ասուրց յէլ:

## ԳԼ ԺԵ:

Բարի Մարտի-Մարտի Ժամանակին պէտք է  
ընդունել, որ շատ մը կարողութիւն:

\* Օ՛գամանակ և զպատասխանի ճանաչէ  
սիրտ իմաստնոյ: Օ՛ր ամ իրաց ժամա-  
նակ է և իրաւունք ॥

Վարդ. Է. 5:

Բարի մտածութիւններուն պտուղը  
ծաղիկ իբէն կը կորսըվի, երոր մէկը ի-  
րենց ազդեցութիւն մտիկ ընել չուզեր:  
Այլ կը պատահի, որ Մ.Տ. երկնաւոր  
մշակը բարի խորհրդոյ հունամը մար-  
դուս մտքին մէջ ցանած ատենը՝ շուտ  
մը սատանան ալ կուգայ՝ ու չար խոր-  
հրդոյ մը որով անոր վրայ կը ցանէ, և  
այսպէս եթէ վնաս մալ ընելու չըլլայ  
մարդուն՝ աս միայն միտքը կը ձգէ, որ աշ-  
ուաքինութիւն ընելու ու Մ.Յ. ծառայելու

դեռ շատ ժամանակ կայ, պէտք է երի-  
 տասարդութիւն (կենճութիւն) ատեն քիչ-  
 մը ուրախանալու ետեւէ ըլլալ. հարկ մը  
 չի գայ որ մարդ անմիջապէս ԱՅ ըսածը  
 ընէ: Տղայ մը թէ ժամանակէն առաջ  
 ծնանելու ըլլայ՝ շատ անգամ վիժած  
 կըսեպիլի. և խորհուրդ մընալ շուտ մը  
 ընելու ըլլաս քիչ անգամ կը ըլլայ որ յա-  
 ջողի: Այսպիսի չար խորհուրդներ կը-  
 բերէ սատանան որ խորամանկ օձ է,  
 ուղի ըստի մտածութիւնները կատարելը  
 ուշացընէ, և ասով սբ ազդեցութիւնն  
 բուն գործքն ալ չէթէ միայն ուշացը-  
 նէ, հասկա բոլորովին խախտնէ: Անշի  
 մտածութիւն ու առաքինութեան սէրը  
 որ զմեզ ներդի մէջ կը ձգէ՝ մեր սպակա-  
 նեալ բնութիւն բռնական շարժում է, և  
 բռնական շարժումը որ չափ երկար տեւէ՝  
 կամաց կամաց կը քիչնայ ու կը պակսի,  
 մինչև բոլորովին ետքը կը հատնի կեր-  
 թայ: Աս խօսքը սբ Ասկեբերան ինքը

կըսէ . \* Ուժգինս ճգնի այսն չար առ  
 'ի սպրդիլ մտանել 'ի ներքս 'ի հոգին ,  
 և եթէ սուղ ինչ ընդարձակութի գտցէ՝  
 գլխովին թմբրեցուցանէ ॥ 1) :

Ուստի Հոգին սբ կըխրատէ զմեզ ,  
 որ մտքերնուս եկած բարի բանը ընե-  
 լու չուչացրնենք : Ա՛յ իբաց ժամանակ է  
 և իբաց-ունի , որ եթէ մէկ անգամ ձեռ-  
 քերնէս ելլալու ըլլայ՝ կարողութիւն  
 չունինք ուրիշ ատեն ձեռք ձգելու , և  
 իմաստուի գործելու : Իմաստուն հեթա-  
 նոսները Ա՛ն-Է՛լ (Ֆրսանտը) կըձևա-  
 ցուցանէին ոտքով անունոյ մը վրայ կե-  
 ցած շարունակ կըդառնայ շուտ շուտ .  
 առջևի կողմը մազ ունէր , ետևի կողմը  
 կնտակ (գէլ) էր , ինչպէս կըսէ Ա՛սոնիոս .

\* Ղախատ նորա է հերարձակ ,

Ա՛յլ 'ի թիկանց ճեղ և կընտակ ॥ :

Ասով առթին ամէն ատեն չիգտնըվիլը

1) Յաղ . միանձնա , կենաց .

կուղէին ցըցունել : Աւտի առջևդ ե-  
 կած ատենը եթէ մաղերէն բռնելու չըլ-  
 լաս՝ ետեք դարձած ատենը՝ բան մը չես  
 կրնար դտնել զինքը բռնելու որ չիսխիս-  
 չի . որովհետեւ մէկ անգամ որ անհո-  
 դութեամբ թող տաս , մէյմալ ուրիշ  
 ատեն չես կրնար ձեռք ձգել , ու կըսկսիս  
 ցաւիլ : Ասոր նման են ան ազգեցու-  
 թիներն ալ , որ Հոգին ծը մեր սիրտը  
 կազդէ : Պէտք է առանց ուշացընելու  
 անոնց հաւնիլ , չէնէ՛ շուտ մը կը-  
 փախչին , ետքը ձեռքերնիս արտմութիւր  
 միայն կըմնայ , որ ասանկ բարիք մը մեր  
 ծուլութիւր կորսնցուցինք : Ասկից կրնայ  
 իմացիլի , թէ որչափ անոնց խելքը պա-  
 կաս է , որոնք Ա՛յ ձայնին չեն ուզեր  
 լսել , որ զերենք կը յորդորէ վարքերնին  
 փոխել , մեղքերնին թող տալ , ու  
 սիրկութե՛ն ճամբան դառնալ : Ասոնք յի-  
 մարական յուսով մը կըխարվին , իբր  
 թէ բարի ազգեցութիւններուն մեռնելու

ատեննին կըհաւնին երոր կուղեն նէ,  
 կարծես թէ Մ<sup>ծ</sup> այսպիսի ծոյլերը իրեն  
 շնորհացը տէր ըրած է: Մ<sup>սոնց</sup> անխել-  
 քութիւնը իմաստունին մէկը աղոճոր ա-  
 ռակաւ կըցըցունէ: ( )ձը՝ կըսէ, արծ-  
 ունին հետ շարունակ կուիճ կընէր, ու  
 հողը չէր ըլլար. որ արծիւնը մագիլնե-  
 րովը (փէնչններով) ղինքը շատ կըվի-  
 րաւորէ, ու արունի մէջ կըթաթխէ կոր,  
 Արովհետեւ օձը իր վէրքերը ընացընե-  
 լու համար կերթար արևին մէջը կըպառ-  
 կէր, ու անոր տաքութիւնը կընտնար:  
 Տայց անգամ մըն ալ նորէն կուիճ ը-  
 րաւ, ու արեան և վերաց մէջը թաթ-  
 խըվելով գնաց որ արևին մէջը ըռընա-  
 նայ, բայց չիկրցաւ, վնդի սև ամպերը  
 երկայն ատեն արևին երեսը գոցելով  
 լոյս մը չիծագեցաւ, և այսպէս յոյսը  
 պարապ ելլելով օձը ողորմելաբար սատ-  
 կեցաւ: Մ<sup>ս</sup> չէ՞ մի որ մեղաւորներուն  
 ալ գլուխը կուգայ, անային արդարութե՛ն

լուսովը կըլուսաւորվին, հոգիներն ըռընա-  
 ցընելու կըյորդորվին, սակայն իրենք  
 կըբամահրեն, վտանգներու մէջ զիրենք  
 կըդնեն, յուսալով, թէ ուրիշ յարմար  
 ժամանակ պիտի գտնան, ու Մ.Ճ ալ ի-  
 րենց ուղածներն պէս շնորք պիտի տայ:  
 Բայց իրենց կարծածին ներհակը պիտի  
 գլուխներն գայ 'ի պատիժ իրենց կամա-  
 պաշտ ծուլուի, ինչպէս Վ.Ս Տրն մեր  
 կըսպառնայ. Խնդրեցէ՛ք զէս, ե՛ւ ո՛չ զը-  
 դանեցէ՛ք 1):

Բայց ըսելու խօսքերնուս վրայ կայ-  
 նելով՝ կըսեմ, որ Մ.Ճ բարի ու օգտա-  
 կար մտածութիւններով մարդուս սրտին  
 մէջը կըխօսի, ու անուշութիւն իրեն կը-  
 կանչէ, թէ որ իրեն ձայնին շուտ մը չես  
 լսեր նէ՛ անտարակոյս զքեզ կըմերժէ:  
 Կուգայ Մ.Ճ քու սրտիդ դուռը կըզարնէ  
 իր շնորքովը ու կըշարժէ, կամայ ձայնով

1) Յովհ. Է. 34<sup>»</sup>

կըկանչէ հոգւոյն, ու կըսէ. Ռայ ինչ  
 1) : Եթէ հոգին դուռը բանա-  
 լու հոգ չունենար նէ՛ Մ<sup>ծ</sup> շուտով կանց-  
 նի կերթայ : Եւ նա տնայեալ էր և  
 Տէնեալ : Մ<sup>ծ</sup> լոյս կուտայ մեզի, ու կը-  
 կանչէ, եթէ մենք զինքը չենք ընդու-  
 նիր նէ՛ մեզի ալ Սոխէս մարդարեիս  
 ըսած խօսքը կըսէ. Տէնեալ զնորոյս  
 2) : Հոգին սբ իր բարի ազդեցութի-  
 ները ու սբ մտածութիւնները այնպէս  
 կուտայ, ինչպէս որ Վ<sup>ս</sup> իր բարեբա-  
 րութիւնները ըրաւ ժողովրդեան. Շ<sup>ք</sup>  
 3) : Սիտ զնենք աս  
 բառին. Շ<sup>ք</sup>. որ ճշմարտապէս զմեզ  
 վախի մէջ կըձգէ, եթէ Մ<sup>յ</sup> ձայնին շուտ  
 մը չենք լսեր նէ. ինչպէս որ սբ ( )  
 գոստինոս կըսէր, թէ կըվախնամ, ա-  
 լետարանի մէջ կարգացած ատենս, որ

1) Երգոյ. Ե. 2 :

2) Եւեյ. ԼԴ. 23 :

3) Կորնոյ. Գ. 38 :

Վ.Յ շատ տեղ իր շնորքը անցած կամ  
 դարձած ատենը տրւած է: Այուզեմ սուր-  
 բին ըսածը բերել. \* Չգիտեմ զինչ  
 ասացից. այլ առաւել ևս չգիտեմ զի-  
 արդ լուեցից: Օայս ասեմ, և յայտնա-  
 պէս ասեմ. երկնչիմ 'ի Հնէ որ անցա-  
 նէ || 1): ( շատ աղոճոր է կըսէ նոյն քրք  
 ան առակն ալ որ Վ.Յ աւետարանին  
 մէջը կըպատմէ. փեսայն՝ կըսէ՝ ամէն  
 տեսակ մարդիկը իր հարսնիքին կանչեց.  
 ու տանտէրն ալ սահաթը մէկին վեցին  
 իննին ու տասնըմէկին գնաց ինչ մարդ  
 որ գտաւ նէ՝ իր այգին աշխատելու կան-  
 չեց. բայց չենք գտնար ետքը, որ այս-  
 չափ կանչելուն մէջը՝ մէկը երկու իրեր  
 անգամ կանչած ըլլայ: Անգի երոր ի-  
 րենց տմարդութիւնը տեսաւնէ՝ որ չէին  
 ուզեր կոր գալ, ու իրենց չիգալուն  
 պատճառանքները (մահանաները) իմա-

1) Բան ժը. յազ. տերու. բան:

ցաւ նէ՛ մէյմալ չիխրկեց իր ծառաները ,  
 նորէն կանչելու համար : Ասով կիմա-  
 նանք՝ կրսէ սր ( ) գոստինոս , որ ընդ բա-  
 րի ազդեցութի՛, ու բարի մտածութի՛  
 զգալնիս՝ որ Ա՛ճ իր կամօքը կուտայ ,  
 առանց ուշացընելու պէտք է որ ընենք :  
 Թէ չէ՛ կանցնին կերթան , ու ետքը  
 ձեռքերնիս չէ ետ դարձընել աս շնորք-  
 ները , եբոր կուզենք կամ մեղի հար-  
 կաւոր է : Ա՛ս խրատս մեզի ուրիշ սր  
 վիճակներն ալ կուտան : Այլ Հերոնիմոս  
 տեսնելով , որ Պաւլինոս մտքին մէջ  
 երկայն կըմտածէ կոր , որ արդեօք աշ-  
 խրքիս հողը թող տալով փրկութե՛ն ճամ-  
 բան դառնայ թէ չէ , նամակ մը գրեց  
 իրեն քաջալերութե՛ն այսպէս . \* Փութա՛  
 անդէ , և զկառեալ կացեալ ՚ի ծովու զնա-  
 ւուն պարան խղեա՛ առաւել , քան թէ  
 արձակեա՛ ॥ : Ա՛րդ մը որ աս ալէկոծեալ  
 աշխարքիս ծովուն մէջը կընաւէ՛ եթէ  
 Հոգւոյն սըյ յաջող հովը առագաստ-

ներուն մէջը ժամանակին առնելու չըլլայ՝  
 նաւը կը դառնայ ու կը նկղմի : Այն ( ) գոս-  
 տինոս կը պատմէ երկու իշխաններուն Այ  
 ծառայելու իմաստունն ու պատրաստ ա-  
 ռաջադրութիւնը , որն որ Այ լուսաւո-  
 թութիւնը ըրին , ու շուտ մը ուղեցին կա-  
 տարել : Ասոնք օրմը ըստ պատահման  
 ելան անապատ դացինն սը ճգնաւորի մը ,  
 ու հոն սը Անտոն ճգնաւորին վարուց  
 դիրքը տեսան : Անին կարդացին քիչ մը ,  
 և անով իրենց սրտին փափաք մը եկաւ ,  
 որ իրենք ալ սը Անտոնին ըրած առա-  
 քինութիւնները ընեն , ու իրենք զիրենք  
 Այ նուիրեն . աս փափաքը երկուքին  
 սրտին մէջն ալ անանկ բորբոքիլ սկսաւ ,  
 որ կարծես թէ մէկզմէկու հետ կը կը ու-  
 վէին , թէ ո՛վ կընայ առաջ դառնալ  
 Այ : “ Այ ( կըսէր մէկը միւսին ) առա-  
 ” ջադրեցի Այ ծառայել , և աս՝ հիմայ  
 ” հոս կըսկսիմ ընել : Դուն եթէ չես  
 ” ուղեր ընել նէ՛ ինձի դէմ մի կենար “ :

Միւսն ալ Մ.Յ ազգեցութիւն իրեն պէն  
կուտար. « Չեմ թողուր զքեզ որ դուն  
« մինակ Մ.Յ ծառայես, ես ալ աշխար-  
« քիս »: Աւստի երկուքն ալ մեկտեղ  
թագաւորին թուղթ գրեցին, որ իրմէ  
հրաման առնեն, և այսպէս ճգնաւոր  
եղան: Այլ ( ) գոստինոս աս երկու իշ-  
խաններուն այսպէս շուտ մը հնազան-  
դիլը Մ.Յ ձայնին՝ որոնք նոյն սահաթը  
ու նոյն տեղը ուր որ այսպիսի մտածու-  
թիւ ունեցան՝ ուղեցին կատարել, շատ  
կըզգովէ, ու ասկից առիթ առնելով Մ.Ծ  
որոնց որ սրտին մէջը կըխօսի ու բարին  
կըյորդորէ՝ անոնց այսպէս կըսէ. \* Մ.Տա  
քեզ պարգևատուն ողորմութեան բանայ  
զգուռն, զի՞ դանդաղիս: Աւրախանալ  
արժան էր քեզ՝ եթէ բանայր երբեմն  
որ բաղխեսդ: Ա՛չ բաղխեցեր և երաց, և  
արտաքոյ կաս || 1): Անանկ է նէ ջանա

1) Բան ծթ. յղ. տեր. բան:

որ ԱՅ քու հողւոյդ փրկութենը համար  
տըւած լոյսը մեկդի չիձգես, և մտքիդ  
մէջ ինչ բարի մտածութի կուգայ նէ՛  
նայէ որ շուտ մը կատարես :

Պատգամ-Էփեսէ :

Ինչպէս որ ԱՃ իրեն նը ազգեցու-  
թիներուն շուտ մը հնազանդողներուն ա-  
ռատ շնորհք կուտայ, ասանկ ալ սոսկալի  
պատիժ անոնց կուտայ, որոնք իրեն ձայ-  
նին փհանջնին կը գոցեն : Արկութին ալ  
օրինակը կուզեմ բերել, որ աղէկ միտք  
դնենք : Ան Յորդանոս ընդհանրական  
Աբբայն Վոմինիկեանց կրօնին՝ մասնաւոր  
հոգի մը ունէր քարոզ տըւած ատենը  
մարդկանց սիրտը աղէկի դարձընել : Որ  
մը Վարէղ քաղաքը ժամին մէջ ուսա-  
նողին մեկուն իրենց կրօնին զգեստը հագ-  
ցուցած ատենը՝ ուսանողին շատ ընկեր-  
ները հոն եկած էին, ոմանք բարեկամու-

Թեան ոմանք ալ հետաքրքրու թեան  
 համար, տեսնել ուղեւիով թէ ինչպէս  
 կը լայ արարողութիւները: Նորդանոս հոն  
 տեղս կարճ խօսակցութի մը ըրաւ ե-  
 կողներուն, ցըցունելով, թէ ինչպէս  
 ուսանողը աս վիճակը իմաստուի կուղէ  
 կոր. լմընցընելու ատենը դարձաւ ուսա-  
 նողին, ու կարծեց թէ հոգւոյն քրքր-  
 նովը ըսաւ. «Աբոր աշխրբիս մէջ բարե-  
 », կամիդ մէկը զքեզ կերակուրի կանչելու  
 », ըլլար՝ ընկեր մը կառնէիր հետդ կը-  
 », տանէիր, հիմայ ինչ բան է, որ ԱՅ  
 », մեծ ու զուարճալի կերակուրին մինակ  
 », կուգաս կոր»: Ատքը ընկերներուն  
 դարձաւ ըսաւ. «Գուք հերիք կըսեպէք  
 », ձեզի, որ ձեր սիրելի դասընկերին հետ  
 », մինչեւ հոս կուղէք գալ: Բայց ասի-  
 », կայ չըսվիր բարեկամութի, ու ձեր  
 », մարդավարութիւն ալ ասոր դէմ կը լ-  
 », լայ: Աթէ չիկան չըվելնուդ համար  
 », գալու կամչնաք նէ՛ ես յանուն ԱՅ,

,, ու անոր դիէն զձեզ աս հոգևոր ուրա-  
 ,, խուն կըկանչեմ“ : Աս կարճ խօսքը հոն  
 տեղի կեցողներուն մէկուն սիրտը ազդեց .  
 ելաւ եկաւ որ ինքն ալ աս վիճակը կու-  
 զէ ընտրել : Շուտ մը մը Յորդանոսին  
 ոտքը ինկաւ, ու սկսաւ ան կրօնին զգեստը  
 ուզել . և սրտին ունեցած սէրը աւելի  
 ցըցունելու համար՝ գլխարկը՝ վերարկուն՝  
 ու բոլոր աշխարհական զարդերը վրայէն  
 հանեց նետեց, չըլայ որ արգելք մը  
 տան կրօնաւորի զգեստը հագնելու : Ա՛ծ  
 որ աս երիտասարդին սիրտը ասանկ մը  
 վիճակի յորդորեց նէ՛ Յորդանոսին ալ  
 միտքը շինեց, որ անոր օւղածը կատարէ :  
 Ալ ոնզի չիկարծէ մէկը, որ աս կոչումը  
 Աստուծոյ չէր՝ իր նորընծայութեն ու  
 բոլոր կենաց մէջը անանկ առաջ գնաց  
 օւ զարգացաւ, որ շատ անգամ՝ այր  
 կատարեալ կանչովեցաւ . Ա՛ծ ասոր մեծ  
 մեծ ու առատ շնորք տրւաւ ցըցունելու

համար, որ բրած հնազանդութիւն իրեն շատ հաճելի եղաւ :

Մտորներհակը՝ ով որ սր խորհուրդներ միտքը կունենայ, ու անոնք ընելու կամ կուշանայ, կամ բոլոր թող կուտայ՝ վախնայ ան հարուստ բայց ողորմելի աղջիկէն, որուն Մ.Ճ սիրտը շատ անգամ ազդելով որ աշխարք չիմտնայ, ու վանք երթայ՝ թէպէտ տկանջ դրաւ ընց, բայց որովհետեւ իրեն շատ կանուխ կերեւար կոր աշխարքս ու բարեկամները թող տալը՝ ուշացուց օրէ օր կատարելու Մ.Ե ըսածը, մինչև Մ.Ճ ալ 'ի պատիժ անհոգութենը՝ իր մասնաւոր շնորքը անոր վրայէն վերցուց : Ուստի Մ.Ե լոյսը վրայէն վերնալով սկսաւ վանք երթալու բաղձանքէն պաղիլ, օր մըն ալ աղնոճական երիտասարդ մը ըստ պատահման տեսնալով սաստիկ անոր վրայ սէր ձգեց, ու երկնաւոր փեսայն (որ է Վ.Ս) երկրաւորին հետ ուղեց փոխել : Ռայց

որովհետև աս կարգը վիլը ամէն դիաց  
դժուարութի կը բերէր կոր, բան չի թո-  
ղուց որ չըրաւ իր կամքը առաջ տանե-  
լու համար: Իմացաւ մէկ քանի կախարդ  
կնիկներէն, որ իր ուղածին կրնայ հաս-  
նիլ, եթէ սրբուհի՝ Աեքտառինէն իրեն  
բարեխօս բռնէ նէ: Հաւտաց աղջի-  
կը անոնց ըսածին, ուստի սկսաւ ամէն  
որ՝ մանաւանդ սրբուհւոյն տօնին որը  
իրեն աղօթք ընել, ու առջևը լալ, ու  
սը Աուսին գաճէ (ալ չիէ) շինած ար-  
ձանին առջևը աւելի ջերմեռանդութի  
ընել, ուղղի Մ.Ծ իր բաղձանքը կատարէ:  
Սակայն արձանը ասոր աղօթքը չուզեց  
լսել. որովհետև առանց մէկուն վնասե-  
լու յանկարծ տեղէն ինկաւ, ու վիզը և  
գլուխը փսփփ փսփփ եղան: Աւղղի ասով  
նշան մը տայ աղջկան, թէ Մ.Ծ կուզէ  
որ ինքը մարդուս սէրը թող տայ, ու  
իրեն դառնայ, եթէ գլխուն մեծ չարիք  
մը բերել չուզեր նէ: Մ.ս հրաշքը աղջ-

կան օգուտ մը չըրաւ, և ոչ շարժեցաւ  
ալ աս անկարծելի պատահարէն, իր յի-  
մարութէ ըսեմ, չէնէ իր սիրոյն՝ աւելի  
աղօթքի դիմեց անով, ինչ վան Մ. Ծ ալ  
հարկադրեցաւ աս բանս անոր թող տալ  
բայց ՚ի վնաս անձին: Անշի նոյն հարս-  
նիքին օրը երոզ փեսին տունը կերթար  
կոր մեծ հանդէսներով՝ ՚ի կառաց (ա-  
ռապայէն) վար ինջած ատենը՝ մէկ ոտ-  
քը (ինչպէս եղաւ, մինչև հիմայ չըզիտ-  
ցըվիր) դժբաղդութի սրկրդելով գե-  
տինն ինկաւ, ու վիզը և գլուխը ջարդ-  
ուբուրդ եղաւ, ինչպէս որ քանի մը օր  
առաջ սրբուհի Նեքտարինէին արձանը  
եղած էր. և այսպէս ան տանը սեմին  
(էշիկին) վրայ մեռաւ, որն որ ինքը վան-  
քէն ու Վ. Ծ էն աւելի սիրեց: Մ. հա ա-  
սանկ ողորմելի մահուամբ կրմեռնին, ո-  
րոնք Մ. Յ կամացը ու ըսածին դէմ կը-  
կենան. ասանկ Մ. ստուծմէ շուտ մը կը-  
պատժըվին, որոնք բարի ազգեցութի-

ները կատարելու կուշանան: Ուստի ի-  
րաւի ըսաւ ծր Բարսեղ, որ աշխրբիս  
մէջ եղած հարսնիքը՝ սուգ է, ինչպէս  
որ հոս անմիջապէս ՚ի սուգ փոխ-  
վեցաւ ըլլալու հարսնիքը:

Մարտի 20 թուականին Գաթ-  
նիկեանց. փետր. 13: Յանոս Նիկեոս  
Երեւել. Օրին. 43:

### ԳՂ. ԺԲ.

Չար Մարտի 20-ին թուականին չարեաց ակեղէ:

\* Պիղծ է առաջի Տ՛ն խորհուրդ անիրաւ ॥  
Եւստի. ԺԵ. 26:

Արուհեակ Երիտոտէլ կըսէ, որ ներ-  
հական բաները մեկզմեկու քովը աւելի  
լաւ կերևան, ինչպէս որ ստոճերները  
պատկերին վ՛ր թէ պատկերահանին վար-  
պետութիւն, ու թէ պատկերին գեղեց-

կութիը կըցըցունեն, անոր համար մենք  
 ալ բարի մտածութե քովը շարն ալ կու-  
 ղենք գրել, ու անկից ծագած շարիքնե-  
 րը իբրև իր ողբալի գործքերը կարգա-  
 բերել: Բայց պինտ առաջ պէտք է  
 գիտնալ, որ իրեք տեսակ մտածութի  
 կայ, որոնք որ մարդս ունի կըսէ յք  
 Վրիգոր. ք՝ հրապուրանք, բերկրութի,  
 և հաւանութի: Աս բանը Վուդովիկոս  
 Վրանատացին երևելի վիշաք աղուոր կը-  
 մեկնէ: Իրեք կերպով կըսէ՝ սրտին մե-  
 ջը գէշ մտածութի կընայ գալ: Առա-  
 ջինը ան է, որ մտքին մէջ երևակայուի  
 մը կուգայ, ու եկածին պէս դուրս կը-  
 ձգվի: Արկրորդը ան է, որ մէկը՝ եկա-  
 ծը կուշացընէ հաճելով ու բերկրելով,  
 Արրորդը ան է, որ մէկը ունեցած գէշ  
 մտածութիը գործքով ալ կուզէ ընել:  
 Առջի տեսակ մտածութիը մեղք չիսեպ-  
 վիր, մանաւանդ վարձքի արժանի է, ու

կաւելցընէ : Արկրորդ տեսակը՝ որն որ  
 անարանները յամեալ հեշտութի կան-  
 ունենն, որովհետեւ հոգին ան չարու-  
 թեան վայրկեան մըն ալ ըլլայ՝ կըհաճի,  
 մահացու մեղք է, թէև գործքով չը-  
 լլիւի. բայց եթէ գուցէ մեկը աղէկ մը  
 չիճանչնայ, որ այսպիսի բերկրութիւն  
 օրինաւոր չէ : Այդի եթէ աղէկ մը չի-  
 ճանչնալէն քիչ փոյթ ունենայ մեկդի  
 ընելու՝ առ կողմանէ կրնայ ըլլալ որ մեղ-  
 քը ներելի ըլլայ : Իսկ երրորդ տեսա-  
 կը որ գործքով ընելու ալ բաղձանք  
 մեկտեղ կուեննայ՝ ան տեսակ մեղք կըլ-  
 լայ՝ որն որ գործքով կըլար եթէ ուզէր,  
 թէպէտ ետքը ամենևին չընէ : Արով-  
 հետև արտաքին գործքը Այ առջևը ա-  
 լելի մեծ չարութի չիբերէր, ինչ որ  
 ներսէն կամքը ընելու ունի նէ : Ասանկ  
 կըսէ նր ( ) գոստինոս, ու ամէն անար-  
 աններն ալ . \* Ար՛ի սրտէ յօժարի առ-

նել՝ ոչինչ ընդհատ է՝ ի մեզս յայնմանէ՝  
զոր ներգործութիւն առնէր ॥ 1) :

Ասիկայ լաւ մը մտածելու ըլլանք՝  
կիմանանք ան սքանչելի խրատը, որ  
Հօգին նք մարգարէին բերնով կրսէ.  
Նիւնիւն՝ զլարիս Խորհրդոց յերոց 2) : Չը-  
սէր, որ չար խորհուրդ ձեր միտքը չի-  
գայ, որովհետեւ մեր ձեռքը չէ, ու չենք  
կրնար ընել, որ չուզած ատեննիս ալ  
չիգան. հապա ձեր խորհուրդին միայն  
չարութիւն մեկդի ձգեցէք, չըլլայ որ կա-  
մօք ուշացընելով զանոնք՝ անոնց վրայ  
բերկրութի ունենայք : Աս բանս Ա՛ճ ա-  
ւելի բացայայտ կըզրուցէ ուրիշ մար-  
գարէին բերնով. Մինչև ցերեք գրանի-  
ցին՝ է իւր Խորհուրդոց ցառոց 3) :  
Մինչև ցերեք կըպահես, ո՛վ քրիստո-  
նեայ, սրտիդ մէջը աս մահաբեր օձերը :

- 1) Գիւրք տ. յաղ. անձնիչիս. գլ. 7 :
- 2) Եսայ. տ. 16 :
- 3) Երեմ. 7. 14 :

Աս ալ զխոնանք, որ մեր մտքին գեշ-  
 խորհուրդ գալը արգելած չէ. հասցա մի-  
 այն անոնց տեղ տալը արգելած է, ո-  
 բոնք որ սատանայի չար սերմանք են,  
 կըսէր նր Նեղոս: Աւստի եթէ հոգ-  
 ւոյն մէջ չեն պահպանու նէ՛ չեն կրնար  
 բուսնիլ. բայց՝ եթէ արմատ տան՝ պէս-  
 պէս տեսակ մոլութիւններ կըբուսցընեն,  
 և ասոնք են բերկրութիւնքը հաւանու-  
 թիւր ու գեշ գործքերը. ինչպէս որ Վ.ն  
 Տրն մեր յայտնի զրուցեց. 'Ի սրբէ Ե-  
 լանէն խորհուրդք չարք, սպանութիւնք,  
 շնութիւնք, գողութիւնք, հայհոյութիւնք 1):  
 Ահա աս մեծ հեղեղ է անօրէնուն ու մե-  
 ղաց, որ այսպիսի գեշ աղբիւրէն կելլայ  
 կըվաղէ, եթէ շուտ մը չար խորհուրդներ  
 բուն արգելք չկորովիր չխտախանովիր նէ:  
 Աւթէպէտ շատ անգամ գործքով դուրս  
 չեն ելլար, այլ ջուրի պէս լիճ ըլլալով,

4) Մատթ. ԳՆ. 19:

ցանկութիւն միայն կըմնան, սակայն Այ  
 առջևը որ մարդուն սիրաը կընայի՝ հոգին  
 անմեղ չիտեպիլիր: Աւտի մեծապէս կը-  
 սխալին անոնք, որոնք կըկարծեն, թէ  
 մեղաց առիթներու մէջը եթէ պարզ  
 մտածելով ցանկան՝ ու գործքով չընեն՝  
 մեղք գործած չեն ըսվիր: Չար սատա-  
 նան այսպիսի նենգութիւն, ու որոգայթ-  
 ներով (տուղակներով) կըխարէ իժի  
 պէս, որ զմարդը թունաւորելով՝ չի-  
 մանար մարդը որ թունաւորած է, սա-  
 տանան ալ մեղքը ընել կուտայ ու  
 կուրախանայ: Չինայիր ալ, որ գէշ  
 ցանկութիւնը գործքով ալ ընել տայ,  
 հերիք է իրեն որ ասով Այ ձեռքէն  
 հոգիները ինքը կառնէ. աշխատանք մը  
 չիքաշեր, բայց եթէ ասոր համար, որ  
 մէկ անգամ կամքը գէշ բանի մը յո-  
 ժարեցընէ:

Աւ կըտեսնանք իրաւի, որ չար սա-  
 տանան միայն ցանկութիւն հոգիները

աւելի կորսայ, քան թէ չար գործքե-  
 րը ընել տալով : Այլի գէշ ցանկութի  
 ունենալու ճամբան դիւրին է. իսկ գործ-  
 քով ընելու՝ շատ անգամ պէտքը կըլլան  
 ան պարագաները՝ որոնց մէկտեղ գալը  
 դժուարաւ կըպատահին : Օրորօրինակ,  
 ուղղի ուրիշէն վրէժ առնէ մէկը՝ ինչ  
 նենգութի պէտք է որ քանեցընէ. մար-  
 մնական սէրը կատարելու համար՝ ինչ  
 հնարք ինչ ծախք պէտք է ընել : Ընանկ  
 որ շատ անգամ կըլլայ, որ գէշ գործք  
 մը ընելու համար՝ հասարակօրէն անթիւ  
 անհամար չար մտածմունքներ ու ցան-  
 կութիւններ առաջ կըլլըվին, որոնց ամե-  
 նը ամիսներով գրեթէ կըտւեն : Բայց  
 սակայն շատերը կան, որոնք և ո՛չ կը-  
 նային որ մտածուի՞ ու ցանկութի՞ մեղք  
 ըրին՝ գործքով ընելէն առաջ, և ուրիշ  
 քան չըսեմ, խոստովանելու ատեննին  
 ասոնց հիչ մէկը մտքերնին չիգար. թէ-  
 պէտ Տրիտենդեան յը ժողովը ապաշ-

Խարութիւն խորհրդոյն վրայ խօսած ատե-  
 նը՝ յայտնի կըզըուցէ, թէ մտքով եղած  
 մեղքերն ալ պէտք է խոստովանիլ, և  
 պատճառն ալ շատ աղուճօր կուտայ. վն-  
 դի՛ կըսէ՝ շատ անգամ զՏօգին շարաշար  
 կըվիրաւորեն, ու յայտնի եղած մեղքե-  
 րէն աւելի մարդուն կըվնասեն, ու վտան-  
 գի մէջ կըձգեն. ինչու որ՝ վրէժխնդ-  
 րուի մը կամ անպարկեշտութի մը կամ  
 ուրիշ մեղք մը գործքով ընելէդ ետքը՝  
 անկից կուղես ետ կենալ չընել. իսկ ներ-  
 Տակը՝ մտքով եղածները երկայն կը-  
 տուեն, ու անյայտ հիւանդուի պէս դեղն  
 ալ դժուար կըլլայ: Աուզեմ ըսել, որ  
 սրտով եղած մեղքերը կընմանին ան գէշ  
 տեսակ ջերմին (սըթմային), որ իր բո-  
 լոր զօրութիւնը աղեսաց մէջը կըմնայ, ու  
 դրսէն ամենեին նշան չիտար մարմինը  
 տաքցընելով, կի՛մ այրելով. աս ջերմը՝  
 կըսէ Հիպպոկրատէս՝ ամենեին ըսնա-  
 նալու յոյս չիկայ. \* Աթէ արտաքինքցըր-

տասցին, և ներքինք տապասցին՝ մահա-  
բեր է ॥ :

Սը Յուզան ոսկերբերս՝ մեկնելով  
նր գրքին աս խօսքը. Երբե՞ ՏԷ ԱԾ  
ԵԼԷ... ամ որ Խորհելը 'է «բոլե Երբե՞  
Խնամով 'է շարե՞ս զամ ուսուրս՝ 1), սաս-  
տիկ կուլայ, ու կըհամրե մեղքերը, որ  
մարդիկ գէշ մտածութիւններով, ու ցան-  
կութիւ կընեն, և որչափ որ անոնք մեծ  
վնաս կուտան, այնչափ ալ ասոնք բանի  
տեղ չեն դներ: Ա՞մէն ատեն, ամէն  
տեղ, ժամին ու տան մէջը ասանկ գէշ  
մտածմունքներ մարդիկ կընեն, ու չիկայ  
տարիք մը, որ ասոնցմէ դադրին:

Արիտասարդութն այրութն ու ծե-  
րուն տարիքը ասոնց մէջը կըթաթխը-  
վին. կըտեսնես շատ ծերեր մաղերնին  
մօրութիւն ճերմկցած, ու սրտերնին մէջը  
անպարկեշտ սէր ունին: Բայց աւելի

1) Ճննդ. զ. 5:

անոնք են այսպիսի չար մտածմունքներ  
 ունեցողները, որոնք որ անվայել գրքեր  
 կրկարդան, իրենց զգայութիւնները չեն  
 բռներ, մանաւանդ աչքերնին. խաղերու  
 կաքաւելու ու հանդէսներու տեղեր՝ ու  
 բոնք որ պարկեշտութիւն չունին, համար-  
 ձակ կերթան: Ասոնք իրենց ողորմելուքը  
 առտունները հազիւ թէ անկողինէն ելած  
 են այսպիսի գէշ գէշ երեակոյութիւններ  
 մտքերնին կունենան, մանաւանդ սատա-  
 նան ալ կը ջանայ, որ սասնկ բաներ անոնք  
 մտքերնին բերեն. ուստի նք Վրիգոր  
 կըսէ. \* Վոյ դե մի'ի մէջ այսոց չարաց  
 նախաշաւիղ կոչեցեալ, որ այն ինչ  
 տեսանէ զմեզ զարթուցեալս'ի հանգս-  
 տենէ քնոյ՝ գուն գործէ զխորհուրդս մեր  
 պղծել || : Այդ թուր օրը սատանայա-  
 կան մտածմունքներ ունենանք, ու մեղք  
 գործենք: Ինչ մտածմունք կը բերեն  
 ագահին իր խորհուրդները, բայց եթէ  
 ստակ դիզելու ինչ կերպով ըլլայ նէ

Ըլայ : Ասանկ ալ բղջատհին կրբերեն  
 գարշելի հեշտութիներ, որկրամոլին՝ ա-  
 նուշ կերակուրներ, հպարտին՝ մեծ մեծ  
 պատիւներ, անոր համար աղէկ ըսաւ  
 մարգարէն, (Յարոյցեալ յառաջագոյն ա-  
 պականեցին զիմ խորհուրդս իւրեանց 1) :  
 Այս ամ չարիքը կը պատճառի միայն ան  
 դիւրութի, որով մարդիկ պարզ մտքով  
 ցանկութիւնը կը հաւնին, որոնք եթէ համ-  
 բերու ըլանք՝ գործքով եղած մեղքերը  
 ասոնց կէսին չեն հասնիր : Աստի կրնանք  
 ըսել, որ սատանան չար գործքերը կար-  
 թի (օլթայի) տեղ կը գործածէ, որոնց-  
 մով մարդկային հոգիները մեկիկ մեկիկ  
 կորսայ, իսկ չար մտածութիւնները ու  
 ցանկութիւնները ուռկանի (աղի) պէս կը-  
 բանայ կը ձգէ, որով անհամար հոգիները  
 մեկէն կը բռնէ :

Արդ՝ որովհետեւ ասանկ գէշութի

ունին մտքէն եղած մեղքերը՝ եթէ ծան-  
րութեւ, եթէ շատութեւ նայելու ըլլանք  
նէ, պէտք է որ արթուն կենանք, աղէկ  
ղգուշանանք, անմիջապէս եկած ատեննին  
աս մտածութիւնները մէկդի նետենք, ու  
մեր անհաշտ թշնամւոյն հետ և ոչ  
վայրկեան մը խաղաղութիւն ընենք, թէ  
որ կորսը վել չենք ուզեր նէ: Ինչպէս  
կըսէ սր ( ) գոստինոս . \* Վլուխ թշնամ-  
ւոյն է սկիզբն չար հրապուրանաց, յոր-  
ժամ սկսանի չարիս նիւթել՝ յայնժամ  
հերքեալ ՚ի բաց, մինչև իցէ եկեալ  
բերկրութեն և հաւանութեն || 1) : Չար  
մտածութիւնները կայծ (խուրը ճում) են՝  
որ եթէ շուտ մը մարելու չըլլաս, ետքը  
մեծ կրակ կը հանեն: Այս պղտիկ վաղող  
ջուր են, որ ՚ի սկզբան կընաս շուտով  
խափանել, բայց եթէ երկայն վաղել ու  
չաանալ թող տաս նէ՝ գետ մը կըլլայ,

1) Ի Սաղմ. 27 :

և տքր ինչ որ ընես՝ չի գադրիր : Աւստի  
 ամ հոգւով ջանանք գարշելի փորձու-  
 թիները մեկդի թողտալու, մանաւանդ  
 թէ եկած փորձութեան ներհակ առաքի-  
 նութիւն ընելով՝ չարը պզտիկ իբէն վեր-  
 ցրենք : Չար մտածութեան ներհակ բան  
 մտքերնիս բերենք, սբ Մ. Ծածնայ օգ-  
 նութեան դիմենք, ուղղի աս ողբալի վտանգ-  
 ներուն մէջը մեզի օգնէ : Սիմէոն ծե-  
 բունին անոր վրայ ըսաւ աս խօսքը .  
 « Ինչ որ իսկ տեսնես տեսցիլ սուր, զի յայտ-  
 նեացին 'ի Բաղուստ սրբից խորհուրդս 1) :  
 'Վիմենք Վ. սի ամենասբ վերքերուն ալ,  
 ուղղի իր պատուական արեամբը մեր միտ-  
 քը ու մեր կամքը այսպիսի տիղմէն հա-  
 նէ ու մաքրէ : Մ. Ղէկ է ան ալ, որ սա-  
 ասնան փորձութի մը մտքերնիս ձգած  
 առնենք՝ երեսնիս խաչ հանենք, ինչպէս  
 որ սբ կրօնաւոր մը կընէր՝ կըսէ Վ ուղո-

1) Ղուկ. Թ. 35 :

վիկոս Վրանատացին, ասիկայ սովորուի  
 իրեն ըրած էր, որ եթէ գէշ բան մը  
 սատանան միտքը ձգելու ըլլար նէ՛ ե-  
 րեսը խաչ կը հանէր: Ա՛ճ ալ ցըցունե-  
 լու համար, թէ իրեն մեծապէս հաճելի  
 էր անոր աս սովորութիւնը, հրաշքով աս  
 բանս յայտնեց, որովհետեւ կրօնաւորին  
 գերեզմանը՝ մեռնելէն շատ տարի ետքը  
 երոր բացին նէ՛ տեսան որ կուրծքին  
 վրայ խաչի նշան կայ, ու չորս կողմն  
 ալ մէյմէկ աղւոր շուշաններ: Ա՛թէ մենք  
 ալ ասանկ փոյթ ու հոգ չենք տանիր  
 նէ՛ կը վախճամ որ մեռնելու ատեննիս  
 այսպիսի գէշ մտածութիւններու կը հաւնինք,  
 վնդի ան ատենը սատանան ամէն ջանքը՛ի  
 գործ կը դնէ, որ այսպիսի բաներով զմեզ  
 յաղթէ: Մտոյգ է որ մեռնողը լեզուն  
 ծանր ըլլալով հայհոյութիւն ընելու այն-  
 չափ կարողութիւն չունենար: Մարմնոյն  
 հիւանդութիւնը, ու անդամներուն տկա-  
 րութիւնը զինքը չար գործքերէն ետ կը քա-

չեն : Ուստի սատանան աս միջոցը միայն  
 ունի , ու անոր կաշխատի , որ գարշելի  
 մտածմունքներուն ու ցանկութիւններուն  
 ողորմելի մարդը հաւնեցընէ : Արդ՝ եթէ  
 մենք կուզենք անոր յաղթել , հիմակ-  
 վանէ պէտք է , որ չար թշնամւոյն դէմ  
 կենանք , ու օրէ օր յաղթուինիս աւե-  
 լցընենք . վնդի յաղթելով յաղթել կը-  
 սորվիս , կըսէ առակը :

### Պատմութիւն :

Մի կրնայ համրել , թէ որչափ մար-  
 դիքներ մտքով միայն մեղք ընելով յա-  
 ւիտենական դատապարտութն մեջը ին-  
 կան : Աս շատերուն մեջէն մեկհատը  
 կուզեմ պատմել , որ շատ ողբալի է , որն  
 որ եթէ աղէկ մտածելու ու քննելու  
 ըլլանք՝ կըհարկադրինք ըսել . Պատմու-  
 րան , Տ՛ն ողբիս Բազմ-նա ॥ : Աւ զոր-  
 օրինակ մեղք մը չիկայ անանկ ծանր ու

մեծ, որուն ողորմած Ա՛ծ չուզէ ներել,  
 ասանկ ալ առաքինութի մը չիկայ ա-  
 նանկ բարձր ու գերազանց, որուն վրայ  
 Ա՛յ արդարութիւնը պակսութիւն մը չիգըտ-  
 նայ: Ա՛յնուհանդէս ու բարեպաշտ կնիկ մը  
 (պատմողը անունը չիտար, ունի համ-  
 բաւ վար չիզարնըվի) անանկ Ա՛յ սիրով  
 բորբոքած էր, որ ամէն ըրած գործքը  
 միշտ անոր փառացը համար կընէր: Ար-  
 տունը ժամ ըրած էր, իր ունեցած հարս-  
 տութիւնը աղքատաց կուտար, որոնց տե-  
 ղը արքայութեան անանց հարստութիւնը կու-  
 զէր սունել: Ա՛յ Եր Ա՛ծածնայ ու սուր-  
 բերուն հետ շարունակ կրխօսէր, իրենց  
 յաճախ կազօթէր, և այսպէս սէրը եր-  
 կու կողմանէ ալ բորբոքած էր: Արաղ-  
 քին ենթր իրեն խոստովանահայր ըրած  
 էր, ուսկից Ա՛յ ծառայելուն կարգը ու  
 կանոնը միշտ կըսորովէր: Ասանկ օրէ օր  
 իրեն անսպաշտութիւնը կաւելցընէր, ու  
 առաջ կերթար: Այնչանիկ կըլար, թէ

որ Այ ծառայել ինչպէս որ միամտութիւն  
 խոստացած էր, անանկ ալ կատարելու  
 ըլլար նէ: Այսպիսի տան մէջը ասիկայ ծա-  
 ռայ մը ունէր, որ իր սեղանին, ու ու-  
 թիշ մեծ բաներու մէջ ծառայութի կը-  
 նէր. բայց նայելով ծառային երեսը որ  
 աղուճոր էր՝ թոյն մը կարծես թէ կառ-  
 նէր: Այսքը հոգւոյն պատճառ եղաւ կոր-  
 սրվելու, նաև սատանան՝ որ ստանկ գէշ  
 սէր մը կնկան սիրտը ձգեց. վստի տես-  
 նելէն՝ սկսաւ մտածել ու բորբոքիլ:  
 \* Հոգին (կըսէ նր Վրիգոր փափը) յոր-  
 ժամ ոչ լինի յառաջատես յետս կալոյ  
 'ի ցանկալեաց՝ այնուհետև կուրացեալ  
 սկսանի ցանկալ զոր ետեսն, զի տեսուե-  
 զհետ գայ մեաճութի, ապա բերկրու-  
 թի, և ապա հաւանութի || 1): Ասանկ  
 եղաւ ըստ ամի աս կնկան ալ, որ ան-  
 զգուշութիւնայելով անողորմելութե մէջ  
 ինկաւ, ինչպէս հիմայ պիտոր տեսնանք:

1) Վրիգոր ին . Բարոյ . գլ . Բ :

Արդ՝ աս մտածութիւն մտքին մէջ  
 ունելով՝ թող տըւաւ Ա՛յ ամէն շնորք-  
 ները, միայն պահեց դրսէն պարկեշտութի  
 մը: Ա՛ս ալ երկու բանի համար կը պա-  
 հէր. մէյմը որ իր ազգին (սոյին) վրայ  
 անպարկեշտ գործքովը նախատինք չի-  
 հասցընէ: Այրկրորդ՝ չըլլայ որ զԱ՛ծ ալ  
 բարկացընէ անով. թէպէտ բերկրութիւն  
 մտքին մէջ ուշացուցած ատենը խիղճ-  
 մտանքը կը զարնէր որ ըրածը մեղք է.  
 սակայն ամ հոգւով կը ջանար հանգար-  
 տեցընել իր միտքը (որ շարունակ իրեն  
 դէմ կը գոռնար կոր) թէ ըրածը մեղք  
 չէ. գուցէ աս կըսէր, որ ցանկութի մը  
 գործքով չեղած ատենը երկրաւոր դա-  
 տաւորը չի պատժէր, ասանկ ալ Ա՛ծ չի-  
 պատժէր: Աւստի ամենեւին ասոր վրայ  
 խոստովանանք չըլլալով ապրեցաւ մինչև  
 ՚ի մահ: Ա՛ն ունելու հիւանդութե մէջ  
 պառկած ատենը՝ սատանան նորէն իր  
 սիրած ծառային դէմքը միտքը ձգեց.

կնիկը հիւանդ իբէն հանեցաւ անոր, և այսպէս գարշելի ցանկութեան մէջը մեռաւ: Հողին դժօխքին մէջը դատապարտեց Մ.Ժ. բայց իր արտաքին պարկեշտութիւնը չուզեց անվարձ թողուլ, որն որ մեղքի մէջ ալ պահեց. վնդի մեռնելէն ետքը առաքինի ըսվեցաւ իր բարեգործութիւններուն համար, թէպէտ մեղքի մէջ ըլլալով ըրածը ոչինչ բան էր: Ապիսկոպոսը մեծ յոյս ունեցաւ կնկան փրկութիւնը վրայ, որ անոր մէկ քանի բարեգործութիւնները գիտէր, ու ծածուկ մեղքը չէր գիտէր. ուստի մեծամեծ թաղման հանդէսներ պատրաստեց, գերեզմանը իր մատրան մէջը փորել տրւաւ, ու մարմինը իբրև երանեալ հոգւոյ մը ինչպէս որ կըկարծէր՝ ուզեց թաղել:

Բայց վայ մեղի. ինչպէս առաքելոյն խօսքը չըսեմ հոս տեղը. Ո՛րդէ՞

տառանց ղնելոյ էն դասաստան, Այ 1) :  
 Ահ, որչափ Այ ու մարդուն կարծիքը  
 տարբեր են : ( )ը մը անցաւ, ու գիշե-  
 րը ետքը ելաւ իր մատուռը գնաց ժամ  
 զրուցելու համար, տեսաւ որ բոլոր մա-  
 տուռը կրակ ու բոց լեցուն : Սոսկացաւ  
 առջի բերանը տեսածին պէս, բայց ետ-  
 քը երեսը խաչ հանելով՝ ու Այ ապա-  
 շինելով մատուռէն ներս մտաւ. մտաւ  
 թէ չէ՛ ինչ կընայիս, իր խոստովանորդ-  
 ւոյն մարմինը տաքցած կասկարայի վրայ  
 կերէր կըշարշարվէր կոր : Չորս կող մը  
 բոլոր սատանաները կեցած էին ամենն ալ  
 այլանդակ կերպարանքներով, որոնց  
 ոմանք կրակը կըբորբոքէին, ոմանք սուր  
 շամփուրներ (շիշեր) մարմնոյն կըխո-  
 թէին. ոմանք ալ ճանկերով մարմինը  
 աստին անդին կըդարձընէին կոր : Ահու-  
 դողու մէջ մտաւ ետքը աս կնիկը տեսնաւ

լով . ետքը յանուն Ա՛յ սկսաւ երդալե-  
 ցընել կնիկը , թէ ինչո՞ւ համար անանկ  
 սոսկալի կըտանջըվիս կոր : Անիկն ալ արհեստ  
 տըւաւ , դատապարտեցայ մէկ բերկրուէ  
 համար , որ մէկ մտածութիւն միտքս եկած  
 էր : Ա՛րդ՝ թէ ինչո՞ւ համար Ա՛ծ թող  
 տըւաւ , որ աս ողորմելին այսպիսի գէշ  
 բերկրուէ մէջ իյնայ՝ մեր մտքին տկա-  
 րութիւն որչափ կրնայ իմանալ նէ՛ կըսեմ ,  
 որ կարելի է թէ ըրած գործքերը կեղ-  
 ծաւորուի միշտ կընէր . կամ թէ որ  
 աւելի կրնայ ըլլալ՝ չուղեց յօժարութիւն  
 Ա՛յ ազդեցութեւ լսել , որ սրտէն կըղը-  
 դէր թէ ծառան քովէն հանէ , որովհետեւ  
 ասանկ փորձուէ մէջը կիյնար կոր : Ա՛նչ  
 եղած պիտի ըլլայ արդեօք ան ատենը  
 ենդսին սիրտը . բայց թող տանք անիկայ .  
 ինչ կըլլայ կոր . քու սիրտդ որ կըկարդաս  
 Ա՛յ ասանկ անքննելի դատաստանին  
 վրայ , որ այսպիսի մտածմունքներուն հա-  
 մար կընէ : Այլ որ աս դիպուածէն

սրտիդ մէջ վախ մը գայ, և երկու օգ-  
 տակար խրատներ մտքի մէջ պահենք:  
 Վախ՝ որ ասանկ գէշ մտածմունքներ  
 մտքերնէս հանենք եկածնուն պէս. վն-  
 զի ասոնց ետեւէն մեղք կը հետևի, ինչ-  
 պէս որ փայլատակելէն ետքը կայծակ  
 կը զարնէ: Արկրորդ՝ եբոր մէկը կենդանի  
 ու առողջ եղած ատենը այսպիսի փոր-  
 ձութեց գէմ չի կենար՝ մեռնելու մօտ  
 իրեն վրայ սաստիկ կուգան, ու դժուար  
 բաւ կրնայ յաղթել: Անզի եթէ ուժու  
 վութե ատենը թշնամիէն վախցաւ, ու  
 շատ անգամ յաղթուիցաւ, հիւանդուն  
 ատենը ինչպէս կարող պիտի ըլլայ յաղ-  
 թել: Մի խօսք է, թէ որոնք որ գէշ  
 բաներ մտածելու սորված են նէ՛ ետքի  
 սահաթը անոնց մտքէն չեն հեռանար.  
 որովհետև սատանայական պիղծ հոգին  
 անոնց սրտին մէջը կը բնակի, ու չեն կր-  
 նար իրենց սրտէն դուրս հանել: Մհա  
 Մի խօսքը որ մարգարէին բերնովը կըսէ.

Ոչ երբեք չեն ընդհանրապես իրենց արտաբերությունները  
 և չեն իրենց արտաբերությունները ընդհանրապես իրենց  
 արտաբերությունները 1) :

Յուրաքանչյուր իրենց արտաբերությունները  
 արտաբերությունները և չեն իրենց արտաբերությունները  
 արտաբերությունները և չեն իրենց արտաբերությունները  
 արտաբերությունները և չեն իրենց արտաբերությունները :

## Ս Ե Լ Ե Ն Ե Ե

1) . . . . .

2) . . . . .

3) . . . . .

4) . . . . .

5) . . . . .

6) . . . . .

7) . . . . .

8) . . . . .

9) . . . . .

10) . . . . .

2) Ո՛Ւ . Ե . 4 :

224

---

Յ Լ Ն Կ

ՊԵՏՐՈՅ ԵՒ ՊԼՏՄՈՒԹԵԼՆՅ՝

---

ՄԼՍՆ ԵՌԵՋԻՆ՝

|                                |    |
|--------------------------------|----|
| ԳԼ՝ Ե. ԹԷ իրչափ մեծ է Ստա-     |    |
| ծութէ զօրութիլը :              | 1  |
| Պատմութիւն :                   | 9  |
| ԳԼ. Բ. ԹԷ մտքի մեջ եկած բարի   |    |
| խորհուրդը կատարելը՝ յաւի-      |    |
| տենական փրկուէ սկիզբ կը-       |    |
| լայ :                          | 12 |
| Պատմութիւն :                   | 23 |
| ԳԼ՝ Գ. Բարի խորհուրդը մերժելը՝ |    |
| յաւիտենական դատապար-           |    |
| տութիւն առիթ կըլլայ :          | 28 |
| Պատմութիւն :                   | 39 |

ԳԼ: Գ. Բարի Մտածութի որ քա-  
րող լսելէն կունենանք: 45

Պատմութիւն: . . . . 56

ԳԼ: Ե. Բարի Մտածութի որ հո-  
գևոր գիրք կարդալէն կունե-  
նանք: . . . . . 63

Պատմութիւն: . . . . 72

ԳԼ: Օ. Բարի Մտածութի վերջին  
վախճանի վրայ: . . . . 77

Պատմութիւն: . . . . 93

ԳԼ: Լ. Բարի Մտածութի մահ-  
ուան վրայ: . . . . . 98

Պատմութիւն: . . . . 111

ԳԼ: Բ. Բարի Մտածութի վերջի  
դատաստանի վրայ: . . . 116

Պատմութիւն: . . . . 129

ԳԼ: Թ. Բարի Մտածութի դժոխ-  
քի վրայ: . . . . . 136

Պատմութիւն: . . . . 149

ԳԼ: Ժ. Բարի Մտածութի արքայ-  
ութե վրայ: . . . . . 157

|         |  |     |
|---------|--|-----|
|         | Պատմութիւն: . . .                            | 173 |
| ԳԱ; ԺԸ. | Բարի Ստածութի՛ն Յա-<br>ւիտենահանութեան վրայ: | 178 |
|         | Պատմութիւն: . . .                            | 193 |
| ԳԱ; ԺԻ. | Բարի Ստածութի՛ն կե-<br>նաց կարճութեւր վրայ:  | 199 |
|         | Պատմութիւն: . . .                            | 212 |

### ՄԸՍՆ Ե ՐԿՐ ՈՐԳ:

|        |  |     |
|--------|--|-----|
| ԳԱ; Ը. | Բարի Ստածութի՛ն Վստի չար-<br>չարանաց վրայ: . . .       | 218 |
|        | Պատմութիւն: . . .                                      | 235 |
| ԳԱ; Բ. | Բարի Ստածութի՛ն Ըյ<br>Բարութեանը վրայ: . . .           | 241 |
|        | Պատմութիւն: . . .                                      | 255 |
| ԳԱ; Գ. | Բարի Ստածութի՛ն մեղքե-<br>կտ կենալու վրայ: . . .       | 262 |
|        | Պատմութիւն: . . .                                      | 275 |
| ԳԱ. Գ. | Բարի Ստածութի՛ն մեղքին<br>տըւած վնասներուն վրայ: . . . | 282 |

|         |                                 |     |
|---------|---------------------------------|-----|
|         | Պատմութիւն: . . .               | 296 |
| Գ-Լ; Ե. | Բարի Մտածութիւնի Լ.Յ. Եր-       |     |
|         | կայութեան վրայ: . . .           | 303 |
|         | Պատմութիւն: . . .               | 317 |
| Գ-Լ; Զ. | Բարի Մտածութիւնի Լ.Յ Բա-        |     |
|         | րերարութեցը վրայ: . . .         | 321 |
|         | Պատմութիւն: . . .               | 338 |
| Գ-Լ; Է. | Բարի Մտածութիւնի աշխրբիս        |     |
|         | ցաւալի ունայնութիւն վրայ: . . . | 343 |
|         | Պատմութիւն: . . .               | 359 |
| Գ-Լ; Ը. | Բարի Մտածութիւնի ձախող          |     |
|         | դիպուածներուն մէջը: . . .       | 364 |
|         | Պատմութիւն: . . .               | 376 |
| Գ-Լ; Թ. | Բարի Մտածութիւնի որ ա-          |     |
|         | ռաքինի մարդուն տեսութեան        |     |
|         | կամ խրատներէն կունե-            |     |
|         | նանք: . . . . .                 | 383 |
|         | Պատմութիւն: . . .               | 393 |
| Գ-Լ; Ժ. | Բարի Մտածութիւնի որ պէս-        |     |
|         | պէս պատահմունքներէն կը-         |     |
|         | հանվի: . . . . .                | 399 |

Quantität . . . . . 404

**W. Dr. Franz Waidner'sche**  
Kleinste Art & Größe  
in 200 Stk. . . . . 406

Quantität . . . . . 407

**W. Dr. Aug. Waidner'sche**  
größte Art & Größe . . . . . 433

Quantität . . . . . 447

